ՆԱԻՐԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՕՏԱՐՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱԻՐԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՕՏԱՐՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2017

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Գ 316

Երաշխավորում են Երևանի պետական համալսարանի պատմության և ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետների գիտական խորհուրդները

Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝
բ.գ.թ., դոցենտ Նաիրա Հմայակի Գասպարյանի

Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ,
բ.գ.դ., պրոֆեսոր Սեդա Գասպարյան

Գրախոսներ՝ պ.գ.դ., դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյան
պ.գ.թ., դոցենտ Էդուարդ Զոհրաբյան
բ.գ.թ., դոցենտ Ռուզան Ղազարյան

Նաիրա Գասպարյան
Գ 316 Հայն ու Հայաստանը օտարների աչքերով: -Եր.: ԵՊՀ հրատ., 2017.- 196 էջ:

Բնագրից հատվածաբար կատարված թարգմանության և ծանոթագրությունների միջոցով Ն. Հ. Գասպարյանը հայ ընթերցողին է ներկայացնում *«Համիդորդությունն ու քաղաքականությունը Հայաստանում»* ուղեգրությունը՝ հեղինակությամբ անգլիացի ազնվականներ, պառլամենտի անդամ լորդ Նոել Բաքսթոնի և Բալկանյան ֆոնդերի տնօրեն պատվելի Հարոլդ Բաքսթոնի, որոնք, Հայոց ցեղասպանության նախօրեին բրիտանական կառավարության հանձնարարությամբ, ճամփորդելով Արևմտյան և Արևելյան Հայաստանում նաև Պարսկաստանում, ուսումնասիրել են Հայաստանում և ընդհանրապես հայերի շրջանում տիրող իրավիճակը, հայի մտածելակերպն ու արժեհամակարգը և փորձել են պարզաբանել, թե արդյոք հայը *«կարող է քաղաքակիրթ»* դառնալ և ծառայել Բրիտանիայի շահին:

Նախատեսված է լեզվաբանների, մշակութաբանների, միջազգայնագետների, պատմաբանների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակի համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-2234-6

© ԵՊՀ հրատարակչություն, 2017
© Նաիրա Գասպարյան, 2017

Նվիրում եմ
Հայոց մեծ եղեռնի նահատակների
հիշատակին

Բովանդակություն

Խոսք երախտիքի 7

Մինասյան Է., Զոհրաբյան Է., Նոել և Հարոլդ Բաքսթոնների
«Ճամփորդությունն ու քաղաքականությունը Հայաստանում»
ուղեգրության ճանաչողական արժեքը 8

Խաժակյան Մ.
Ուղեգրությունը՝ որպես ականատեսի վկայություն 12

Գասպարյան Ն.
Առաջաբան 17

Հատվածներ լորդ Նոել Բաքսթոնի և պատվ. Հարոլդ Բաքսթոնի
«Ճամփորդությունն ու քաղաքականությունը Հայաստանում»
ուղեգրությունից 59
Ներածություն (Բրայս Ջ.) 60
Նախաբան (Բաքսթոն Ն., Բաքսթոն Հ.) 65
Քրդերը 66
Թուրքահայաստանը 89
Ռուսահայաստանը 105
Հայ եկեղեցին 119
Մուսուլմանական երկրները 140
Գերտերությունների գործառույթները 161

Խոսք երախտիքի

Երախտապարտ եմ բոլոր նրանց, ովքեր իրենց խորհուրդներով ոգևորել, օգնել և ուղղորդել են այս աշխատանքի հրատարակումը, մասնավորապես՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանին, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր Սեդա Գասպարյանին, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյանին, պ.գ.թ., դոցենտ Արտավազդ Դարբինյանին, պ.գ.թ., դոցենտ Էդուարդ Զոհրաբյանին:

Շնորհակալ եմ նաև Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրոս Գոհար Զալինյանին և հայ ինքնության խնդիրներով հետաքրքրված իմ բոլոր ուսանողներին, որոնք ակտիվ մասնակցություն են ունեցել նյութի քննարկմանը նվիրված իմ սեմինարներին ու դասախոսություններին:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ հատնում իմ լավ բարեկամ, քաղաքագետ, «Դիալոգ» հասարակական կազմակերպության նախագահ՝ Յուրի Նավոյանին, ում խանդավառ վերաբերմունքն ուղեգրության ուսումնասիրության և թարգմանության գործին մեծապես ոգևորել է ինձ:

Լորդ Նոել Բաքսթոնի և պատվելի Հարոլդ Բաքսթոնի «Ճամփորդությունն ու քաղաքականությունը Հայաստանում» ուղեգրության ճանաչողական արժեքը

Գրավոր հիշողություններն ու ուղեգրությունները՝ որպես անցյալի իմացության և ճանաչողության աղբյուր, անգնահատելի նշանակություն ունեն: Դրանք՝ իբրև պատմագիտական ստեղծագործության ժանր առանձնակի դեր են խաղում պատմական անցյալի շրջափուլերի ոգին և էությունը ճիշտ ընկալելու, պատմական իրողություններն առավել համապարփակ և փաստարկված ներկայացնելու գործում:

XIX դարի վերջում և XX դարի առաջին կեսերին ճամփորդական-փաստավավերագրական ժանրի մասսայականությունն աճեց, երբ հատկապես աշխուժացավ հետազոտողների, առաքյալների, ստեղծագործողների, քաղաքական գործիչների, գաղութարարների գործունեությունը, իսկ ծանր սոցիալ-քաղաքական պայմաններում գտնվող երկրների բնակչությունն ավելի լավ պայմաններ գտնելու միտմամբ սկսեց ելքեր փնտրել՝ երանելի երկիր տեղափոխվելու համար: Բովանդակային առումով ուղեգրությունները ներառում են ոչ միայն փաստեր՝ առնչվող տվյալ սոցիալ-քաղաքական միջավայրին, որտեղ տեղի է ունեցել ճամփորդությունը, այլև արժեքավոր դիտարկումներ, որոնք բնութագրական են բնիկների երկրին, դրա պետական, սոցիալ-քաղաքական կառույցներին, բնակչության կենցաղին ու սովորույթներին, արժեհամակարգին, արվեստին, գրականությանը, ազգային կերպարին ու ինքնությանը:

Անկախ ուղեգրությունների լույս աշխարհ գալու շարժառիթներից, բնույթից, ընդգրկման ժամանակահատվածից, բո-

վանդակությունից, լեզվառճական ինքնատիպությունից և տվյալ հիշողությունները թղթին հանձնած հեղինակի ենթակայական, զգացական մոտեցումներից՝ անցյալի հիշողությունները պատմության շարադրման անվիճելի աղբյուր են: Մանավանդ, երբ իրենց հիշողությունները ներկայացնող ուղեգրության հեղինակները բանիմաց մտավորականներ են: Անկողմնակալ ու չեզոք դիրքերից մատուցված նյութը, փաստերը դառնում են արժանահավատ ու վստահելի, հուսալի բազա պատմագիտական և գեղարվեստական աշխատությունների շարադրման համար:

Այս տեսանկյունից շնորհակալ և արժեքավոր է բրիտանացի ազնվականներ լորդ Նոել Բաքսթոնի և պատվելի Հարոլդ Բաքսթոնի հեղինակած *«Ճամփորդությունն ու քաղաքականությունը Հայաստանում»* (1914 թ.) (թարգմանությամբ՝ Նաիրա Գասպարյանի) հիշողություն-ուղեգրությունը:

Ընթերցող լայն հասարակության ուշադրությանը ներկայացվող *«Ճամփորդությունն ու քաղաքականությունը Հայաստանում»* ուղեգրությունն արժևորվում է ոչ միայն նյութի ընդգրկման համակողմանիությամբ, այլև ժամանակահատվածի կարևորությամբ: Ճանապարհորդելով Թուրքիայի, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի, ինչպես նաև Իրանի տարածքներով՝ ուղեգրության հեղինակները հանգամանորեն շարադրել են Առաջին աշխարհամարտի նախօրեին՝ 1910-14 թթ. հիշյալ տարածաշրջանում ընթացող իրողությունները: Հենց այս ժամանակահատվածում Թուրքիայի կառավարող շրջանակների՝ երիտթուրքերի կողմից ինչպես ոչ թուրք մահմեդական (այլ էթնիկ) բնակչության, այնպես էլ քրիստոնյաների և, մասնավորապես, արևմտահայերի նկատմամբ իրականացվող խտրական քաղաքականության մեջ ակնհայտո-

րեն ի հայտ են գալիս նկարագրվող իրողություններից ընդամենը մեկ տարի անց Հայոց մեծ եղեռնի՝ ցեղասպանության իրագործման տրամաբանությունը և նախադրյալները:

Համակողմանիորեն ներկայացնելով թուրքական կայսրության կազմում գտնվող հայոց պատմական հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի և արևմտահայության կյանքի կոնկրետ դրվագներ ու սոցիալ-քաղաքական կացությունը՝ ուղեգրությունը ընթերցողին մղում է կատարելու կարևոր ընդհանրացումներ և իրատեսորեն ըմբռնելու ժամանակի իրողությունները:

Բաքսթոնների հեղինակած հիշողություն-ուղեգրությունը գալիս է լրացնելու Առաջին աշխարհամարտի նախօրյակին ինչպես արևմտահայության, այնպես էլ ողջ Թուրքիայի այլ էթնիկ խմբերի, նաև Իրանի մահմեդական բնակչության կացության մասին պատկերացումները: Աշխատությունը ներառում է բազմաշերտ հարցերի ընդգրկուն շրջանակ. հեղինակները բնաշխարհի գունագեղ նկարագրության պատկերի վրա անդրադարձել են նշված տարածաշրջանների ժողովուրդների կենցաղային սովորույթներին, կրոնադավանական ըմբռնումներին, տարազին, զենքի տեսակներին, ռազմական հմտություններին, տնտեսական, հողային հարաբերություններին: Ուղեգրության կրթված և ժամանակի քաղաքական, միջազգային հարաբերություններին քաջատեղյակ հեղինակներն ուշադրության են արժանացրել առաջին հայացքից աննշան, ոչ էական թվացող երևույթներ, որոնք ևս հարուստ նյութ են պարունակում և ամբողջացնում պատկերացումները այդ շրջանի վերաբերյալ: Լինելով ինտելեկտուալ և քաջածանոթ քաղաքական գործընթացներին՝ իբրև անմիջական և ուղղակի ականատեսներ, հեղինակներն աշխա-

տությունը գլխավորապես շարադրել են ժամանակագրական ստույգ հաջորդականությամբ, որով ուղեգրությունը ձեռք է բերել առավել հավաստի բնույթ:

Չնայած հեղինակներն իրադարձություններին ցուցաբերել են հիմնականում նկարագրական, հայեցողական մոտեցումներ, այնուամենայնիվ, փորձել են կատարել վերլուծություններ, ներկայացնել սեփական մեկնաբանություններն ու գնահատականները: Վերջիններիս հետ, անկասկած, միշտ չէ, որ կարելի է համաձայնել, դրանք վիճահարույց են, երբեմն՝ անընդունելի: Ուստի, գնահատելով աշխատության անժխտելի կարևորությունը, այնուամենայնիվ, այն պետք է արժևորել քննական մոտեցման դիրքերից:

Աշխատության թարգմանչին հաջողվել է, հավատարիմ մնալով բնագրին և պատմականությանը, թարգմանել այնպիսի արժանահավատ, գրագետ, դյուրընթեռնելի տեքստ, որը կարող է օգտակար լինել թե՛ պատմաբանների և թե՛ այլ մասնագետների համար:

Էդիկ Մինասյան, պ.գ.դ., պրոֆեսոր
Էդուարդ Զոհրաբյան, պ.գ.թ., դոցենտ

Ուղեգրությունը՝ որպես ականատեսի վկայություն

Անժխտելի է ուղեգրությունների, այսինքն՝ իրական դեպքերի, փաստերի, իրադարձությունների մասին ժամանակակիցների՝ ականատես-վկաների կողմից արձանագրված կոթողների դերը ազգի կյանքում: Գուցե եվրոպական ազգերի համար ուղեգրությունը սոսկ ժանրային տարատեսակ է, սակայն հայության համար այն ավելին է, քան ստեղծագործական ժանրը: Հայ իրականության մեջ ուղեգրություններն իրոք որոշակի արժեք են, նույնիսկ եթե գալիս են մեզ՝ հայերիս հիշեցնելու մեր հոգու տանջալից ու չվերացող ցավը, որ հիմնականում կապված է անցյալի դառն հիշողությունների հետ՝ հայերի կոտորածներ, սովալլուկ ու թշվառ մանուկներ, որդեկորույս ու պատվազրկված կանայք, առանց զենքի թուրքի հետ կռվի մտած հայ առյուծասիրտ այրեր, որոնց համար պատիվն ու հայրենիքի սերը վեր են ամեն ինչից: Ուղեգրությունները, որոնք յուրօրինակ հուշագրություններ են, հայի համար սոսկ ճամփորդական նոթեր չեն՝ գրված հայ ինքնությունից ոչինչ չհասկացող պատահական օտար հասարակական-քաղաքական գործչի կողմից: Հայի համար դրանք ուղղակիորեն կապվում են պատմական հիշողության վերականգնման հետ՝ ստիպելով սթափ հայացքով նայել պատմական իրողություններին և չկորցնել զգոնությունը:

Մեր պատմության բոլոր հատվածները որևէ կերպ առնչվում են օտարի ոտնձգություններին: Կարևորը ոչ թե օտարի ազգությունն է, այլ այն, որ օտարները, ըստ Լոուրենս Արաբացու՝ հարևանները, միշտ փորձել են ստուգել մեր մարդկային ու ազգային հատկանիշների կայունությունը: Ամերիկացի լրագրողին տված իր հայտնի հարցազրույցում

Արաբացին նույնիսկ առաջարկում է որևէ ազգի մասին կարծիք կազմելու համար ճշտել թե վերջինս ինչ վերաբերմունք է ցուցաբերել հայի նկատմամբ:

XIX դարի երեսնականներից հետո մինչև XX դարի առաջին կեսերը՝ եվրոպական գերտերությունների հետաքրքրությունը մեծացավ թուրքի լծի տակ հայտնված հայ էթնոսի նկատմամբ, որին իրենք ոչ թե ազգ, այլ ցեղ են կոչում սոսկ այն պատճառով, որ հայը զրկված է եղել պետականությունից: Եվ երբ եվրոպական ու ամերիկյան առաքելությունների բազմաթիվ ներկայացուցիչներ և հայտնի լրագրողներ հայտնվեցին թուրքական Բալկաններում և Հայաստանում, սկսեց բուռն զարգացում ապրել հուշագրություն-ուղեգրության ժանրը, քանի որ Օսմանյան Թուրքիայում՝ թույլատրելով օտարերկրյա գործիչների մուտքը Հայաստան, միևնույն ժամանակ պաշտոնապես արգելեցին իրենց տեսածի մասին գրառումներ կատարել: Արդյունքում՝ հասարակական-քաղաքական գործիչները, լրագրողներն ու միսիոներները թղթին էին հանձնում իրենց հիշողություններն ու տպավորությունները, ստեղծում էին իրենց հաշվետվություններն ու ուղեգրությունները անմիջապես հայրենիք վերադառնալուց հետո:

Նյութի քննությունը ցույց է տալիս, որ փաստավավերագրական այս ժանրը նյութի շարադրման առումով այնքան էլ միատարր չէ: Փորձենք բացատրել: Պատմական հիշողություններին առնչվող ուղեգրությունները ոչ միատարրության առումով կարելի է բաժանել երեք խմբի՝ 1. ուղեգրություններ, որոնց հեղինակները լեզվաբանական-լրագրողական կրթություն են ունեցել և միտքը շարադրել են հստակ՝ առաջադրել են հարցեր և բերել սեղմ, դիպուկ տրամաբանական

դատողություններով և վերլուծություններով պատասխաններ, որոնք հիմնականում համապատասխանում են փաստագրական խոսքի նորմերին: Իբրև այդպիսի ուղեգրություն կարելի է նշել Հերբերտ Գիբոնսի 1916 թ.-ին հրապարակված «*The Blackest Page of Modern History. Events in Armenia in 1915. The Facts and the Responsibilities.*» աշխատությունը: Այսպիսի աշխատությունների լեզուն հեշտ ընթեռնելի է և ճանաչողական-հասկացական մակարդակում էական դժվարություններ չի ներկայացնում: Երկրորդ խմբի հուշագրություն-ուղեգրությունները հիմնականում ստեղծված են ճանապարհորդ միսիոներների կողմից, որոնք չունեն անհրաժեշտ լեզվաբանական կրթություն և ավելի շատ գրում են այնպես, ինչպես տեսնում և ընկալում են դեպքերն ու իրադարձությունները, այսինքն՝ առաջնորդվում են անմիջական տպավորություններով և հուզական ընկալումը դառնում է ուղեգրության շարադրանքի հիմնական առանցքը:

Նշենք, որ 1894-1916 թթ. ստեղծված կրոնական-մարդասիրական ուղղվածություն ունեցող ուղեգրությունների համար, որոնց խմբին է պատկանում պատվելի Ֆրեդերիկ Գրինի աշխատությունը, հատկանշական է հուզառատությունը, որը դրսևորվում է որոշակի բառապաշարի և ճանաչողական կառույցների միջոցով: Գրինի աշխատության շարադրանքի լեզվի և ոճի վրա հսկայական ազդեցություն են գործել 1894-1896 թթ. ժամանակահատվածի առանձնահատկությունները և նրա՝ թուրքական վայրագ ու գազանաբարո վարքի դրսևորումներին ականատես լինելու փաստը: Չարիքի դեմ պայքարող հոգևորականը չի կարողանում չեզոք դիրքերից մոտենալ համիդյան հայահալած ու անմարդկային քաղաքականությանը, թուրք խուժանի, ինչպես նաև մոլեռանդ մահմեդական մտավորականության՝ հայերի և քրիստոնյա փոքրամասնու-

թյունների նկատմամբ արտահայտվող զազրելի վերաբերմունքին, երբ նկարագրում է վայրագության յուրաքանչյուր դեպք: Այս և նմանօրինակ ուղեգրությունները համաշխարհային ընթերցողին հասանելի դարձնելու և նրան իրազեկելու ու ահազանգելու միտմամբ, հոգևորական միսիոներների գործերը, ինչպես և Ֆ. Գրինի «*Armenian Massacres and Turkish Atrocities*» աշխատությունը, խմբագրվել են ժամանակի հայտնի գրողների և հրապարակախոս-քաղաքագետների կողմից, որոնք հատուկ ուշադրության են արժանացրել բառային միավորների ու քերականական կառույցների ընտրությունը՝ առանց ձևափոխելու ու խեղաթյուրելու փաստերը: Հատուկ խնամքով են ընտրված նաև շարադրանքի ոճական հնարներն ու ճանաչողական միավորները, որոնք ապահովում են խոսքի պատկերավորությունն ու դիպուկությունը: Երրորդ խմբին կարելի է դասել ուղեգրությունների այն բազմությունը, որոնց թվին է պատկանում լորդ Նոել Բաքսթոնի՝ պառլամենտի պատգամավոր, և պատվելի Հարոլդ Բաքսթոնի 1914 թ. հրատարակած հաշվետվությունը՝ *«Travel and Politics in Armenia»*, որի գրագետ ազնվական մտավորական հեղինակները, տեսնելով հայերի օրհասական վիճակը, հաշվետվությունը տպագրել են առանց առանձնահատուկ խմբագրման և մշակման, որի հետևանքով որոշ երկարաշունչ նախադասություններ ու տեքստահատվածներ դժվար հասկանալի են, քերականական նորմերը ժամանակային ձևերի գործածության առումով երբեմն հստակ չեն և բազում այլ խնդիրներ, որոնք դժվար իրավիճակի մեջ են դնում ոչ միայն ընթերցողին, այլև՝ թարգմանչին: Ամենակարևոր դժվարություններից մեկը անձնանունների և տեղանունների վերաբերյալ ծանոթագրությունների բացակայությունն է: Թարգմանիչը հսկայածավալ աշխատանք է կատարել ծանո-

թագրություններով հագեցած և դյուրընթեռնելի տեքստ ներկայացնելու առումով: Արված աշխատանքը պատմության ուսանելի այն դասի խորհուրդն է կրում, որը կարող է ստիպել հային արմատապես փոխել իր իսկ վերաբերմունքը սեփական վարքագծի նկատմամբ՝ անցյալի սխալները չկրկնելու համար, քանզի նախորդ դարասկզբի ահասարսուռ իրադարձությունները բազմիցս կրկնվել են հետագայում և շարունակվում են ցայսօր:

Ամփոփելով ասենք, որ հայ իրականության մեջ նշված ժամանակաշրջանում ստեղծված ուղեգրությունների՝ իբրև հրապարակախոսական ստեղծագործությունների արժեքը դժվար է գերագնահատել ընդհանրապես, և օտարի աչքերով փաստերի անկողմնակալ ներկայացման առումով մասնավորապես: Քսան տարիների կտրվածքով հրապարակված նշված բոլոր ուղեգրությունների հեղինակները, որոնց նպատակն էր ոտքի հանել համաշխարհային հանրությանը և փորձել ազդել գերտերությունների որդեգրած անտարբերության քաղաքականության վրա, համամիտ են մեկ հարցում՝ թուրքական ցեղասպան քաղաքականության հետևանքով փոքրամասնության վերածված հայ էթնոսը կանգնած էր բնաջնջման եզրին և հային պետք էր փրկել թուրքից որքան հնարավոր է՝ արագ: Նշված բոլոր ուղեգրությունները փաստում են, որ հայերի կոտորածները տեղի են ունեցել հայերի բնօրրան Հայաստանում՝ թուրքական կառավարության ուղղորդմամբ ու անմիջական ղեկավարությամբ:

Այդիսկ պատճառով հարկ է կարևորել Բաքսթոնների ուղեգրությունը հայերենով հայ ընթերցողին ներկայացնելու փաստը:

Մարիամ Խաժակյան

ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ

ԱՌԱՋԱԲԱՆ

Նոել և Հարոլդ Բաքսթոնների «Ճամփորդությունն ու քաղաքականությունը Հայաստանում» հաշվետվություն-ուղեգրությունը[1], որը տարիներ շարունակ դուրս էր մնացել ընթերցողի ուշադրությունից, ներկայացնում է 1915 թ.-ին իր գագաթնակետին հասած Հայոց ցեղասպանության 1913-1914 թթ. ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանում տիրող սոցիալ-քաղաքական և բարոյահոգեբանական իրավիճակը և հայի իսկական ինքնությունը բացահայտող տարաբնույթ փաստեր ու վերլուծական մեկնաբանություններ: Ըստ Բաքսթոնների՝ գրքի տպագրությունը 1914 թ. միանգամայն պահանջված էր ու ճիշտ ժամանակին, քանի որ այն Հայաստանում տեղի ունեցող անցուդարձերն ու հայ կերպարը լուսաբանող սպառիչ ու ճշմարտացի աղբյուր էր, որը միջազգային հանրությանը հստակ պատկերացում կտար հայի իսկական տեսակի մասին: Մյուս կողմից գիրքն ակնհայտորեն վկայում է հայի մարդկային տեսակի, նրա մտածելակերպի և վարքագծի՝ ճամփորդության ընթացքում հեղինակների ընկալման մեջ անսպասելիորեն ձևավորված համակրանքն ու դրական արժևորումները:

Բարձր գնահատանքի արժանացնելով Բաքսթոնների ուղեգրությունը՝ Քրիստոֆեր Ուոկերն ընդգծում է, որ գիրքն ա-

---

[1] Buxton Noel MP and The Rev. Harold Buxton, *Travel And Politics in Armenia,* London: Smith Elder &CO., 1914.

մեննին էլ գլուխգործոց չէ ու կուռ կառուցվածք էլ չունի, այդուհանդերձ, այն լիովին բացահայտում է իրերի վիճակն Առաջին աշխարհամարտի նախօրեին[2]: Նշենք, որ ընթերցելու և, հատկապես թարգմանության առումով, գիրքը, իրոք, որոշակի դժվարություն առաջացնում է, ընդ որում՝ խնդիրները մի քանիսն են: Նախ՝ անհրաժեշտ է հաշվի առնել ամենակարևորը՝ նկարագրված դեպքերն ու երևույթները արտացոլում են ականատեսի փորձը, որի շարադրանքը լեզվական և հրատարակչական մշակման չի ենթարկվել, քանզի հաշվետվության տպագրությունն անմիջապես հաջորդել է ճամփորդությանը: Ինչպես նշում են հեղինակները, Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակը, քրիստոնյա փոքրամասնությունների, հատկապես հայերի կյանքին ու գոյությանը սպառնացող վտանգը իրենց պարտադրել են դեպքերի ընթացքի մասին շուտափույթ իրազեկել ոչ միայն կառավարությանը, այլև հանրությանը:

Շարադրանքին առնչվող խնդիրներից կարելի է նշել.

- նախադասությունները հաճախ երկարաշունչ են, մերթընդմերթ ոչ հստակ, որի պատճառով թարգմանելիս դժվար է՝ առանց մեծ ջանքեր գործադրելու միանգամից հասնել բառաքերականական համարժեքության,
- երբեմն խախտվում է ներկայացվող դեպքերի ու իրադարձությունների ժամանակագրական ընթացքը,
- արագ գրառումների արդյունքում ժամանակային ձևերի կիրառությունները երբեմն չեն համապատասխա-

---

[2] Walker J. Christopher, *Visions of Ararat: Writings on Armenia.* Տե՛ս (https://books.google.am/books?isbn=1850438889, p. 107), (Accessed on 23. 04.2017):

նում նորմատիվ կանոններով սահմանվող գործածություններին,

- քաղաքական գործիչների անուններն ու տիտղոսները երբեմն լիարժեք չեն ներկայացված,
- տեղանունները հաճախ հիշատակվում են թուրքերենի արտասանական ազդեցությամբ։

Ծանոթագրությունների բացակայությունը, հավանաբար, կարող է բացատրվել նրանով, որ հաշվետվությունը նախատեսված է եղել ներկայացնելու Մեծ Բրիտանիայի կառավարությանը և ապա՝ քաղաքական ոլորտին քաջածանոթ հանրությանը։ Սակայն հետագայում հեղինակների՝ հաշվետվությունը շուտափույթ հրատարակման ներկայացնելու պարագայում լայն ընթերցողի՝ օտարների, ժամանակակից բրիտանացի, նաև հայ ընթերցողի համար որոշակի դժվարություններ են ծագում, քանի որ վերջիններս միշտ չէ, որ կարող են հստակ պատկերացում կազմել դեպքերին ու իրադարձություններին առնչվող լրացուցիչ մանրամասների մասին։

Իր բոլոր թերություններով հանդերձ, գիրքն ունի բազմաթիվ արժանիքներ։ Դրանցից ամենակարևորն այն է, որ հայ ինքնությունը համեմատաբար լիարժեք է ներկայացվում համաշխարհային ընթերցողին։ Ինչպես հարյուր տարի առաջ, այսօր էլ արդիական են գրքում արծարծվող խնդիրները, որովհետև դարձյալ վտանգված է հայ ինքնությունը։ Թերևս հենց այս պատճառով է, որ վերջին տարիներին գիրքը վերահրատարակելու մի քանի փորձ է արվել։

Հայտնի է, որ Հայոց մեծ եղեռնին նախորդող ժամանակահատվածում բրիտանական կառավարությունը լուրջ հետաքրքրություն է ցուցաբերել հայ ժողովրդի նկատմամբ։ Գի-

տակցելով դեպքերի պատմական զարգացման արդյունքում Հայաստանի համար ստեղծված անբնական ու վտանգավոր իրավիճակը, երբ հայն «անհամատեղելի էր թե՛ բարբարոս Արևելքի և թե՛ քաղաքակիրթ Արևմուտքի հետ», Բրիտանական կայսրությունն իր առջև խնդիր էր դրել օգտվել ընձեռված նոր հնարավորություններից և օգտագործել Արևելքի ու Արևմուտքի սահմանագծում գտնվող հոգեպես կաթվածահար, սակայն երբեք չհանձնվող Հայաստանն ու հայ ժողովրդին, մասնավորապես՝ Հնդկաստանը հսկելու կամ, ինչպես իրենք էին ձևակերպում, այն պաշտպանելու համար[3]:

Իրականությունը, սակայն, հետևյալն էր: Ինչպես հիշատակում է Կենտրոնական ասիական միության անդամ Արչիբալդ Դանը, Գերմանիան անվիճելի կարևոր դիրք էր ձեռք բերելու, եթե կառուցվեր Բաղդադի երկաթուղին: 1872 թ. Համայնքների պալատին կից նորաստեղծ կոմիտեն, որի հոգածության առարկան Եփրատի դաշտավայրում երկաթուղու նախագիծն էր և Հնդկաստանի հարցը, որոշում է ընդունում ոչ մի դեպքում թույլ չտալ, որ Հնդկաստան տանող (մետաքսի) ճանապարհի տնօրինումը, բացի Բրիտանիայից, որևէ այլ պետության մենաշնորհ դառնա: Բրիտանիան քաջատեղյակ էր, որ Ռուսաստանն իր դիրքերը փորձում է ամրացնել Իրանի Բանդեր Աբաս քաղաք հասնող երկաթուղու միջոցով, իսկ

---

[3] Laycock Joanne, *Imagining Armenia: Otherness, Orientalism and Ambiguity*. //Armenian Studies Program, University of Michigan, Ann Arbor. Graduate Studies workshop. *The 'Nation' in Armenian History (April 16-20, 2008.)* College of Literature ... p. 25. Տե՛ս (https://www.lsa.umich.edu/UMICH/asp/Home/Academic%20Opportuniti), (համացանցից դուրս է բերվել 01. 03. 2014):

ֆրանսիացիներն արդեն թագավորում էին Փոքր Ասիայում, Երուսաղեմում և Կիպրոսում[4]:

Մետաքսի ճանապարհի մենաշնորհային տնօրինումն այն գերնպատակն էր, որին հետամուտ էր բրիտանական կառավարությունը, որը, սակայն, ներկայացվում էր որպես հային քաղաքակրթելու ազնիվ ու բարոյական միտում: Մի՞թե անտեղյակ էր բրիտանական կառավարությունը, որ դեռևս վաղնջական ժամանակներից Հայաստանը հայտնի էր որպես համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, որը դեռ մ. թ. V դարում աչքի էր ընկնում իր բարձրարվեստ դպրությամբ և թարգմանչաց դպրոցով, իսկ միջնադարում Գրիգոր Նարեկացի էր պարգևել համաշխարհային քաղաքակրթությանը: Բրիտանական առաջադեմ միտքը համառորեն լռում էր այդ մասին, մինչդեռ ոչ միայն հայրենական, այլև համաշխարհային քաղաքակրթության տեսության բնագավառում կուտակված փաստերը վկայում են, որ ավելի քան հինգհազարամյա հայոց պատմությունն ու հայ ժողովրդի ստեղծած մշակութային հարուստ ժառանգությունն արդեն հուսալի հիմք են տալիս Հայկական լեռնաշխարհը բնութագրելու որպես հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան[5]: Գիտնականներն իրավամբ նշում են, որ հայոց քաղաքակրթական զարգացումներում վճռական դեր են կատարել Հայաստանի ոչ միայն

---

4 Dunn J. Archibald, *Turkey And Its Future*, Vincent's Press, London: Effingham Willson, 1905.

5 Danielyan E.L., *The Fundumental Questions of Armenian History in the Light of Tendencies of Modern Democracy* //Armenian Mind, vol. V No. 1-2, 2001, p. 8. Տե՛ս նաև Danielyan E. L., *Les conséquences politiques de la position stratégique de l'Arménie dans l'economie du monde ancien et médiéval – Armeniaca*. Publications de l'Université de Provence. 2004, pp. 202-227.

հոգևոր ու մշակութային, այլև տնտեսական և բնական ռեսուրսները, ինչպես նաև Արևելքի և Արևմուտքի միջև զբաղեցրած ռազմավարական դիրքը: Ավետարանական տեքստերի հայտնի վերլուծաբան, ֆրանսիական բենեդիկտյան միաբանության անդամ Ավգուստին Կալմեն[6] (1672-1757 թթ.), ինչպես և Դ. Մարշալ Լանգը, բարձր են գնահատում Հայաստանի նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ: Լանգն իր «Հայաստանը քաղաքակրթության բնօրրան[7]» աշխատության մեջ մասնավորապես նշում է, որ թեև սովորաբար քաղաքակիրթ կյանքի գլխավոր աղբյուր են համարվում Եգիպտոսը և Միջագետքը՝ շումերական ու բաբելոնյան հին քաղաքակրթություններով, Հայաստանը նույնպես ունի բոլոր նախադրյալները, որպեսզի գիտակցվի և ընդունվի որպես մարդկային մշակույթի բնօրրաններից մեկը: Հղելով Ծննդոց գրքին՝ նա հիշատակում է Նոյան տապանը, որն իջավ Արարատ լեռան գագաթին, Հայաստանի կենտրոնում, և ենթադրում, որ տապանից դուրս գալով, Նոյի ժառանգները, կենդանիներն ու թռչունները բնակեցրին այդ երկիրը՝ սկզբնավորելով նոր կյանքը երկրի վրա: Գուցե, իրոք, դժվար է կարևորել Ծննդոց գիրքը՝ որպես պատմական սկզբնաղբյուր, սակայն մյուս կողմից հնարավոր չէ անտեսել Նոյան տապանի խորհրդանշական կարևորությունը[8]: Ավելին՝ Հայաստանն առաջին մեծ թագավորությունն էր, որը հռչակեց քրիստոնեությունը՝ որպես պե-

---

6 Calmet (Rev. Pére Dom Augustin) *in Dictionnaire de la Bible-Paris*: Aux Ateliers Catholiques du Pont Montrouge, 1846, p. 162.

7 Lang David M., *Armenia. Cradle of Civilization*. London. George Allen and Unwin LTD, 1970.

8 Léonian R., *"Les Arméniens de France sont-ils assimilés ?"*. Issy-les-Moulineaux, 1986, p. 9.

տական կրոն և մշակեց եկեղեցական ճարտարապետության ոճը, որը նախորդեց արևմտյան գոթականին[9]: Ոչ պակաս կարևոր է նաև այն փաստը, որ Հայաստանը մետաղամշակության ավելի քան հինգհազարամյա ավանդույթ ունի, այնպես որ անհնար է անտեսել Հայաստանի ու նրա բազմաշնորհ ժողովրդի տեղն ու դերը համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ[10]:

Անգլերեն բացատրական բառարաններում *քաղաքակրթություն* բառը ներկայացվում է տարբեր մեկնաբանություններով. մարդկային հասարակության զարգացման բարձր աստիճան, որը նշանավորվում է արվեստի, դավանանքի, գիտության, հասարակական-քաղաքական կազմակերպվածության, մշակութային և տեխնիկական առաջընթացի բարձր մակարդակով[11], մասնավորապես՝ մշակութային զարգացման այնպիսի փուլի առկայությամբ, երբ կա գրական գործեր ստեղծելու և արդեն գոյություն ունեցող գրավոր հուշարձանները պահպանելու ձգտում[12]: Սակայն, երբ Մերիայամ-Վեբսթեր համացանցային բառարանում կարդում ես նաև *«մշակույթ, որով բնութագրվում է եվրոպական քաղաքակրթության ազդեցությունն իր գաղութների վրա որոշակի պահի կամ վայրում»* բացատրությունը, ակամա մտածում ես այն մասին,

---

9 Léonian R., *ibid.,* p. 9.

10 Դանիելյան Է. Լ., *Քաղաքակրթության տեսությունը աշխարհաքաղաքական հայեցակարգերում,* Տե՛ս (http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4898), (համանցից դուրս է բերվել 24. 04. 2017):

11 Տե՛ս *Longman Dictionary of English Language And Culture*. UK, Addison Wesley Longman, 1998, p. 226:

12 Տե՛ս *Merriam-Webster Dictionary* (https://www.merriam-webster.com/dictionary/civilization), (համանցից դուրս է բերվել 04. 04. 2017):

որ Բրիտանիայի՝ հային «քաղաքակրթելու[13]» վճռականության խորքում հավանաբար հենց այդ իմաստն էր քողարկված: Ինչևէ, բրիտանական կառավարությունն անվարան էր իր ծրագիրը Հայաստանում իրականացնելու հարցում և հենց այս ձգտմամբ պայմանավորված՝ պարբերաբար այդ երկիր էր ուղարկում պետական-հասարակական գործիչների, մտավորականների կամ պարզապես ճանապարհորդների՝ կոնկրետ առաքելությամբ. բազմակողմանիորեն ուսումնասիրել հայերին առնչվող ամեն ինչ՝ պատմություն, արվեստ, գրականություն, դավանանք, բնորոշ ազգային հատկանիշներ ու նկարագիր: 1800-1900-ականների ընթացքում կատարված այսօրինակ ճամփորդությունների արդյունքում լույս տեսած տարբեր հրապարակումներում նկատելի է երկու միտում. դրանք կամ լիովին թուրքանպաստ են ու կողմնակալ, կամ ներկայացնում են ականատեսի անկողմնակալ շարադրանք, որտեղ թուրքական բռնատիրության անմարդկային ճնշումների համատեքստում հայկական էթնոսը նկարագրվում է իր իրական արժեհամակարգով, ազգային կերպարի ու բնավորության ողջ գունագեղությամբ, կրթության ու զարգացման քիչ թե շատ իրական մակարդակով[14]:

Բրիտանական գործիչների օգնությամբ առաքելություններ են կազմավորվում նաև եվրոպական այլ երկրներում: Որպես այդպիսի առաքելության անդամ՝ Դանիայից Արևմտյան Հայաստան է գալիս Մարիա Յակոբսենը՝ հայ որբերին օգնելու

---

13 Տե՛ս *Merriam-Webster Dictionary* (https://www.merriam-webster.com/dictionary/civilization), (համանցից դուրս է բերվել 04.04.2017):

14 Հայաստանին ու հայերին առնչվող բրիտանացի ճանապարհորդ-հետազոտողների՝ 1800-1900-ական թթ. ներկայացրած հաշվետվությունների ցանկը, տե՛ս (http://www.jelleverheij.net/index.html), (համացանցից դուրս է բերվել 06.04.2014):

նպատակով: Նրա օրագրից տեղեկանում ենք, որ, երբ փամփուշտները վերջանում էին թուրք ասկյարն իր գոտուց հանում էր կացինն ու յաթաղանը, որովհետև «հայ թշնամուն, անկախ տարիքից, խնայել չէր կարելի»: Դժվար է հավատալ, բայց 13 տարեկան հայ տղան արդեն ընկալվում էր իբրև պետության թշնամի, 9 տարեկան տղաները պոտենցիալ թշնամի զինվորներ էին, 2-6 տարեկաններին բռնությամբ խլում էին մայրերից՝ տղաներին հետագայում ենիչերի դարձնելու, աղջիկներին ստրկացնելու և հարեմներին վաճառելու նպատակով՝ բռնի մահմեդականացնելով ու օտարելով նրանց իրենց հայկական ինքնությունից[15]:

Երբ բրիտանական կառավարությունը սկսեց առավել ընդգծված հետաքրքրություն ցուցաբերել Հայաստանի և Թուրքիայի նկատմամբ, 1830-1880 թթ. ամերիկյան առաքելական գործունեությունն արդեն որոշակի ձեռքբերումներ ուներ: Այս առումով՝ հիշատակության է արժանի ամերիկուհի Էլիզաբեթ Շելթոնի դոկտորական ատենախոսությունը, որտեղ մանրամասն նկարագրվում և վերլուծվում է 1859 թ. Կոստանդնուպոլսի հայկական հյուսիսային առաքելության տասնմեկ անդամների գործունեությունը: Այս առաքելությունները կարևորվում էին նրանով, որ նշված ժամանակաշրջանում շատ թույլ էին Միացյալ Նահանգների և Թուրքիայի կապերը: Ընդհանուր առմամբ առաքելություններն իրականացնում էին կրթություն ստացած, կալվինիստական և ամերիկյան դեմոկրատական արժեքներով տոգորված բարձրակարգ անձինք, որոնք, բնակվելով Կոստանդնուպոլսում և

---

15 Տե՛ս Մարիա Յակոբսենի օրագրի էկրանավորումը՝ *Ուրիշ հայրենիք*: (https://www.youtube.com/watch?v=hgrSqcbcy-w), (համացանցից դուրս է բերվել 06. 04. 2014):

գյուղերում, Միացյալ Նահանգներին անհրաժեշտ տեղեկատվություն էին մատակարարում՝ նամակագրության, հաշվետվությունների, հոդվածների տեսքով: Դրանք իրենց կայուն և, բավարար ազդեցությունն էին ունենում տվյալ շրջանի թուրքական քաղաքականության ձևավորման վրա, Շելթոնի բառերով՝ *profoundly shaped the views of policy makers and have influenced policies and opinions to this day:* Կոստանդնուպոլսի օտարերկրյա առաքելությունների կոմիտեն, որի մասն էր կազմում հյուսիսային հայկական կոմիտեն, ըստ Շելթոնի, առաջինն էր, որ արտահայտեց իր անհանդուրժողական պատասխանը 1890-ականների կեսերին իրականացված հայկական ջարդերի նկատմամբ[16]:

Բրիտանական առաքյալների առաջ խնդիր էր դրվում հաշվետվությունների տեսքով պահանջվող ողջ տեղեկատվությունը հանգամանորեն լուսաբանել և ներկայացնել հայի իրական կերպարն իր դրական ու բացասական կողմերով, նաև հստակ պատկերացում տալ այն իրավիճակի մասին, որում հայ ժողովուրդը հայտնվել էր մի կողմից օսմանյան, մյուս կողմից ռուսական տիրապետության տակ:

1913 թ. բրիտանական կառավարության որոշմամբ՝ բազմաթիվ այլ այցելությունների թվում Արևմտյան և ապա Արևելյան Հայաստան են մեկնում Նոել և Հարոլդ Բաքսթոնները, որոնք նպատակադրված էին պարզելու հայ էթնոսի կյանքի բոլոր մանրամասները, ներկայացնել դրանք բրիտանական

---

16 Տե՛ս *Faith, Freedom, and Flag: the Influence of American Missionaries in Turkey on Foreign Affairs,1830-1880,* Washington D.C., *2011:* Հետաքրքիր է, որ առաքելության ջանքերով պայմանավորված և ներդրված միլիոնների շնորհիվ՝ Առաջին աշխարհամարտի օրերին նախագահ Ուիլսոնը պատերազմ չհայտարարեց Թուրքիային:

իշխանություններին, որոնք էլ ջանքեր պիտի գործադրեին Հայաստանն ու հային ծառայեցնելու բրիտանական շահին:

Նրանց ճամփորդության ավարտին գրված հաշվետվությունը հետագայում՝ 1914 թ. հրատարակվում է գրքի տեսքով: Տպագրված լինելով դարասկզբին՝ Բաքսթոնների գիրքն այսօր էլ շարունակում է հաճելիորեն զարմացնել հեղինակների ուղղամիտ վերաբերմունքի, նուրբ հոգեբանական ներհայեցումների, հաճախ ազնիվ ու արդարամիտ արժևորումների առումով: Նրանց հաջողվում է պատմաքաղաքական տարբեր փաստերի վերլուծական մեկնաբանություններով բացահայտել հայի իսկական էությունը: Այդ բացահայտումը վեր է ամեն կարգի վերապահումներից: Հանգամանալից ու համակողմանի դիտարկումների արդյունքում Բաքսթոնները հայ ինքնության կարևորագույն բաղկացուցիչներից էին համարում կրթության ու գիտության նկատմամբ հայի անվերապահ նվիրումը և, իհարկե, ինքնազոհաբերման նրա պատրաստակամությունը՝ հանուն հայրենիքի ու դավանանքի:

Օսմանյան լծի տակ տարբեր ազգություններ կային, և նրանցից յուրաքանչյուրին թուրքը յուրովի էր գնահատում: Նրանք քաջ գիտակցում էին, որ նեստորական և հակոբիկյան ասորիները նախ սակավաթիվ էին և ապա իրենց բազմադարյա հպատակության ընթացքում արդեն լիովին կորցրել էին ընդվզելու ցանկությունը և այլևս վտանգավոր չէին: Քրդերն ու արաբների մեծ մասը թուրքի կրոնակից եղբայրներն էին և առանձնակի ազգային համախմբվածություն չէին դրսևորում: Բացի այդ քրդերը գաղափարական առումով շատ ցածր էին թուրքերից: Ինչ վերաբերում էր հայկական գաղափարայնությանն ու արժեհամակարգին, ապա դրանք այնքան անհասանելի էին թուրքին, որ վերջինիս մեջ վախ ու թշնամանք էին

ծնում հայի հանդեպ, հատկապես որ հայերը շատ մեծ թիվ էին կազմում Օսմանյան կայսրությունում, մտավորականությունը նույնպես մեծաթիվ էր, ու գրեթե բոլորը տոգորված էին ազգային գաղափարախոսությամբ, ու թեև նրանց մեջ քաղաքականությամբ զբաղվողները շատ չէին, նրանք, այդուհանդերձ, բավականին գործունյա էին և համառորեն ճանապարհներ էին փնտրում տվյալ քաղաքական ռեժիմից օր առաջ ազատվելու համար: Հավասար քաղաքական պայմաններում հայերը կարող էին ապստամբել, և թուրքերն անկարող էին դրան դիմակայել, այնպես որ ցանկացած դրսևորում կասեցվում էր որոշակի քաղաքական մեթոդներով: Այն, որ թուրքերը հայերից ավելի խելացի չէին, չէր խանգարում թուրքին բիրտ ուժի գործադրմամբ իր ուզածին հասնել: Ըստ Վիգրամի՝ թուրքի համար անհնարին էր դիմակայելը նույնիսկ հավասար քաղաքական պայմաններում: Այնպես որ, հայերի ցանկացած անհանգստություն կասեցվում էր բիրտ ուժով[17]: Թերևս հենց այս հանգամանքն էր, որ տրամադրեց թուրքական իշխանություններին քրդերին հրահրելու հայերի դեմ, նրանց ուժն օգտագործելու որպես հայից ազատվելու միջոց:

Հետաքրքրական է, որ Լոուրենս Արաբացու՝ ամերիկացի լրագրող Լինքոլն Սթեֆֆենսին տված հարցազրույցը հաստատում է այն իրողությունը, որ հայի մտավոր ունակություններն ու ստեղծագործական մեծ ներուժը միշտ էլ վախ են ներշնչել օտարներին, այդ թվում նաև թուրքերին՝ անկախ

---

[17] Wigram E.T., *The Cradle of Mankind. Life In Eastern Kurdistan.* Adam & Charles Black, London, 1922, p.19.

նրանից, որ, ինչպես Լոուրենսն է բնութագրում, *առաջին քրիստոնյա ազգը՝ երդվյալ քրիստոնյա հայը, անվնաս է*[18]:

Բաքսթոնների համոզմամբ՝ լիարժեք ընկալել հայ և թուրք ինքնության յուրահատկություններն ու դրանց տարբերությունները անկարելի է՝ առանց հաշվի առնելու պատմական հանգամանքներն ու դրանց հետևանքով ստեղծված իրավիճակը, թուրքի բռնատիրական ու անմարդկային վերաբերմունքը ինչպես հայի, այնպես էլ ճակատագրի բերումով Օսմանյան կայսրությունում հայտնված ազգային փոքրամասնությունների, և, իհարկե, այդ ժողովուրդների պատմամշակութային ժառանգության ու արժեհամակարգի նկատմամբ: Ցավալի է նաև այն, որ սեփական շահի նկատառումներով եվրոպական տերությունները չէին էլ ցանկանում «նկատել» թուրքի հայատյաց և ընդհանրապես մարդատյաց քաղաքականության վնասները:

Բաքսթոնները, նպատակ հետապնդելով ավելի համակողմանի ներկայացնելու հայերի նկատմամբ թուրքական վայրագությունների ծայրահեղությունն ու անպատժելիությունը, հանգամանորեն քննում են տվյալ ժամանակաշրջանում եվրոպական գերտերությունների հարաբերություններն ու շահերը թե՛ միմյանց և թե՛ թուրքերի ու հայերի նկատմամբ: Թերևս շահերի հարաբերական կայունության պատճառով էլ քաղաքականության նմանօրինակ դրսևորումների այսօր էլ կարելի է հանդիպել: Այս առումով հիշատակելի է Նիդերլանդների ներկայացուցիչների պալատի նախկին պատգամավոր, Ուտրեխտի համալսարանի պատմության

---

[18] Steffens Lincoln, *Armenians Are Impossible.* An Interview with Lawrence of Arabia in 1919. (http://www.unz.org/Pub/Outlook-1931oct14-00203), (համացանցից դուրս է բերվել 06.04.2014):

դասախոս Ա. Ժ. Բոեքեստիժնի հոդվածը, որտեղ հեղինակը փորձ է արել եվրոպական տերությունների դիրքորոշումը խնդրի վերաբերյալ բացատրել իրենց իսկ պատմության փաստերով: Նրա համոզմամբ՝ Արևմտյան Եվրոպայի քաղաքագետների միտումը՝ բարոյական գերազանցություն ցուցաբերելու այնպիսի հարցերում, որոնք ուղղակիորեն իրենց չեն վերաբերում ռազմավարության երկակի չափանիշների դրսևորման ռիսկ է պարունակում: Սակայն հոդվածագիրն ինքն էլ տարօրինակ դիրքորոշում ունի. մի կողմից թվում է, թե տեղին է համարում ընդունել նախորդ դարի սկզբում Օսմանյան Թուրքիայի՝ հայերի նկատմամբ իրականացրածը՝ որպես ցեղասպանություն, մյուս կողմից սակայն, հանդիմանելով եվրոպացիներին, խորհուրդ է տալիս չմոռանալ նաև իրենց մեղքերի մասին[19], իսկ հետո եզրակացնում, որ մարդկայնության պակաս միայն թուրքերը չէ, որ դրսևորել են: Եվ այսպես եվրոպացիներին քննադատելով հանդերձ՝ նա մի տեսակ կասկածի տակ է առնում Հայոց ցեղասպանության իրողությունը՝ միանգամից դրսևորելով եվրոպական անթաքույց թրքամետություն: Ըստ պարբերության վերջին նախադասության թուրքերը մենաշնորհ չունեն եվրոպացիների նկատմամբ՝ մարդկային հատկանիշերի պակասի առումով: Իհարկե, ներկայումս որոշ եվրոպական տերություններ փորձում են շտկել քաղաքականության մեջ թույլ տված իրենց

---

[19] Հոլոքոսթից բացի Գերմանիան հարավաֆրիկյան հեռեռո ցեղին բնաջնջեց, 1954-1962 թթ. Ֆրանսիան Ալժիրում ցեղասպանության ենթարկեց 200.000 մուսուլմանների, իսկ Լեոպոլդ թագավորի ուրվականը տակնուվրա արեց Բելգիական Կոնգոյոն, և այսպես շարունակ: Տե՛ս Boekestijn Arend Jan, *Turkey, The World and The Armenian Question:* Տե՛ս նաև (www.let.uu.nl/~arendjan.boekestijn/.../Turkey%20the%20World%20and%20the%20...), (համացանցից դուրս է բերվել 15.09.2016):

բացթողումները՝ ճանաչելով 1915 թ. Հայոց ցեղասպանության փաստը:

Ըստ Բաքսթոնների վերլուծական մեկնությունների՝ հայերի դժբախտության պատճառը հարկ է փնտրել նրանց զարգացման բարձր աստիճանի, յուրահատուկ օժտվածության և տիրապետողների բարբարոսական մակարդակի միջև եղած տարբերության մեջ:

Մեծ է Բաքսթոնների զարմանքը, երբ բացահայտում են, որ բնաջնջման եզրին կանգնած տառապյալ հայը դպրոցներ է բացում, մտածում կրթության ու հոգևոր խնդիրների մասին: Նրանց զարմանքն ու հիացմունքը կրկնապատկվում են, երբ տեսնում են, որ հայ եկեղեցին նպաստում է ազգի կրթական ու մշակութային խնդիրների լուծմանը, հայ կրոնավորները բացառապես գործում են ժողովրդի բարօրության համար, և եկեղեցին իր նպաստն է բերում ազգային հարցերի լուծմանը՝ կանգնելով ժողովրդի կողքին, իսկ ժողովուրդն էլ հարգալից է իր կղերի նկատմամբ՝ պատրաստ կյանքը զոհելու հանուն հավատի ու հայրենիքի: Նրանց կարծիքով՝ այդպիսի բարբարոս իրավահամակարգի պայմաններում հայերին պետք է մտահոգեր ոչ թե մշակույթին կամ տնտեսությանը վերաբերող հարցը, այլ անձնական ու բարոյական անապահովության խնդիրը: Բարբարոսի հայահալած վերաբերմունքին և հայերի տարրական ապահովության բացակայությանն անդրադառնալիս Բաքսթոնները փոխանցում են իրենց տեսածն ու լսածը ճշգրտորեն՝ առանց խուսափելու մանրամասների հիշատակումից: Մարդկանց անասելի տառապանքները նկարագրելով՝ Բաքստոնները հիշատակում են փաստեր, որոնց առկայությունն արդեն իսկ խոսուն է: Նրանք փորձում են ընթերցողին փոխանցել իրենց կարեկցանքը հայի տառա-

պանքի և ծայրահեղ խորշանքը՝ թուրքի վարքի նկատմամբ, երբ նշում են, որ *նրանց, ովքեր չէին մորթվել փողոցներում ավելի դաժան տառապանքներ էին սպասվում: Որոշ դեպքերում մարդկանց ոտքերի տակ ձիու պայտ էին մեխում, կանանց ու տղամարդկանց մերկ մարմիններին վայրի կատուներ էին կապում, որ իրենց ճանկերով պատառոտեն այդ մարդկանց միսը, շատերի վրա առատ նավթ էին լցնում ու կենդանի-կենդանի կրակ տալիս հենց փողոցներում…* Հեղինակները համոզմունք են հայտնում, որ միանգամայն արդարացի է ծանր հիշողություններով համակված և այդպիսի տառապանքներ տեսնող հայի վիճակը բնութագրել ոչ այլ կերպ, քան անտանելի:

Էդինբուրգում հրատարակվող «*Christian Register*» ամսագիրը 1827 թ. թուրքին նկարագրել է իբրև *քաղաքակրթությունից հեռու անբուժելի բարբարոս*, որը ոչ միայն անկարող է ստեղծելու մշակութային արժեքներ, այլև ոչ մի կերպ չի կարողանում հագեցնել արյան իր անհագուրդ ծարավը:

Հետաքրքրական է, որ եթե անգլիացու դաշնակից թուրքի բարբարոս վարքի պոռթկումները սկզբում անըմբռնելի էին Բաքսթոնների համար, ապա ճանապարհորդության վերջում արդեն անգլիացիներին ստիպում են եզրահանգել, որ բարբարոս թուրքը երբեք էլ չի դառնա քաղաքակիրթ: Թուրքն ունի բարբարոսի ամենահատկանշական գիծը՝ նա նենգամիտ է ու ագահ: Ամենազարհուրելին իրականացնելու համար թուրքը դիմում է խորամանկության՝ օգտագործելով բանտերից հատուկ այդ նպատակով ազատ արձակված

հանցագործներին[20] և քրդական ավազակախմբերին, որոնք իրենց «քաջագործությունների» համար առատորեն վարձատրվելու էին հայերի ունեցվածքով[21]: Քրդերի զարգացմանն ամեն կերպ խոչընդոտելով՝ թուրքը փորձում է նրան դարձնել իր ձեռքի անխափան գործիքը: Թուրքական անփոփոխ քաղաքականությունը, ինչպես նշում են Բաքսթոնները, թուրքական լծի տակ ապրող քուրդ և հայ ազգերի արժեքների առնչությամբ մեկն էր՝ գաղափարապես ցածր մակարդակի վրա գտնվող քրդերին առավելագույնս օգտագործել թուրքի կողմից այլևս որպես անտանելի ընկալվող հայերի դեմ: Հատկապես այս շրջանում է, որ թուրքը կայացնում է իր որոշումը. եթե քրդերը չեն կարող հարկեր վճարել կամ զինվոր լինել, ապա գոնե պիտի օգնեն, որ թուրքի իշխանությունն ապահովվի:

Հային անողոքաբար ոչնչացնելու թուրքական վճռականությունը, լայն առումով, պայմանավորված է բարբարոսի կողմից քաղաքական դրությունը ընկալելու և արժևորելու

---

20 Այդ մասին տպագրվել է անգլիական «*Times*» լրագրում՝ 1909 թ.: Կիլիկիայում և հարակից շրջաններում տեղի ունեցած հայկական կոտորածները անկողմնակալորեն լուսաբանող հաղորդումների մասին տե՛ս Պողոսյան Վ., *1909 թ. Կիլիկյան կոտորածների արձագանքները «Թայմզ» թերթում* //Հայագիտության հարցեր, հանդես 1, ԵՊՀ, Երևան, 1914, էջ 164:

21 Տարբեր ժողովրդների մասնակցությունը հակահայկական գործողություններին նպաստավոր էր երկուստեք: Մասնակցելով իրենց հարևանների կոտորածներին, այդ ժողովուրդների ներկայացուցիչները հնարավորություն էին ստանում տիրանալ զոհերի ունեցվածքին: Օրինակ, Տիգրանակերտի նահանգում մահմեդական կրոնավորների կողմից հրապարակայնորեն հայտարարվում էր, թե «գյավուրների ունեցվածքը, կյանքը և կինը հալալ է իսլամին»: Տե՛ս Հայրապետյան Ա. Ս., *Հայկական հարցն ու հայոց ցեղասպանությունը* // Դաս., էջ 88:
Տե՛ս (etm.gspi.am), (համացանցից դուրս է բերվել 10.12.2016):

անկարողությամբ, և հենց այս պարագայում էր, որ իշխանություններն ամեն կերպ թուրքի գիտակցության մեջ արմատավորում էին հային՝ որպես պետական թշնամի ընդունելու գաղափարը: Այսօր ժամանակակից որոշ թուրք հետազոտողներ նույնիսկ այնքան հեռու են գնում, որ փորձում են հայի դավաճան ու պետության թշնամի լինելու սին գաղափարի միջոցով արդարացնել թուրքական կառավարության կողմից կազմակերպված ոճիրը՝ հայերի ցեղասպանությունը[22]՝ վերաձևակերպելով այն իբրև *պետությանն անհավատարիմ* ազգային փոքրամասնության տեղահանություն *(դեմոգրաֆիկ ինժեներիա)*[23]: Ըստ Նեսիմ Շեքըրի՝ հայերի բռնի տեղահանումն ու ոչնչացումը անհրաժեշտ էր երկրում *միատարր*՝ միայն թուրք բնակչություն ունենալու համար: Չնայած թուրքական այս դիրքորոշմանն ու հիմնավորմանը՝ առաջադեմ եվրոպական գործիչները հրաշալի հասկանում և մեկնաբանում են *դեմոգրաֆիկ ինժեներիան* իբրև ցեղասպանության իրական ապացույց[24]: 1913-14 թվականներին Բաքսթոնները փաստորեն ակամա դարձել էին Առաջին աշխարհամարտի նախօրեին թուրքական կառա-

---

22 Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությանն առնչվող հարցերի մասին տես՝ Սաֆրաստյան Ռ., *Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.)*, Երևան, 2009:

23 Şeker Nesim, *Forced Population Movements in the Ottoman Empire and the Early Turkish Republic: An Attempt at Reassessment through Demographic Engineering*. // EJTS,16/2013, p.3.
Տե՛ս [https://ejts.revues.org/439] (Համացանցից դուրս է բերվել 01. 09. 2017)
Տե՛ս նաև Gasparyan S., *Forced Migration: The Case of Armenia - 1915 and beyond*. // Armenian Folia Anglistika, Reviewed International Journal, 2/14, YSU, Yerevan, 2015, pp.137-150.

24 Weiner M., Teitelbaum M. S., *Political Demography, Demographic Engineering*, Berghahn Books, New York & Oxford, 2001, pp. 54-60.

վարության՝ քրիստոնյաների և մասնավորապես արևմտահայերի նկատմամբ իրականացվող բացահայտ խտրական քաղաքականության ականատեսը, այն քաղաքականության, որի տրամաբանական շարունակությունն էր դառնալու 1915 թ. Հայոց մեծ եղեռնը: Սակայն այս ամենը բոլորովին չէր խանգարում, որ Բաքսթոնների զննող հայացքը խորամուխ լիներ հայի նկարագրում, բացահայտեր նրա սովորույթները, կենսակերպի, մտածելակերպի ու հոգեկերտվածքի յուրահատկությունները, թեև, երբեմն, նույնիսկ չհասկանալով որոշ նրբություններ:

Հենց այս շրջանում էր, որ պաշտոնական փաստաթղթերում հայն օտարի կողմից անվանվում էր «*the other*[25]» (այլ, ուրիշ), այսինքն այնպիսին, որ, գտնվելով Ասիայի և Եվրոպայի միջև, տարբերվում է երկուսից էլ: Պատահական չէ, որ Հայաստանի պատմությանը վերաբերող իր գրքի հավելվածում, հենվելով Հայոց մեծ եղեռնին առնչվող փաստաթղթերին, Առնոլդ Թոյնբին գրում է, որ հայը եղել է Մերձավոր Արևելքում արևմուտքի և արևելքի միջև բնակվող մարդկային հանրության այն հատկանշական հատվածը, որին բաժին է ընկել քաղաքական դժբախտությունների ծանրագույն բեռը՝ հաղթահարելու ճակատագիրը[26]: Ըստ Թոյնբիի՝ Հայաստանի վիճակն անբնական էր ու վտանգավոր, նույնիսկ հիվանդագին, քանի, որ հայն անհամատեղելի էր թե՛ բարբարոս Արևելքի և

---

25 Laycock Joanne, *ibid.*, p. 34.

26 Toynbee Arnold, *History of Armenia, 1916.* Տե՛ս (https://www.google.am/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=9&cad=rjact=8&ved=0CF0QFjAI&url=http%3A%2F%2Fwww.armenica.org%2Fcgibin%2Farmenica.cgi%3F140604167319001%3D1%3D7%3D0%3DK142%3Dnada%3D1%3D3%3DA&ei=i_NOVfDmNYuusQGdg4DgCQ&usg=AFQjCNHbiN9olDxd9a5HE6qZrA78AQmAnw/), (համացանցից դուրս է բերվել 11.03.2014):

թե՛ քաղաքակիրթ Արևմուտքի հետ: Ջոան Լեյքոքի մեկնաբանությամբ՝ Բրիտանական կայսրությունը Հայոց մեծ եղեռնին նախորդող շրջանում իր առջև խնդիր էր դրել Արևելքի ու Արևմուտքի սահմանին գտնվող հոգեպես կաթվածահար, սակայն երբեք չհանձնվող հային «քաղաքակիրթ դարձնել»[27]:

Հայաստան ուղարկվող ճանապարհորդների ու պետական-հասարակական գործիչների առաքելությունները միտված էին նպաստելու Բրիտանական կառավարության մեծ ծրագրի իրականացմանը:

Բաքսթոններն իրենք են խոստովանում, որ հայ-թուրքական հարաբերությունների լիարժեք ընկալմանը մեծապես նպաստել են պատմական իրավիճակի, թուրքի բռնատիրական ու անմարդկային վերաբերմունքի, թուրքական կայսրության սահմաններում տվյալ ժամանակահատվածում ապրող ժողովուրդների ազգային ու պատմամշակութային նկարագրի ճիշտ արժևորումը: Նրանք նկատում են, որ հայերը հայտնվել են բնաջնջման եզրին սոսկ այն պատճառով, որ գտնվում են զարգացման աստիճանով իրենցից շատ ավելի ցածր բարբարոսների տիրապետության տակ, որոնց հովանավորում են եվրոպական տերությունները: Փոխանցելով եվրոպացիների կարծիքը՝ Բաքսթոնները թուրքական կառավարության հայահալած քաղաքականության հիմնական ուղղվածությունը բնութագրում են որպես թուրքի կողմից հայերի նպատակային ոչնչացում, գերտերությունների «անզոր» թողտվության հետևանք: Հեղինակների այս ընկալումը ջանացել ենք պահպանել գրքի հայերեն թարգմանության մեջ:

Գերտերությունների՝ իրենց անզոր ներկայացնելու և արտաքուստ չմիջամտելու երեսպաշտ վարքագիծը, ըստ էության,

---

[27] Laycock Joanne, *ibid.*, p. 35.

ոչ այլ ինչ էր, քան թուրքին լռելյայն քաջալերելու քաղաքականություն: Կասկածից վեր է, որ Բրիտանիան և մյուս եվրոպական տերությունները ցանկության դեպքում հեշտությամբ կարող էին կասեցնել թուրքական անօրինությունները: Գուցե 1915 թ. աշխարհը միլիոն ու կես հայերի ցեղասպանության ականատեսը չդառնար, եթե գերտերությունների դիրքորոշումը թուրք-հայկական հարաբերությունների նկատմամբ տարբեր լիներ[28]:

Հայի կերպարին անդրադառնալիս՝ Բաքսթոնները այն համոզմունքն են հայտնում, որ իրենց ճամփորդությունը Հա-

---

28 Անդրադարձ կատարելով ցեղասպանության ռումմելյան տեսությանը (Rummel R. J., *Statistics of Turkey's Genocide and Mass Murder*) [https://www.hawaii.edu/powerkills/SOD.CHAP5.HTM] (Accessed on 01. 03. 2016)՝ պարզում ենք, որ թուրքական անօրինությունների ճշգրիտ բնութագրման համար նախընտրելի է գործածել ոչ թե Հայոց մեծ եղեռն եզրաբանական կապակցությունը, որը չի պարզաբանում, որ եղել է ցեղը, գենը վերացնելու դիտավորություն, այլ *ցեղասպանություն, գենոցիդ, դեմոցիդ* եզրույթները, որոնք արդեն ներառում են պետական մակարդակով կազմակերպված ազգի բնաջնջման ցանկացած դրսևորում: (Տե՛ս նաև Gasparyan N., *Analysis and Interpretation of Genocide Related Terms.* // Armenian Folia Anglistica, 1/16, YSU, Yerevan, 2015, pp. 139-150): Գուցե հենց շեշտը ցեղի ոչնչացումից մեծաքանակ մարդկանց ոչնչացման վրա դնելու նպատակով էլ ԱՄՆ նախկին նախագահ Օբաման, բազմաթիվ առիթներով, գրավոր և բանավոր, անդրադարձել է երևույթին իբրև *Ցեղասպանություն*՝ ընդգծելով ԱՄՆ-Հայաստան հարաբերությունների կարևորությունը և հայտարարել, որ հենց ինքն է լինելու այն նախագահը, որը կճանաչի Հայոց ցեղասպանությունը: Սակայն փաստ է, որ իր նախագահության շրջանում նա այդպես էլ երբեք չգործածեց *Գենոցիդ* եզրույթը՝ չցանկանալով «վիրավորել» իր բարեկամ թուրքին և թուրք-ամերիկյան շահը գերադասելով արդարամտությունից ու բարոյական դիրքորոշումից: (Օբամայի և ամերիկյան պետական այրերի կողմից Ցեղասպանություն – Genocide եզրույթի գործածության մանրամասների մասին) տե՛ս (http://armenians-1915.blogspot.com/2010/10/3158-obamas-track-record-of-armenian.html), (համացանցից դուրս է բերվել 01.03. 2017) *Եղեռն* և *գենոցիդ* եզրույթների համարժեքության մասին մանրամասն տե՛ս Gasparyan S., *The Armenian Genocide: A Linguocognitive Perspective.* YSU Press, Yerevan, 2014, pp. 167-185:

յաստան էական դեր է խաղացել հային հասկանալու և նրա մասին ճշգրիտ ու ամբողջական պատկերացում կազմելու հարցում, քանի որ հային, իրոք, պետք էր տեսնել հենց իր տան ու առօրյա կենցաղի պայմաններում: Նրանք ափսոսանք են հայտնում, որ եվրոպացին լիարժեք պատկերացում չունի հայ ազգի մասին, քանի որ, դժբախտաբար, փոքրաթիվ անգլիացիներ են կարողանում այցելել Հայաստան՝ տարածական դժվարությունների պատճառով:

Եվ այսպես, Բաքսթոնների հետևողական դիտարկումներն ու վերլուծությունները նրանց բերում են այն մտքին, որ հայերին կարելի է դասդասել մի քանի խմբի՝ հողի տքնաջան մշակ, որը անջրդի հողին իր սերը տալով այն վերածում է դրախտային այգու, կրթության, լեզուների, արվեստների նկատմամբ յուրահատուկ օժտվածությամբ մտավորականներ, որոնք ստեղծում են համաշխարհային արժեքներ, տնտեսությունը զարգացնելու հակում ունեցող գործիչներ, քաղաքական կազմակերպիչներ, և, որ ամենահիշարժանն է, հայն այն ազգն է, որն աշխարհին տվել է քաջարի ռազմիկներ ու զորավարներ: Հատուկ նշվում է նաև, որ թուրքական բանակում հրետանին վստահված էր հային, թեև թուրքական կառավարությունը նրան արդեն ընկալում էր իբրև «պետության թշնամի»:

Բաքսթոններն, իհարկե, քաջատեղյակ էին, որ մեծ քաղաքներում հայերը հայտնի էին որպես առևտրի գիտակներ, որոնք միանգամայն որոշիչ դեր էին խաղում երկրի տնտեսությունը խթանելու գործում, սակայն նրանք համոզվել էին, որ այդ ազգի դիմագիծն արտասահմանում կոմերցիայով զբաղվող հայը չէր ձևավորում: Նրանք լավ գիտեին, որ, օրինակ, Լոնդոնում հայերի ճնշող մեծամասնությունն ուսյալ էր

և մեծ հաջողությամբ ուսուցչական գործունեություն էր իրականացնում, մասնավորապես՝ արաբերենի, թուրքերենի և այլ արևելյան լեզուների ուսուցման բնագավառում: Բայցևայնպես հայի ճիշտ նկարագիրը կարելի էր տալ միայն այն դեպքում, եթե փորձես նրան ընկալել իր բնաշխարհում, քանզի հենց այստեղ էր, որ նա կարող էր նվիրվել իր հողին անսահման սիրով, իր քրտինքով ոռոգել հայրենի հողն ու բարիք քաղել նրանից (with an extraordinary love of cultivating the soil)[29]:

Գրքի հեղինակների գնահատմամբ՝ հայը նաև առնական էր, բարետես ու համակրելի, անհամեմատելիորեն ավելի կոկիկ ու մաքրակենցաղ, քան նրա թուրք և քուրդ հարևանները, նույնիսկ եթե ցնցոտիների տակ ստիպված էր թաքցնել իր թշվառությունը:

Անգլիացի եղբայրները ցավալի են համարում այն փաստը, որ բարձր օժտվածություն ունեցող այս ժողովուրդը պարտադրված է ենթարկվելու մի այնպիսի իրավահամակարգի, որով վայրենիներին անգամ չես կառավարի: Հետաքրքիր անդրադարձ կատարելով քիփլինգյան բառապաշարին՝ նրանք թուրքերին որակում են որպես *թերզարգացածների ցեղ (Lesser breeds)*, որի վերացումն աշխարհի համար մեծ կորուստ չի լինի, քանզի նույնիսկ սնագործ աշխատանքով նրանք անկարող են որևէ նպաստ բերել աշխարհի զարգացման ընթացքին:

Բաքսթոնների արժևորմամբ՝ քաղաքակիրթ ազգերի գոյությունը շատ կարևոր է նաև այլ ազգերի համար, քանզի նրանք իրենց նպաստն են բերում համաշխարհային քաղա-

---

[29] Buxton Noel and Harold Buxton, *ibid.*, 1914, p. 31.

քակրթության զարգացմանը, և աշխարհն իրավունք չունի կորցնելու այս տիպի ազգերին: Բաքսթոնները ցավով են մտածում այն իրողության մասին, որ աշխարհն անտեղյակ է կամ թե չի գիտակցում, որ սակավաթիվ հայ ազգն անվերապահորեն հենց քաղաքակիրթ ազգերի թվին է պատկանում, և աշխարհը պարտավորություն ունի այդ ազգին պահպանելու[30]: Դիտարկումների արդյունքում Բաքսթոնները եզրակացնում են, որ թուրք *բարբարոսների* տիրապետության տակ գտնվելը խաթարում է հայ ազգի բնականոն զարգացումը, և, որ *բարբարոս ազգը, պակաս խոցելի է, քան քաղաքակիրթը, որին նա պարտադրել է իր լուծը*:

Ականատեսի փորձը նրանց բերում է այն համոզման, որ սին են թուրքական իշխանությունների շրջանառության մեջ դրած գաղափարները, թե հայերի հարցը կլուծեն ներպետական բարեփոխումների միջոցով: Ճամփորդության ընթացքում տեսած անօրեն վերաբերմունքն ու վայրագություններն այն աստիճան անընդունելի են, որ ոչ մի ակնթարթ անգամ Բաքսթոնները չեն վարանում թուրքին «նզովել»: Նկատենք, որ, երբ խոսքը գնում է իրականությունն անկողմնակալ ներկայացնելու մասին, Բաքսթոնները փորձում են ընթերցողին հաղորդել իրենց տեսածը, լսածն ու զգացածը սեփական կանխակալ, պատկերավոր գնահատականներից խուսափելով, որը, թերևս, պայմանավորված է նրանց դիվանագիտական մոտեցմամբ: Դիվանագետի տակտիկան, այդուհանդերձ նրանց չի խանգարում իրերն իրենց անունով կոչել: Թուրքերի՝ պետական մակարդակով իրականացրած հայահալած, հայասպան, մարդատյաց քաղաքականությունը ստիպում է ականատես

---

30 Buxton Noel and Harold Buxton, *ibid.*, 1914, p. 122.

գործիչներին եզրահանգում անել. դարեր ի վեր եղել ու անփոփոխ է մնում այն իրողությունը, որ Թուրքիան իրավական պետություն չէ նույնիսկ թուրքի ու քրդի համար, որոնք պետության թողտվությամբ չգրված ավազակային օրենքներով են վերաբերվում նույնիսկ այդ երկրում իրենց դիվանագիտական առաքելությունն իրականացնող եվրոպական խմբերին[31]: Հետևաբար, անգլիացի հումանիստ գործիչները համոզված են, որ պետք է ընդմիշտ մոռանալ թուրքերի՝ պետական բարեփոխումների միջոցով հարց լուծելու կարողության մասին: Հեղինակները նկատում են նաև, որ արժանապատիվ ապրելու համար նույնիսկ թուրքն ու քուրդն են ստիպված լինում հեռանալ Թուրքիայից[32]: Տրված գնահատականները հստակ են ու պարզ: Դրանք արտահայտված են առանց պաճուճանքների, քանի որ նախատեսված են եղել երկու կարգի նպատակային ընթերցողի համար՝ կառավարության, այսինքն պաշտոնական ընթերցումների, և համաշխարհային զարգացումներով հետաքրքրվող միջին անգլիացու, որի համար կարևորը նյութն ըստ էության ընկալելն է: Սակայն Բաքսթոնների արտաբերած միայն մեկ՝ *բառիս բուն իմաստով նզովյալ լինեն (in the fullest sense damning)* կապակցությունը, արդեն չափազանց խոսուն է, հատկապես, եթե հաշվի առնենք, որ այն հանդիպում է պաշտոնական փաստավավերագրական նոթերում: Սովորաբար նման արտահայտության դիմում են ծայրահեղ դեպքերում, երբ այլևս ասելիք չի մնում, երբ անզոր են փոխել որևէ բան, երբ տեսածի սարսափների ազդեցությամբ մարդկային ուղեղն ու հույզերը այլևս դադարում են ընկալել աներևակայելին, երբ թևա-

---

31 Buxton Noel and Harold Buxton, *ibid.*, 1914, p. 48, p. 151.

32 Buxton Noel and Harold Buxton, *ibid.*, 1914, p. 50, pp. 66-67.

թափ ողբում են մի ամբողջ մորթվող ժողովրդի համար: Բաքսթոններն էլ, Լոուրենս Արաբացու նման, հայերի և ազգային փոքրամասնությունների նկատմամբ թուրքի վարած պետական քաղաքականության հիմնագիծը բնութագրում են ճանաչողական արժեք ներկայացնող «*butcher» (մորթել)* բայով[33]: Հետաքրքրականն այն է, որ փաստագրական գործերի հեղինակները թուրքական կառավարության ներքին քաղաքականության ուղղությունները քննարկելիս՝ ամենից հաճախ հենց այս բայի օգնությանն են դիմում: Նկատենք, որ տվյալ ժամանակաշրջանի թուրքական իրականության և թուրքի անփոփոխ բարբարոս վարքի ամենաէական բնութագրիչը հենց *մորթելու(butcher)* մոլուցքն էր, որն իրականում թուրքի մշակույթի անբաժանելի բաղադրիչն էր, չնայած, հետագայում, թուրքական պաշտոնական աղբյուրներում այդ *մոլուցքն* այլ անվանում գտավ՝ *միատարր դարձնել երկրի բնակչությունը*[34]: Հենց այդ *մորթելու* մշակույթի ականատեսը դառնալով՝ Բաքսթոնները որոշակի եզրահանգումներ են անում, որոնք արտացոլվելով գրքի տարբեր մասերում, թույլ են տալիս ընթերցողին առանց դժվարության հասկանալ հեղինակների մտադրությունները ու զգացողությունները:

---

33 Lawrence T.E., *Seven Pillars of Wisdom,* George Doran Publishing Company, USA, 1926. p. 20. Տե՛ս (https://www.google.am/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=8&cad=rja&uact=8&ved=0CFIQFjAH&url=http%3A%2F%2Fbiological121.charactermakesthedifference.com%2Fseven-pillars-ofwisdom-vol-1-fptmsas.pdf&ei=mf1OvbDQBoqcsAHSlYAw&usg=AFQjCNGV9Fq8N d5QBEcCTQbrtNJzNVPZQA&bvm=bv.92885102,d.bGg), (համացանցից դուրս է բերվել 24.11.2013):

34 Վահագն Դադրյանի բնորոշմանը՝ *ի վերջո, ըստ ցանկացած սահմանման, մշակույթը կանխատեսելի վարք է: Տե՛ս* Dadrian, V. N. *The History of the Armenian Genocide.* Berghahn Books, Oxford, 1995, p. 123:

Բաքսթոնների բառերով՝ *թուրքն իբրև ժառանգություն Բյուզանդական կայսրությունից ստացավ նրա հարստություններն ու մշակույթը, իսկ ինչպե՞ս վարվեց նա դրանց հետ: Ասիայում չկա ուրիշ ավելի աղքատ, ավելի հետամնաց, ավելի անօրեն ծայրամաս այսօր: Թուրքը եղածի վրա ոչինչ չի ավելացրել և չի էլ կարող, որովհետև նախ պետք է վերացնի կողմնակալ արդարությունը և յուրաքանչյուրի համար ապահովի հավասար հնարավորություններ:* Նրանք համամիտ են 1827 թ. «*Christian Register*» ամսագրում արտահայտված կարծիքին և հակված են մտածելու, որ թուրքը, տիրանալով Հռոմեական կայսրությանը, 600 տարվա ընթացքում ոչինչ չի ավելացրել…, այլ միայն կատարելագործել է բարբարոսի իր նկարագիրը:

Բաքսթոնները պատկերացնել անգամ չէին կարող, որ ճանաչված պաշտոնական կազմակերպություններն անգամ (ՄԱԿ, ՅՈՒՆԵՍԿՕ) կարող էին խեղաթյուրել ակնհայտ ճշմարտությունը՝ Օսմանյան պետությունն ուղղակիորեն ներկայացնելով որպես բյուզանդական քաղաքակրթության շարունակող ու զարգացնող[35]:

---

35 Օսմանյան կայսրությունը որպես բյուզանդական քաղաքակրթության թշնամի լինելու հասկանալի մոտեցումների կողքին, հնչում են նաև տեսակետներ, որոնց համաձայն՝ այդ պետությունն ուղղակիորեն ներկայացվում է որպես նախորդ քաղաքակրթության շարունակող ու զարգացնող: Ընդսմին, վերջին մոտեցումները Թուրքիայի Հանրապետության վարած պետական քաղաքականության հետևանքով հաճախ հնչեցվում են նաև միջազգային հեղինակավոր ամբիոններից: Թերևս, դրանով պիտի բացատրել այն տխուր փաստը, որ 1999 թ. ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի հարցերով կազմակերպության՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մակարդակով նշվում է Օսմանյան կայսրության հիմնադրման 700-ամյակը՝ որպես պատմական կարևոր իրադարձություն: Տե՛ս Մելքոնյան Ա., Սաֆրաստյան Ռ., *Օսմանյան կայսրություն*... (-2010hpj.asj-oa.am/2843/1/2010-2(261)), (համացանցից դուրս է բերվել 06.02.2017):

Բարբարոս թուրքը իշխանություն ունենալիս դաժանություններ է գործում, սակայն իշխանություն չունենալու դեպքում էլ նա նույն բարբարոսն է: Բաքսթոնները գտնում են, որ Եվրոպայի համար ամոթալի փաստ է թուրքերի անարդար վարմունքը, նաև այն, որ նրանք անկարող են կառավարելու, ավելին՝ մի ամբողջ ազգի՝ հայերի, բնականոն զարգացումն են խոչընդոտում: Նրանք համոզված են, որ թուրքական իշխանության այդօրինակ վարքագիծն ամոթալի է համայն մարդկության համար, նրանց իսկ բառերով՝ *անեծք ու թույն:* Հետևաբար, թուրքի իշխանության նկատմամբ գերտերությունների կողմից գործադիր վերահսկողություն սահմանելու պահանջ է առաջացել, քանի որ մի ժամանակ ծաղկուն ու մարդաշատ երկիրը վերածել են անապատի և նույնիսկ գերմարդկային ջանքերը չեն կարող դիմակայել թուրքական չակերտավոր կառավարության գաղտնի կազմակերպված ու հրահրվող գործողություններին[36]:

Բաքսթոններն ընդվզում են այն մտքի դեմ, որ ոմանք փորձում են հային ընկալել իբրև վախկոտ, որն իբրև թե ունակ չէ ինքն իրեն պաշտպանելու: Նրանց կարծիքով *ցանկացած ազգի ներկայացուցիչ էլ կարող է բարոյազուրկ լինել: Այս միտքը հորինել են՝ հիմնվելով այն փաստի վրա, որ այդ հանուն հավատի տառապելու ընդունակ անգեն հայը, ի վիճակի չէ իրեն պաշտպանել ժամանակակից հրազենով զինված ճնշողներից:* Բաքսթոնները հիացմունքով են խոսում հայի պատվախնդրության, ազգին ու ընտանիքին նվիրվածության մասին: Նրանք շատ լավ են հասկացել, որ արտակարգ իրավիճակում հայտնված հայը, երբ վտանգված է իր կամ իր ազգի պատիվը, կարող է երկաթյա,

---

36 Buxton Noel and Harold Buxton, *ibid*, pp. 48-49.

անխոցելի բռունցք դառնալ, նաև ծնունդ տալ այնպիսի քաջարի ռազմիկների ու զինվորների, ինչպիսիք Զեյթունի, Կիլիկիայի[37] հերոսներն էին, որոնք երբեք չհնազանդվեցին թուրքական լծին:

Բաքսթոնները հրաշալի հասկանում են, որ որքան լավ ու բարի է մարդը, նա այնքան ավելի խորն է զգում անարդարությունը, և դա նրան ավելի կատաղի է դարձնում: Հայերը վախկոտ չեն, պարզապես անզեն հայը ժամանակակից զենքով զինված թուրքի և քրդի հետ չի կարող մրցել, եզրահանգում են նրանք: Վաղուց *ապացուցված է, որ հայը, հրաշալի ռազմիկներ է տվել թե՛ռուսական բանակին, և թե՛թուրքականին*[38]*:* Հիշատակվում է նաև հայերի մասնակցությունը Բուլղարիայի ազատագրման պայքարին, ռուսական հեղափոխությանը, ընդ որում նրանք միշտ էլ օգնություն են ցուցաբերել այն ազգին, որի հետ ապրել են կողք կողքի, և ոչ թե ստեղծված հեղափոխական իրադրության պայմաններում փորձել են լուծել իրենց ազգային հարցերը: Ցուցաբերելով նուրբ դիտողականություն՝ Բաքսթոնները հաջողել են հասկանալ, թե որքան նվիրված է հայն այն պետությանը, որի տարածքում ապրում է: Այսպես՝ նշելով, որ Բրիտանական կայսրությունը հայից ավելի հավատարիմ բնակիչներ չունի (there are no more loyal British subjects)[39], նրանք առանձնացնում են այն փաստը, որ հայերը, հավատալով երիտթուրքերի առաջադեմ հայացքներին, փորձել են դաշնակցել նրանց, բայց Ադանայի ջարդերից հետո համոզվել են, որ երիտ-

---

37 Տե՛ս Սիմոնյան Հ., *Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում,* ԵՊՀ, Երևան, 2009, Պողոսյան Վ., *1909 թ. Կիլիկյան կոտորածների արձագանքները «Թայմզ» թերթում* // Հայագիտության հարցեր, Հանդես 1, ԵՊՀ, Երևան, 2014, էջ 159-168:

38 Buxton Noel and Harold Buxton, *ibid.*, p. 32.

39 Buxton Noel and Harold Buxton, *ibid.,* p. 30.

թուրքերի նպատակներն էլ ավելի արատավոր են, քան համիդյան քաղաքականությունը:

Անգլիացի ազնվական հեղինակների արժևորմամբ՝ ազնիվ նվիրվածության օրինակ էր նաև հայի՝ ռուս ազատականներին դաշնակցելու փաստը, իսկ 1905 թ. ռուսական հեղափոխության տարիներին հայերի ձերբակալություններն ու աքսորը, նրանց համոզմամբ՝ ոչ թե վերջիններիս ազգայնամոլության, այլ ռուսական հեղափոխական կազմակերպություններին հարելու պատճառով էր:

Հայերի կողմից ռուսական հեղափոխական ուժերին, նաև երիտթուրքերին ցուցաբերած օգնությունը վկայում է այն մասին, որ, հավատարիմ քաղաքացի լինելուց բացի, նրանք միշտ փորձել են հասկանալ առաջադեմ ուժերի առաքելությունը և սատար կանգնել հեղափոխության միջոցով աշխարհը փրկելու գաղափարին:

Շփումները հայերի հետ հայերի հայրենիքում գրքի հեղինակներին հուշում են, որ հայի լավագույն տեսակը, որին կարելի է հանդիպել Հայաստանում, հազվադեպ չէ: Ազդեցիկ տեսք ունեցող, թիկնեղ ու թխադեմ հայ տղամարդը հիմնականում լռակյաց է, դանդաղ ու նպատակասլաց խոսք ունի: *Նա շատ ավելի պակաս ագահ է բախշեշների՝ ընծաների նկատմամբ, քան իր մուսուլման հարևանը: Հայ կինը, անկախ տարիքից, հրաշալի արտաքին ունի*[40]*:* Բաքսթոնները նույնիսկ փորձում են ընթերցողին համոզել, որ տարիքով հայ կնոջ թախծոտ ու համեստ գեղեցկությունը կարող էր դառնալ Ռեմբրանդտի հիասքանչ կտավի նյութ[41]: Ակամայից հիշում ես, թե ինչպիսի հատկանիշներ է վերագրում հային Լոուրենս Արաբացին ամերիկա-

---

40 Buxton Noel and Harold Buxton, *ibid.*, p. 65.

41 Buxton Noel and Harold Buxton, *ibid.*, p. 170.

ցի լրագրող Սթեֆֆենսին տված իր հարցազրույցում. *Հայը կատարյալ է իր տրամաբանությամբ, հոգեբանությամբ ու մարմնական կենսունակությամբ,* որի համար էլ, ըստ Լոուրենսի *նրան պետք է վերացնել աշխարհի երեսից*[42]: Բարեբախտաբար, Բաքսթոնների կարծիքը հակադրվում է իրենց համերկրացու համոզմունքին: Նրանք գտնում են, որ հային պետք է փրկել թուրքից: Բայց մեկ հարցում թե՛ Բաքսթոնները, թե՛ Արաբացին, թե՛ թուրքերը համակարծիք են՝ հայը հաջողակ, հմուտ և բանիմաց մրցակից է: Նա կարողանում է արարել ու նյութական բարիքներ ստեղծել, որտեղ էլ որ բախտի քմահաճույքը նետի նրան: Բաքսթոններն այն սակավաթիվ ականատեսներից են, որոնք հայի նկատմամբ օտարների նախանձը բացատրում են արարող հային ոչնչացնելու և նրա ստեղծածին տիրանալու արատավոր ձգտումով: Նրանք ցավով են նկատում, որ *պաշտոնական մակարդակով հասցված վիրավորանքներն ու օրինականացված կողոպուտը մարդկանց մղում են այնպիսի ծայրահեղ քայլերի, որոնք այլ պայմաններում հանցագործություն կհամարվեին:* Սակայն արդարության վիրավորված զգացումը նույնիսկ ամենաառաքինի մարդուն կարող է ծայրահեղ քայլերի մղել[43]:

Քննարկելով տիրող իրավիճակը և արդարացնելով հայերի պայքարը՝ Բաքսթոնները կարծում են, սակայն, որ շոշափելի արդյունք չկա, որովհետև եվրոպացին հային սատար չի կանգնում, որովհետև հային զենք չի տրվում, որպեսզի վերջինս ինքն իրեն պաշտպանի: Նրանց կարծիքով, եթե հային զենք տրվի, ապա նա ոչ միայն կպաշտպանի իրեն, այլև կկա-

---

42 Steffens Lincoln, *ibid.*, p. 28.

43 Buxton Noel and Harold Buxton, *ibid.*, pp. 32-33.

րողանա ապահովել տարածաշրջանի խաղաղությունն ու անվտանգությունը:

Համաձայնենք, որ հետաքրքրական է հայի մշակույթի և ազգային խնդիրների՝ օտարի ընկալումը, իսկ Բաքստոնների նուրբ դիտողականությունը շատ հարցերում գնահատանքի է արժանի: Արևելյան Հայաստանում (հեղինակները նախընտրում են գործածել Ռուսահայաստան եզրույթը) հաջողակ հայը կարծես՝ մոռանում է իր հայ լինելու մասին, նա կարող է տարվել ռուսական մշակույթով, հայ թատրոնում բեմադրել ռուս հեղինակների գործեր, նույնիսկ ռուսերեն խոսել՝ լավ աշխատանք ունենալու ակնկալիքով, սակայն, եթե նրա ազգակցին կամ հարազատին ազատեն աշխատանքից հայ լինելու պատճառով, նա դառնում է ամենազտարյուն հայը և սկսում պայքարը հանուն ազգայինի, հանուն արդարության: Ամենածանր պայմաններում անգամ հայի համար կարևոր են դպրոցն ու մշակույթը, որոնք վերահսկվում են ազգային և ոչ թե պետական մարմինների կողմից: Նույնիսկ թուրքական լծի տակ, հայահալած քաղաքականության պայմաններում, հայերին հաջողվում է դպրոցներ բացել[44]: Անդրադառնալով Արևելյան Հայաստանում ապրող հայերին՝ Բաքսթոնները նշում են, որ այս տարածքում, լինելով հարաբերականորեն փոքրաթիվ, հայը դարեր շարունակ զրկված է եղել քաղաքական անկախության ու ազատության հնարավորությունից, սակայն շարունակել է գոյատևել՝ աշխարհին ապացուցելով, որ ունի անհատականություն,

---

[44] Ակնհայտ է, որ այն, ինչ հիացմունք է պատճառում Բաքսթոններին, շարժում է Արաբացու զայրույթն ու նախանձը: Վերջինս չի հանդուրժում այն իրողությունը, որ հայը ոչ միայն երբեք չի ընկճվում արհավիրքներից, այլ ավելի ամուր բռունցք է դառնում:

ձևավորված ազգային ինքնագիտակցություն և՝ *աշխարհին հայտնելու* յուրահատուկ *ուղերձ,* հետևաբար արժանի է որոշակի դրական վերաբերմունքի:

Բաքսթոնների դիտարկումները ցույց են տալիս, որ նրանք հիանալի հասկանում և արժևորում են ռուսական և թուրքական քաղաքականությունների տարբերությունը, որն անշուշտ բխում է ռուսների խելամտությունից. նրանք, ի վիճակի չլինելով սեփական ուժերով գաղութացնել ծայրամասերը, թույլ են տալիս, որ հայերն ու մյուս ազգերը հենց իրենք դա անեն ռուսների համար: Ավելին՝ նրանք հայերին տվել են բավականաչափ ազատություններ, որպեսզի վերջիններս, որքան էլ պատրաստ են քննադատության ենթարկել կառավարությանը, այդուամենայնիվ, անջատողական միտումներ չդրսևորեն: Հեղինակների կարծիքով՝ *Ռուսահայաստանում հայերը հրաժարվել են քաղաքական անկախության բոլոր գաղափարներից, քանի որ այստեղ ազգային կյանքի համար էական կարևորություն ունեցող ամեն բան՝ լեզուն, կրոնը, կրթօջախները, կարող են պահպանել առանց քաղաքական անկախության՝ Ռուսական կայսրության սուբյեկտի կարգավիճակում*[45]:

Համեմատության մեջ դնելով հայերի նկատմամբ ռուսական վերաբերմունքը թուրքականի հետ՝ Բաքսթոնները գտնում են, որ ռուսականը հայերի համար *Աստծո պարգև* է՝ չնայած ավելի վատ չարիքից փախուստի այդ հնարավորությունը ձեռք է բերվել չափազանց թանկ՝ ծայրահեղ աղքատության գնով:

Ինչ վերաբերում է քրդերին, ապա այս առումով էլ հեղինակները համոզված են, որ Ռուսաստանի քաղաքականութ-

---

45 Buxton Noel and Harold Buxton, *ibid.*, p. 68.

յունը գործում է հստակ նպատակադրմամբ՝ խանգարել քրդերին բարեկամական հարաբերություններ հաստատել թուրքերի կամ քրիստոնյաների հետ, քանզի հակառակ դեպքում, երբ զինված միջամտության անհրաժեշտություն ծագի, քրդերը կարող են օգտվել բարեկամ թուրքերի կամ քրիստոնյաների օգնությունից:

Կարելի է ենթադրել, որ Ռուսաստանի հարցում Բաքսթոններն ամենայն հավանականությամբ, արտահայտում են իրենց կառավարության դիրքորոշումը, համաձայն որի՝ Հայաստանի վերահսկողությունը նախընտրելի էր *հանձնել* ռուսին՝ հաշվի առնելով նրանց տարածքային մերձակցությունը:

Այս պատմաքաղաքական համատեքստում ուշադրություն է գրավում նաև այն հանգամանքը, որ անգամ այս հարաբերությունները Բրիտանիան փորձում է կարգավորվել իր ցանկությամբ ու միջամտությամբ:

Եվ այսպես, բրիտանահպատակ գործիչները հաշվետվություն-գրքում նկարագրում են իրենց աչքով տեսած արհավիրքները՝ թուրքերի բարբարոս մեթոդներով իրականացված փոքրահասակ երեխաների գազանաբարո սպանություններից մինչև պետական անազնվության, խարդախության, մշակութային դատարկության դրսևորումներ: Ապա անդրադառնալով Արևելյան Հայաստանում քրիստոնյա ռուսի տիրապետության տակ հայերի համեմատաբար տանելի վիճակին՝ գտնում են, որ ավելի բարենպաստ պայմաններում, երբ հային թույլ են տալիս արարել, զբաղվել մշակութային ու կրթական խնդիրներով, հայն անջատողականության մասին ամենևին չի հիշում: Այս հիմքի վրա էլ ի հայտ է գալիս ամենակարևոր ներակա միտքը՝ համաշխարհային մշակութային գանձարանը իր բարձրաճաշակ գրական ու մշակութային արժեքներով

հարստացրած հայը տարբեր է. նա ոչ ասիացի է, ոչ եվրոպացի, նա իմաստասեր է ու չհպատակվող, պատրաստ է մեռնել հանուն հավատքի, զավակի, ծնողի, հայրենիքի սիրո:

Իրավիճակի զննումը Բաքստոններին հույս է ներշնչում, որ հայերին *քաղաքակիրթ դարձնելու* գաղափարը, թերևս, կարելի է հնարավոր դարձնել նրանց որոշակի ազատություններ տալով: Եթե նրանց կրոնական հավատալիքների ու ազգային-մշակութային արժեքների վրա բռնություն չլինի, նրանք կարողանան զարգացնել իրենց մշակույթը և կրթության բնագավառում օտարից աջակցություն ստանան, պետք է որ հավատարիմ մնան: Եվ իրոք, գաղտնիք չէ, որ հայի արարող մտածողությունն ու անկոտրում բնույթը միշտ հարուցել են թշնամու անբարյացակամ վերաբերմունքը[46]: Բաքսթոնները եզրակացնում են՝ հայը *այլ* է, նա *կարող է* Բրիտանիայի օգնությամբ *«դառնալ քաղաքակիրթ»*, ասես ի սկզբանե Բրիտանիան եղել է միակ ամենաքաղաքակիրթ երկիրը: Բաքսթոններն, ըստ էության, Հայաստանում կատարել են բրիտանական կառավարության սահմանած իրենց առաքելությու-

---

[46] Այդ են վկայում նաև 7-րդ դարի պատմիչ Սեբեոսի հիշատակությունները, մասնավորապես՝ Մորիկ կայսեր՝ պարսից թագավորին գրած նամակից մի հատված, որտեղ կայսրը, հայերին բնութագրելով որպես *խոտոր* (հպարտ, անկոտրում) *և անհնազանդ ազգ,* որից ուզում է օր առաջ ազատվել, վերջիններին ջնջելու իր ծրագիրն է ներկայացնում պարսից թագավորին: Տե՛ս Սեբեոս, *Պատմություն*, էջ 86, (www.historyofarmenia.am/images/menus/982/Sebeos.pdf), (համացանցից դուրս է բերվել 06.04.2016) Կարելի է կռահել, որ իշխանատենչ կառավարողները շարունակ առիթ են փնտրել հավատարիմ, բայց անկոտրում հայից ազատվելու համար, քանի որ ստրուկի կարգավիճակին երբեք չհարմարվող և անելանելի վիճակներից մշտապես ելք գտնող հայի մեջ վտանգ են տեսել: Անհնազանդ, *ազգային արժանապատվություն դրսևորող* հային դարեր շարունակ պարտադրել են ներքին պառակտումներ՝ փորձելով նրան ծնկի բերել, որպեսզի իշխեն:

նը, բայց միևնույն ժամանակ նրանց հաջողվել է պարզել, թե համաշխարհային մշակույթի զարգացման գործում ինչպիսի դեր է կատարել այս ստեղծարար ու աննկուն ժողովուրդը:

Բացի այն, որ Բաքսթոններն այս գրքի միջոցով փորձում են աշխարհին իրազեկել հայի գոյությունն ու խնդիրները, այն էական տեղեկատվություն է պարունակում բուն ցեղասպանությանը նախորդող ութ փուլերի մասին.

1. *դասակարգում* (թուրքերը և հայերը),
2. *պիտակավորում* (մուսուլման մեծամասնություն և քրիստոնյա փոքրամասնություն),
3. *խտրականություն.* գերիշխող խումբը օրենքների, սովորույթների և քաղաքական ուժի կիրառմամբ իշխանություն չունեցող խմբին զրկում է իր քաղաքացիական իրավունքներից, ոտնահարվում են քաղաքացու իրավունքները ազգային, էթնիկական, կրոնական, ռասայական խտրականության պատճառով: Արևմըտյան Հայաստանում թուրքի հպատակության տակ ապրող հայը զրկված էր բոլոր իրավունքներից,
4. *մարդատյացություն.* երբ որոշակի պիտակավորմամբ դրսևորվում է արհամարհանք, ատելություն, ստորակարգում, անմարդկային ու գազանաբարո վերաբերմունք թե՛ բառացի վիրավորանքների, ստորացումների (գյավուր, պետության թշնամի) և թե՛ ֆիզիկական խոշտանգումների կիրառմամբ,
5. *կազմակերպում.* ցանկացած ցեղասպանություն հիմնականում կազմակերպվում է պետության կողմից, և թուրքերը հայերի ցեղասպանությունը փորձեցին հետագայում քողարկել *դեմոգրաֆիկ ինժեներիա* ձևա-

կերպման տակ, որն իրականացրեց կառավարությունը նախապես մշակված պլանով,

6. *բնեռացում* հակադիր ուժերի, երբ տեղի են ունենում մասսայական ջարդեր, որոնք սկսվում են թիրախ հանրության մտավորականների ու նրանց ընտանիքների սպանություններով, երբ այլևս հնարավոր չէ բանակցությունների միջոցով շտկել իրավիճակը,
7. *նախապատրաստության* փուլում սկսվում է զոհերի ցուցակների կազմումն ազգային ինքնության հիմունքով. իրականացնող կողմը հայտարարում է՝ *եթե մենք չսպանենք նրանց, նրանք մեզ կսպանեն*,
8. *հետապնդումների* փուլում ճշտվում է զոհերի ինքնությունը, և հետապնդվող ազգային, կրոնական, էթնիկական խմբերը բռնի տեղահանվում են, առանձնացվում են որոշակի վայրերում և ճամբարներում, որտեղ չկան կյանքի համար տարրական պայմաններ՝ ջուր, սնունդ,
9. *բնաջնջումը* սկսվում է մասսայական ջարդերի տեսքով, որը իրավական առումով կոչվում է *ցեղասպանություն*, և որի բուն էությունը քողարկվում է այնպիսի մեղմասություններով, ինչպիսիք են՝ էթնիկ զտումներ, տեղահանություններ. առանձնահատուկ կարևորություն ունի այն, որ բնաջնջողները բնաջնջվողին ընկալում են որպես ոչ լիարժեք մարդկային տեսակ (գյավուր):

Այս փուլերի մանրամասն նկարագիրը տրվում է Բաքսթոնների գրքում, իսկ հանգամանալից բնութագիրը ներկայացված է Գրեգըրի Սթենթոնի աշխատության մեջ[47]:

Բաքսթոնների գիրքը կարևոր է հատկապես այն առումով, որ ներկայացվում ու վերլուծվում են 1915 թ. նախորդող շրջանում Թուրքահայաստանում և Ռուսահայաստանում տեղի ունեցող դեպքեր, երբ դեռ չէր սկսվել Առաջին համաշխարհային պատերազմը, այնպես որ ակնհայտ է, որ Հայոց ցեղասպանության իրողությունը կապել Առաջին աշխարհամարտի փաստի հետ, ինչպես դա անում են որոշ թուրքամետ հետազոտողներ[48], հեռու է ճշմարիտ լինելուց: Գրեգըրի Սթենթոնը *ցեղասպանության* վերջին՝ *ժխտման* փուլի հատկանշական գծերը քննելիս, անդրադառնալով պատերազմի և ցեղասպանության համընկնումների խնդրին, նշում է, որ ցեղասպանությունների մեծ մասը տեղի է ունենում հենց պատերազմների ընթացքում, և իրագործողները միշտ հերքում են դրանք՝ վկայակոչելով ոչ լիարժեք տեղեկատվությունը և պատերազմի փաստը:

2014 թ. քաղաքագետ Դեբորա Մեյերսենը քննության է ենթարկում Բաքսթոնների ուղեգրությունը ցեղասպանության սթենթոնյան տեսության դիրքերից: Նա ցույց է տալիս, որ գրքում հստակ շարադրված են Հայոց ցեղասպանության նախապատմությունն ու տրամաբանական նախադրյալները: Ա-

---

47 Տե՛ս Stanton Gregory, President, Genocide Watch, *The Ten Stages Of Genocide,* (www.genocidewatch.org) (Accessed on 15. 03. 2017)

48 Այս կապակցությամբ տե՛ս Գասպարյան Ս., *Հայոց ցեղասպանության պատճառները՝ ըստ Ռ. Սյունիի* // Բանբեր Երևանի համալսարանի, 140.1, ԵՊՀ, Երևան, 2013, էջ 57-73, նաև Gasparyan S., *"Truth" that is Far from Being True* // Annali di Ca'Foscari, Serie orientale, vol. 51, Giugno,Venezia, 2015, pp. 25-41:

վելին՝ Բաքսթոնների ուղեգրության մեջ ներկայացված փաստերը Մեյերսենին հիմք են տալիս կատարելու արժեքավոր եզրահանգում՝ Հայոց ցեղասպանության կանխարգելման լծակները Օսմանյան կայսրությունում լիովին բացակայում էին, սակայն այն միանգամայն կանխատեսելի էր Բաքսթոնների դիտարկումների հիման վրա[49]:

Գիրքը վերնագրելով «Ճամփորդությունն ու քաղաքականությունը Հայաստանում»՝ Բաքսթոնները մեկ անգամ ևս անուղղակիորեն հաստատում են այն անհերքելի ճշմարտությունը, որ 1915 թ. Հայոց ցեղասպանությունն իրականացվել է հենց Արևմտյան Հայաստանում՝ հայի բնօրրանում և ոչ թե Օսմանյան կայսրությունում՝ պատերազմական գործողությունների հետևանքով, ինչպես համաշխարհային հանրությանը փորձում են համոզել թուրքական և թուրքամետ աղբյուրները: Անդրադառնալով այդ հարցին՝ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը միանգամայն արդիական է համարում հատուցման պահանջի հիմնավոր բարձրաձայնումը, քանի որ Ցեղասպանության ծրագիրը մտահղացած և իրագործած երիտթուրքերի գլխավոր նպատակակետը հայությանը հայրենազրկելն էր իր իսկ բնօրրանում՝ Արևմտահայաստանում: Ուստի հույժ կարևոր է Հայոց ցեղասպանությունը դատապարտող միջազգային փաստաթղթերում, հատկապես խորհրդարանական բանաձևերում **«Արևմտյան Հայաստան»** հատկանվան հիշատակումը, որն ավելի տեսանելի է դարձնում հայերին հայրենիքից զրկելու երիտթուրքական կանխամտածված ծրագրի բուն նպատակը: Մինչդեռ այդպես չէ

---

[49] Mayersen D., *On the Path to Genocide: Armenia and Rwanda Reexamined*, Berghahn books, 2014: Նկատենք, որ Մեյերսենն իր հետազոտությունը կատարելիս հիմնվել է Բաքսթոնների ուղեգրության վրա:

աշխարհի շուրջ քսանհինգ երկրների խորհրդարանների ընդունած փաստաթղթերում, որտեղ՝ որպես Հայոց ցեղասպանության իրականացման տարածք է հիշատակվում Օսմանյան կայսրությունը[50]:

Այսպիսով՝ Բրիտանիային հետաքրքրող միակ խնդիրը Հայաստանն իր ազդեցության ոլորտում պահելն էր՝ սեփական շահից ելնելով, մինչդեռ հայության ճակատագիրը ոչինչ էր տնտեսական-քաղաքական շահի դիմաց: Հային քաղաքակրթելու բրիտանական ծրագիրն ուղղակիորեն միտված էր Հայաստանի գաղութացմանը տնտեսապես և քաղաքականապես ավելի զարգացած երկրի կողմից, որի համար առաջնային կարևորություն ուներ դեպի արևելք մետաքսի ճանապարհի և հայկական լեռնաշխարհի հարուստ հանքավայրերի նկատմամբ բրիտանական բացառիկ իրավունքի հաստատումը: Այս ամենով հանդերձ՝ Բրիտանիան տարակույս չուներ, որ ազգային այդպիսի նկարագիր ունեցող ազգը կարող էր միմիայն օգտակար լինել իրեն:

Չնայած օտարների կողմից հայը հաճախ արժանանում է հակասական ու կողմնակալ որակումների, Հայաստանում առաքելություն իրականացնող օտարազգի միսիոներները անաչառ են հանուն հայրենիքի և հավատի մաքառող բարեպաշտ քրիստոնյա հային իրենց ուղեգրությունում պատկերելիս:

---

50 Բացառություն են Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Կիպրոսի և Սլովակիայի ընդունած համապատասխան բանաձևերը: Տե՛ս Մելքոնյան Աշոտ Ա., *Ցեղասպանություն և հայրենազրկում. ճանաչումից՝ հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ)*, Զանգակ, Երևան, 2015, էջ 224-225:

Բաքստոններն իրենց աշխատության մեջ նկարագրված դեպքերի և իրադարձությունների միջոցով փաստում են, որ թուրքական տևական հայատյաց ու արյունալի քաղաքականության ու հեռահար նպատակներ հետապնդող ռեժիմի արդյունքում հայ էթնոսն իր պատմական հայրենիքում վերածվել էր փոքրամասնության: Նրանք հային բարբարոս թուրքից փրկելու կոչ էին անում:

Ճանապարհորդության ընթացքում Բաքսթոններին հաջողվել է բացահայտել հայի իսկական էությունը, որը նրանք արժևորել են ամենադրական կողմերով՝ սկսած արտաքին բարետեսությունից մինչև մտավոր ունակություններ, և ոչ մի կերպ չեն կարողացել հասկանալ նախանձ ու թշնամական դիրքորոշում ունեցողներին, որոնք, հային անգերազանցելի մրցակից համարելով, նրա մասին ոչ նպաստավոր այնպիսի պատկերացումներ էին տարածում, որպիսիք հայկական իրական էթնիկականության հետ որևէ կապ չունեին:

Իհարկե, օտարների՝ հայի կերպարի կողմնակալ ընկալման ու մեկնաբանման փորձերը, որոնք վիճահարույց են և անընդունելի մեզ համար, փոքր դեր չեն խաղացել հայի հանդեպ նպատակադրված թշնամանք հրահրելու գործում, էլ ավելի մթագնելու թուրքի ընկալումներն ու բանականությունը, նրան վերջնականապես համոզելու, որ հայից անհրաժեշտ է ազատվել, և դա պետք է անել նրան բնաջնջելու ճանապարհով, քանզի հենց այդ էր բազմաշնորհ ու բանիմաց մրցակցից ազատվելու և նրա թե՛ նյութական և թե՛ մշակութային ժառանգությանը տիրանալու հնարավորությունը:

Հենց այս բոլոր դրական հատկանիշների առկայությունն էր, որ հիմք էր տալիս Արաբացուն եզրակացնելու, որ հայը պիտի վերանա աշխարհի երեսից, քանի որ նա երբեք գլուխ

չի խոնարհելու օտարի առաջ: Նա ջանում էր հայի ենթագիտակցության մեջ արմատավորել այն համոզմունքը, որ հայը պիտի չփորձի վերականգնել պատմական արդարությունը, այլ պիտի ենթարկվի ուժեղին, ընդունի նրա բարոյականության չափանիշներն ու կատարի նրա կամքը: Նա վստահ էր, որ սրան կարելի է հասնել քրիստոնյա հային իր հողից կտրելով, քանզի մայր հողը նրան անպարտելի ուժ է տալիս:

Ակամա հարց է ծագում. գուցե՞ հենց այս և նմանօրինակ այլ գաղափարներով է սաղմնավորվել Հայոց ցեղասպանության հրեշավոր ծրագիրը:

Անշուշտ, հայը քաղաքական ինտրիգների սիրահար չէ, նրա համար մշտապես և այսօր էլ հույժ կարևոր են ազգային կրթության, գիտության, արվեստի, գրականության, կրոնի նկատմամբ նրա իրավունքների ապահովումը, իր ազգի ստեղծագործական ձգտումների խաթարումից խուսափելը: Ինչ վերաբերում է պատմական արդարության վերականգնմանը, ապա դա նրա պատվի խնդիրն է, իսկ հայը պատվախնդիր ազգ է, որի հիշողության մեջ պատմական Հայաստանի հզորությունն ու անկախությունը շարունակում են մնալ իբրև ազգային ինքնագիտակցության անբաժանելի մաս:

Հատվածներ

Լորդ Նոել Բաքսթոնի և
պատվելի Հարոլդ Բաքսթոնի

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ուղեգրությունից

Լոնդոն, 1914

Թարգմանեց և ծանոթագրեց՝
ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ,
բ. գ. թ. Նաիրա Հմայակի Գասպարյանը
Էլ. փոստ՝ gasparyannaira77@gmail.com

Խմբագրեց՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ,
բ.գ.դ., պրոֆեսոր Սեդա Գասպարյանը

Ներածություն

Արևելյան հարցը, այսպես ենք կոչել այս կամ այն չափով փոխներթափանցվող հարցերի մի հսկայական բազմություն, համարյա մեկ դար է, ինչ մտահոգում է եվրոպացի պետական գործիչներին, սակայն առ այսօր դեռ լուծված չէ: Այն, որ հարցի լուծման ընթացքը դանդաղ է ու անորոշ, ունի երկու պատճառ: Նախ, միշտ ինչ-որ բան խանգարել է, որ հարցը լուծվի ինքն իրեն: Բացատրենք, թե ինչու: Գերտերությունների փոխադարձ նախանձախնդրությունը, որի պատճառը հենց իրենց՝ Ֆրանսիայի, Անգլիայի, Ռուսաստանի, Ավստրիայի, իսկ վերջին շրջանում նաև Գերմանիայի և Իտալիայի համապատասխան շահերն են, խանգարում է ուժերի բնականոն առաջընթացը, որը միտված է քանդելու անհաջող կառավարությունները: Եթե հարցն առնչվել է Թուրքական կայսրությանը, ապա թույլատրված չեն եղել ոչ անեքսիաներ հարևանների կողմից, ոչ էլ ներքին ընդվզումների ազատ ու օրինական զարգացումներ, ինչպես նախորդ դարերում: Մյուս պատճառն էլ այն է, որ արևմտաեվրոպացի գործիչները բոլորովին տեղեկացված չեն եղել արևելքի իրական վիճակի մասին, այնտեղ բնակվող ազգերի բնույթի մասին, նաև թե ինչպիսի կառավարություն է եղել թուրքական կառավարությունը, որի իշխանության տակ են գտնվել այդ ազգերը: Ավելացնենք նաև, որ Արևմտյան Եվրոպայի ժողովուրդները ավելի անտեղյակ են եղել այդ ամենին, քան նրանց պետական այրերը: Միայն Ղրիմի պատերազմի շրջանում էր, որ թվով շատ քիչ անգլիացիներ, նույնիսկ այն քչերից, որոնք ուղղորդում էին անգլիական քաղաքականությունը, միայն մի քանիսը կարողացան հասկանալ հանգամանքների իրական վիճակը Արևելյան Թուրքիայում: Եթե նրանք հասկացած լինեին դա, ապա Ղրիմի պատերազմը երբեք տեղի չէր ունենա: Նույնիսկ 1876-ին, երբ թուրքերը կազմակերպեցին բուլղարացիների ջարդերը, և Անգլիան սահմռկեց, իսկ Ռուսաստանը ոտքի ելավ, անգլիացիներից քչերը գիտեին, որ տարածաշրջանի մեծ մասը, որը մենք կոչում ենք Թրակիա և Մակեդոնիա, քարտեզի վրա նշվում է Բուլղարիա անվամբ և բնակեց-

ված է բուլղարացիներով… Դեպքերի բերումով ավելի շատ բան իմացանք Եվրոպական Թուրքիայի մասին: Բայց անգլիացիների, գերմանացիների, ֆրանսիացիների մեծ մասը հիմնականում աղոտ էր պատկերացնում սուլթանի տիրապետության տակ գտնվող ասիական տարածքները, չնայած, այս երկրների՝ լուծում պահանջող խնդիրները պակաս դժվար ու հրատապ չէին, քան Հարավ-Արևելյան Եվրոպայինը:

Այս գիրքը նպատակ ունի լույս սփռելու թանձր խավարով պատված հարցի վրա: Հեղինակները, որոնք բարի համբավ ունեցող անգլիացի ճանապարհորդներ են, երկար տարիներ ջանք են թափել, որպեսզի ուշադրություն հրավիրեն եվրոպական հպատակների նկատմամբ Աբդուլ Համիդի իրականացրած ճնշումների վրա, և թեթևացնեն նրանց տառապանքները: Գիտակցելով, որ Սուլթան Համիդի բռնապետության տակ Հյուսիս-Արևելյան Թուրքիայի հայկական ծայրամասերի վիճակը նույնքան ահավոր է, և համարյա նույն վիճակն էլ տիրում է Հյուսիս-Արևմտյան Պարսկաստանում՝ նշված տարածաշրջաններն արդեն ուսումնասիրված են և ընթերցողին հանձնվում է մանրակրկիտ ուսումնասիրություն, որը հիմնվում է սեփական աչքերով տեսածի վրա: Հեղինակները ոչ միայն իրենց կարեկցանքն են արտահայտում ճնշումների ենթարկված զոհերի նկատմամբ, այլև կոչ են անում, որ վերականգնվի արդարությունը Արևելքի բոլոր ժողովուրդների նկատմամբ հավասարապես, կոչ են անում գործել բոլորի բարօրության համար՝ մուսուլմանների, թուրքերի, քրդերի, ոչ պակաս, քան հայ քրիստոնյա բնակչության, որը տանում է անտանելին և ունի անհամեմատ ավելի բարձր մակարդակի մտավոր ու մշակութային ձեռքբերումներ, քան իր հարևանները:

Անժխտելի է, որ Արևմտյան Ասիայի ժողովուրդների մեջ հայերն ամենաուժեղն են, և այն, ինչ ինձ բախտ է վիճակվել տեսնել նրանց առնչությամբ թե՛ իրենց սեփական երկրում և թե՛ Ամերիկայում, որտեղ նրանցից շատերն ապաստան են գտել և վարել են ստեղծարար կյանք, պարտադրում է ինձ հավատալու, որ նրանք աշխատասի-

ության, մտավոր ունակությունների և ոգևորության առումով հավասար են եվրոպական ազգերին: Նրանք ունեն համարյա երեք հազար տարվա ազգային պատմություն: Նրանք առաջին ազգն են, որ քրիստոնեությունն ընդունել են իբրև ազգային կրոն: Արևմուտքից Հռոմեական Կայսրության և Արևելքից Պարթևական ու պարսկական միապետությունների միջև գտնվելով՝ նրանք ապրել են ծանր ժամանակներ, իսկ քրիստոնեություն ընդունելուց հետո Արևելյան Հռոմեական Կայսրության հետ, որը երկարատև պայքարի մեջ էր Պարսկաստանի Սասանյան թագավորների հետ, նրանք եղել են զինակիցներ, երբեմն էլ՝ նրանց հուսալի պատվարը: Ութերորդ, իններորդ և տասներորդ դարերում Արևելյան կայսրության լավագույն գեներալներն ու ամենակարող միապետերը եղել են հայազգի: Երբ կայսրությունը տապալվեց թուրքերի կողմից, ազգի հսկայական մասը ճանապարհ ընկավ դեպի Փոքր Ասիա և Հյուսիսային Սիրիա, նաև Տավրոսյան լեռների անմարդաբնակ հովիտները, որտեղ էլ հաստատվեցին, ինչպես մոնտենեգրացիները՝ Եվրոպայում. նրանց անկախությունը հաճախ էր վտանգվում, սակայն երբեք չբնաջնջվեցին: Հողմացրիվ էին եղել, սակայն կառչած էին իրենց ազգային սովորույթներին ու հավատքին: Նրանց կայունության և քաջության ապացույցն է այն, որ 1895 և 1896 թթ. ջարդերի ժամանակ հազարավորները մարտիրոսվեցին՝ գերադասելով մահն իսլամ ընդունելու միջոցով իրենց կյանքը փրկելուց:

Մինչև տասնիններորդ դարի կեսերը նրանք թուրքերի հետ բավականին լավ հարաբերություններ են ունեցել, քանի որ նրանց առևտրական ունակությունները նպաստում էին երկրում առևտրի զարգացմանը, և նրանցից շատերը կառավարությունում հասան ծառայության բարձր աստիճանի: Բայց 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը և դրա արդյունքում Բուլղարիայի ազատագրումը ոչ միայն հույսեր արթնացրին հայ հայրենասերների մեջ, այլև վախ ու կասկած զցեցին Սուլթան Աբդուլ Համիդի սիրտը: Նա դիմեց կատաղի ճնշումների քաղաքականությանը, որը դիտավորություն ուներ վերջնականապես քայքայման ու ոչնչացման տանել հայությանը: Ավելի

քան հարյուր հազար հայեր ոչնչացվեցին այն ջարդերի ժամանակ, որոնց քիչ առաջ անդրադարձա, և մուսուլմանների ու քրիստոնյաների հարաբերություններում միմյանց նկատմամբ ձևավորված անողոքությունը շատ ավելի զորացավ, քան երբևէ: Վեց տարի առաջ Ադանայում տեղի ունեցած ջարդերը դրա ամենացավալի վկայությունն են: Ներկայումս հայերի մեծամասնությունը ապրում է Թուրքիայում: Մյուսները, ովքեր ավելի փոքր թիվ են կազմում, բայց էլի մեծ ու ազդեցիկ համայնքներ են, բնակվում են ռուսական Անդրկովկասում, իսկ շատ ավելի փոքր մի համայնք էլ բնակվում է Պարսկաստանում: Սուլթանի հպատակության տակ նրանք ապրում են քրդերի և այլ մուսուլմանների հետ խառնված և չկա մի զգալի տարածք, որտեղ նրանք մեծամասնություն կազմեն[51]: Այդիսկ պատճառով էլ անասելի դժվար է ապահովել արդյունավետ ղեկավարում, որը նրանց՝ հողի մշակների, անվտանգությունը կպաշտպանի քոչվոր քրդերի ոտնձգություններից, որոնց գործողությունները Սուլթան Աբդուլ Համիդը քաջալերանքի է արժանացրել, և, այնուամենայնիվ, չես կարող վստահ լինել, որ ներկայիս թուրքական կառավարությունը, որը քննադատում է համիդյան ռեժիմի դաժանությունները կստիպի ինքն իրեն՝ առանց միջամտության, հավասար արդարություն ապահովել երկու կրոնների ներկայացուցիչների համար: Այն հնարավոր լուծման վերաբերյալ, որ առաջարկում են գրքի հեղինակները՝ որպես խիստ ցանկալի տարբերակ,

---

[51] Մենք համամիտ չենք Բրայսի կարծիքին, քանի որ Օսմանյան կայսրությունում Սուլթանի հպատակության տակ հայերն հիմնականում ապրում էին իրենց բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում: Այլ հարց է, որ թուրքերը միտումնավոր կերպով մուսուլմաններին վերաբնակեցնում էին բուն հայկական տարածքներում: Ըստ Բրայսի մոտեցման՝ բացեիբաց անտեսվում է հայերի իրենց բնօրրանում ապրելու փաստը, որը հաստատված է զգալի թիվ կազմող տարբեր ուսումնասիրություններով: Տե՛ս, օրինակ, Wilkinson R.D., *Introduction to the History of Pre-Christian Armenia.* Society for Armenian Studies, Cambridge, Mass., 1983, տե՛ս նաև Капанцян Г. А., *Хаяса – колыбель армян. Этногенез армян и их начальная история.* Ереван, 1947 և այլն:

ես հիմա այստեղ իմ կարծիքը չեմ հայտնի, քանի որ նման բարդ խնդրի քննարկումը ինձ դուրս կտանի ներածության շրջանակներից։ Բայց կարելի է ասել, որ Մեծ Բրիտանիան այս հարցում պարզ բարոյական պատասխանատվություն է կրում, որովհետև բրիտանական կառավարության գործողությունները բերեցին նրան, որ, լորդ Բիքընսֆիլդի և լորդ Սելսբըրիի պաշտոնավարության շրջանում, Սան Ստեֆանոյի պայմանագիրը մի կողմ դրվեց։ Այդ պայմանագրով նախատեսված հոդվածը, ըստ որի թուրքերը Ռուսաստանին էին զիջում Հայաստանը պաշտպանելու նպատակով միջամտելու իրավունքը, Բեռլինի պայմանագրում փոխարինվել էր մեկ ուրիշով (Հոդված 61), որի համաձայն Սուլթանը ստանձնում էր հայկական ծայրամասերում բարեփոխումներ կատարելու գործը։ Այս մասին նա պիտի տեղյակ պահեր վեցյակին, նաև առաջնորդվեր նրանց ցուցումներով։ Սակայն հոդվածի կիրառումը առ այսօր թղթային որոշումից այն կողմ չի անցել։ Ոչ մի բարեփոխություն չներմուծվեց, իսկ հայերի ու նրանց եվրոպացի ընկերների դիմումները չկարողացան գերտերություններին ստիպել, որ դիմեն զինված միջամտության։ Մի անգամ Գերմանիան համաձայնություն չտվեց, իսկ մի ուրիշ անգամ էլ՝ Ռուսաստանը։ 1878 թ. հետո անցած երեսունվեց տարիներից յուրաքանչյուրը ցույց է տվել, թե որչափ անհրաժեշտ է այդ պաշտպանությունը։ Մեզ վրա ծանրացած բարոյական պարտականությունը գնալով ոչ թե կրճատվել է, այլ ավելի է մեծացել՝ ժամանակին քայլեր չձեռնարկելու պատճառով։ Այդ իսկ պատճառով գրքի հեղինակները ոչ միայն իրենց նպաստն են բերում ազատության ու մարդկության գործին, այլև իրենց ծառայությունն են մատուցում Մեծ Բրիտանիային՝ մեզ հիշեցնելով մեր ստանձնած պարտավորության մասին, և օգնում են մեզ, որ մտածենք այդ խնդրի լուծման ուղղությամբ։

Ջեյմս Վիկոնտ Բրայս

Նախաբան

Երկաթուղու և անգամ ճանապարհների բացակայության պատճառով՝ փոքր թվով անգլիացիներ են կարողանում այցելել հեռավոր Հայաստան: Դրա համար էլ ամեն մի ճամփորդություն դեպի այս պատմական տարածքներ հետաքրքիր է ու կապված բազմաթիվ խնդիրների հետ: Հետևաբար՝ յուրաքանչյուր ճանապարհորդի պարտքն է գրավոր ներկայացնել իր դիտարկումները: Այս գրքի հեղինակները 1913 թ. միասին ճամփորդել են Թուրքահայաստանում, Ռուսահայաստանում, ապա Պարսկաստանում, բայց նրանք անհրաժեշտ են համարում այստեղ խոսել ո՛չ թե միայն իրենց կատարած եզակի ճամփորդության մասին, այլև ներկայացնել Թուրքական Կայսրության նախորդ փորձը: Ճանապարհորդներից մեկը երկար տարիներ ապրել է Հայաստանում, իսկ մյուսը եղել է Եվրոպական Թուրքիայի օգնության հիմնադրամների գործակալ, իսկ այս խմբի երրորդ անդամը Թուրքիայում ճամփորդում է արդեն տասներորդ անգամ: Մինչ այժմ հայկական հարցի վերաբերյալ ոչ մի տեղեկագիրք չի եղել: Մեր նպատակն է ընթերցողին ներկայացնել տվյալ հարցի հետ կապված նվազագույն տեղեկատվություն ապահովող մի աղբյուր, որպիսին կլինի այս հատորյակը: Դրա համար էլ կփորձենք տալ ամենաանհրաժեշտ սպառիչ տեղեկատվությունը: Ասիական Թուրքիայով ճամփորդողը մուտք է գործում ազգությունների ու կրոնների խայտաբղետ մի միջավայր, որը չափազանց հետաքրքիր է: Դրանցից մի քանիսին մենք այստեղ չենք անդրադառնա, որովհետև նրանք արժանի են առանձին-առանձին քննարկման, որն այս գրքի սահմաններում անհնարին է: Բայց, երբ փորձում ենք ուշադրություն հրավիրել թուրքերի, քրդերի և հայերի վրա, պակաս համոզված չենք, որ ուշադրության են արժանի նաև եզդիները, ղզլբաշներն ու նեստորականները:

Եթե մեր եզրահանգումները շատ ցնցող չեն, ապա պատճառն այն է, որ մենք հրաշալի ծանոթ ենք չափազանցումներով հարուստ արևելյան խոսելակերպին, և որովհետև բոլոր կողմերն էլ ունեն

գրավիչ հատկանշական գծեր ու հյուրասիրելու բացառիկ ձիրք, որն անհնար է մոռանալ:

Ցանկանում ենք մեր շնորհակալությունը հայտնել «The Conteporary Review, The Nineteenth Century» և «The World's Work» հանդեսների խմբագիրներին բարյացակամ վերաբերմունք ցուցաբերելու և այս հեղինակների հոդվածները տպագրելու համար:

Լորդ Նոել Բաքսթոն,
պատվ. Հարոլդ Բաքսթոն,
Ապրիլ, 1914

Քրդերը

Քաղաքակրթության սահմանափակումներից ու պարտականություններից փախչելու փորձ անող ճանապարհորդը, այսօր արձակուրդները Եվրոպայում անցկացնելու դեպքում, որպես կանոն, կդժվարանա խույս տալ նամակների ընթերցումից: Այս պատճառով էլ կարելի է վստահաբար խորհուրդ տալ ճամփորդության մեկնել դեպի Հայաստան: Վարշավայից կամ Մոսկվայից Թիֆլիս տևում է վեց օր, ընդ որում՝ ռուսական գնացքներով ճամփորդելը շատ հարմար է: Թիֆլիսից դուրս գալով՝ միանգամից հայտնվում ես գրեթե վայրի մի տարածքում:

Բեռներով լծված ձիով ճամփա գնալը միաժամանակ թե՛ ուրախություն է և թե՛ տանջանք: Թամբին միշտ այնքան բան է բարձած լինում, որ թվում է, թե այն բաղկացած է ծղոտով փաթաթված և պարանով իրար կապկպած պարկերի կապոցից, գորգերի ու կաշվի տարօրինակ շերտերից: Այն անփույթ ամրացված է կենդանու մարմնին, և անհրաժեշտ է կենդանու մեջքին ուղիղ մնալ՝ հավասարակշռությունը մշտապես պահելու համար: Թե՛ թամբի լայնությունը և թե՛ ասպանդակների բացակայությունը մեծացնում են անհարմարավետությունը: Մյուս կողմից էլ, ձին ինքն էլ հյուր է այս

վայրերում: Սանձերն էլ ավելորդ են: Նա իր ճանապարհն ավելի լավ գիտի, քան ձիավորը, անհրաժեշտ է ընդամենը երբեմն-երբեմն փայտի մի հարվածով նրան համոզել, որ կանգ չառնի:

Այսպես ճամփորդելով՝ էլ հենց Պարսկաստանի Թավրիզ քաղաքից հասանք Թուրքահայաստան: Թուրքիայում հենց սկզբից ամենավառ տպավորությունը ստացանք ոչ թե թուրքերից կամ հայերից, այլ քրդերից և, անհրաժեշտաբար, այդ երկրի ուսումնասիրությունը պետք է սկսել հենց քրդական գործոնից: Անօգուտ է վիճել Թուրքիայում քրդերն են թվով ավելի շատ, թե՝ հայերը, քանի որ ոչ մի մարդահամար կոչվող բան այստեղ հնարավոր չէ անցկացնել: Ինչևէ, ճանապարհորդի աչքին քրդերը, համեմատաբար, ավելի գերակշռող են երևում: Քրդերն, անշուշտ, ձգտում են ավելիին՝ առաջ են գնում հողեր ու տներ զավթելով՝ երբեմն կառավարության օգնությամբ, երբեմն էլ ինքնագլուխ: Բայց նույնիսկ փոքրամասնություն լինելով հանդերձ՝ քրդերն այդ անցուդարձի հիմնական դերակատարներն են: Նրանք շրջում են ձիու գավակին նստած, ու լավագույն ձիերը նրանցն են, կրում են հրացան, թուրքի հետ անհաշտ են, հագնում են ընտիր կտորից խայտաբղետ հագուստներ, կարող են իրենց թույլ տալ ապրել քրիստոնյա հարևանների համար մեծ վտանգ ներկայացնող հաճախակի իրականացվող ասպատակությունների հաշվին: Բառիս բուն իմաստով՝ նրանք շատ ավելի մեծ կարևորություն ունեն երկրում, քան թուրքերը: Ուստի, մենք ուսումնասիրեցինք քրդերի հետ կապված այն ամենն, ինչ կարող էինք: Ամենաերջանիկ քուրդը իր ոչխարների հոտի հետ լեռներում օրն անցկացնող քուրդն է: Նա սիրահարված է իր ոչխարներին: Քրդին բնութագրում են իբրև իր անասունների հոտի հետ ամուսնացած: Այն պահից, երբ հոկտեմբերյան ձյունը քրդին քշում է բարձունքներից, նա սարերում մուֆլոնի որսով զբաղվող անգլիացուն մեծ վախ է պատճառում, ինչպես ժանտախտը: Հովիվ և քոչվոր լինելու սովորությունները ավելի շատ բնութագրական են այն քրդերին, որոնք ապրում են հարավային շրջաններում, որտեղից նրանք կարող են ձմռանը տեղափոխվել Միջագետքի հարթավայրերն ու

մնալ իրենց սիրելի վրաններում: Սև այծի մազից գործված վրանի ընդարձակ տարածքներում քուրդ առաջնորդը թվում է, թե ձեռք է բերում արժանապատվություն, մի բան, որ սովորաբար նրա տանը նկատելի չէ: Նրա երեխաների մերկությունն ու կնոջ խղճուկ ցնցոտիները լիովին համապատասխանում են իրար. կահույքի, ծածկոցների, տուփերով հագուստների ու կաթսաների մաքրության ու կոկիկության աստիճանը ապշեցուցիչ ցածր է:

Նա կիյուրասիրի քեզ մեծ բաժակով թան կարագով՝ Դեբորայի[52] արքայական ուտեստը: Դու հարմար դիրքով կտեղավորվես փափուկ գորգի վրա: Հնարավոր է, որ քուրդն ապրում է ուրիշից գողացվածով, սակայն նրա կենսակերպը ներդաշնակ է իր շրջապատի հետ: Բայց դեպի հյուսիսի բարձրաբերձ լեռները տարածված քրդերի համար դժվար է ուտելիք հայթայթելու նպատակով իջնել չափազանց հեռու գտնվող հարթավայրեր, և նա ստիպված է լինում առատ ձյան պատճառով ձմռան չորս ամիսներն անցկացնել իր կացարանի ներսում: Նա կառուցում է տան առավել պարզ տարբերակը՝ ընդամենը գետնափոր հողե տնակ՝ այուների վրա կանգնեցված կավե տափակ տանիքով՝ վրանի իսկական կրկնօրինակ, որտեղից նա ետ է դառնում գարնան առաջին իսկ վայրկյանին: Գյուղը հիշեցնում է ճագարների բույն: Պատուհաններ չկան, միայն փոքր անցքեր են տանիքի վրա՝ ծուխը դուրս քաշելու և լույսի ներթափանցման համար և մի դռնակ՝ դուրս ու ներս անելու: Բնակիչները բարձրանում են երդիկը ու մեծ հովտաշների նման այնտեղից ծիկրակելով՝ թաքուն դիտում են եկող-գնացող ճամփորդներին: Անհնար է ստեղծել ավելի պակաս օդափոխման հնարավորություն ունեցող կացարան, իսկ բացօթյա կյանքին հարմարեցված առօրյա տնային սովորություններն էլ ավելի են ընդգծում աներևակայելի կեղտն ու թշվառությունը:

---

52 Աստվածաշնչյան կին առաքյալ:

Տաս ժամ ճանապարհ գնալուց ուժասպառ եղած, տեղ ես հասնում մայրամուտին, լարված անհամբերությամբ նայում ես, որ գտնես մի տուն, որն այնքան ժամանակակից կառուցված լինի, որ գոնե մեկ սենյակը գետնի վրա լինի, այլ ոչ թե գետնափոր, բայց իզուր: Ոչ մեկը չգտնելով՝ անընդհատ հիասթափություն էինք ապրում: Սաստիկ ցուրտ էր, որպեսզի վրան խփեինք, ու նաև՝ անհուսալիորեն վտանգավոր: Նման իրավիճակում անհրաժեշտությունից ելնելով՝ արդեն վերգետնյա սենյակի մասին չես էլ երազում, նույնիսկ ստորգետնյան էլ, եթե արագ գտնես՝ դեռ մութը չընկած, լավ է, քանի որ գոնե կհասցնես տնտղել գետնախորշդ առանց վախենալու, որ կարող ես, վտանգելով կյանքդ, կոտրել գանգդ: Միջանցքներով, որ նման են ածխահանքերի անցուղիների, պիտի անհրաժեշտաբար խարխափելով ու կռացած շարժվես, քանի որ հատակն անկանոն է, խարխլված, և համատարած մթություն է տիրում: Պատրանքը կատարյալ է դառնում, երբ մտնում ես մի սենյակ, որը լի է պոնիներով: Այս սենյակի կողքին քեզ հյուրընկալող ընտանիքի սենյակն է, որը ոչնչով առավել չէ քոնից, ու կարծես թե այստեղ մշտապես ինչ-որ հոտ է տարածված, որ ձիանոցի կեղտահոտից էլ ոչ մի բանով չի տարբերվում: Շնորհակալություն ես հայտնում Աստծուն, որ ժամանակի հետ քիթդ անզգայանում է այդ հոտի նկատմամբ: Հանում ես թեյնիկը, թիթեղյա ամանով միսը, ընթրիք պատրաստում: Նախքան քնելը դուրս ես ելնում մի փոքր մաքուր օդ շնչելու և տեսնում ես դռան մոտ խռնված պառկած ոչխարներին, որոնք այս արևելյան տարածքներում ամենամարդկայինն են բոլոր ընտանի կենդանիների մեջ: Այս տեսարանը նման է մեր մանկության անցյալի ծանոթ գիշերվան.

Աստղերի լույսի տակ թույլ շողում էին
Պառկած ոչխարները սպիտակ:

Տներից մեկում մեզ հյուրընկալողը բարետես տղամարդ էր՝ նկատելիորեն տարիքով մեծ: Նա պատրաստվում էր մի կին էլ ավելացնել իր արդեն գոյություն ունեցող հարեմին, որը մեզ ներկայացրեց: Մատնացույց անելով մեկին՝նա ասաց՝ սա ամենագեղե-

ցիկն է: Մյուս երկուսը նույնիսկ ուշադրության էլ չարժանացրին իրենց հմայքի անտեսումը, գուցե որովհետև այդ սիրելին շուտով նույնպես փոխարինվելու էր մեկ ուրիշով: Ծերունին հավաստիացրեց մեզ, որ քուրդ կանայք լավագույնն են ու խոստացավ, որ մեզ համար կին կգտնի աշիրաթ տոհմից: Տիպիկ քրդական ոգով ավելացրեց նաև, որ մենք շատ թանկ պիտի վճարենք դրա համար: Նա ինքն էլ ոչ միայն աշիրաթ տոհմի հետնորդն էր, այլև զգալիորեն հարուստ, և, այնուամենայնիվ, նրա տան կենցաղն այնքան էլ չէր տարբերվում ամենացածրից: Բայց այդ խորշելի կենցաղը չխանգարեց, որ խոր քուն մտնենք:

Լույսը չբացված, երբ դեռ բավականին մութ է, ձիապանները վերցնում են ուղեբեռդ: Թեյնիկը եռում է, իսկ դու մոմի լույսի ներքո թխվածքաբլիթով թեյ ես խմում: Ջրի ամենաքիչ հնարավոր քանակով լվանում ես կեղտոտ ամանեղենդ, հավաքում ես թեյի պարագաները զամբյուղիդ մեջ ու դուրս գալիս խրճիթից: Աստղալից երկնքի տակ օդն աննկարագրելիորեն թարմ է: Առաջին մղոնը, մինչև արևի ծագելը, քայլում ես տաքանալու համար: Վերջապես արևը հանկարծ բարձրանում է բլուրների վրա: Շուրջդ կորացող լեռներ են՝ ծածկված խղճուկ դեղին խոտով, որը հյուսիսի բնակչին թվում է մի տարօրինակ ոսկեգույն աշխարհ: Սարերը զառիվայր չեն, բայց բավականին բարձր են՝ ծովի մակարդակից, ոչ պակաս, քան հինգ հազար ոտնաչափ: Նույն աչք շոյող վեհությունն է, ինչ կարելի է տեսնել սահմանին ընկած մեր սարերում, որոնք Պարսկաստանի լեռների նման լերկ չեն, ու գագաթին էլ հարուստ արոտավայրեր ունեն: Այս լեռների միջով անցնում ես ամբողջ օրը, մեծամասամբ՝ զառիվայր լեռնալանջերով, երբեմն էլ անդնդախոր ձորերով, իսկ երբեմն էլ ինը հազար ոտնաչափ բարձրության վրա գտնվող անցուղիներով: Զառիվեր ճանապարհները ոտքով ես բարձրանում, որպեսզի ձիուն չհոգնեցնես, իսկ զառիթափները՝ քո իսկ հոգնությունից խուսափելու համար: Բայց արևը գնալով ավելի է թեժանում և ստիպում է քեզ ծուլանալ: Քաղցդ հագեցնելու համար մեկ ժամով կանգ ես առնում, ժանդարմները քեզ խմելու ջուր են տալիս խխունջի խեցիով: Հետո շարունակում ես առաջ շարժ-

վել ու փափագում ես, որ արևն այդքան չայրի ու ճանապարհին մարդ տեսնես, քանի որ օրվա ընթացքում բացի մեկ-երկու քարավանից, մի արծվից ու մի գյուղից, որ աննշան է այս ընդարձակ աշխարհում, էլ ոչ մեկի չես հանդիպում: Զանձրանում ես զրույցի, գործի, կարդալու, գրելու անսովոր բացակայությունից, ու նույնը կրկնվում է ամեն նոր բացվող օրվա հետ: Անգիր իմացածդ բոլոր բանաստեղծությունները հերթով գալիս են միտքդ, ու շարում ես մեկը մյուսի ետևից, ու հետո հասկանում, որ դրանք արդեն վաղուց սպառվել են: Համակերպվում ես դրան: Ինչու՞ անհանգստանալ, եթե ուղղակիորեն ոչինչ չկա անելու: Նստելով թամբի վրա կարող ես քուն մտնել: Կարթնանաս անցնող քարավանի զանգերի ձայնից: Զինված քրդերն են անցնում նորից, կամ էլ նրանց առաջնորդի կինը՝ իր աղախինների հետ: Սրանից ավելի էլ ոչինչ չի լինում, մինչև որ վերադառնում ես քրդական սև վրանը, որը շրջապատված է ոչխարների հոտով և ցնցոտիավոր երեխաներով:

Այս տարածքներում տեսարաններն արդարացիորեն ավելի հաճախ անվանվել են քանդակատեսիլ, քան՝ գեղատեսիլ: Աչք շոյող քիչ բան կա: Եթե ճահճոտ վայրերում տեղ-տեղ փափուկ խոտ է աճում ինչպես Եվրոպայում, և ճահճուտի մեջ հանդիպում է նաև ուտելի բանջար, ապա դա արդեն տպավորությունն անջնջելի է դարձնում: Հողատարածքը զուրկ է բուսականությունից ու վայրի տեսք ունի. դա հատկապես աչքի է զարնում, երբ համեմատում ես Մեծ Բրիտանիայի շքեղ խոտածածկ տարածքների հետ: Տարածքի բնական գեղեցկությունները՝ արևի, լուսնի ու աստղերի պայծառությունը, մուգ կապույտ լճերն ու երկինքը և գորշ ոսկեգույն ընդարձակ տարածքներն աստղվածային պարգև են:

Զգալի ու հիմնավոր են նաև կենսական հաճույքները՝ օրվա ընթացքում տասնչորս ժամ բաց օդում (բրիտանական ոչ մի սպորտաձև այս հնարավորությունը չի տալիս), ազատված ես նամակներից ու թերթերից, որոնցից նույնիսկ ծովային ճամփորդության ժամանակ խույս տալ չի հաջողվում, մշտական մաքուր օդ. այնպիսի կատարյալ առողջություն, որը ոչ մի այլ կերպ չես կարող ձեռք բե-

ռել: Միայն հիմա ես հասկանում, թե քրդերն ինչու ոչ մի կերպ չեն հրաժարվում քոչվոր կյանքից:

Քոչվորների համար լավ է որոշակի տեղում բնակություն հաստատելու հակվածություն չունենալը, և շատ առումներով հենց այս փաստն է դրդում նրանց ձմռան ամիսներին ուժով զավթել հայկական գյուղերը, որը, ըստ իս, նրանց առավելություն է տալիս և ապահովում կենսակերպ առանց պատասխանատվության: Հողատարածքի իրավունքը դեռևս վաղ ժամանակներից է ճշգրտվել: Թուրքերը փորձել են հարկ սահմանել: Հիմա, այնուամենայնիվ, այս ամենն ավելի պարզ է կատարվում: Այն վայրերում, որտեղ քրդերը՝ օրինակ նրանք, ովքեր լքում են Պարսկաստանը Թուրքիա գալու համար, բնակատեղի են պահանջում, կառավարությունն ինքը հայերին հանում է իրենց հայրական տներից՝ օգտագործելով ոստիկաններին և տեղական մարմիններին: Վերջիններս էլ որպես զոհեր ընտրում են այն մարդկանց, ում հանդեպ հակակրանք ունեն: Սրան մենք ականատես եղանք ծայրամասային շրջաններում:

Որպես կանոն, դատական վարույթներում նման գործեր գրեթե չեն հանդիպում: Բոլոր շրջանները գտնվում են քրդերի տիրապետության տակ այն ժամանակից ի վեր, ինչ ռուսական զորքերը 1829, 1855 և 1878 թվականներին նահանջեցին թուրքական հողերից, որովհետև մեծ էր հավանականությունը, որ դրան հաջորդելու էին վայրագություններ: Հիմա բոլոր գյուղերում, որոնք մինչև վերջերս հայկական էին, քրդերն են տեր ու տնօրեն: Քրդերից շատերը վաղուց հիմնված բնակավայրերում հարստացել են անմոռանալի ջարդերի օրերին հայերից խլած հողերի շնորհիվ, և, հաճախ, այդ գյուղերից յուրաքանչյուրում, ուր մինչև վերջերս, անկախ դրանց ֆեոդալական լինելու հանգամանքից, թվում էր, թե տիրում է համատարած ծայրահեղ աղքատություն, կարելի է տեսնել բարձր ու սպիտակեցված պատերով վեր խոյացող մի տուն, որ վկայում է ֆեոդալական սեփականության առկայության մասին: Ինչ վերաբերում է քրդական կրոնին, նրա բազմազանությունից ու արտասովո-

ռությունից բացի, այլ բան հնարավոր չէ հստակ արձանագրել: Քուրդը պաշտում է կրակ և այն ջրհորի խորություն ունեցող փուռը, որտեղ բոցկլտում է կրակը, որի համար օգտագործվում է անասունների գոմաղբը: Նրա կողմից մահմեդականությունը չընկալելը պայմանավորված է կանանց չադրա կրելը չընդունելով: Այս հարցում այն անսպասելիորեն ավելի առաջադեմ է իսլամական ազատական շարժման հետ համեմատած, քանի որ յաշմակը՝ մահմեդական կնոջ դիմակալը, մարմնավորում է գաղափարներից այն ամենակենսականը, որը խոչընդոտում է Մուհամեդի հետևորդների առաջընթացին և հաստատում նրանց հավատալիքների համակարգի անլիարժեքությունը: Այն ոչ միայն վկայում է կանանց հոգեկան թերարժեքության մասին, այլև հավերժացնում է նրանց մեկուսացումը և ուշադրություն է հրավիրում սեռի ֆիզիկական կողմի վրա: Քրդերի մեծամասնությունը ղզլբաշներն են՝ հերետիկոս մահմեդականներ, որոնք քրիստոնեական հակվածություն ունեն և արհամարհված են ուղղափառ մահմեդականների կողմից: Ընդհանրապես քրդերին քաջալերողն ու երես տվողը կառավարությունն է, և, սովոր լինելով ապրել այլ ժողովրդի բարեկեցության ու հարմարավետության հաշվին, մի բան, որ զարմանալի չէ, քրդերը նրանց նկատմամբ ցուցաբերում են ցավալի, մեղմ ասած, անընդունելի վերաբերմունք ու դիրքորոշում: Ալբանացին, Հին Սերբիայում, որտեղ նա բռնությամբ ապրում էր մինչև Բալկանյան պատերազմը, գուցե ավելի վայրագ տեսք ուներ իր սափրված գագաթով ու ետևը գցած հյուսքով, որը նրան կատաղի վագրի կերպարանք էր տալիս, քաջ հայտնի էր իր հավատարմությամբ և արժանապատվությամբ: Անարդար կլինի ընդհանրացնել, բայց հսկայական թվով քրդեր կան, որոնք բոլորովին զուրկ են բնական արժանապատվությունից, որն էլ սովորաբար զուգակցվում է գերիշխանություն ցուցաբերելու հետ: Նրանց համար ֆեոդալական իշխանությունը, ոչ թե ազնվական վայրենու կամ առատաձեռն Ռոբին Հուդի գործելաոճն էր, այլ աղմկարար չարչու սովորությունները կամ մանր հանցանք գործող ժրաջան գրպանահատի ժլատությունը: Նրանք խլում են, կամ ա-

ղերսելով հետապնդում են երեսառած երեխաների նման: Երբ նրանցից մեկն իր կատարած աշխատանքի համար վարձատրվում է, նրա գործընկերները բողոքում են, որ իրենցից շատ է ստացել: Նրանք պահանջում են այն ամենն ինչ անցնում է իրենց մտքով՝ ուտելիք, հեռադիտակ, ամեն բան, բղավելով՝ տուր, տուր[53]: Երբ դու պահակախմբի քուրդ ուղեկցողին, որի կողքին քեզ հյուրընկալող քուրդն է, թեյավճար ես տալիս, նրա ընկերները հետևից թալանում են գրպանիդ պարունակությունը: Երբ քեզ հետ այսպես են վարվում, ինչպես ինձ հետ վարվեցին՝ ես մնացել էի առանց ծխամորճի ու թութունի, ապա ստիպված ես արժևորել այն անվերջանալի անեծքները, այն անթարգմանելի հայհոյանքները, որ ուրիշ մեկը՝ պարսիկ, հայ կամ թուրք վարորդ, գյուղացի, ոստիկան կամ թուրք սպա թափում է քրդերի վրա: Շատ հետաքրքիր ձևով մեզ ստիպեցին հրաժարվել մեզ պատկանող մի քանի իրերից: Դա մեր ճամփորդության ամենահիշարժան պահերից մեկն էր՝ թերևս նկարագրման արժանի:

Մենք տեղեկացվել էինք, որ քրդական առաջնորդն իր ցնցոտիավոր, բայց ժամանակակից պահեստատուփավոր հրացաններով զինված ռազմիկների հետ մեր կողմն է շարժվում: Մենք անցնելով՝ սեխերով ու Լոմբարդական բարդիներով լի շքեղ հարթավայրերը, հայտնվեցինք Շոտլանդական ցածրավանդակը հիշեցնող, բայց ավելի բարձր ու գնալով ավելի վայրի դարձող լեռներում: Նեղ ճանապարհն անցնում էր խոր ժայռապատ ձորերով և զառիվայր լեռների միջև ընկած միակ անցուղին էր: Մեր ուղեկիցները, դեմքերին իջնող ծանր սև ծոպերով զարդարված սպիտակ ֆեսերով ռոմանտիկ տեսք ունեին, որն, ընդգծում էր շրջապատող բնության հետ անհամապատասխանությունը: Մեր շուրջը պատի նման վեր

---

[53] Այսպես գոչում էին Սուրբ գրքի առածում հիշատակված տզրուկի արյունախում աղջիկները, որոնք չէին հասկանում, թե ինչ է նշանակում *բավական է*: Տե՛ս (/http://biblehub.com/topical/h/horse-leech.htm/), (համացանցից դուրս է բերվել 06.04.2016):

խոյացող ժայռերը, վեցանկյուն սյուների շարքերը հիշեցնում էին Ստաֆֆան[54] կամ Հսկայի խճուղին:

Հանկարծ, երբ հասանք գետաբերանին, մայր մտնող արևին դեմ հանդիման, մեր դիմաց հայտնվեցին ամրոցի աննկարագրելի ու անպատմելի ավերակները: Ներքևում առաջնորդի ցաքուցրիվ տներով գյուղն էր, որ շրջապատում էր լայնացող մարգագետնին նայող ժամանակակից ամրոցը, որի երկու կողմերում վեր էին հառնում ժայռերը:

Մեր ձիերը բեռնակիր էին և սովոր քայլելու միայն հսկայական բեռան տակ կքած: Արևելքում ձիուն հսկայական չափերով բեռնելը մոռացության է մատնել թամբի գործածության իսկական իմաստը: Բայց քայլելով ամրոց հասնելը վիրավորեց ցեղախմբի անդամների վայրի բնազդը, և նրանք արագ ստիպեցին ձիերին վարգով ընթանալ: Այն զգացումը, որ լուռ ու մունջ մասնակից ես դառնում կողոպուտի տեսարանի, ոգեշնչեց մեզ մտնելու խաղի մեջ, ու մի վերջին անգամ, մենք մեր խեղճ ձիուկների հետ, ջանալով ամեն հնարավոր բան անել իրավիճակից անվնաս դուրս գալու համար, քառատրոփ սլացանք մեզ հեռվից դիտող խմբի կողմը:

Առաջնորդը, անվանենք նրան Հասան աղա, երեսուն տարեկան թխադեմ մի տղամարդ էր, որը մեզ դիմավորելու համար հագել էր դեղին թիկնոց: Գոռոզ կեցվածքով նա մատնացույց արեց մեզ աթոռները, որոնք շարված էին սալապատ ավազանի մոտ, որի մեջ աղբյուրի ջուր էր լցվում: Նա ու իր եղբայրը նստեցին ավազանի հակառակ կողմում՝ մեր դիմաց, ու մինչ բաժակներով թեյ կմատուցեին, մենք սկսեցինք առանց քաշվելու քննարկել մեր դիտարկումները: Հասանը շփվող չէր ու շուտով պարզ դարձավ, որ արժանապատվություն պահելը նա այլ կերպ էր պատկերացնում: Նա իր կառավարչին, որը, կարծես, միաժամանակ նաև նրա գլխավոր խոհարարն էր, նստեցրեց մեզանից մի տաս յարդ այն կողմ: Ձեռքին մի փայտի

---

[54] Վիկինգներն այսպես են կոչել բրիտանական կղզիներից մեկը, որի բազալտի սյունաշարերի տեսք ունեցող ժայռերը նրանց հիշեցրել է ուղղահայաց գերաններով կառուցված իրենց տները:

կտոր կար, որի գլխին դատարկ պարկուճ էր ամրացված: Աթոռին նստած առաջնորդն ի պատիվ մեզ ցուցադրեց կրակելու իր արվեստը: Իր հրացանով նա վեց կրակոց արձակեց, որոնցից չորսը դիպան ճիշտ նշանակետին՝ փայտի գլխին ամրացված պարկուճին, և ամեն անգամ նշանակետին դիպչելիս պարկուճը մոտեցնում էին, որպեսզի համոզվենք, որ նա անվրեպ էր կրակել: Նրա զինվորներն ու թիկնապահները շրջան կազմած լուռ հիանում էին:

Հանկարծ հորիզոնում նշմարվեց անասունների հոտը, որ վերադառնում էր կանանց ուղեկցությամբ՝ սարի բարձր լանջերից շարժվելով դեպի միակ զառիվայր ճանապարհը: Աշխատանքի անսովոր գոռոզ ռազմիկներն ավելի ուշադիր էին իրենց զենքերին ու ձիերին, քան քրտնաջան աշխատող իրենց կանանց: Ճիշտ այդ պահին, երկու հարյուր յարդ այն կողմ, մի կաչաղակ թռավ: Առաջնորդն արագ նշան բռնեց ու կրակեց: Չէինք էլ կասկածում, որ նա հրաշալի է կրակում:

Մայրամուտից դեռ շատ առաջ ցածրադիր հովիտն արդեն ստվերում էր, և մելոդրամայի ակնկալիքը գնալով ավելի էր մեծանում: Գրեթե մութ էր, երբ բարձրանում էինք եվրոպական ամրոցի կրկնօրինակ հիշեցնող դղյակի աստիճաններով, որը, սակայն, եվրոպականի հետ համեմատած, ավելի քիչ էր նման պաշտպանական կառույցի: Դղյակի միակ դահլիճը զբաղեցրել էր ողջ տարածքը, վերևում սենյակներ չկային, սակայն վառ գունավոր ապակիներով պատուհանները լայն էին: Մենք գլխավոր պաշտոնական անձանց հետ միասին նստեցինք դահլիճի հեռավոր անկյունում դրված սեղանի մոտ: Մեզ ուղեկցող ծառաները անձայն գրավեցին պատի տակ մնացած տեղերը՝ զենքերը դնելով հատակին՝ իրենց դիմաց: Երբ առաջնորդը ներս մտավ, բոլորը կանգնեցին, երբ նա նստեց՝ նրանք էլ նստեցին: Ժամանակ առ ժամանակ նա բարկացած, բարձր տոնով, հրամաններ էր տալիս: Մենք նույնպես մի անգամ նրա գոռոզ պահվածքի ականատեսը դարձանք, երբ նա իր ծխախոտատուփը շպրտեց հատակին՝ 30 ոտնաչափ այն կողմ, որպեսզի ծխախոտ լցնեն մեջը:

Դրան հաջորդեց երկարատև լռություն, հետո թիկնապահներից մեկը անտարբեր պարեց: Մեզ վերջապես հաջողվեց առաջնորդին զրույցի մեջ քաշել: Մեր խմբակիցներից մեկը իր հիացմունքն արտահայտեց, երբ առաջնորդը նրան ցույց տվեց Պարսկաստանում արված իր ընտանիքի նկարը, որտեղ նրա հայրը վինձորյան համազգեստով էր՝ սուրբ Միքայելի ու սուրբ Գևորգի խաչով: Մեր թարգմանիչն էլ հավելեց, որ որդին էլ Ազգային Ժողովի անդամ է: «Հետո ի՞նչ, օգուտը ո՞րն է, խորհրդարանը ոչինչ է, նրա հայրը շատ ավելի կարևոր մարդ է՝ գեներալ»,- ասաց մեր հյուրընկալը: Ակնկալելով, որ Հասան աղան իր արհամարհանքը կարտահայտի նաև թուրքական կամ պարսկական քաղաքականության ու խորհրդարանականների մասին, մենք անվստահորեն փորձեցինք խոսակցություն բացել: Նա պատասխանեց. «Եթե մեր խորհրդարանն էլ բրիտանականի նման լիներ, ապա հրաշալի երկիր կունենայինք: Թուրքական մեջլիսները կարգին չեն աշխատում, իսկ պարսկականները՝ ուժ չեն գործադրում: Պարսիկները թեյամաններով են կառավարում, այնինչ միայն հրանոթներով է հնարավոր կառավարել»:

Մենք-«Նրանք դպրոցներ հիմնադրե՞լ են»:

Առաջնորդ-«Դպրոցը լավ բան է: Մենք՝ քրդերս, ուզում ենք դպրոցներ հիմնել, բայց բոլորը մեզ վայրի ավազակ են անվանում, մեզ թույլ չեն տա դպրոցներ հիմնել»:

Մենք-«Քրիստոնյաները ունեն դպրոցներ, նրանց մասին ի՞նչ կարծիք ունեք»:

Առաջնորդ-«Նրանցից վնաս չկա, բայց նրանք բարեփոխումներ են ուզում, մենք բարեփոխումներ երբեք չենք անի»: Նորից, երկար դադարից հետո, հարցրեց. «Դուք բոլորդ ինչու՞ ամուսնացած չեք»:

Մենք-«Եթե ամուսնացած լինեինք, ապա ճամփորդելով այստեղ չէինք հասնի»:

Առաջնորդ-«Ամուսնացած լինելը ճամփորդելուց լավ է: Ես երեք կին ունեմ, բայց միայն մի երեխա: Շուտով նոր կին եմ գնելու»:

Ընթրիքը նման էր բարոնների ժամանակների ընթրիքների: Յուրաքանչյուր երեք հոգու համար նրանց առջև հատակին դրված էր մի մեծ սկուտեղով միս, հաց, մածուն: Տարօրինակ էր, պատի տակ նստած զինվորներին ուշադիր զննելիս, իսկ նրանց շարանը գնալով խամրում էր մթության պատճառով, կարելի էր նկատել, թե ինչպես են նրանց ճպճպացնող շրթունքները խանգարում, որ զրույց սկսվի: Սեղանի մոտ մեզ բախտ էր վիճակվել դանակ-պատառաքաղ օգտագործելու հնարավորություն ունենալ: Առաջնորդը մեծագույն վարպետությամբ մի ձեռքի մատներով մեծ պատառ պոկեց իր համար:

Ճաշից անմիջապես հետո առաջնորդը գնաց հանգստանալու և մեկ տասնյակից ավելի ազդեցիկ մարդիկ, այդ թվում՝ նրա եղբայրը, հետևեցին նրան: Նրանց համար ծածկոցներն արդեն փռել էին հատակին: Այս ազդեցիկ զինյալներից չորսը փորձեցին մեր թարգմանչին հավաստիացնել, որ գիշերը մեզ թալանելու են… Բայց մեր ճամբարային անկողիններում քնեցինք ողջ գիշեր՝ առանց կողոպտվելու:

Առաջնորդի ենթակայության տարածքներից դուրս գալուց հետո, ինչևէ, բախտներս ավելի քիչ բերեց: Նա իր մարդկանցից վեց հոգու հրամայեց, որ իրենց ձիերով մեզ մոտ հինգ ժամ ուղեկցեն դեպի հարևան տարածքը և օգնեն հասնել թուրքական պահակակետին: Սահմանագծի մոտ մեր ուղեկցողները կանգ առան ու ասացին, որ թուրք պահակներն իրենց անպայման կկրակեն, ինչպես միշտ անում են, երբ ճանապարհորդները հասնում են տեսանելիության սահմանին: Այդտեղից մենք պիտի մենակ շարունակեինք: Ավելին՝ մեծ բախշեշներ պիտի տայինք, որ կարողանայինք ընդհանրապես առաջ գնալ: Գլուխներս նրանցից շուտափույթ ազատելու համար մենք փորձեցինք խելամիտ գտնվել և որքան հնարավոր էր, քիչ դրամ ցույց տալ: Արդեն իրար շնորհավորում էինք, որ կա-

ռողացանք օրը ցերեկով հասնել մեր նպատակակետին, երբ ավազակների մի ուրիշ հեծյալ խումբ մեզ կանգնեցրեց: Ինչպես միշտ նրանք սպասում էին հերթական քարավանին՝ կողոպտելու համար: Այս մարդիկ մեր ծանոթ առաջնորդի կողմից արդեն հրահանգ չէին ստացել, որ մեզ չկողոպտեն ու մեր իրերն ու հագուստները չգողանան: Նրանք բոլորը զինված էին զենքով ու դաշույններով: Մենք նույնիսկ մի ատրճանակ էլ չունեինք: Միակ բանը, որով կարող էինք նրանց վախեցնել, լինելու էր առաջնորդի դժգոհությունը մեզ նեղություն տալու համար: Իսկ դա անել համարյա անհնարին է, երբ տասնյակ տղամարդիկ գոռում են, վայրի կատուների նման ծղրտում, բռունցք թափահարում մեզ վրա. մեզ ոչ մի կերպ չէր հաջողվում թարգմանչին ասել այն, ինչ ուզում էինք փոխանցել: Գոռոզ կեցվածք ընդունելով՝ վերջապես, մեզ հաջողվեց ստիպել նրանց, որ մեզ լսեն: Նրանց միանգամից հաջողվեց քառատրոփ առաջ անցնել ու շրջապատել մեր ձիերին: Մեր խմբում մի հայ կար, որը հային հատուկ խենթությամբ արագ բռնկվեց, ձիուց վայր թռավ, նետվեց ավազակապետի վրա ու բռնեց նրա կոկորդից: Իրավիճակը ծայրահեղ լարված էր: Մեր կյանքը մազից էր կախված, քանի որ այդ ավազակները, ինչպես հատուկ է իրենց ցեղին, պահի ազդեցության տակ ամեն բանի ընդունակ են. նույնիսկ մի անգամ, մի քանի ամիս առաջ հարձակվել էին հնդկական հեծելազորի վրա ու ծեծելով տարել էին բրիտանական հյուպատոսին: Մենք փորձեցինք հային արագ սաստել: Սպանություն հրահրելու անհրաժեշտություն բոլորովին չկար: Արդեն բավական էր, որ մեր եղած-չեղածը տանելու էին... Հրմշտելով ու սպառնալով մեզ ստիպեցին իջնել ձիերից: Ամենաապահովը նրանց ղեկավարին մի քանի արծաթադրամ տալն էր: Որսաշների նման հարձակվեցին այդ դժբախտի վրա: Այն զգացողությունն ունեցանք, որ նրան հաջորդ պահին սպանված ենք տեսնելու: Այս սադրանքը թույլ տվեց, որ հասցնենք նրանցից մի քիչ հեռանալ՝ մի հարյուր քայլ, երբ մեզ նորից շրջապատեցին: Հիմա նրանք արդեն կատաղած էին ու պատրաստ էին մեր նկատմամբ ուժ գործադրելու: Ձեռքերը խոթեցին գրպաններս.

բարեբախտաբար, մեր հարստությունները՝ փողերն ու անձնագրերը ապահով տեղում պահված էին: Զրկվեցինք մեր ծխախոտից ու ծխամորճերից: Ակնհայտ էր, որ միայն շանտաժի ու հնարամտության շնորհիվ կարող էինք կաշիներս փրկել: Ամեն հնարավոր ջանք թափեցինք: Մեր թարգմանիչը մեծ եռանդով բացատրեց նրանց, թե ինչ պատիժ էին ստանալու առաջնորդի կողմից հենց ամրոց վերադառնային: Այդ միտքը սարսափեցրեց նրանց: Սպառնալիքները տեղ հասան, ու, դեպի իրենց մեկնած ձեռքիցս հափշտակելով արծաթադրամները, քառատրոփ սլանալով անհետացան դիմացի լեռան քառուղիներում:

Աստված թող առաջնորդին ու նրա խնջույքասեր մարդկանց լավ ժամանակների արժանացնի:

Նրանցից երեսուն-քառասունը, որ երեք հազարանոց մեծ ավազակախմբի ընդամենը մի փոքր մասն էին, հրացաններով զինված, ապրում էին ամրոցում, ազատ ելումուտ անում, երբեմն գնում այն գյուղերը, որ ղեկավարում էին որպես մանր ֆեոդալներ: Նրանց վարած կյանքը շատ նման էր մինչև Էլիզաբեթ թագուհու գահակալությունը սահմանի երկարությամբ ապրող շոտլանդացիների կյանքին: Ասպատակություններ, թալան, ցեղային վրիժառություններ, սահմանամերձ հարձակումներ, գողություն, մաքսանենգություն, պատահական սպանություններ՝ համեմված հավատարմության ու ռոմանտիզմի դրվագներով, և սա նրանց համար դարձել էր սովորական առօրյա: Ահա թե ինչն էր զարդարում այս մարդկանց գոյությունը:

Հասանի նման քուրդ առաջնորդները քիչ են, դրանք էլ գնալով վերանում են: Ոմանք Ռուսաստանի հովանավորությունն են փնտրում, ավելի ճիշտ Ռուսաստանն է նրանց օգնությունն ակնկալում: Թուրքական քաղաքականությունը նպաստում է, որ քրդերը հսկողությունից դուրս մնան ու օրենքից հեռու, միևնույն ժամանակ անկախ քրդական առաջնորդներին վերածում է թերարժեքությամբ համակված ողորմելիների՝ համեմատած նրանց առաջնորդ-նախնիների հետ: Այս փաստի ուշագրավ վկայությունը Հոշաբի հսկայա-

կան ավերակներն են, որ դեռևս վաթսուն տարի առաջ Բեդր Խանի մեծ ընտանիքն էր գրավել: Դեհիրից Վան գնացող ճանապարհորդը, թափառելով անմարդաբնակ բլուրների անապատներով, ապշում է տեսնելով այս ամրոց-պալատը՝ ավերված Ալնվիք, բայց Ալնվիք, որը տարածվում է երեք հարյուր ոտնաչափ թեք, ժայռածածկ բարձրության վրա. իսկական ռոմանտիկա, ճաշասրահի տանիքազուրկ սենյակից երկնքի շափյուղյան էր երևում, ասես զենիթում լինեիր, իսկ սրահը, կարծես մխրճված լիներ երկնի կապույտի մեջ:

Ցեխաշաղախ պատերով հյուղակները հիմա ապաստարաններ են քուրդ գյուղացիների խմբերի համար, որոնք չորացած գետի հունի մեջ արևածագին իրենց այծերին են կթում: Սակայն, թեև ամրոցը հիմնականում կառուցվել է հայ թագավորների տիրապետության փառապանծ օրերին, քուրդ առաջնորդների՝ կառույցի վրա արված ժամանակակից հավելումների մնացորդները վկայում են, որ թե՛ հայերը և թե՛ քրդերն այսօր զուրկ են իշխանությունից: Անցյալի այլ ֆեոդալական խոշոր տիտղոսները նույնպես անհետացել են: Մի կիսանկախ բեյ կարողացավ Բիթլիսը պահել մինչև 1849 թ., երբ նրան բանտարկեցին Կոնստանդնուպոլսում: Դրանից մի քանի տարի անց Սուլթան Աբդուլ Մեջիթը լրջորեն ծանրութեթև արեց քրդական հարցի լուծումը նրանց մասսայական բնաջնջման միջոցով՝ հաջողությամբ այդ գործը հանձնելով քաջալերված ենիչերիներին:

Եվ միայն վերջին ռուս-թուրքական պատերազմից հետո քրդերին նպատակային տրամադրեցին հայերի դեմ: Աբդուլ Համիդի տաղանդն այս հարցում անվիճելի է: Նա կարողացավ կրոնական թշնամանք հրահրելով՝ քրդերին օգտագործել իր նպատակների համար. եթե նրանք չեն կարող լինել զինվոր կամ հարկատու, ապա գոնե կնպաստեն իր իշխանությունն ապահովելուն: Եթե քրդերի գաղափարական մակարդակը շատ ավելի ցածր էր թուրքական ընդունված չափանիշներից, ապա նրանք գոնե կծառայեին հայերին ոչնչացնելու գործին, որոնց չափանիշները չափից դուրս բարձր էին, որպեսզի թուրքը կարողանար հանդուրժել նրանց:

Թուրքական կառավարությունն ամեն ինչ անում էր հասարակական կարգ ու կանոն հաստատելու համար՝ գործելով հայտնի զինյալ խմբերի ու մնացած հատուկենտ քուրդ առաջնորդների դեմ: Քրդերի վերահսկողության տակ գտնվող վիլայեթի գլխավոր մայրաքաղաքում վալին[55], որը երիտթուրքական խմբավորման բավականին խելացի անդամներից էր և մեզ ծանոթ էր դեռ Մակեդոնիայից, մեզ արժանացրեց մի երկարատև այցի: Թուրքի այս ընդունելի տեսակը խոր հակապատկերն էր հին թուրքի, որը խլում էր ժամանակդ այնպիսի անիմաստ արտահայտություններ անելով, ինչպես, օրինակ, «Grace à Dieu; la tranqillitè regne partout»[56]: Ֆրանսիական հյուպատոսը նույնպես եկել էր: Նա վալիի հոգեհարազատ ընկերն էր և հայերին վերաբերում էր բարեկամական ցինիզմով: Նախ տեղը-տեղին քննարկեցինք քրդերին: Վերջերս զորքերը շրջապատել ու սպանել էին մի հայտնի աղայի, որը, թեև օգնել էր կառավարությանը հավուր պատշաճի իրականացնելու 1895 թ. ջարդերը, այլևս թուրքական ճաշակին չէր համապատասխանում, որովհետև շատ հանդուգն էր թվացել: Հետո էլ հերթը հասել էր նրա զավակներին, ապա՝ կնոջը: Հիմա էլ թուրքական զորքերն ու ոստիկանները զբաղված էին աղայի գործընկերոջով, որն ըստ վալիի՝ ահավոր դաժան մարդ էր: Առանց երկար-բարակ մտածելու իր հաճույքի համար սպանել էր մի լուսնոտի, մի «ապուշ գյուղացու», ում արևելքում վերաբերում են շատ ավելի նախապաշարված հարգանքով, քան Հյուսիսային Եվրոպայում: Հույս ունեին, որ նրան բռնելը հեշտ էր լինելու, որովհետև նրա ուղեղն աղան էր, որն արդեն չկար: Ձերբակալության լուրը կարող էր հաջորդ օրն էլ մեզ հասնել հենց հետապնդող խմբի ղեկավարից, որը երիտթուրքական հայտնի սպա էր և Էնվեր Բեյի զարմիկը:

Հակաքրդական քաղաքականությունը դրանով չէր ավարտվում: Մի քանի հայկական գյուղերի երկու-երեք զենք էին տվել քրդերից

---

55 Թուրքիայում նահանգի քաղաքացիական-վարչական գործերի կառավարիչ, նահանգապետ:

56 Աստծո օգնությամբ խաղաղություն է տիրում ամենուր:

պաշտպանվելու համար: Շատ հմուտ քաղաքականությամբ՝ թուրքերը մի ազգին արհեստականորեն տրամադրում էին ստրկացնելու մյուս ազգին: Վալին չնշեց, որ նոր տեսակի մի քանի հազար հրացան էլ քրդերին էին բաժանել: Քաջալերվում էր ֆեոդալական ավազակախմբերին պատժելը, բայց հայերին թույլատրված չէր միջամտել, և վալին շատ դժգոհ էր, որ հայերը միացել էին հանցագործների նկատմամբ պատժամիջոցների կիրառմանը: Նրանք մի հանրահռչակ ավազակի հետ հաշվեհարդար էին տեսել, այնպիսի մեկի, որը հետապնդվում էր իշխանությունների կողմից, և այդ արարքի դիմաց քսան հայկական գյուղերի վրա խիստ վերահսկողություն էր սահմանվել:

Հետո զրույց գնաց քրդական հաստատությունների մասին, Համիդիե ջոկատների, *աշիրաթ* ընտանիքների և նրանց կապի մասին *ռայահների* հետ: Այս թուրքերեն տերմինով, որը նշանակում է *նախիր*, կոչում էին քրիստոնյա գյուղացիներին: Բայց վալին կանխեց մեզ: «Les rayahs n’existent pas. C’est un mauvais mot[57]»: Նույնիսկ թրքամետ հյուպատոսը հայացքը կենտրոնացրեց՝ «Depuisquand[58]?»: Վերջապես նա հարցրեց մարտահրավեր նետող տոնով՝ «Depuis la constitution[59]!»:

Բացահայտեցինք ամենաանցանկալին: Իմացանք, որ Համիդիե հեծելազորը միայն տեսականորեն էր վերացել, գլխավոր շտաբին կից երեք զորամիավորումներից երկուսը գործում էին: Դա Աբդուլ Համիդի հայտնի միավորումներն էին, որոնք լծված էին քրիստոնյաներին ճնշելու գործին, իսկ քրդերի հավատարմությունը շահելը նրանց այլևս պետք չէր. մի կողմ էին նետել առանց ափսոսանքի: Հայտնի է՝ հավաքագրման գործը միշտ էլ ձանձրալի ու հոգնեցուցիչ էր թվացել այն թուրք սպաներին, որոնք զբաղված են եղել դրանով: Նրանց հուզող միակ խնդիրը միշտ եղել է նոր զենք ձեռք բերելը, իսկ աշխատասիրությունը հմտություններ զարգացնելու աստիճանի երբեք չի հասել: Համազգեստի վրայի մետաղական

---

57 Ռայահներն այլևս գոյություն չունեն: Դա վատ, վիրավորական բառ է:

58 Երբվանի՞ց:

59 Սահմանադրությունից ի վեր:

տարբերանշանի պատճառով հաճախ Համիդիե զինվորին անվանում էին *թիթեղյա մարդ*: Քրդական զորքերին թուրքերն առաջ էլ էին փորձել, բայց դրանից թուրքին երբեք օգուտ չի եղել: 1854 թ. բացահայտ ձախողվել էին կռվում, և հարձակման ենթարկվելով, ապացուցել, որ վերածվել են բարոյազրկված ու բարոյալքված խմբավորումների: 1877 թ. կողոպտեցին այն հեծելազորային միավորումը, որին կցվել էին: Թուրքական բանակին ամաչելու առիթ տվեցին, երբ առանձնահատուկ վարպետությամբ խոշտանգումների ենթարկեցին ռուս վիրավորներին: Սուլթան Համիդի ծրագիրը պսակվեց հաջողությամբ, ոչ միայն այն պատճառով, որ քրիստոնյաներին տեղահանեցին, այլև քուրդ առաջնորդներն այլևս չունեցան նախկին հզորությունը, քանի որ նրանց ուշադրության կենտրոնում իրենց ցեղախմբի փոխարեն Սուլթանն էր: Բայց վալին զոհ էր, որ այդ հիմարություններն իրեն չէին հուզում: Արդարացի կլինի միայն ասել, որ մենք հաճախակի բազմաթիվ քրդերի էինք հանդիպում, որոնք այս տեսական վերաբաշխման մասին ոչինչ չգիտեին և հպարտորեն ասում էին, որ ոչ միայն աշիրաթ էին, այլև Համիդիե հեծյալ խմբից:

Աշիրաթ լինելը, ինչպես կարելի է նկատել, ոչ մի գոհացուցիչ առավելություն չի տալիս, ոչ էլ հիմա սոցիոլոգիական բնույթի մանրամասներ քննելու տեղն է: Եթե տաս հոգու այդ հարցով դիմես, բոլորն էլ իրենց տարբերակները կառաջարկեն: Մենք էլ, թուրքական կառավարությունն էլ, իհարկե շատ ենք կարևորում այն, որ քրդական ընտանիքների մեծ մասն անհատապես և սերնդից սերունդ փոխանցվող չգրված օրենքներով իրենց իրավունք են վերապահում հարկեր չվճարել, և, արդյունքում՝ ոչ մի պարտականություն չունեն կառավարության և հասարակության առջև, կամ, ինչպես վալին կասեր, Աստծո ու մարդու հանդեպ: Նրանք ճանաչում են միայն իրենց առաջնորդին, որը հաճախ մանր հողատեր էր ու հարևանների հետ գտնվում էր մշտական կռիվների մեջ… Սուլթանը փորձել էր շտկել իրավիճակը ու նրանց՝ քրդերին, հարկերից ազատել, եթե զինվորագրվեին, սակայն ծրագիրը ձախողվել էր, ու, ինչպես վալին էր դժգո-

հելով ասում, աշիրաթները դադարել էին ծառայել, բայց հարկ էլ չէին վճարում: Թվում էր՝ միայն հողատերերն էին աշիրաթ՝ հարցի առնչությամբ պերճախոսում էր ֆրանսիական հյուպատոսը: Նա ասում էր, որ քրդական գյուղերի ճորտ բնակիչները, որոնց անվանում էր *նախիր/ռայահ,* ավելի շատ էին տառապել, տուժել, քան քրիստոնյաները: Իհարկե, քուրդ գյուղացիների մեջ կան այնպիսիները, որոնք ոչ մի արտոնություն չունեն և իրենց մեծամեծ հայրենակիցների կողմից տեղը տեղին շահագործվում են: Բայց վալին չհամաձայնեց Ֆրանսիայի հյուպատոսի հետ, ասելով, որ անկասկած, շատ շրջաններում աղաներից կախյալները աղայի ընտանիքի անդամների նման իրենք էլ աշիրաթ քրդեր են, և ցանկացած պարագայում շատ առաջնորդներ հենց իրենք են դատ ու դատաստան տեսնողները, և գյուղերում բոլորն էլ հիմնականում զինված են, ու ոչ մի կերպ չեն ուզում, որ թուրքը իրենց դատի կամ պատժի: Քրիստոնյաներին դուր չի գալիս ֆեոդալիզմի այս դրսևորումը: Նրա փաստարկներից կարելի է կռահել, որ ժամանակակից ապստամբություն է պետք, ինչպես եղավ Արևմուտքում, տնտեսական ֆեոդալիզմից ազատվելու համար, բայց նրա առաջին մտահոգությունը աղաներին էր առնչվում, որոնք կառչած էին արդեն իր դարն ապրած ֆեոդալական արդարադատությունից, մի բան, որի հետ թե՛ թուրքերը և թե՛ քրիստոնյաները համամիտ էին: Թուրքիայի պատերազմի ու ֆինանսների նախարարների համար Արևելյան Անատոլիայի մեծ մասը մնում է իբրև մարմնի մեջ խրված փուշ: Ձեզ շլացնելու աստիճան հիացնում է գյուղական ամբոխի մեջ հայտնված վայրի ուժ ցուցադրելուց երբեք չխուսափող, փամփշտակալով ցնցոտիավոր քուրդը, երբ, հանկարծ, պարզում եք, որ նա Քոլտի պահունակով կիսավտոմատ հրացան է կրում: Նա հպարտանում է. «Ես աշիրաթ եմ»: Նա երբեք հարկ չի վճարի, ու երբեք չի ծառայի բանակում:

Վերջին քրդական շարժումը, որը միավորման միտումներ ուներ, թեև քննարկվեց, բայց չորակվեց իբրև տագնապալի: Գերմանական հյուպատոսը հատկապես շատ էր հետաքրքրված, թե ինչ էինք մտածում այդ շարժումը զարգացնելու հարցում Ռուսաստանի

որդեգրած գործողությունների մասին: Այս տեսանկյունից տևական վերահսկողության մտքով տարված գերմանացու համար խնդիրը պետք է շատ լուրջ երևա: «*Omne ignotum pro magnifico*[60]»: Բայց իսկական քրդական շարժումը պետք է որ նույնքան անհեռանկար լինի, որքան ալբանականն էր: Բարբառային և կրոնական տարբերությունները համարյա հավասարապես ահռելի են՝ քրդերի մեկ երրորդը հերետիկոս ղզլբաշներ են, որոնց սուննի թուրքերը ատում են նույնքան, որքան քրիստոնյաներին, և ավելի քան կաթոլիկ ալբանացիներն էին ատում մուսուլմաններին: Ներքին կատաղի հակամարտություն այստեղ էլ կա: Այդ ամենից բացի գրավոր լեզվի բացակայությունը անհնարին է դարձնում գաղափարների տարածումը՝ առանց որի միավորումն անիմաստ է: Մինչև 1913 թ. Ստամբուլում ոչ մի քրդական թերթ չի երևացել, և հետաքրքիրն այն է, որ քրդերենով տպագրվել էլ չէր կարող: Քրդերին հասանելի դարձնելու համար Ավետարանական Կազմակերպությունը Սուրբ Գիրքը տպագրում է հայերեն տառերով: Կազմակերպության հայկական ենթակառույցներից մեկը նոր քրդական շարժման հետ փորձել էր աշխատանք տանել, սակայն անցյալի կատաղի հակամարտության հիշողությունը խոչընդոտել էր, ավելին՝ շարժումը արիստոկրատական էր և վախ կար կորցնելու ֆեոդալական արտոնությունները, արտոնություններ, որոնք իրենք արդեն հայերի համար ամենամեծ աղետն ու պատիժն էին: Քրդերի մասին մտածելիս այն զգացողությունն ես ունենում, որ ահավոր ճակատագիրն է մարդկային էության մեջ փոշիացրել ու վերացրել ամենահիմնականն ու թանկը: Տգիտությունն ու անօրեն ուժը միասին ավերել են նրա հոգին: Այն ծնում է չարիք, որն իրականում շատ ավելի մեծ է, քան այն խնդիրները, որ նրանք ստեղծում են իրենց հարևանների համար: Ավելի աղքատ գյուղերում հիմնական պատկերը մերկությունն հազիվ ծածկող ցնցոտիներն են և խոժոռ ու վանող դեմքերը: Ավստրա-

---

60 Նպատակասլաց ու ձգտումներ ունեցող հակառակորդը կարևորության դեպքում կամ դժվարության հանդիպելիս չափազանցված է ներկայացնում այն, ինչն անծանոթ է:

լական բնիկների դեմքերին ավելի շատ ժպիտ ու ծիծաղ կա: Ամենադաժան հաճույքը, որին կարելի է ականատես լինել, այն եզակի երևույթն է, երբ մեծ երեխաները ավելի փոքրերին գետին են տապալում:

Առաջնորդը, որն ընդունեց ու հյուրասիրեց մեզ, նախընտրում էր մատներով ուտել, սակայն մեզ պատվելով՝ թույլատրեց դանակ, պատառաքաղ գործածել: Նա այնքան դաժան էր, որ առանց խղճի խայթի նույն երեկո պարծենալով մեր թարգմանչի մոտ՝ ասաց, որ, եթե քրիստոնյաներն իր երկրում ռեֆորմների արդյունքում արտոնություններ ստանան, ինքն ու իր մարդիկ նրանց բոլորին երկու ժամում կսպանեն:

Նրանց համար, ովքեր այդ ամենը մանրամասն չեն ուսումնասիրել, չափազանց դժվար կլինի պատկերացնել քրդական իրավիճակը, որովհետև այն եզակի է, նմանը չունի: Նույնիսկ Ալբանիան, որը, մոտ գտնվելով Եվրոպայի սրտին, մինչև պատերազմը անհավատալիորեն վայրի երկիր էր, այսքան տարօրինակ չէր: Նախքան Քուրդիստան[61] գալս, հիշում եմ, որ մի ճանապարհորդ առաջարկեց, որ հայկական հարցը կարելի է լուծել, եթե հայերին թույլատրվի զենք կրել. քաղաքական բնազդը ինձ ստիպեց առարկել նրան: Բայց իրականում սա հարցի նկատմամբ միակ խելամիտ պետական մոտեցումը կլիներ, քանի դեռ գոյություն կունենա թուրքական իշխանությունը, որովհետև, լինելով շատ ավելի մեծ ու բնական ուժ, քան քրդերը, *հայերը, զինված լինելու դեպքում, իրոք կապահովեին խաղաղություն:*

Խոստովանում եմ, իրավիճակը ճշգրիտ ներկայացնող այս փոխաբերությունները հաճախ են գալիս միտքս. քուրդ անասնապահը իր հողին նույն կերպ է վերաբերում, ինչպես ավստրիալացի անասնապահը: Երկուսն էլ հավասարապես զզվում են հողագործությունից, երկուսն էլ կարող են ապրել առանց դրա: Բայց մի բանով

---

61 Նկատի ունի քրդերով բնակեցված հայկական տարածքները, որոնք թուրքական իրականության մեջ հայտնի են իբրև Քուրդիստան:

տարբերվում են՝ ավստրալական կառավարությունը պնդում է, որ հողը հարմար է հենց հողագործության համար և պարտադիր պիտի մշակվի: Բայց քուրդն ինքն իր համար կառավարություն է և պնդում է, որ հողը չպետք է մշակվի: Նա դժվարությամբ է հանդուրժում այն միտքը, որ մի պատահական գյուղի հողակտոր կարող է մի քսան հոգու օգուտ բերել: Ու հենց որ այդպիսի բան տեսավ, նա գյուղը խլում է իր մարդկանց համար, իսկ մնացածն ավերում հիմնովին:

Քաղաքակիրթ երկրներում բարգավաճող վարձակալը շահույթ է բերում իր հողատիրոջը: Բայց սեփական շահույթը լավագույն դեպքում տնտեսությունը զարգացնելու համար թերի երաշխիք է: Քրդի դեպքում այն չի գործում, որովհետև նրա չափանիշները նույնն են, ինչ գնչուինը: Մի քուրդ, որը վայելել էր մարդկանց բնաջնջման ենթարկելու հաճույքը, տեսնում է իր երիտասարդ որդուն գյուղացիների հետ հողը հերկելիս: Հայրն ընդվզում է որդու նմանօրինակ նվաստացման դեմ: Որդին պատասխանում է. «Երբ բոլոր քրիստոնյաներին սպանած լինես, մենք ստիպված ենք լինելու կամ աշխատել, կամ սովահար լինել»:

Վերջապես, մի փոքրիկ թուրքական կառքով Թուրքիայից ճանապարհ ընկանք դեպի Ռուսաստան, ու երբ արդեն սահմանին էինք մոտեցել ու անցնում էինք մի կիրճով, մեզ տեղափոխողը հանկարծ ասաց. «Վերջին անգամ այս կողմերով անցնելիս՝ քրդերը մեզ թալանեցին»: Փաստն այն էր, որ հինգ քուրդ հարձակվել էին մի ճանապարհորդի վրա, երբ հյուպատոսը, որը վերադառնում էր իր աշխատավայր, հայտնվել էր տեսադաշտում: Նրան ուղեկցող խումբը չորս ոստիկանից և երկու զինվորից էր կազմված: Քրդերը փորձում են քառատրոփ ետ սլանալ: Երկուսին շրջապատում են, հյուպատոսը մոտենում է և հրամայում է զինվորներին քրդերին զինաթափ անել: Պատկերացրեք նրա զարմանքը, երբ պարզում է, որ ճանապարհորդը ոչ այլ ոք է, քան թուրք պրեֆեկտ՝ կառավարիչ: Մինչ անվտանգությունն ապահովող պահակախումբը կգար, նա արդեն բացահայտել էր իր ով լինելը և ոչ թե բողոքում էր քուրդ կողոպտիչների դեմ, այլ այն վտանգի

դեմ, որ կառաջանար, եթե քրդերին զինաթափեին: Հյուպատոսը պնդել էր, և այդ մարդկանց տարել էին Վանի բանտ, իհարկե, հաշվի էին առել շուտափույթ ազատ արձակելու նրանց պահանջը: Որքան էլ նման փաստերը զավեշտական թվան, դրանք վկայում են հայերի համար անտանելի իրավիճակի մասին:

Միայն թե անցյալ տարի բրիտանական հյուպատոսի վրա հարձակվելով՝ քրդերը ստիպել էին նրան մի փոքրիկ ճակատամարտ տալ: Հյուպատոսը դիպուկ կրակել էր և այդպիսով փրկել սեփական կաշին:

Հարևանի համար քուրդը, անկասկած, մեծ անեծք է: Բայց ճամփորդի համար նա, ինչպես Լինչն է ասում, պատկերավոր և հաճելի ներկայություն է ապահովում: Հենց նա է, որ այդ հսկայական տարածքներին գույն և ռոմանտիկա է հաղորդում: Երբեք չեմ մոռանա, որ մեր ձանձրալի ուղևորություններից մեկի ժամանակ դեմ հանդիման դուրս եկանք մի զույգի՝ երիտասարդ քուրդ առաջնորդի իր կնոջ հետ: Տղամարդը թամբի վրա դրել էր զենքը, իսկ կինը, երկար դեղին բաճկոն էր հագել ու մանուշակագույն թավշից փոխան, նստել էր ձիու գավակին ձիգ ու վստահ կեցվածքով, դեմքը փակել փափուկ դիմակալով, որը հիշեցնում էր Քենտրբերյան ուխտավորի իրոք հրաշալի մի պատկեր, որ երբևէ կարելի է տեսնել այս ժամանակակից գորշ աշխարհում:

Թուրքահայաստանը

Հայն իր էությամբ արմատապես տարբերվում է իր քուրդ հարևանից թե՛ իր հոգեկան կարողություններով ու բարոյական որակով և թե՛ իր կենսակերպով: Ես կաշխատեմ այս և հաջորդ բաժիններում իմ անձնական դիտարկումներից ելնելով՝ որոշ տպավորություններ փոխանցել հայի բնույթի մասին: Մերոնցից մեկին հայերի հետ էին ծանոթացրել Հնդկաստանում, որտեղ հայը սովորաբար դասվում է եվրոպացիների, կամ այսպես կոչված եվրասիացիների, ու առևտրական

գործակալների շարքը: Անգլիական Հնդկաստանում շատ քիչ են ծանոթ հայերի սոցիալական կյանքին, բայց գտնում են, որ հայերը գործնական հարցերում՝ առևտրական գործարքներում, հույնի ու հրեայի նման շատ խելացի են: Կասկած չկա, որ հայկական համայնքը Հնդկաստանում շատ օգուտ է տալիս, կասկածից վեր է նաև այն փաստը, որ հայերը Բրիտանիայի ամենահավատարիմ բնակիչներն են: Լինելով արևելցի, նրանք շատ ավելի հրաշալի են հասկանում արևելյան մտածելակերպը, քան մենք, և, այնուամենայնիվ, որքան էլ, որ տարօրինակ է, ունեն արևմտյան մտածելակերպ: Ընդհանուր առմամբ հայտնի չէ, թե ինչ աստիճանի է եղել նրանց կողմից մեզ ցուցաբերած օգնությունը Հնդկաստանը գրավելու հարցում, և, թե որքան մեծ ծառայություններ են մատուցել ռազմական բնագավառում՝ աշխատելով իբրև թարգմանիչներ, զբոսավարներ ու սկաուտներ: Մեր առավել մեծ քաղաքներում հայերը հայտնի են որպես առևտրի գիտակներ ու առևտրի զարգացմանը նպաստողներ: Լոնդոնում արաբերեն, թուրքերեն, արևելյան լեզուներ դասավանդող ուսուցիչների մեծ մասը նույնպես հայ են: Մեզանից քչերը գիտեն, թե ինչպիսին է հայն իր հայրենիքում: Բայց նրանք, ովքեր դա գիտեն, առաջինն են վկայում, որ արտասահմանում հաստատված ու աշխարհաքաղաքացի դարձած հայերի առևտրական դասը չպետք է ընկալվի իբրև այդ ազգին բնորոշ տեսակ: Հայերն էլ այլ ազգերի նման բազմազան են: Եվ սեփական երկրում նրանք իրենց դրսևորում են լավագույնս: Ինչևէ, հայ գյուղացին, ինչպիսին մենք նրան տեսանք Թուրքիայում ու Ռուսաստանում, հրաշալի ջլապինդ տղամարդ է, առնական ու համառ, ինչպիսին իր բուլղարացի ազգակիցն է, նման է նրան իր բազմաթիվ հատկանիշերով, և նրան նմանվում է նաև հողը մշակելու իր անսահման սիրով: Եթե նույնիսկ նա կեղտոտ է ու ցնցոտիների մեջ, ապա ամեն դեպքում շատ ավելի մաքուր է, քան իր հարևանները, և նրա տան կոկիկությունն էլ՝ անհամեմատ ավելի աչքի զարնող:

Հաճախ հայի հասցեին կշտամբանքներ են հնչում, թե նա կծծի է ու վախկոտ, նույնիսկ դեպք է եղել, երբ մեղադրել են, որ չի կարողանում տղամարդավարի պաշտպանել ինքն իրեն: Այսպիսի պատմութ-

յուններն անարդարացիություն, տգիտություն ու անմտություն են բուրում: Ամեն ազգի ներկայացուցիչ էլ կարող է ունենալ բարոյալքման պահեր: Հայերն իրենց հրաշալի են դրսևորել թե՛ ռուսական բանակում և թե՛ թուրքականում: Հայերի մի խումբ անցյալ ձմռանը կռվել է բուլղարական բանակում: Նրանց դերը ռուսական հեղափոխության մեջ նույնպես քաջ հայտնի է: Այն, որ նրանք վախկոտ են՝ մտացածին է և հիմնված այն փաստի վրա, որ անզեն մարդիկ ի վիճակի չեն պաշտպանվել իրենց ճնշողներից, քանի որ վերջիններս զինված են ժամանակակից զենքերով: Հայի լավագույն տիպը, որին բավականին հաճախ ես հանդիպում իր հայրենիքում, բարձրահասակ է, սևահեր, բավականին քչախոս, խոսելիս չի շտապում, խոսքը նպատակային է, և, համեմատած իր մուսուլման հարևանների հետ, շատ ավելի պակաս ազահ է բախշեշների հարցում: Նրա սևաթույր աչքերը խոսում են հաստատակամության ու նպատակասլացության մասին: Արտակարգ իրավիճակներում, երբ վտանգված է հայ մարդու կամ նրա ազգի պատիվը, հուսախաբ եղած մարդը «մետաղի համաձուլվածքի» ամրություն է ձեռք բերում, ծնունդ տալիս այնպիսի քաջարի զինվորների ու մարտիկների, ինչպիսիք Զեյթունի,Կիլիկիայի հերոսներն էին, որոնք երբեք չհամակերպվեցին թուրքական լծին:

Հայի մյուս տեսակը հեղափոխական առաջնորդն է՝ փոքրամարմին ու մեծ գլխով, արտակարգ պերճախոս ու արագախոս, և խոսքն էլ միշտ զուգակցում է ժեստերի գործածության հետ: Նա ունի բոհեմական վարվելակերպ ու տեսք, կրում է կարմիր փողկապ, և երկարամազ է: Թուրքիայում նա հաճախ ծպտվում է, ձևացնում, թե սպորտսմեն է կամ ավետարանիչ: Այս կերպ, ամեն օր, նա երկրի մի մասից մյուսն է գնում՝ կազմակերպելով, աղոթելով, գյուղացիներին հրահանգներ տալով, ու շարունակելով գործել ծպտված: Այն, որ նրան՝ հեղափոխական շարժման առաջնորդին, բազմաթիվ վտանգներ են շրջապատում, փաստ է, և հայերն էլ սովորական մահկանացուների նման կարող են տրվել գայթակղությունների: Պաշտոնական վիրավորանքներն ու օրինականացված կողոպուտը, մարդկանց մղում են ծայրահեղ քայլերի, որոնք այլ պայմաններում հանցագործություն կհա-

մարվեին: Որքան ավելի լավն է մարդը ու որքան ավելի խորն է նա զգում անարդարությունը, այնքան ավելի կատաղի է նա դառնում: Ի-մանալով, որ ոչ մի ներում չկա, որ կառավարությունն իր քաղաքացի-ներին օգնություն և պաշտպանություն ցուցաբերելու փոխարեն պատրաստ է նրանց բանտ նետել ու տանջել առանց դատ ու դատաս-տանի, նույնիսկ ամենաառաքինի մարդը, երբ վիրավորված է նրա արդարության զգացումը, կարող է դիմել ծայրահեղ քայլերի:

Մեր ամենահաճելի հիշողություններից մեկը այցելություններն էին դեպի հեռավոր վանքեր, որոնք տեղակայված են Փոքր Ասիայի կենտրոնական սարահարթի բարձրադիր վայրերում: Վաղ դարերում վանքերը եղել են կրթահամալիրներ և վանականներին ուսուցանել զանազան արհեստներ, ինչպիսիք են ատաղձագործությունն ու մա-նածագործությունը: Հենց սրանք են եղել արդյունաբերության և գյու-ղատնտեսության հիմնաքարերը: Ուխտագնացները հավաքվում էին տեսնելու այս վանքերը ոչ միայն կրոնական նպատակներով, այլև բժշկական աջակցություն ստանալու և իրենց հողատարածքները մշակելու նոր մեթոդներ սովորելու համար: Վանականներից, որոնք օգնել են մարդկանց ձևավորել իրենց կենսական սովորություններն ու բարելավել ապրելակերպը, նրանք, փաստորեն, շատ գաղափարներ են վերցրել: Վանքերը պահպանել են իրենց նախկին փառքի ստվերը միայն, նույնիսկ այժմ, երբ նրանց հոտերն ու նախիրները անցյալի գրկում են, և ուղտերի ու գոմեշների քանակը հասել է նվազագույնի, նրանք շարունակում են մեծ դեր խաղալ ազգի գործունեությունը ուղ-ղորդելու և այս հեռավոր երկրին ամենավառ պատկերավորությունը հաղորդելու հարցում:

Մի քանի օր ճանապարհորդելով ահավոր շոգին, լեռնային կիր-ճերով մագլցելով՝ երեկոյան կողմ մենք հասանք գահավեժ մի ժայ-ռագագաթի: Արևի աչք ծակող ճառագայթներն ու շոգը մի փոքր նվա-զել էին, և երբ հասանք գագաթին, այնտեղ հիանալի պարգև էր մեզ սպասում: Հեռվում՝ 2.000 ոտնաչափ ներքև, բայց այնքա՜ն մոտ, փռված էր կապույտ ջրերի շողացող ծածկոցը, որի կանաչ եզրերը ձուլվում էին մոտակա ափին: Դա Վանա լիճն էր: Լճի վերևի հատ-

վածից ու շրջակայքից ողջ տարածքով մեկ վեր էին խոյանում վարդագույն ու մանուշակագույն լեռները: Աջ կողմում Սիփանի վրա տեղացած թարմ ձյան սպիտակը շողշողում էր թեք ճառագայթների ներքո, և հեռավոր մշուշում կարելի էր տեսնել Արարատի գագաթի լույսը: Երբ մենք հասանք վանքին, վանահայրն ինքը դուրս եկավ մեզ դիմավորելու, ձեռքսեղմումից ու գրկախառնումից հետո նա մեզ ուղեկցեց դեպի մեր սենյակները, որոնք լավագույնն էին այդ կառույցում. դրանցից մեկում շատ գեղեցիկ մի գորգ կար փռված, որը, ասում էին, 400 տարեկան էր: Մեզ տրամադրվել էր այն լավագույնը, որ վանքը կարող էր ապահովել: Մենք Աղավանքում ենք. մեր դիմաց՝ հակառակ կողմում, ծովափից 3 մղոն հեռավորության վրա, ժայռոտ Աղթամար կղզին է: Արևելքից այն երևում է որպես բարձրաբարձր մի ժայռ, բայց գետինը զառիվայր գնում ու հետո մյուս կողմում դառնում է ողորկ ու տափարակ, որի վրա վեր է հառնում Աղթամար վանքը, որը դարեր շարունակ եղել է կաթողիկոսի նստավայրը: Այստեղի եկեղեցին հարուստ է որմնաքանդակներով, որոնք զարդարում են արտաքին պատերը: Դա ասորական կամ եգիպտական ճարտարապետություն է հիշեցնում: Սովորական հայկական եկեղեցին շատ մեծ չէ, բայց իր չափերի համամասնությամբ բարձր է: Վանքը քառակուսի է, պատերը՝ խեցազարդ, արևելյան մասում խորանն է: Չորս անկյուններում և ափսիդների միջև կան մեկուսացած խցեր, որոնք երբեմն երևում են դրսից: Պատերը վիթխարի են, յոթ կամ ութ ոտնաչափ հաստությամբ, իսկ պատուհանները փոքր են, և միջավայրը՝ մութ ու մռայլ: Վանքն ունի գմբեթ ու աշտարակ: Հեռվից էլ կարելի է տարբերել հայկական եկեղեցին իր բազմանկյուն աշտարակով, սյուների վրա նստած տեսքով ու կոնաձև գագաթով: Մուտքի դուռը տանում է դեպի նախասրահ կամ գավիթ, որից այն կողմ շքեղ սյունասրահն է, որը վերևում շրջափակված է զանգակատնով: Ամբողջական տեսքը շատ տպավորիչ է ու հաճելի: Այդքան եկեղեցիներից, որ մենք այցելեցինք, չեմ հիշում, որ տեսած լինեի հայկական ճարտարապետության լավագույն շրջանի ավելի կատարյալ նմուշ, քան Էջմիածնի սբ. Հռիփսիմե եկեղեցին:

Արևմուտքում բանվորական շարժումը պահանջում է թե՛ մարդու ազատություն և թե՛ անձնական անվտանգություն, քանի որ միայն այս պայմանների դեպքում է, որ մարդը իրականում կարող է ապրել բարգավաճ կյանքով: Մենք սկսում ենք հասկանալ, որ մարդու նկատմամբ բռնության կամ տնտեսական անապահովության ցանկացած դրսևորում կարող են կոտրել մարդու ամրությունը: Արդյունաբերական կյանքի տատանումները, երկարատև գործազրկությունն ու երկար ժամանակ անտուն ապրելը այնպիսի պայմաններ են, որոնք կաթվածահար են անում մարդու ուժն ու կամքը: Այս պայմանների տասնապատիկը առկա է Հայաստանում: Ինձ համար ոչինչ այդքան արտասովոր չէ, որքան այն ձևը, որով գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչությունը, չնայած պարբերական պոռթկումներին, պահպանում է իր կենսունակությունն ու բարոյական դիմագիծը: Հայաստանի հասարակ քրիստոնյա գյուղացին դրա վառ օրինակն է: Քիչ գումարներ են ծախսվում նրա վրա: Պետության աչքին նա լավագույն դեպքում արժե հինգ ֆունտ ստերլինգ: Նա երբեք չգիտի, թե երբ կգրավեն իր տունը և կտանեն իր խնայողությունները: Նրա երեխաները չեն մեծանում այնքան, որ ժառանգեն իր քրտնաջան աշխատանքի պտուղները: Նա ոչ մի հաշվարկ չի կարող անել ապագայի համար: Չնայած այս ամենին, հայ ազգը գոյատևում է. նա երեխա է դաստիարակում, ի վիճակի է հասնել բավականաչափ անձնական երջանկության, նույնիսկ ձգտում է մշակութային և մտավոր առաջխաղացման: Հայն աննկուն լավատես է, և հենց դա է, որ պահպանում է ազգը ոչնչացումից: Նա աղետներից վերականգնվելու զարմանահրաշ ուժ է ցուցաբերում: Նա ֆատալիստ չէ: Ըստ նրա՝ ճշմարիտ կյանքը պետք է ավելի ընդգրկուն լինի, քան իր կիսատ-պռատ գոյությունը, նա գիտի, որ կյանքում իր համար պետք է ավելի լավ բաներ լինեն պահված: Նրա նախաձեռնող ոգին կառչում է այն ամենից, ինչը կարող է նպաստել իր բարօրությանը: Հայը հավատում է, որ կործանումից միշտ էլ մի բան կարելի է փրկել, որը կարող է նորի ստեղծման հիմք դառնալ:

Այս ոգին է, որ բացի ամենաղքատիկ իրերից նաև միջոցներ է ապահովում հաճելի բաների համար, ինչպես օրինակ, պարսկա-

կան սահմանի մոտ գտնվող հեռավոր քաղաքի պարզ տոնակատարությունները: Շատ գյուղացիներ են եկել հարևան գյուղերից. կանայք, տղամարդիկ, երեխաներ՝ բոլորը տոնական տրամադրությամբ և տոնական հագուկապով են: Եկեղեցու բակից լսվում են ուրախ տոնակատարության ձայներ: Երեկոյան կողմ հնչում է երաժշտությունը՝ ֆլեյտան ու թմբուկը, մի ամբողջ նվագախումբ, արևելյան մեղեդիները՝ տարօրինակ ու բնական, քառասային ու կրքոտ հասնում են մեր ականջներին: Մթնշաղին պարմանուհիներն են սկսում պարել: Նրանցից երեքը շրջան էին կազմել, մի երեխա էլ կենտրոնում էր պարում: Դա երկրի ժողովրդական պարն էր՝ կեցվածքի ու շարժուձևի նազելիություն, մեկը մյուսին արագ հաջորդող շարժումներ: Փոքրիկ աղջնակը կրում էր հասարակ, երկար, սպիտակ զգեստ, և երբ նա պարում էր, մարդիկ կախարդված հիանում էին նրա պարով ու ետ էին քաշվում, որ պարահրապարակը լայնանա և նրան ավելի շատ ազատ տեղ տրամադրվի: Հետո տղամարդիկ սկսեցին պարել ուս ուսի խփելով, հինգ կամ վեց շարքով, դրանից հետո խնջույքը շարունակելու ակնկալիքով գնացին կողքի սենյակ ընթրելու: Այստեղ բոլորը նստեցին հատակին. ընթրում էին փլավ, յաբութ, թեյ, մրգեր, նրբաբլիթ՝ պանրով ազգային հաց: Ծխական քահանան մեզ մի խմբի մոտից մեկ այլ խմբի մոտ առաջնորդեց: Բայց, նախ, նա մեզ մի ավելի հանգիստ անկյուն տարավ: Երբ սկսեց պատմել սպանության, անարգանքի, կողոպուտի մասին, որին ենթարկվել են այս մարդիկ, նրա դեմքը միանգամից այլայլվեց: Մարզը մասնակիորեն տուժում էր քրդերի ասպատակություններից: Ո՞վ կմտածեր, որ տոնախմբության մասնակիցները քայլում էին բարակ սառույցի վրայով, որն ամեն պահի կարող էր կոտրվել: Նկատելի հակադրություն կար հայկական և քրդական գյուղերի միջև: Քրդական գյուղերի մոտով օրեր շարունակ ճամփորդելիս չէինք նկատել, որ ավազաբլուրներից բացի ծառի ու հողագործության հետքեր լիներ:

Մեր նախաճաշի համար նախատեսված սպասասրահը վկայում էր հայկական գյուղում լինելու մասին՝ հյութալի սեխեր դրվե-

ցին մեր առջև, որոնք անջրդի հողն էր տվել առատությամբ, հենց որ ջուր էր եղել ոռոգելու: Մինչ մենք նստած էինք, հայտնվեց տեղացի ուսուցիչը, որն ավելի նկատելի հրաշք էր, քան սեխերը. ո՞վ էր երբևէ լսել քրդական գյուղում դպրոցի գոյության մասին: Թվաց, թե հանկարծակի հայտնվեցինք քաղաքակրթության կենտրոնում: Խոսքեր չեմ գտնում գովաբանելու այս կրթական գործունեությունը: Մեր առջև կանգնած էր որոշակի ընդունակությունների տեր մի մարդ, որը պատրաստ էր ապրել միայնակ, մեկուսացած գյուղում՝ հօգուտ երիտասարդ սերնդի և իր ազգի:

Դպրոցական համակարգը հայկական գյուղերում ամբողջովին կամավորականության վրա է հիմնված, չկա ոչ մի կառավարական օժանդակություն: Դպրոցները գտնվում են Կոնստանդնուպոլսում գործող Կրթության ազգային կոմիտեի հսկողության ներքո: Ուսուցիչները, որոնք բոլորն էլ որակավորման վկայականներ ունեն, վարձատրվում են կոմիտեի տեղական ներկայացուցիչների կողմից: Յուրաքանչյուր մարզ վերահսկելու համար նշանակվում են նաև տեսուչներ: Կան աշակերտներ, որոնք ի վիճակի չեն ուսման վարձ վճարել, բայց աղքատությունը խոչընդոտ չէ ընդունելության համար: Լավ սարքավորված դպրոցների և քոլեջների մի մասը Միացյալ կոմիտեն է ֆինանսավորում, որն իր ֆոնդերն ընդլայնում է Եգիպտոսում և հարուստ հայերի միջոցներով: Այս ամենը ներառված է ազգային կազմակերպության մեջ, իսկ կառավարումն իրականացնում է Ազգային կոմիտեն: Ուսուցիչը հիմնականում միայնակ է աշխատում գյուղերում, երբեմն նրան օժանդակում է ծխական քահանան՝ կրոնին առնչվող հրահանգներ տալով:

Մենք այցելեցինք տղաների համար նախատեսված Վարագա միջնակարգ դպրոցը, որը կցված է հինավուրց վանական հաստատությանը: Դպրոցում կրթությունը միշտ էլ արկածներով լի է եղել: Այն հիմնադրվել է 50 տարի առաջ Եպիսկոպոս Մկրտչի կողմից, որը Հայաստանի ժամանակակից կրթության հիմնադիրն է: Կոտորածների ժամանակ, ահել թե ջահել, ստիպված բարձրացել էին լեռները, և նրանց բացակայության ընթացքում շենքերն ամբողջովին ավերվել

էին ու կրակի մատնվել: Այնուամենայնիվ, ձեռնարկվել էր վերակառուցում: Եկեղեցին, որը, բարեբախտաբար, չէր ավերվել, զբաղեցնում էր փակ բակի մի ամբողջ թևը, իսկ նոր կառույցները՝ մնացած երեք թևերը, և մի երկրորդ բակի կառուցումն էլ ավարտին էր մոտենում: Հաստատությունը կողոպտելու մի երկրորդ փորձ էր ձեռնարկվել մոտ երեք տարի առաջ: Հարձակվող խումբը՝ մոտ հարյուր ամրակազմ տղամարդ, ետ էր մղվել հինգ հայ հեղափոխականների կողմից, որոնք, անկասկած օգնություն էին ստացել քոլեջի երիտասարդներից: Այժմ դպրոցում մոտ յոթանասուն տղա և յոթ ուսուցիչ կա, բոլորն էլ աշխարհիկ: Համակարգը գլխավորապես գործնական նպատակներ է հետապնդում: Դպրոցի աշակերտներին պատրաստում են ուսուցչական գործունեության: Եվ, քանի որ հայկական գյուղի ուսուցչի պարտքն է համարվում գյուղացիներին գյուղատնտեսական գործերում աջակցելը, աշակերտներին ուսուցանում են մրգեր, բանջարեղեն աճեցնելու հիմունքներ, ընտանի թռչունների խնամք, կաթնամթերքի պատրաստում և ընդհանուր այգեգործություն: Դպրոցի տարածքը ոռոգվող հողերի սքանչելի օազիս է շրջապատող անապատի կենտրոնում: Կառավարությունը գողացել էր դպրոցի տպագրահաստոցը և առևանգել գրաշարին, բայց հաջողվել է հաստոցը փոխարինել առավել ժամանակակից մեխանիզմով: Յուրաքանչյուր տղա դասերից դուրս զբաղվում է ատաղձագործությամբ և տնային տնտեսությամբ: Մասնաշենքն ուներ հիանալի խաղահրապարակ, որտեղ, ինչպես նշեցի, տղա սկաուտներն էին: Նրանք ինձ շրջապատել են ջերմությամբ. տղաները ծարավ էին սկաուտական գիտելիքի և տենչում էին գրանցվել իբրև «սկսնակ»: Առավոտյան, մենք հեռացանք, բայց դպրոցը երկար ժամանակ ուղեկցում էր մեզ. լսվում էր հայրենասիրական երգը……

Մեր հայրենիքը անօգնական է,
Թշնամու կողմից՝ ջախջախված:

Մյուս երգը, որի հեղինակը երիտթուրքերն էին ու հեղափոխության ժամանակ էին երգում, սկսվում էր այսպես.

Տապալենք բոլոր բռնակալներին…

Այժմ անհրաժեշտ է անդրադառնալ ավելի տագնապահարույց հարցի, որը բացահայտվել է վիլայեթներում գյուղացու կենսապայմանների վերաբերյալ արված հարցման միջոցով: Անիմաստ է հերքել այն դժվարությունները, որոնք առնչվում են Կոնստանդնուպոլսի կառավարությանը, իհարկե, չի կարելի թաքցնել այն փաստը, որ Սահմանադրության ընդունումից հետո ասիական Թուրքիայի ներքին գործերում որոշ առումով առաջընթաց եղել է: Բայց դժվարություններ կան, որոնք հավերժական են. խառը, բազմազգ բնակչություն, կրոնական տարբերություններ և ավանդական անիշխանություն: Մենք՝ բրիտանացիներս, ստիպված ենք առնչվել նույն խնդիրներին Հնդկաստանի որոշ մասերում՝ անհանգիստ ցեղեր սահմանին, զինված հանցախմբեր, որոնք պատրաստ են օգտվել կառավարության ցուցաբերած ցանկացած թուլությունից կամ հապաղումից: Համարժեք ուժ է անհրաժեշտ, իսկ ամենից առավել ամուր ձեռք է պետք, որն ապահովի համայնքի անպաշտպան հատվածների անվտանգությունը: Բիրմայում, սեփական փորձից գիտեմ, նման անվտանգություն ապահովում է ռազմական ոստիկանությունը: Բայց թուրքական կառավարությունը, ըստ երևույթին, չունի ոչ համարժեք ուժ, ոչ էլ հզոր ձեռք իր պարտականությունները կատարելու համար: Ոստիկանությունը թույլ է ու անկարգապահ: Նրա դավանած գաղափարները արմատապես փոխվել են, սակայն ո՞րն է փոփոխությունների գործնական իմաստը: Այս գործերով զբաղվողների մեջ անկեղծության ակնհայտ պակաս կա: Կառավարությունը իր վրա է վերցրել միջոցառումների իրականացման մի մասը, բայց ազնիվ ու շիտակ չի գործում. նույնիսկ կառավարության ընկերներն են այդ կարծիքին: Քրդերն այդ մասին հրաշալի գիտեն և փորձում են դրանից օգուտ քաղել: Որոշ առումներով ներկա վիճակն ավելի անտանելի է, քան մինչև Սահմանադրության ընդունումը: Ծագած հույսերը մարեցին վերջին դեպքերի պատճառով: Կրթության ու լուսավորության տարածումը լուծը դարձնում են ավելի ծանր, իսկ թշվառությունը՝ էլ ավելի սուր: Վիրավորանքները, դժգոհությունները, ամենայն հավանականությամբ, ծագում են երկու խումբ պատճառներով: Պատճառների առաջին խումբը կառավա-

ության անժխտելի նպատակային քաղաքականության արդյունք է, իսկ երկրորդը ներառում է այն պատճառները, որոնք ստուգելը կառավարության համար իր այսօրվա աշխատակազմի պարագայում ուժերից վեր գործ է:

Անշուշտ, առաջին խմբի բազմաթիվ գործոններից, որոնք կառավարության վարած քաղաքականության արդյունք են, նախ, պետք է առանձնացնել զանգվածային ջարդերի խնդիրը: Անգլիացու ականջին խորթ կինչի, եթե նրան ասվի, որ սա կառավարության քաղաքականությունն է: Եվ, այնուամենայնիվ, սա է հենց ճշմատությունը, ու երբեք չեմ լսել, որ պետական այրերի կողմից լուրջ առարկության հանդիպի այն պնդումը, թե Թուրքիայում կառավարության հրամանով տեղի ունեցածից բացի այլ ջարդեր էլ են եղել: 1895-1896 թթ. կոտորածները, 1908 թ. մարտին՝ կոտորածը Վանում, ապա Ադանայի ու Կիլիկիայի կոտորածները 1909 թ. … Այս ամենը տեղի է ունեցել **կառավարության համաձայնությամբ** (ընդգծումը՝ Ն. Գ.):

Մի երեկո ընթրիքից հետո նստեցինք մի փոքրիկ սենյակում: Մեր ուղեկիցները տրամադրված էին զրույցի, սկսեցին հիշել անցած-գնացած դեպքերից. սարսափներն այդ օրը սկսվել էին վաղ առավոտյան: Կանանց մի մասին վախն ու տագնապը փողոց էին հանել, լսվում էին կրակոցներ և դա առաջին ահազանգն էր: Ավելի ուշ փախստականների մի խառնամբոխ հավաքվեց բրիտանական հյուպատոսարանի կողքի փոքրիկ հրապարակում՝ հույս ունենալով, որ այնտեղից օգնություն կստանան: Մեր ծանոթներն արդեն որոշել էին, թե ուր պիտի գնան. նրանք աննկատ դուրս են գալիս ետևի կողմից, մի նեղ անցուղով հասնում ցեխաշաղախ բարձր պատեր ունեցող պարտեզներից մեկին, ինչպիսիք կարելի է տեսնել քաղաքի այս հատվածի ցանկացած տան շուրջ: Շտապով մի պարտեզից մյուսն են գնում՝ ակնկալելով, որ ամեն պահի կարող են իրենց բռնել… Իսկ ահասարսուռ մորթը շարունակվում էր … Ականատես դարձան, թե ինչպես էին բազմաթիվ մարդիկ մորթվում: Փոքրիկ տղաների մի խումբ, փախչելով, նույնպես հայտնվել էր

այդտեղ… Էլի մի քանի վայրկյան ու անվտանգ կլինեին, այդ պահին անկյունից հանկարծ դուրս են գալիս թուրք զինվորները, և փոքրիկ տղաները հայտնվում են ծուղակում: Թուրքական յաթաղանը գործի է դրվում… ու արյունաթաթախ՝ նոր զոհեր փնտրում: Այդ ընթացքում փախստականներին օգնության է հասնում նախախնամությունը ու նրանք հայտնվում են ամերիկյան առաքելության տարածքներում: Այստեղ էլի փախստականներ կային: Շենքն ու տարածքն ուղղակիորեն լի էին փախստականներով: Սակայն նույնիսկ ամերիկյան խնամակալության ներքո կյանքն ապահով չէր: Այդ գիշեր լեփ-լեցուն դպրոցական դասարաններն ու օժանդակ տարածքները ենթարկվեցին զինվորական ստուգումների, ու արդյունքում ամենագեղեցիկ տղաներին ու աղջիկներին տարան անհայտ ուղղությամբ՝ որտեղից ոչ ոք չվերադարձավ:

Այդ օրերի սարսափների մասին առաջ էլ էի լսել: Տունը տան ետևից թալանում էին, ամեն արժեքավորը հանվում էր տներից, իսկ տները հրդեհվում էին: Նրանց, ովքեր չէին մորթվել փողոցներում, ավելի դաժան տառապանքներ էին սպասվում: Որոշ դեպքերում մարդկանց ոտքերի տակ ձիու պայտ էին մեխում, կանանց ու տղամարդկանց մերկ մարմիններին վայրի կատուներ էին կապում, որ իրենց ճանկերով պատառոտեն այդ մարդկանց միսը, շատերի վրա առատ նավթ էին լցնում ու կենդանի-կենդանի կրակ տալիս հենց փողոցներում…

Երբ մարդիկ այսպիսի հիշողություններ ունեն, արդյոք դեռ կարելի է տարակուսել, թե հայերի վիճակն, իրոք անտանելի էր: Էլի՞ տարակուսենք, թե ինչու է փախստականների հոսքը անընդհատ շարունակում կտրել ռուսական սահմանը: Սահմանային ուղեկալում, 1913 թ. հոկտեմբերին, մեզ ասացին, որ այս տարվա հունվարից մինչև հոկտեմբեր յոթ հազարից ավելի հայ վերաբնակիչներ են անցել սահմանը: Կոտորածներից հետո քրդերի սովորական գործն էր դարձել հայերի տարածքները գրավելը, իսկ եթե պատահեր, որ փախստականներից որևէ մեկը վերադառնար էլ, դժվար թե նրանց պահանջը լավ վերջ ունենար: Ընդամենը մի քանի ամիս առաջ Արճեշում նման

մի դեպք էր տեղի ունեցել. հայ գյուղացին դիմել էր դատարան, որ գողացած հողերը ետ վերադարձվեն: Մի քանի օր անց ինքն էլ, ողջ ընտանիքն էլ սպանվեցին և, իբրև կանոն, ոչ ոք դրա համար չձերբակալվեց:

Կառավարության հստակ քաղաքականությունն այն է, որ գյուղացուն էլ ավելի խեղճացնի հարկերի ծանրության տակ: Նոր հարկեր են ավելացվել, ընդ որում, չնայած քաղաքացիական օրենքով այդ հարկերը սահմանված չեն, բայց ոստիկանապետի կողմից կամ իսլամի սրբազան օրենքով մարդիկ կարող են ենթարկվել տուգանքների, պատիժների, որի հետևանքով քրիստոնյա բնակչությունը տառապում է բազմապիսի անիրավություններից: Քրիստոնյաների վկայությունները օրենքի որոշակի բնագավառներում չեն ընդունվում: Կրկին ծագում է զենք կրելու հարցը: Քաղաքացիական օրենքի համաձայն, ինչպես այլ երկրներում, ոչ մի անհատ քաղաքացի չի կարող զենք կրել առանց թույլտվության համար տուրք վճարելու: Բայց ամեն բան ենթարկվում է անհիշելի ժամանակներից եկող սովորույթին՝ քրդերի համար սրբազան սովորույթ է աշխարհիկ օրենքներից խուսափելը: Անհիշելի ժամանակներից քուրդն ունեցել է զենք կրելու ազատությունը, ուրեմն այսօր էլ նա կարող է դա անել: Զենք ունենալու հարցը խիստ կենսական է այնպիսի երկրում ապրողի համար, ինչպիսին ասիական Թուրքիան է: Ինչպես մեր կառապանն է ասում՝ առանց զենքի կնոջ նման մի բան ես դառնում: Կառավարությունը քեզ չի պաշտպանում, կամ պիտի մեռնես վերանաս, կամ էլ ինքդ քեզ պաշտպանես: Սա հենց այն է, ինչ Դաշնակցությունն է պահանջում: Ամբողջ հարցը դա է՝ զենք վերցնել կամ ոչնչանալ: Ուժին պիտի ուժով դիմակայել, որ ուժը չեզոքանա. առաջինը հենց դա պիտի արվի. կամ զինաթափել բոլորին, կամ էլ զինել բոլոր քաղաքացիներին: Միայն այս կերպ կլինի հավասարություն: Երբ դա տեղի ունենա, միայն այդ ժամանակ քրիստոնյան ու քուրդը կմիավորվեն, որ իրենց քաղաքացիական իրավունքները կպահանջեն: Բայց ոչ մի բարեփոխում, ոչ մի խաղաղություն, ոչ մի անվտանգություն, ոչ մի ապագա չի լինի երկրի համար մինչև այս տարրական արդարությու-

նը չապահովվի: Կառավարությունը դա հրաշալի գիտի: Ու հիմա գերտերությունների ճնշման տակ փորձում է կարգավորել հարցը: Հինգ հարյուր հրացան է բաժանվել հայ գյուղացիներին: Բայց սա ամենևին չի նշանակում, որ կառավարությունը հրաժարվել է քրդերին զինելու իր որդեգրած քաղաքականությունից:

Ինչ վերաբերում է անարդարությունների երկրորդ խմբին, անկարգությունները, վտանգներով լի ճանապարհները, անօրինությունները և այլն, մասամբ դուրս են կառավարության վերահսկողության հնարավորության սահմաններից: Անկարգություններն այս պահին էլ են տեղի ունենում, և այն, որ պարծենում են, թե երկրում անվտանգություն ու անդորր է ապահովվում, գոյություն ունի միայն շեղված քաղաքագետների երևակայության մեջ, և մեկ էլ այն ճանապարհորդների համար, որոնք մակերեսից ավելի խորը չեն տեսնում:

Մի անգամ ականատես եղանք հետևյալին: Մի զինված քրդի կանգնեցրին մի քանի անզեն հայեր ու նրանից պահանջեցին վճարել շաբաթներ առաջ տեղափոխած հացահատիկի համար: Քուրդն ընդունեց, որ պարտք է ու ասաց, որ ավելի ուշ կվճարի: Բայց քուրդը գիտեր, որ խեղճ մարդիկ ոչինչ էլ չէին ստանալու դրա դիմաց: Հայերը համառորեն պնդում էին իրենց ասածը վճարելու մասին: Մեզ հետ երկու զաբթիեներ կային, որոնք արագությամբ անցան քրդի կողմը ու կրունկներով իրենց ձիերի կողերին հարվածելով՝ տուգանք պահանջեցին գյուղացիներից: Գյուղացիները համառում էին՝ բռնելով ձիերի թամբերից: Այդ պահին զաբթիեներից մեկը արագ հանեց կաշվե երկար մտրակը ու ողջ ուժով դրանով հարվածեց անհնազանդ քրիստոնյաներին: Մյուս զաբթիեն, իր հրացանի կոթով հարվածելով գյուղացիներին՝ ետ քշեց, իսկ քուրդն արդեն ճողոպրել էր: «Այս ի՞նչ օրի ենք հասել, որ քրիստոնյան համարձակվում է վիճել: Այս ծայրամասը ձեռքից գնացել է, քանդվել»:

Ահա թե ինչ արկած էր պատմում ռուսական հյուպատոսը: Մի օր իր թիկնապահների հետ ճամփորդելիս նա գալիս հասնում է մի քարավանի, որի վրա հարձակվել ու թալան էին անում քրդական

զինված ավազակները: Ի զարմանս իրեն՝ նա ճանաչում է շրջանի գայմագամին, որը հանգիստ կանգնած՝ առանց միջամտելու նայում է, թե ինչ է կատարվում: Նա պահանջում է, որ ավազակներին անմիջապես ձերբակալեն ու զինաթափեն: Գայմագամը մոթմոթում է, թե անհնար բան է քրդերի գործերին խառնվելը: Հյուպատոսն իր թիկնապահներին է հրամայում քրդերին ձերբակալել: Երկուսին ձերբակալում են, իսկ երեքը փախչում են: Դատարանում այդ երկուսին բաց են թողնում: Բոլոր դատական գործերը, որոնք քրդերին են առնչվում, այսպիսի ավարտ են ունենում: Բալկանյան պատերազմից ի վեր Մակեդոնիայից ոստիկաններին դուրս էին հանել ու ուղարկել Հայաստանի տարբեր քաղաքներ՝ կարգ ու կանոն հաստատելու ու դա դարձել էր մշտական սադրանքների ու անախորժությունների աղբյուր: Նրանցից երկուսը մի հայ ատամնաբույժի էին կրակել սպանել Վանի մարդաշատ փողոցներից մեկում, երբ մենք այնտեղ հասանք: Հետո հենց իրենք էլ փորձեցին մի քանի հայերի բռնել՝ իբրև թե նրանք էին կատարել սպանությունը: Դրան հաջորդեց հայերի կողմից շուկան փակելը և աշխատանքը դադարեցնելը: Հայերը պահանջում էին, որ կամ ոստիկաններին հեռացնեն, կամ էլ հայերին թույլ տան ոստիկանությունում ծառայել:

Ամփոփելով՝ ասենք, որ երկիրը, որը մի ժամանակ ծաղկուն ու մարդաշատ էր եղել, վերածվել էր անապատի: Ոչ մի առաջընթաց հնարավոր չէ, քանի որ նույնիսկ գերմարդկային ջանքերը չեն կարող դիմակայել թուրքական «կառավարության» գաղտնի կազմակերպած խոչընդոտներին ու արհավիրքներին:

Հետաքրքրվողները, ցանկության դեպքում, կարող են քաջատեղյակ դառնալ, որ չնայած հսկայական դժվարություններին, հայերի ոռոգած, մշակած հողերն ակնհայտորեն բերրի են իրենց գործադրած ջանքերի ու տքնաջան աշխատանքի շնորհիվ:

Այս ահավոր անարդարությունը, որի պատճառը թուրքերի կառավարման ճակատագրական անկարողությունն է, որը խոչընդոտում ու կաթվածահար է անում մի ամբողջ ազգի բնական զարգացումը, Եվրոպայի համար ամոթալի փաստ է: Քանի դեռ թուրքը

կմնա այնպիսին, ինչպիսին միշտ եղել է, նրա նվաճումներն ու շարունակվող իշխանությունը աշխարհի երեսին կմնան իբրև անեծք ու թույն: Նա ունեցել է հնարավորություն, սակայն, դժբախտաբար, չի կարողացել օգտվել ու մատնվել է ձախողման: Կա արդյոք ավելի նպաստավոր աշխարհագրական դիրք մայրաքաղաքի համար, որպիսին Կոնստանդնուպոլսինն է: Թուրքն իբրև ժառանգություն Բյուզանդական կայսրությունից ստացավ նրա հարստություններն ու մշակույթը, իսկ ինչպե՞ս վարվեց նա դրանց հետ: Ասիայում չկա ավելի աղքատ, ավելի հետամնաց, ավելի անօրեն ծայրամաս այսօր: Ընդունենք, որ ստատուս քվոն պահանջում է բացարձակ իշխանություն, որն հենվում է համապատասխան ուժի վրա, որը պետք է վերացնի կողմնակալ արդարությունը և յուրաքանչյուրի համար ապահովի հավասար հնարավորություններ: Բայց թուրքը դա անել չի կարող: Այդ բարբարոսն իշխանություն ունենալիս դաժանություններ է գործում, սակայն իշխանություն չունենալիս էլ նույն բարբարոսն է մնում:

Երբ նստում զրուցում ես երիտթուրք պաշտոնյայի հետ իր շքեղ տանը, ու նրա գեղեցիկ երեխաները քեզ են բերում իրենց խաղալիքներն ու կոնֆետները, քո մեջ նուրբ հիացմունք է առաջանում այս մարդկանց նկատմամբ: Նրանք ժամանակակից գաղափարներ ունեն: Նրանց հատուկ է շողոքորթությանը բնորոշ բառապաշար: Նրանք սարսափում են, երբ պատմություններ են լսում կաշառակերության ու անիշխանության մասին, սիրում են խոսել «բարեփոխությունների» անհրաժեշտության մասին: Բայց այդ բարեփոխությունները չկան ու չկան: Համբերությունը հատնում է, ինչևէ, հայկական կուսակցությունները միացյալ եզրահանգում են կատարել՝ զինված դիմադրությունն անհրաժեշտ է, եթե բարեփոխումների ցանկություն կա: Ինքնապաշտպանության քաղաքականությունը, ինչևէ, ավելի շատ իրավիճակին ժամանակավորապես հարմարվել է նշանակում, բայց երբեք՝ խնդրի լուծում: Իրական բարեփոխումներն անհրաժեշտ են, եթե պետք է ապագայում անկարգությունները կանխարգելվեն: Խնդրի հրատապությունն ընկալվում է միայն այն դեպքում, երբ գյուղերում զրույցի ես

բռնվում գյուղացիների, կամ էլ՝ գործող կուսակցությունների առաջատար գործիչների հետ: Միայն այդ պահերին են ի հայտ գալիս նոր մոտեցումները: Այլևս չեն հավատում, որ հնարավոր են վերափոխումներ ներսից: Պահանջը մեկն է՝ հզոր պետությունները պետք է իրականացնեն գործադիր վերահսկողություն: Դա կլինի լավագույն լուծումը: Թուրքիայի փլուզումը հարցերի մեջ չի մտնում: Հիմնարարն այն է, որ կառավարիչը կամ կառավարող խորհուրդը պետք է հաշվետու լինի միայն գերտերություններին և չպետք է աշխատանքի նշանակելու կամ աշխատանքից ազատելու համար ակնկալի Բարձրագույն դռան միջամտությունը: Արդյոք այսպիսի վերահսկողությունը հայերին կմատնի՞ հուսահատության: Ուր էլ գնում էինք, պարզվում էր, որ նրանք միակ բաղձալի ելքը ռուսական հովանավորության մեջ էին տեսնում: Նրանք միշտ համեմատություն էին անցկացնում Ռուսահայաստանի ու Թուրքահայաստանի միջև, գիտեին, որ Ռուսաստանը ապահովում է կարգ ու կանոն, անվտանգություն, տարրական արդարություն, այնպես որ, գյուղացին ուրախ կլինի, եթե ռուսական զորքը կրկին գրավի հայկական տարածքները: Ռուսաստանը պատրաստ սպասում է այդ հնարավորությանը: Ո՞վ կհրաժարվի, եթե հնարավորությունը գա:

Ռուսահայաստանը

Երկու օր ու գիշեր լեփ-լեցուն գնացքով ճանապարհորդեցինք Մոսկվայից: Քանի դեռ Դոնի Ռոստովում էինք, տեսարանն անհետաքրքիր էր՝ անընդհատ հարթավայրեր ու տափաստաններ, երբեմն էլ այստեղ այնտեղ ցրված նորակառույց ավաններ էին հայտնվում՝ լայն, ուղիղ ձգվող փողոցներով: Ռոստովից հետո երկիրն ավելի հետաքրքիր է դառնում. պատճառը, թերևս, գնացքի կառամատույցներում մարդկային դեմքերի ու տարազների զանազանությունն է: Մարդ ինչքան մոտենում է Կովկասին, այնքան զգալի է դառնում բազմազանությունը:

Ամեն բան շատ նոր է ու քաղաքակրթությունից դեռևս չձևափոխված տեսք ունի: Ամենից աշխույժը ռեստորաններն էին, որ հասցրեցինք տեսնել մեզ հատկացված մի քանի րոպեների ընթացքում: Ամենազեղեցիկ շիկահեր ռուսները՝ ուղիղ, ոսկեգույն մազերով, հրմշտում էին սև աչք-ունք ունեցող թուրքմեններին ու թաթարներին՝ ուտելիքի ու խմիչքի համար մղվող սովորական դարձած պայքարում:

Դա Եվրոպայի և Ասիայի ամենաիսկական խառնուրդ է՝ նորագույն քաղաքակրթության, չհղկված շարժուձևի ու սովորույթների համադրությամբ: Տոմսերի ամրագրման սրահում մի սրբապատկեր էր դրված, որի առջև խոր ակնածանքով խոնարհվում էին ուղղափառ ռուսները, չնայած որ շտապում էին ճաշի: Տոմսերի ամրագրման խցիկում մի մարդ էր նստած ավստրիացի մի պրոֆեսորի հետ: Վերջինս հիանալի անգլերեն էր խոսում՝ հնագիտությունից ու ագնոստիցիզմից:

Մի քիչ այն կողմ՝ սեղանի մոտ, մի ամրակազմ թաթար՝ դաշույնը գոտուց կախած, մատներով միս ու հավ էր ուտում: Բոլորիս ճանապարհը նույնն է, և բոլորս էլ լցված ենք ճանապարհորդին հատուկ ուրախությամբ ու միմյանց հանդեպ փոխադարձ հետաքրքրությամբ:

Պարտադրված պտույտ գործեցինք Մինեռալնի[62] կոչվող առողջարանային քաղաքում, որտեղ կովկասյան *բարձր հասարակությունը* խմում էր հանքային ջրերը և բացարձակապես ոչ մի հարցում նրբագեղություն չէր ցուցաբերում: Դա մի հասարակ, անշուք քաղաք էր՝ առանց տեսարժան վայրերի, որի նմանները շատ էին Ռուսաստանի հարավում: Մեկժամյա դադարից հետո ուրախ էինք նորից ճամփա ընկնել դեպի Վլադիկավկազ:

Այստեղի տափաստանը, կամ ինչպես ռուսներն են կոչում, *ստեպը,* ավելի բերրի էր ու բլրապատ: Մուգ սևահողերում ցանված էր եգիպտացորեն և արևածաղիկ, որի սերմերը շատերն են սիրում: Այս-

---

[62] Նկատի ունի Մինեռալնիե Վոդի քաղաքը:

տեղ-այնտեղ սայլերի համար լայն ճանապարհներ կային, բայց չկար և ոչ մի փողոց, իսկ գյուղերն էլ շատ քիչ էին: Տեղ-տեղ կիտված ծղոտի դեզերը հուշում էին բնակչության գոյության մասին, թեև դրսում այնքան էլ շատ մարդ չէիր տեսնի:

Սեպտեմբերի սկիզբն էր, երբ երեկոյան կողմ հասանք Վլադիկավկազ, որը Մինեռալնիից թեքվող ճանապարհի վերջնակետն է՝ շատ մոտ Կովկասի հյուսիսային լանջերին: Արծաթափայլ լուսինը, դրան գումարած՝ Թիֆլիսի զորագունդ վերադարձող մի սպայի ջերմ ընկերակցությունը մեզ դրդեցին առանց ձգձգումի ճանապարհ ընկնել դեպի Դարիելի կիրճը: Դարիելի ճանապարհը կոլեկտիվ աշխատանքի առումով ռուսների ամենամեծ ձեռքբերումն է այդ նահանգում: Այն 130 մղոն երկարություն ունի և կառուցման համար պահաջվել է չորս միլիոն ֆունտ:

Կիրճի բարձունքներից անասելի հոյակապ բնապատկեր է բացվում: Ամենահիանալի տեսարանը 16.500 ոտնաչափ բարձրությամբ Կազբեկի լեռնագագաթն է՝ Կովկասի Մատերհորնը[63]: Ճամփորդները սարսափում են աներևակայելիորեն ամայի և մռայլ այդ կիրճերից, վեր խոյացող ժայռերի ու քարափների հսկայական զանգվածներից, որոնք, կարծում եմ, անզուգական են ամբողջ աշխարհում: Ճանապարհի ամենանեղ ու զառիթափ մասում ժայռերը վեր են հառնում գրեթե 8.000 ոտնաչափ: Դա ամենայն հավանականությամբ այն նույն կիրճն էր, որը Ստրաբոնը, Տակիտոսը և Պլինիոսը անվանում են *Կովկասի դարպասներ*: Հաջորդ օրը հասանք Թիֆլիս:

Կովկասի ռուսական մարզը չպետք է համարել բուն Ռուսաստանի մաս: Այն բնույթով ավելի շատ համապատասխանում է ասիական իրականությանը. վաթսունից յոթանասուն տարբեր ցեղերի ու ցեղախմբերի մի թանգարան է, որի արտաքին միասնականությունն ապահովում է ռուսական տիրապետությունը: Այստեղ բնակվող ազգե-

---

[63] Երեք ամենաբարձր լեռնագագաթներից մեկը Ալպերում, որտեղով անցնում է Շվեյցարիայի և Իտալիայի սահմանը:

րից հիշատակման են արժանի հայերը, վրացիները, թաթարները, լեզգիները և պարսիկները: Եվ, անկասկած, այս տարբեր ժողովուրդները հարատև պայքարի մեջ կլինեին, եթե նրանց չկառավարեր ինչ-որ ուժեղ ու անկողմնակալ տերություն: Այն ամենը, ինչին ռուսներն այստեղ հասել են անցյալ դարի ընթացքում, ամենևին էլ փոքր ձեռքբերում չէ: Անկախ այն բանից, թե ինչպիսի կորուստներ կարող են ունենալ հզոր ժողովուրդները, որոնք հակված են ճնշելու իրենցից ավելի տկարներին, կարելի է պնդել, որ համընդհանուր բարօրությունը ձեռք է բերվում միայն անաչառ արդարության շնորհիվ, որն ապահովում է համատարած խաղաղություն, դառնում է մարդու անվտանգության ու երջանկության գրավականը: Տիրող խաղաղության շնորհիվ աճել է բնակչությունը, երկիրը զարգացում է ապրել (գլխավորապես հայերի նախաձեռնությամբ), բազում բարգավաճ գյուղեր ու քաղաքներ են կյանքի կոչվել: Այս հանգամանքներից ելնելով՝ կարելի է արդարացնել բրիտանական իշխանության գերակայությունը Հնդկաստանում, որտեղ առանց մեր տիրապետության կծաղկեր անարխիան ու քաղաքացիական պայքարը:

Արդեն նշեցի, որ ռուսական իշխանություններն են ապահովում հիմնական խաղաղությունը: Բայց դա ամենևին էլ չի ենթադրում, որ վերջ է դրվել ավազակություններին: Ճանապարհորդելը նույնպես անվտանգ չէ, անգամ՝ գնացքով: Կովկասում ճանապարհային կողոպուտների թիվը 1912 թ.-ին հասել է մինչև 8.350: Դեռևս մի քանի շրջաններում պահպանվում է ռազմական դրությունը: Լեզգիների առաջնորդ Շամիլի՝ իշխան Բարիատինսկու գլխավորությամբ գործող ռուսական ուժերին հանձնվելուց հետո էլ (1.859 թ.), Շամիլից ոչ պակաս հեղինակություն վայելող ուրիշ ավազակապետեր նույնպես եղել են:

Համաձայն լայն տարածում գտած մի տեղեկության՝ այս ավազակները երբեմն բարձր գիտակցական մակարդակ են ունեցել և աչքի ընկել ասպետական վարվելակերպով՝ թալանել են հարուստներին լոկ այն բանի համար, որ գողունը տան աղքատներին: Համոզված չեմ, թե որքանով է այս ամենը ճիշտ, բայց եթե ինչ-որ մեկը հավատա բոլոր

պատմություններին, պետք է որ դրանց գերբնական ուժ վերագրի, եթե ոչ՝ գերբնական արժանիքներ:

Մի ավազակապետ կարողանում էր միևնույն ժամանակ և՛ անհետանալ, և՛ հայտնվել ինչ-որ հեռավոր տեղ սարերում: Սելիմ անունով մի ուրիշն էլ, հայտնի էր իր բախտավորությամբ, քանի որ թռել էր հարյուր ոտնաչափ անդունդի վրայով և չէր վնասվել: Նրան բռնեցին անցյալ հոկտեմբերին Դաղստանում: Տարիներ շարունակ ահաբեկչության էր ենթարկում գյուղերն ու բնակչությանը ցաքուցրիվ անում: Ռուսները վերջապես որոշեցին, որ նրա *սխրագործությունները* անպատվաբեր էին և բարեխիղճ կառավարության համար՝ խայտառակություն: Նրան բռնելը լուրջ խնդիր էր դարձել: Շատ անգամներ էր նա կարողացել ճողոպրել: Ի վերջո նրան բռնելու համար ծրագիր են մշակում: Սելիմի բարեկամներից ոմանք արդեն գտնվում էին ոստիկանության ձեռքում: Նրանց տարել էին տարածաշրջանային ոստիկանություն, այն հույսով, որ Սելիմը խայծը կուլ կտա և այցելության կգա նրանց: Սելիմը, բանից անտեղյակ, իրոք կուլ է տալիս խայծը և հայտնվում ոստիկանների շրջափակման մեջ: Վիրավորված լինելով՝ նա հուսահատ կռիվ էր մղում: Հրաշալի հրաձիգ էր, որի շնորհիվ հասցնում է երեք հոգու սպանել, մինչև կազակների ամբողջ խումբը նրան օղակի մեջ կառներ:

Կովկասի փոխարքա իշխան Վորոնցով-Դաշկովը 1913 թ. օգոստոսին ռուսական «Times' Supplement» թերթում նահանգի ընդհանուր դրության մասին մի զեկույց է հրատարակում, որտեղ պնդում էր, որ կրոնական և ազգային տարբերությունները չպետք է խոչընդոտեն, որ մարդիկ միասին ապրեն և արարեն հաշտ ու համերաշխ՝ ինչպես Ռուսաստանի քաղաքացիները: Փոխարքայի ազատամիտ և հեռատես քաղաքականությունը հանգեցրեց դրական արդյունքի:

Հնարավոր է, որ Ռուսաստանի տիրապետությունը նույնչափ անկողմնակալ չէ, որքան Բրիտանիայինը Հնդկաստանում, բայց այլ հարցերում այն ավելի լավ է: Օրինակ՝ պարոն, այժմ՝ լորդ, Բրայսը նշում է, որ «ավելի քան երեսուն տարի առաջ, ռուսական սպաներից և ոչ մեկը նույն սառնությունն ու ինքնահավանությունը չէր ցուցաբե-

ռում տեղացիների հանդեպ, ինչպես մեր քաղաքացիական ծառայողներն են ցուցաբերում իրենց տիրապետության տակ գտնվող ազգերի հանդեպ»: Մասամբ անտարբերությունն ու ռուսների լավ բնավորությունը թույլ են տալիս, որ ասիացիներն ու ռուսները չտարբերվեն սոցիալական հավասարության առումով: Ամբողջ նահանգում մահմեդական բնակչությունը թվապես գերակշռում է, և մահմեդականությունը գրեթե հասնում է մոլեռանդության՝ հարևանությամբ գտնվող Սուլթանի և Շահի հսկա մահմեդական պետությունների շնորհիվ: Չնայած պանիսլամիզմի քարոզներն ապարդյուն էին. թաթարները, պարսիկներն ու մյուսները շարունակում են մնալ Ռուսաստանի ենթակայության տակ:

Եթե ցանկանում եք Կովկասը բացահայտել, ձեզ հետաքրքրող բազում հարցերից պետք է ընտրեք մեկը կամ առավելագույնը երկուսը, որպեսզի հետազոտությունը ավելի արդյունավետ լինի: Այն, ինչ պիտի հիմա ասեմ Կովկասի մասին, հիմնականում վերաբերում է հայ համայնքին:

Բնականաբար, Վլադիկավկազը անցնելուց հետո Դարիելի ճանապարհը բերում է Թիֆլիս, ուր Լոնդոնից կարելի է հասնել վեց օրում: Ասիական քաղաք մտնելու փոխարեն հայտնվում ես մղոններով ձգվող հրաշալի սալահատակված փողոցներում, ու երբ մտնում ես Գալավինսկի Պողոտա, քեզ թվում է, թե հայտնվել ես արևմտյան ժամանակակից քաղաքում: Թիֆլիսը Վրացական թագավորության հնամենի մայրաքաղաքն է (այսօր այն նույնչափ էլ հայերինն է). քաղաքը ժամանակակից է դարձել հայերի շնորհիվ, որոնք հիմնականում իրականացնում են քաղաքի վերահսկողությունն ու կառավարումը: Ներկայիս փոխարքայի վարած քաղաքականությունը հայերի նկատմամբ ճիշտ և ճիշտ նախորդի քաղաքականության հակադրությունն է: Եկեղեցու ունեցվածքն ամբողջությամբ ետ է վերադարձվել հայերին, հայկական դպրոցները ոչ մի սահմանափակում չունեն, և հայերենն էլ բավականին ազատ կիրառություն ունի:

Կրթության հարցում հայերը շատ հավակնոտ են: Ճեմարանը՝ իր 600 սաներով, բոլորովին վերջերս նոր շենք է տեղափոխվել Թիֆլիսի արվարձաններից մեկում: Այն հիանալի կահավորված է: Ճեմարանի ցանկացած դասախոս ունի համալսարանական կրթություն, չնայած պետության կողմից չի ֆինանսավորվում, և իր հիմնադրման համար պարտական է միայն առատաձեռն հարուստ հայերին:

Ռուսաստանի սենատորը, որն իր պաշտոնով զիջում է միայն փոխարքային, բարձր է գնահատել հայերի նախաձեռնողականությունն ու հանրության ոգին, ինչի շնորհիվ էլ հիմնադրվել է ճեմարանը և այժմ էլ շարունակում է իր գործունեությունը: Ռուսաստանի կառավարությունը սահմանափակումներ չի դնում ուսման հետ կապված հարցերում. սրա վառ ապացույցն են յուրաքանչյուր դասասենյակի պատերին փակցված մեծ քարտեզները, որոնք պատկերում են նախկին հայկական թագավորության սահմանները:

Հայերից շատերը խորապես համոզված են, որ անհրաժեշտ է Կովկասում համալսարան հիմնել: Ներկայումս, ովքեր ցանկանում են սովորել, ստիպված են գնալ կա՛մ Սանկտ Պետերբուրգ, կա՛մ արտասահմանյան որևէ համալսարան: Շատերը գնում են ուսանելու գերմանական համալսարաններում, որոնցից մի քանիսը հանրակացարաններ են հիմնադրել հայ ուսանողներին օգնելու և տեղավորելու համար:

Թիֆլիսի ճեմարանը միակ ուսումնական հաստատությունը չէ Կովկասում, որ հիմնադրել են հայերը: Մեկ այլ հաստատություն է Էջմիածնի ակադեմիան, որի կրթական չափորոշիչները գրեթե նույնքան բարձր են, որքան և ճեմարանինը: Այս երկու հաստատություններն էլ ունեն մի շարք կրթաթոշակներ՝ հայ մեծահարուստների կողմից հատկացվող, որոնց շնորհիվ շատ խելացի երիտասարդներ, թեև լինելով աղքատ, բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն են ստանում:

Վերջերս մի հայ կին Թիֆլիսում հիմնել է մի օրինակելի դպրոց, որտեղ ռուս, ֆրանսիացի, գերմանացի, ինչպես նաև հայ

երեխաները գիտական դասընթացներ անցնելու բացառիկ հնարավորությունն ունեն: Դպրոցին կից մանկապարտեզում Մոնթեսորիի[64] մեթոդներն են կիրառվում:

Թիֆլիսի կրթական հաստատությունների մեջ առանձնակի տեղ է գրավում *ժողովրդական պալատը*, որը թատրոն է, գրադարան և գրական ակումբ՝ միևնույն ծածկի տակ: Պալատը գործում է հարուստ հայրենասերների շնորհիվ՝ հանուն ազգային զարթոնքի: Ինչպես այս հարուստ մարդիկ, այնպես էլ դերասանները քաջալերվում են նույն ոգով. օրինակ մի դերասանի հանդիպեցի, որը խաղացել էր Փարիզի լավագույն բեմերում և մի քանի անգամ անվճար ներկայացում էր տվել այստեղ, որպեսզի փաստեր հայկական պիեսների լավ որակը:

Մի երեկո այցելեցինք այդ հայտնի թատրոնը: Ընդամենը չնչին գումարով կարելի էր ձեռք բերել լավագույն տեղերի տոմսերը, ուստի այդ երեկո դահլիճը լեփ-լեցուն էր հայերով: Շատերը ամենաաղքատ խավից էին: Նրանք ուշի ուշով հետևում էին ժամանակակից կյանքի մասին այդ ներկայացմանը, որտեղ վաշխառուն մարմնավորում էր գյուղացիներին շահագործողին:

Առավել մեծ թատրոններում, որոնցից լավագույնները հայերն են տնօրինում, հաճախ ռուսական պիեսներ են բեմադրվում: Հայերից մեկը դա արդարացրեց՝ պատճառաբանելով, որ նախ, ռուսերենը պաշտոնական լեզու է և գործածվում է ողջ կրթված հասարակության կողմից, ապա նաև, որ ռուսական մշակույթն էլ շատ լավն

---

64 Դոկտոր Մարիա Մոնթեսորիի (1870-1952) մոտեցման հիմքում ընկած է երեխայի բնական զարգացման խնդիրը: Շեշտվում է հարգանքը երեխայի նկատմամբ, հաշվի են առնվում նրա հույզերն ու հոգեվիճակը: Ուսուցիչը, որն ուղղորդողի դեր ունի, օգնում է երեխային գիտելիքներ ձեռք բերել շրջակա միջավայրի հետ շփվելով: Մեթոդն ունի շուրջ հարյուր տարվա պատմություն, այսինքն՝ նշված ժամանակաշրջանում այդ մոտեցման կիրառումը եղել է խիստ ժամանակակից ու արդիական:

է: Սովորաբար Բերնարդ Շոուի և այլ արտասահմանյան հեղինակների պիեսները բեմադրվում են ռուսերեն, երբեմն էլ՝ ֆրանսերեն:

Թիֆլիսի մեկ այլ հասարակական նորարարություններից է այգի-ակումբը: Այն շատ թե քիչ նման է Հնդկաստանի Ջիմխանա ակումբին, բայց այստեղ նաև ճաշում են կամ ուշ ժամի ընթրում: Եթե ցերեկվա թեյը մատուցվում է ժամը 15:00-ին, ապա 22:00-ից շուտ չեն ընթրում, և աշխարհը քուն է մտնում կեսգիշերին կամ ավելի ուշ: Ամռանն այս ակումբները մարդաշատ են. ռուսներն ազատ միանում են հայերին: Իշխող և ենթակա կողմերի միջև հասարակական շփման այս ազատությունն աչքի զարնող է: Սա խոսում է երկու կողմերի մշակութային զարգացածության գրեթե նույն մակարդակի և ռուս չինովնիկների մեծամտության բացակայության մասին:

Այժմ անդրադառնանք Թիֆլիսի հայկական մամուլին: Հանրաճանաչ օրաթերթերն են «**Հորիզոնը**» ու «**Մշակը**»: Առաջինը ներկայացնում է Դաշնակցություն կուսակցության առաջադեմ կարծիքները, երկրորդը՝ Ռամկավար կուսակցության հայացքները: Այստեղ պետք է մի քիչ խոսենք հայերի քաղաքական և ազգայնական հայացքների մասին:

Հասարակությունը հիմնականում բաժանված է երեք կուսակցությունների միջև՝ դաշնակցականների, հնչակյանների և ռամկավարների: Այս բաժանումը հավասարապես գործում է նաև Ռուսաստանում և Թուրքիայում, թեպետ բնական է, որ Թուրքիայում նրանց դերն ու գործունեությունն ավելի մեծ է: Ազգայնական հասարակության հայացքները փոխվում են ըստ կառավարության վարած քաղաքականության, հայերի քաղաքացիական իրավունքների և համազգային նպատակների հանդեպ տրամադրվածության:

Հենց որ կառավարությունը դրսևորում է ազատամտություն ու հաշտվողականություն, հասարակությունն ավելի մեղմ է դառնում՝ փոփոխվող պայմաններին համապատասխան փոխելով իր քննադատական մոտեցումները: Այս երևույթը ցայտուն երևաց հատկապես թուրքական հեղափոխության ժամանակ, երբ դաշնակցականները՝

որպես հասարակության ամենաազգայնական մաս, երիտթուրքերի հետ ձեռք ձեռքի տվեցին որպես բարեկամներ և ջանացին միասին աշխատել մինչև թուրքերի հակահայ գործողությունները՝ Ադանայի ջարդերը, որի պատճառով հետագա դաշինքը անհնարին դարձավ: Մյուս կողմից, երբ կառավարությունը կոշտ և պատժիչ քաղաքականություն է վարում, ազգայնական հասարակությունը բացահայտ կերպով դառնում է հեղափոխական, ինչին այժմ ականատես ենք Թուրքիայում, որտեղ բողոքի ալիքը ավելի լուրջ է, քան նախորդ տարիներին:

Իհարկե, պետք է ընկալել, որ իրականում նման հասարակությունն ավելի շուտ ազգայնական է, քան հեղափոխական: Միևնույն ժամանակ, երբ ազգային հարցը վտանգված չի լինում, և խռովություններ սկսելու կարիք չի զգացվում, հասարակությունը պատրաստակամություն է հայտնում կապեր հաստատելու ռուսական ժողովրդավարական կուսակցությունների հետ: Ուստի, թեև ոչ շատ հստակ, բայց կարող ենք զուգահեռներ անցկացնել դաշնակցականների և ռուս հեղափոխականների, հնչակյանների և ռուս սոցիալիստների կամ սոցիալ-դեմոկրատների, ռամկավարների և ռուս ազատականների կամ կադետների միջև: Օրինակ, 1905 թ. ռուսական հեղափոխության ժամանակ շատ հայեր ձերբակալվեցին ու աքսորվեցին ոչ թե ազգայնական լինելու համար, այլ ռուսական հեղափոխականներին միանալու համար: Նման բան Թուրքիայում չէր կարող տեղի ունենալ, քանի որ հեղափոխական հայացքները մշտապես դիտվում են որպես ազգայնական, և դասակարգային շարժումներն էլ բացառվում են:

Հայկական կուսակցությունների գործունեությունը հիանալի ներկայացված է իրենց մամուլում: Երկու օրաթերթերն էլ, որոնց մասին արդեն խոսել ենք, շատ լավ խմբագրված են: Կենտրոնական գործակալությունը ներկայացնում է աշխարհի նորությունները, էջերը ներառում են պատմության, գրականության, և ընդհանուր թեմաների մասին սյունակներ: Այստեղ քննադատության պակաս չի զգացվում՝ հայկական տարբեր հաստատությունների գործունեու-

թյան հետ կապված: Եկեղեցիներ, արվեստանոցներ, դպրոցներ, կուսակցություններ՝ բոլորը հանդես են գալիս իրենց լիարժեք գործունեությամբ:

Կա նաև պատկերազարդ մամուլ, հրատարակվում են մի քանի գրական ու փիլիսոփայական լրագրեր: Ամսագրերը, որոնք գրում են հնագիտության, երաժշտության, արվեստի, պոեզիայի և թատերգության մասին, արժանի են հատուկ ուշադրության՝ գեղեցիկ արտապատկերման և բարձր ճաշակի համար:

Որպես կանոն, անգլիացի ճանապարհորդները հակակրանք են տածում հայերի նկատմամբ: Հայը սպորտով չի զբաղվում և հակված է ստորաքարշության՝ մի աններելի հանցանք, որն անմիջապես վերջ է դնում հետագա շփմանը: Դեռ ավելին, նա արտաքնապես գեր է ու ճարպոտ, իսկ սեմիտական դիմագծերն ու ժամացույցի ծանր ոսկե շղթան նրա հմայքը չեն ավելացնում: Պետք է խոստովանեմ, որ ինքս էլ Հայաստան մեկնեցի բավականին նախատրամադրված, և միայն ուղևորության ընթացքում անակնկալներն ու բացահայտումներն ստիպեցին ինձ վերանայել կարծիքս և մտածել, որ **Հայաստանի հանդեպ ունեցած նախանձի իրական պատճառը նրա հաջողությունն է**[65]**:**

---

[65] Ընդգծումը՝ Ն. Գ.: Հայերի նկատմամբ նախանձն այնպես էր մթագնել թուրքի և քրդի գիտակցությունը, որ, ինչպես նկարագրում է թուրքական պաշտոնյա Ֆաիզ էլ-Ղուսեինը ականատեսի իր հուշերում, ստիպել է գազանաբար սպանել կրթված ու խելացի, հաջողակ հայերին: Նա գրում է, որ Գրիգոր Զոհրապին, Տիգրան Կիլիկյանին և մյուսներին մարդասպանները խողխողեցին, որպեսզի *ոչ ոք չկարողանա ասել, որ հայերն ավելի հզոր են, կրթված, խելացի, քան թուրքերը, հայ մտավորականներն իրենց քաջության և նպատակասլացության, հաստատակամության, նաև իրենց ազգի սիրո, համար մարտիրոսվեցին:* Ականատեսը նշում է, որ, օրինակ, Զոհրապն այնպես հրաշալի էր տիրապետում օրենքներին ու բանավոր խոսքի արվեստին, որ երբ նա ելույթ էր ունենում, թուրքերը նախանձից կարկամում էին: Տե՛ս Fâ'iz El-Ghusein, Bedouin Notable of Damascus, *Martyred Armenia.* C. Arthur Pearson, LTD. London,1917*:*

Հենց որ հարցը սկսում ենք դիտարկել ամբողջությամբ, այսինքն՝ տարբեր կողմերից, որոնք հաշվի չեն առնվել նախկինում, տեսնում ենք իրական պատկերը: Նախ և առաջ տեսնում ենք, որ ոչ բոլոր հայերն են հաջողակ վաշխառուներ կամ գործարար մարդիկ: Ընդհակառակը՝ մեծամասամբ գյուղացիներ են, որոնք համեստ գյուղական կյանք են վարում և բավարարվում են չնչին նյութական բարիքներով: Իրականում նրանք հողագործներ են, այլ ոչ թե առևտրականներ: Թուրքիայում ապրում է երկու միլիոն հայ ու գրեթե բոլորն էլ հողագործ են: Ռուսաստանում համարյա մեկ միլիոն հայ հող է մշակում: Կառավարությունն օժանդակում է հայերին օրինակելի ֆերմաներ ու այգեգործական տնտեսություններ հիմնելու հարցում, ինչպես նաև անտառագիտության ոլորտում փորձեր կատարելու: Հայ գյուղացու իրական կերպարին ծանոթանալու համար, հարկավոր է Էրիվանի, Արարատ լեռան հյուսիսային և արևվելյան շրջանների մոտակա գյուղեր շրջայց կատարել: Պետք է մնալ նրանց տներում, մասնակցել նրանց տոնախմբություններին և այդպիսով սովորել նրանց ժողովրդական բանահյուսությունը:

Արաքսի հովիտը, որն օղակում է Արարատը, և որը Հերոդոտոսը ներկայացնում է որպես ամենավաղեմի տարածք, Ռուսահայաստանի սիրտն է: Այն մի հսկայական կավահողային տափաստան է, ընդհանուր առմամբ իր տեսակով ասիական, որտեղ ամենուր բամբակի, բրնձի և ծխախոտի փոքր դաշտեր են՝ մեկը մյուսից բաժանված հողապատնեշներով: Ամռանը եղանակն անասելի չոր է, ահավոր փոշի է կանգնած օդում, հողը՝ ցամաքած ու ճաքճքած: Տարեկան տեղումների քանակը չի անցնում տասներկու մատնաչափը[66]:

Ճանապարհորդեցինք այս երկրով՝ գյուղից գյուղ գնալով: Հարթավայրը, որն առանց ոռոգման պետք է որ անպիտան չոր հող լիներ, իր բարեբերությամբ հիշեցնում էր Լոմբարդիայի հարուստ հարթավայրերը: Գյուղից դուրս գալու ճանապարհի երկու կողմե-

[66] Երկարության չափ, որ հավասար է 2,5 սմ:

ռում կիանդիպեք բարձր հողապատնեշների, որոնց ետևում խնամքով մշակած թթի և դեղձի այգիներ են:

Այգեգործների մի ստվար զանգված բերքն աճեցնում է վաճառքի համար: Մեծամասամբ գյուղացիները փոքր ձեռնարկատերեր են, որոնք հող են մշակում այնքան, որքան կարողանում են՝ առանց հավելյալ աշխատուժ վարձելու: Ապրում են հասարակ կյանքով՝ հարմարավետության նվազագույն պայմաններում: Գիտեն, թե ինչ բան է ծայրահեղ աղքատությունը: Այնուամենայնիվ, մեծ գյուղերում ու քաղաքներում, ինչպիսին Էրիվանն է, կարելի է հանդիպել հայ մուրացիկների և ծայրահեղ աղքատության, որը Թուրքիայից եկած ներգաղթյալների հոսքի արդյունքն է: Նրանց համար շատ դժվար է աշխատանք գտնել մի երկրում, որտեղ հասարակ գործերի պահանջարկ այդքան էլ չկա: Այնուամենայնիվ այս գյուղերի հայերը քահանաների ու դպրոցի տնօրենների գլխավորությամբ՝ կազմում են օգնության կոմիտեներ և իրենց կարողության չափով՝ աշխատում իբրև աշխատանքի տեղավորման գործակալներ:

Երբ Ռուսահայաստանը համեմատում ես սահմանում տիրող իրավիճակին, զարմանալի հակադրություն ես նկատում: Առաջին անգամ այդտեղ գնացողի համար Թուրքահայաստանում տիրող իրավիճակը բռնատիրության, տգիտության ու ոճրագործության իրական բացահայտում է: Երկիրը գտնվում է չքավորության և բարձիթողի վիճակում ու թվում է, թե այն հավասարապես վատն է բոլորի համար:

Մեկը հարցներ, թե ի՞նչ էին անում թուրքերը այս 600 տարիների ընթացքում: Կառուցելու, արարելու և ոչ մի հետք չկա: Բնությունը շնորհել է հարուստ ու բերրի հողեր, բայց ոչ ոք չի մշակել: Հուսահատ տառապում են թուրքերն ու քրդերը, ինչպես նաև հայերը: Քրդերն ու անգամ թուրքերը հարկադրված են արտագաղթել Ամերիկա արժանապատիվ մարդկային կյանքով ապրելու համար:

Իսկ կառավարությունն անդադար փող է պահանջում, փո՛ղ... Հարկերը գնում են ավագ ֆեոդալների, պաշտոնյաների կամ էլ թուրք բեյերի գրպանները: Ահավոր դաժան կաշառակերության համա-

կարգ է, այնպիսի համակարգ, որը մեծ հաջողությամբ ամբողջովին դատարկում է գյուղացու գրպանները: Ու՞ր են գնում այս բոլոր փոողերը, կասկած անգամ չկա:

Բայց այդ փողերից ոչինչ ետ չի գալիս ժողովրդին օգնելու համար: Ոչ մի ճանապարհ չի կառուցվում, ոչ մի հանրօգուտ աշխատանք չի կատարվում: Հայերը կառուցելու և արարելու գաղափարներով լեցուն միակ ժողովուրդն են, բայց նրանք, ցավոք, գործելու իրավունք չունեն: Նրանք ստիպված են թաքցնել իրենց ունեցած-չունեցածը: Ապշեցուցիչն այն է, որ արհամարհելով վտանգներն ու մեծ ռիսկի դիմելով, հայերը հաջողել են ամենուրեք դպրոցներ բացել՝ բացառապես կամավոր ներդրումների շնորհիվ:

Թուրքիայում խնդիրն այն է, որ անհատի նկատմամբ տարրական արդարություն ցուցաբերվի, ապրելու իրավունքը չոտնահարվի, որ ամեն քաղաքացի հավասար իրավունքներ ունենա իր հարեվանների հետ միասին: Հայկական սոցիալիզմը ուժեղ է, բայց ընդամենը պահանջում է այն, ինչ արևմուտքի աշխատավորները արդեն դարեր շարունակ ունեն:

Ռուսաստանում այն ավելի շատ ազգային խնդիր է: Ահա փոքր ազգ, որը, չնայած դարեր շարունակ զրկված է եղել քաղաքական անկախությունից կամ ազատությունից շարունակել է գոյություն ունենալ և ապացուցել, որ ինքը տարբեր է, յուրահատուկ, հստակ ձևավորված: Եթե ազգը հոգի ունի և աշխարհին ուղղված որոշակի ուղերձ, ապա, մի՞թե ճիշտ չէ, որ մյուս ազգերը հարգեն ու վերաբերվեն նրան այնպես, ինչպես ընդունված է վարվել հարգանքի արժանի մեկի հետ:

Որո՞նք են ազգի բնութագրիչները: Արդյոք դա այն ուժն է, որը մղում է մարդկանց լավագույն ձևով դրսևորելու իրենց: Եթե դա այդպես է, ապա մի՞թե կարող ենք թույլ տալ, որ այդ ուժը ճնշվի: Մի՞թե աշխարհը ոչինչ չի կորցնում, երբ թույլ է տալիս, որ այն տարրալուծվի ավելի մեծ միության մեջ: Մի՞թե այս ազգային բախումները, հակամարտությունները հավերժ պիտի շարունակվեն:

Ինչպե՞ս պիտի Ռուսաստանը լուծի այս խնդիրն իր անընդհատ ընդարձակվող կայսրության մեջ:

Ինչպես արդեն նշել եմ, ներկա փոխարքայի քաղաքականությունը ավելի շատ նպատակ ունի խաղաղություն սփռելու, քան ճնշում գործադրելու: Ռուսներն, ի վիճակի չլինելով գաղութացնելու ծայրամասերը սեփական ուժերով, այնքան խելամիտ են, որ թույլ են տալիս, որ հայերն ու մյուս ազգերը հենց իրենք դա անեն ռուսների համար: Նշանակալից ազատություններ են տրվել հայերին, որոնք չնայած պատրաստ են քննադատության ենթարկելու կառավարությանը, չեն դրսևորում անջատողական միտումներ:

Իրականում հայերը հրաժարվել են ամեն տեսակի քաղաքական անկախությունից, քանի որ հակված են կարծել, որ ազգային կյանքի համար իրոք կարևորություն ունեցող ամեն բան կարելի է պահպանել առանց քաղաքական անկախության: Քանի դեռ հայերի լեզուն, կրոնը, դպրոցները հարգված են, նրանք գոհ կլինեն մնալ իբրև Ռուսական կայսրության սուբյեկտ:

Հայ եկեղեցին

Ռուսական Կովկասում Էջմիածինը Հայ եկեղեցու Մայր Աթոռն է: Նրա շուրջ եղած ամեն բան խիստ ասիական է: Կայարանից մեքենայով ժամերով գնում ես, կտրում-անցնում արևախանձ հարթավայրը, որտեղ գոմեշները ծուլորեն մեկնվել են ջրափոսերում, որ ազատվեն ճանճերից ու շոգից, որտեղ ուղտերը դժկամ անբարյացկամությամբ շարժվում են արահետ հիշեցնող, կամ էլ ոլորապտույտ հողե ճանապարհով՝ իրենց հաճույքի համար: Ծառեր ընդհանրապես չեն երևում, արևը խելահեղ կրքով փարվում է ճանապարհին, որն այստեղ-այնտեղ ընդհատվում է ընդամենը փոքրիկ փոշու ամպերով, որոնք հայտնվում են, երբ երևում են ճանապարհով ասես դեպի հորիզոնը սողացող եզներով լծված սայլեր կամ ֆայտոններ: Կա մի պատկեր, որը, այդուամենայնիվ, ամառվա ճա-

նապարհորդին զով է բերում: Դա դեպի հարավ ընկած Արարատ լեռան ձյունապատ գագաթն է: Կանգնած անբիծ ու վեհ՝ այն վեր է խոյանում դեպի անամպ երկինքը: Առաջ շարժվելիս աչքերիդ առջև հառնում է կանաչ ծառերով, ոռոգված հողատարածք՝ ևս մի գեղեցիկ բնապատկեր, կռահում ես, որ մոտակայքում վանքապատկան տարածքներ կտեսնես: Շուտով, ավելի շուտ քան սպասում ես, հասնում ես բրգաձև սլացիկ բարդիներին, խաղողի այգիներին, սեխի բոստաններին, իսկ հետո հայտնվում ես խորդուբորդ գյուղական փողոցում: Ձիերն այստեղ սկսում են վարգով ընթանալ, ասես զգում են, որ ճամփորդությունն ավարտվում է, իսկ մի քանի րոպե անց թեքվում ես ու հայտնվում փողոցի անկյունում, որը տանում է դեպի դարպասները: Սրանց հարևանությամբ վանքի հսկայական, խարխլված պատերն են:

Հյուրատանը մեզ բարեհամբույր ընդունեցին, հյուրասիրեցին տեղական գինով և մրգերով: Թարմանալուց հետո հողաշաղախ պատերի մոտով անցանք դեպի ներքին բակերը, որոնք հիմնականում վերջերս էին կառուցվել տեղական սև քարով: Հսկայական քառանկյան կենտրոնում կանգնած է Սուրբ Կույսի եկեղեցին, որը ամենամեծ սրբությունն է հայերի համար: Այստեղ է, որ Սուրբ Գրիգորին հայտնվել է Միածնի իջնելու տեսիլը՝ Էջմիածինը, և որտեղ մեր թվարկության 303 թ. նա կառուցել է մի փոքրիկ ժամատուն, որը դեռ այսօր էլ կանգուն է: Այն դարեր շարունակ պահպանվել է եկեղեցու հովանավոր պատերի ներքո, ինչպես Սուրբ Ֆրենսիսի Պորտիունկուլան[67] Ասսիսում: Եկեղեցու կիսախավար լույսի տակ թվում է, թե հսկա գմբեթը ծվարել է այս փոքրիկ սրբավայրի սրբացած քարերի գլխավերևում: Այստեղ ձեռնադրում, օծում են հայ եկեղեցու և ազգի գլխավորին՝ կաթողիկոսին: Կաթողիկոսական ծածկ ունեցող աթոռի ձևը հատուկ է բոլոր հայկական եկեղեցիներին՝ անկախ գտնվելու վայրից:

---

[67] Փոքրիկ կաթոլիկ եկեղեցի իտալական Ասսիս քաղաքի մոտակայքում, որտեղ ծնվել է սուրբ Ֆրենսիսը՝ Իտալիայի հովանավոր սրբերից մեկը:

Հայկական թագավորությունը քրիստոնեությունն ընդունել է իբրև պետական կրոն ավելի վաղ, քան Կոնստանտինը՝ Արևելյան Կայսրությունում: Ահա թե ինչպես է դա պատահել: Դիոկլետ կայսրը, մ.թ. 282-305 թթ., ամուսնության նպատակով գեղեցիկ աղջիկ է փնտրում: Իբրև հարմար թեկնածու ընտրում են Հռիփսիմե անունով հռոմեացի կույսին, ով անասելի հմայքների տեր էր, բայց, աղջիկը՝ լինելով քրիստոնյա ու նաև միանձնուհի, անմիջապես մերժում է կայսեր առաջարկությունը: Իր ընկերակիցների հետ աղջիկը փախչում է, և, ի վերջո, երկարատև թափառումներից հետո հասնում՝ Հայաստան: Այստեղ հայոց արքա Տրդատը փորձում է նրան տիրանալ: Աղջկան բերում են թագավորի պալատ, բայց զրույցի ընթացքում աղջիկն ասում է, որ ինքը չի կարող դավաճանել իր հավատին կամ խախտել տված խոստումը՝ ամուսնանալով հեթանոս թագավորի հետ և դիմադրելով նրան՝ ուժով հրում ու գցում է գետնին, որի արդյունքում նրա թագը՝դիադեմը, մաս-մաս է լինում: Արքան հրամայում է մահապատժի ենթարկել նրան իր ուղեկցորդների հետ միասին: Կարճ ժամանակ անց նրա մոտ խղճի խայթ է ծնվում, և նա, հայտնվելով տրտմության գրկում, թողնում է պալատական կյանքն ու թագավորական գործերը, ընկնում անտառները: Նրան խորհուրդ են տալիս հոգևոր ուսուցիչ ընտրել հենց այն մարդուն, ում նա մի անգամ արդեն արժանացրել էր իր ատելությանը ու հետապնդել նրա կրոնական հայացքների համար: Գրիգորը, որն արդեն տասնհինգ տարի բանտարկված էր Քրիստոսին դավանելու համար, ազատ է արձակվում իր փոսից, և Տրդատը նրան շնորհում է Լուսավորիչ անունը և հրովարտակով հաստատում, որ այդ օրվանից ի վեր քրիստոնեությունը պետք է ճանաչվի իբրև իր ժողովրդի՝ հայերի, պետական կրոն:

Եկեղեցու գրադարանը գանձարան է, որտեղ պահվում են ավելի քան չորս հազար ձեռագիր հատորյակներ, որոնց մեծ մասը հայերեն են, հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ և ութերորդ դարերում հունարենից և ասորերենից թարգմանված հոգևոր երկերի ձեռագրեր: Մեր ընկերներն առանձնահատուկ հպարտությամբ մեզ ներկայացրին

փղոսկրի կազմով ձեռագիր ավետարանը, որի մասին Օքսֆորդի հանրությանը տեղեկացրել էր պարոն Ֆ. Ս. Քոնիբեերին: Ավելի քան քսան տարի առաջ Էջմիածին կատարած իր այցելության ժամանակ նա ավետարանի լուսանցքում գրչի կատարած գրառումն էր հայտնաբերել, որով Սուրբ Մարկոսի ավետարանի (Մարկոս xvi, 9-վերջ) հավելվածը վերագրվում էր Արիստոնին, որն ըստ Պապիասի՝ նշվում է որպես Քրիստոսի հետևորդ-առաքյալներից մեկը: Սուրբ Մարկոսի ավետարանում հաջորդ տասներկու տունն ընկալվում է իբրև այլ գրիչի ձեռքով ավելացված և մինչև տասներորդ դարը հայ եկեղեցում մասսայական ընթերցման չի արժանացել: Տասնյոթերորդ դարից սկսած Էջմիածինը եղել է կրթական կարևոր կենտրոն և այսօր էլ այդ դերը ստանձնել է Էջմիածնի հրաշալի ուսումնական հաստատությունը՝ Ակադեմիան: Ակադեմիան կամ համալսարանական հաստատությունը հիմնադրվել է Գևորգ IV կաթողիկոսի նախաձեռնությամբ և ձեռնարկով 1874 թ. և հայկական կրթօջախներից դրա միակ մրցակիցը Թիֆլիսի սեմինարիան է: Կրթօջախը, որը գտնվում է կաթողիկոսի հատուկ հոգածության ներքո, մոտ է սահմանին: Այնտեղ ուսանելու են գալիս նաև Թուրքիայից և ետ են վերադառնում եռամյա կամ հնգամյա ուսուցում ստանալուց հետո: Ուրիշներն ուղղակիորեն տեղափոխվում են ռուսական կամ արտասահմանյան ուսումնական հաստատություններ:

Էջմիածին կատարած այցելության ընթացքում մեզ համար զրույց կազմակերպվեց կաթողիկոսի հետ: Կիլիկիայի Սիսի կաթողիկոսության կաթողիկոսին, կամ Գլխավոր պատրիարքին, որը բոլոր հայերի գլխավորն է, լիիրավ իշխանություն է տրվել այն բանից հետո, երբ բուն Հայաստանը նվաճվեց և Էջմիածինը դարձավ ենթակա օտար կառավարիչների հրամաններին ու քմահաճույքներին: Երբ այս նշանավոր հիմնարկն ազատ աշխատատեղ է ունենում, ողջ ժողովուրդը, համայնքների իրենց ներկայացուցիչների միջոցով ընտրում են երկու թեկնածու: Այս երկու թեկնածուն ներկայացվում են ցարին, որն ըստ Ռուսաստանում հայկական եկեղեցու 1856 թ. Սահմանադրության համապատասխան դրույթի, կատարում է վերջնական ընտրությունը:

Ներկայիս կաթողիկոսը՝ Գևորգ V Սուրենյանը, տարիքով մարդ է, հասարակ ու արժանապատիվ, ընտրվել է 1911 թ. դեկտեմբերի 24-ին ազգի կողմից: Սուրբ Գրիգոր Լուսավորչից հետո նա 17-րդ կաթողիկոսն է: Նա բնակվում է հայ եկեղեցու Վատիկանում, որը եկեղեցու բակի գեղատեսիլ հին շենքերից է և նայում է տաճարին: Նա մեզ մեծ շուքով ընդունեց իր հարկաբաժնում: Հոգևորականի սև փարաջան հագին՝ նա տարբերվում էր մյուս եկեղեցականներից միայն ճակատի ադամանդե խաչով և ցարից ստացած շքանշանով: Մենք զրուցում էինք թարգմանչի օգնությամբ: Նա բավականին բան պատմեց կրոնական կրթության մասին, իր ժողովրդի հոգևոր կարիքների մասին: Նա հույս ունի բարելավել եկեղեցական դպրոցների վիճակը ծայրամասերում, և հենց վերջերս այդ նպատակով բացել է ազգային հիմնադրամ՝ ի պատիվ Սուրբ Սահակի և Սուրբ Մեսրոպի վերջերս տեղի ունեցած տոնակատարությունների: Վերջերս կաթողիկոսը հիմնել է կոմիտե, որի կենտրոնը Փարիզում է, և ենթակոմիտեներ կան բոլոր կարևոր եվրոպական մայրաքաղաքներում՝ նրանց առաքելություն տալով աշխատելու Թուրքահայաստանում բարեփոխումների ծրագրի վրա, բարեփոխումներ, որոնք նախատեսված են Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով և լրացված են Բարեփոխումների ծրագրով, որը հաստատվել էր 1885 թ. Սուլթան Համիդի կողմից:

Թուրքական այս երկու հանդիսավոր գործերն էլ առ այսօր մնացել են իբրև մեռած նամակ՝ չեղյալ չեն հայտարարված, բայց գործունեության մեջ էլ չեն դրվել ու արդեն հնացած են: Այս զրույցը հիշեցնում է մի քանի դեպք, որոնք տեղի են ունեցել Կովկասում 1903 թ., երբ հայ եկեղեցու հարստությունն ու անկախությունը ռուսական կառավարության նախանձը շարժեց: Փորձ արվեց բռնազավթելու եկեղեցու ունեցվածքը այն պատճառաբանությամբ, որ այդ հարստությունն օգտագործվում է հեղափոխական նպատակներով: Փոխարքա Գալիցինը իր շահերը բավարարելու համար այստեղ հնարավորություն էր տեսել: Էջմիածին ուղարկվեցին զորամիավորումներ: Երբ զորքերը մոտեցան սուրբ վայրերին, հայ գյուղացիների մի հսկայական բազմություն հավաքվեց հարևան գյուղերից: Գյուղացիները սպառնալից

շարժվեցին դեպի զորքը: Քարերի տարափ տեղաց զորքի վրա: Կաթողիկոսը դիմեց, որ միայն պասիվ դիմադրություն ցուցաբերվի և ինքն էլ հրաժարվեց հեռանալ իր բնակության տարածքներից: Ժամանեցին ռուս սպաներ և պահանջեցին իրենց հանձնել գանձարանի բանալին, և, երբ մերժում ստացան, նրանք ուժով մուտք գործեցին տաճար, ապա գանձարան ու տարան ամեն բան: Նրանք նաև զավթեցին վանքապատկան հողերն ու ֆերմաները: Կարճ ժամանակում բռնագանձվեց եկեղեցու ողջ ունեցվածքը: Փակվեցին բոլոր հայ եկեղեցիները, ոչ մի ծառայություն հնարավոր չէր մատուցել: Ռուսները փորձեցին կաշառել թե՛ եկեղեցականներին ու թե՛ ուսուցիչներին: Կրկնակի աշխատավարձ առաջարկվեց նրանց, ովքեր ուղղափառություն կընդունեին: Ոչ ոք չընդունեց այդ կաշառքը: Վիճակը շարունակվեց մեկ տարի: Եկավ նոր փոխարքա, որը հիմա էլ այդ պաշտոնում է, և փոխվեց պաշտոնական քաղաքականությունը: Ուժով հարցեր լուծելուն փոխարինեց ազատություն պարգևելով հարցեր լուծելը: Վերցված ողջ սեփականությունը ետ վերադարձվեց: Հայ եկեղեցին «ազատություն» ստացավ: Հայերը բարոյական հաղթանակ տարան:

Իսկ իրականում ի՞նչ վիճակում է հայ եկեղեցին այսօր: Ես կփորձեմ այս հարցի պատասխանը տալ հաջորդ էջերում:

Մեզանից շատերը սովոր են արևելյան եկեղեցիները դիտել իբրև քրիստոնեության վաղ շրջանի հետաքրքիր մնացուկ, կառույցներ, որոնք պահպանում են քրիստոնեական պաշտամունքի սկզբնական շրջանի որոշ ձևեր, բայց որոնց ծեսերի վրա ազդեցություն են ունեցել հեթանոսությունն ու նախապաշարվածությունը: Սակայն դրանք հազիվ թե բարոյական ազդեցություն ունեն: Անգլիացի ճանապարհորդը, այցելելով Սիրիայում նեստորական, իսկ Կահիրեում ղպտիական եկեղեցի, նկատում է, թե որքան կեղտոտ ու անպատշաճ տեսք ունեն դրանք, պատարագը «մրմնջում են վարագույրի ետևում», իսկ եկեղեցական համայնքը չի էլ կարողանում տեսնել կամ լսել, թե ինչ է կատարվում: Եթե նա մի քիչ երկար է խորհում, ապա հավանաբար մտածում է, թե որքան անգույն ու անհոգի է այդ ամբողջ մրմնջոցի առարկա Քրիստոսը: «Արյունա-

քամ, տառապած, մեռնող, տանջահար մեկը, այսպես են նրանք ա-նընդհատ ներկայացրել Քրիստոսին, բայց երբեք՝ իբրև նվաճող»:

Հայ եկեղեցին էլ մյուսների նման ընկալվում է իբրև հնաոճ և ազդեցություն չունեցող:

Ցավալի է սակայն, որ միջին անգլիացին արևելյան եկեղեցում առկա վաղնջական շրջանից մնացած սովորույթներն ընկալում է իբրև նախապաշարվածություն: Հալված մոմը և կեղտոտ փարա-ջան վիրավորում են անգլիացու «օրինավորությունը», էլ ավելի ծայրահեղ տհաճություն են նրան պատճառում այս եկեղեցիներում մերկ, չմաքրված հատակին ծնկի գալը, խաչն համբուրելը, սուրբ ջրից կռացած խմելը: Ընդամենը մի քիչ երևակայություն է հարկա-վոր նկատելու համար, թե որքան հարազատ ու նվիրական են դար-ձել այս բաները, որոնք խմբվել են կրոնի ու պաշտամունքի շուրջ: Ընդունում ենք, որ դրանք էլ կարող են չարաշահվել, բայց աններելի է չտեսնել, որ դրանք ունեն ճշմարիտ կարևորություն… Սրանք ար-տաքին հագուստն են, այնպես որ խոսել խորքում եղած հավատքի մասին, հավատք, որը կենսական է, հավատք, որը օգնում է դիմա-նալ, որը հազարավոր հայերի օգնել է դիմակայել, աներեր մնալ ի-րենց հավատքի մեջ և ստիպել է նրանց նախընտրել մահը, քան հա-վատափոխ լինել, հենց թեկուզ 1894-95 թթ. ջարդերի ժամանակ: Կան նաև հեթանոսությունից մնացած բաներ, իհարկե. սեփական աչքերով եմ տեսել Թուրքահայաստանի մենավոր վանքերից մե-կում: Հուզված սպասում էի, որ հանկարծ չուշանամ հոգևոր արա-րողությունից, որն սկսվում էր առավոտյան ժամը 5-ին:

Երբ առավոտյան մեր սենյակներից բակ դուրս եկանք, ակա-նատես դարձանք տագնապալից տեսարանի: Կիսամթի մեջ կա-րողացա մայթի վրա տեսնել արյան աղոտ բծեր: Փութով առաջ անցա ու կասկածներս հաստատվեցին, երբ տեսա եկեղեցի մտնել ցանկացող մի վանականի, որը փորձեց հնարավորինս պարզ բա-ցատրել, թե մեկ ժամ առաջ տեղի ունեցած սպանդը ինչ նպատա-կով էր կատարվել: Եկեղեցու մուտքի մոտ մորթել էին 5 այծ ու մի ոչխար, ու մնացորդներն էլ դեռ գետնին էին, իսկ միսն արդեն

հսկայական երկաթյա ամաններով կրակին էր: Զոհ մատուցելու այս ձևը կոչվում է՝ *մատաղ*: Հատուկ կարիքների, վտանգի կամ հիվանդության ժամանակ հայերն այս յուրահատուկ ձևով են ոգեկոչում աստծուն: Նրանք կենդանի զոհ են մատուցում այն սրբի տաճարում, ումից ակնկալում են բուժում կամ օգնություն: Դա բոլորովին էլ հեթանոսական իմաստով չի արվում՝ որպես շնորհակալություն սրբին, այլ իբրև բարեգործություն, որ օգնում է ազատվել «գործած մեղքերից» և երկնային պարգևի է արժանացնում բարեգործին: Գյուղի քահանային խնդրում են ներկա գտնվել զոհ մատուցելիս, որից անմիջապես հետո միսը եփվում է ու մատուցվում համայնքի ամենաաղքատներին ու կարիքավորներին: Ավելի ուշ՝ առավոտյան, գյուղացիների մի հսկայական խումբ հավաքվում է եկեղեցու բակում ընդունելու մատաղի իր բաժինը:

Գուցե ճշմարիտ է, որ արևելյան եկեղեցիները մեծ մասամբ հեռացել են արևմտյան գաղափարներից և աղոտ են ըմբռնում գիտությունն ու փիլիսոփայությունը: Եվ այն քննադատությունը, որին քիչ առաջ անդրադարձանք, պետք է աշխարհին այսօր, երբ քրիստոնեությունը փորձությունների է ենթարկվում: Նախ և առաջ կասեի, որ քննադատությունն արվում է, որպեսզի վերհիշենք անցյալի այն պայմանները, որոնց առկայությամբ այս եկեղեցիները ապրել ու զարգացել են: Որքան շատ ենք խորանում պատմության մեջ, այնքան ավելի ենք զարմանում, թե ինչպես է նրանց ընդհանրապես հաջողվել փրկվել ոչնչացումից: Դրանք քրիստոնեության ամենափոքր եկեղեցիներն են, որոնք դարեր շարունակ ամենաաղքատներն ու ամենանվազ ազդեցիկներն են եղել: Ավելին՝ հետապնդման ամենածանր հարվածները հենց նրանք են տարել: Մարտիրոսվածների քանակը անթիվ-անհամար է: Հազար տարի և դեռ ավելի նրանց կյանքը եղել է սոսկ գոյության պայքար՝ մեծ մահմեդական տերությունների կոխկրտող կրունկների տակ ու դեմ առ դեմ նրանց հետ: Նույնիսկ, եթե այս կողմերում «ճորտ» քրիստոնյաները հետամնաց են ու նույնքան նախապաշարված, ինչպես իրենց մուսուլման տերերը, արդյոք որևէ մեկն իրավունք ունի նրանց մեղադրելու:

Արտաքին հանգամանքներն ամեն ինչ արել են, որ հենց այսպես ձևավորվի արևելյան եկեղեցիների թե՛ ներքին ոգին ու թե՛ արտաքին կերպը: Քոչվոր ցեղերը դեռ էլի թափառում են անհանգիստ, ճիշտ այնպես ինչպես Աբրահամի ժամանակներում՝ փնտրելով սննդի նոր աղբյուրներ: Ֆիզիկական կյանքը վտանգված է: Հասարակ մարդու համար, առավել ևս արհամարհված քրիստոնյայի համար ֆիզիկական ուժն է միակ օրենքը: Քրիստոնյա համայնքները կարող են իրենց պաշտպանել միայն ցեղային կամ ազգային կազմակերպությունների միջոցով: Նրանց համար հազիվ թե տարբերություն լինի իրենց ազգի պաշտպանության համար կազմակերպված մարմնի և կրոնական նկատառումներով ստեղծված կազմակերպության միջև: Դա ապացուցվում է այն փաստով, որ նեստորական եկեղեցու պատրիարք Մառ Շիմունը, նույնիսկ այսօր էլ ցեղապետի կամ շեյխի նման, ժառանգաբար փոխանցում է պատրիարքությունը և իր տրամադրության տակ զինյալներ ունի:

Հենց այս, մինչև մեր օրերն հասած արտաքին պայմանների շարունակականությունն է, որ պայմանավորում է արևելյան եկեղեցիների ավելի պակաս հստակ ազգային բնույթը: Սա հայ եկեղեցու երեք կարևորագույն հատկանիշներից առաջինն է, որի վրա կուզենայի ուշադրություն հրավիրել: Իբրև օրինակ կարող է ծառայել այն, թե ինչ տեղ է զբաղեցնում հայ եկեղեցին հասարակ հայ մարդու մտքում: Այն պատճառով, որ նա այսօր չունի երկիր, որը կարող է իր սեփականը կոչել, ոչ մի ոտնաչափ հող, որը օտարի ենթակայության տակ չլինի, նա ամբողջովին ու կրքոտ կառչած է իր եկեղեցու անկախությանը, և հենց այն պատճառով, որ իր ազգի համար քաղաքական միությունը այսօր քննարկվել չի կարող, **հոգևոր միությունն այս պահին ամենակենսականն է:** Եկեղեցին ամենակայուն հաստատությունն է, որը աշխարհի բոլոր հայերին միավորում է ամենամտերիմ ու հարազատ կապերով:

Ազգային եկեղեցու գաղափարը, առաջին անգամ քաղաքական ծայրահեղ իրավիճակով պայմանավորված է առաջ քաշվել: Բայց դա նաև հիմնվում է որոշակի իդեալների և ընկալման վրա. ի՞նչ

կարող են նշանակել միացյալ քրիստոնեությունը, ընդհանուր համոզմունք և սերտ շփում ունեցող եկեղեցիների ընտանիքի տեսությունը, որոնք, այնուամենայնիվ իրական անկախություն են պահպանում թե՛ ծեսերի կազմակերպման, թե՛ դրանց դրսևորման ձևերի առումով: Պահելով այս իդեալը հայ եկեղեցին միշտ մերժել է հունական կամ հռոմեական եկեղեցիների հետ միավորվելու բոլոր առաջարկները, քանի որ նման միությունը փաստացի կնշանակեր առանց վերապահումների հանձնվել՝ մյուս կողմի թելադրած պայմաններն ընդունելով: Հայ եկեղեցին ընդդիմացել է թե՛ Հռոմի տիրապետությանը ենթարկվելուն և թե՛ հավատափոխության՝ Կոնստանդնուպոլսի պարտադրանքին: Մեր օրերում ուղղափառ եկեղեցու հետ միավորումը հայերի համար ռուսական հովանավորություն կապահովեր՝ ինչպես Թուրքիայում, այնպես էլ Պարսկաստանում: Այդ տեսակետից պետք է որ առաջարկն ինչ-որ գայթակղիչ բան պարունակեր: Բայց հայ եկեղեցին միշտ մնացել է հավատարիմ իր իդեալին՝ միավորումը չպետք է պարտադրի միօրինակություն: Յուրաքանչյուր տեղական կամ ազգային եկեղեցի իր իսկ բնագավառի սահմաններում ազատություն ունի:

Իմաստ ունի՞ արդյոք այս տեսությունը համեմատել այլ եկեղեցիների տեսության հետ: Կաթոլիկ հռոմեական եկեղեցին, նաև ոչ եպիսկոպոսական եկեղեցին ժխտում են ազգայինի գաղափարը կրոնում: Կաթոլիկ հռոմեական եկեղեցին ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականում քարոզում է համընդհանուր հավատարմություն, առանց ազգային գործոնի հաշվառման: Այն իրականում հակազգային է, պահանջում է պաշտամունքի համընդհանրություն, նաև հպատակություն մեկ կենտրոնական իշխանության: Ոչ եպիսկոպոսական եկեղեցիները, հիմնականում, «հոգևոր» բնույթ ունեն կամ ավետարանչական են և քիչ առնչություն ունեն տեղական կամ ազգային գործոնին: Ավելի բնական է համեմատել հայ եկեղեցին անգլիական եկեղեցու հետ, որի համար քրիստոնեության իդեալն ազգային եկեղեցիների ընտանիքն է, որն հիմնված է ուսմունքի համընդհանրության վրա, երբ

որոշակի ազատություններ են տրվում կառավարման ձևի, պաշտամունքի նաև դոկտրինների սահմանումների առումով:

Այն հարաբերությունը, որում գտնվում է հայ եկեղեցին իր ազգի հետ, ունի որոշ կարևոր հետևանքներ կրոնական առումով: Չնայած դա արդարացնելու համար զգալի ձեռքբերումներ կան, սակայն կան նաև իրական կորուստներ: Այս եկեղեցին երբեք չի կրել հետապնդման մեղք, երբեք չի եղել վերահսկման տակ՝ ոչ միապետության, ոչ էլ հոգևոր կլանի կողմից: Հայ եկեղեցին միավորված է ազգի հետ, այն կայացած է, ճանաչված իբրև պետական կրոն՝ առանց «ռեժիմի վերածվելու» նշաններ ցույց տալու: Միևնույն ժամանակ կրոնական ու ազգային գաղափարներն այնքան են միահյուսվել, որ մեկը մյուսից հնարավոր չէ տարանջատել ու զանազանել:

Հենց այս պատճառով էլ տուժել են կրոնական իդեալները: Դրանք աշխարհիկացվել են մի ամբողջ ազգի ծառայելու նպատակով: Երկնային բարօրության գաղափարը, որն Աստծո բոլոր ժողովուրդներին է վերաբերում, բավականաչափ ուժեղ չէ, որ հայերին ոգևորի առաքելության եռանդով, չնայած որ պետք է ի պատիվ հայ եկեղեցու հիշել, որ հայերին քրիստոնյա դարձնելուց հետո Գրիգորն ու Մաշտոցը ձեռնարկեցին կասպիական ալբանացիներին ու վրացիներին քրիստոնյա դարձնելու գործը, ընդ որում այդ ընթացքում ալբանացիներից շատերը մարտիրոսվեցին:

Ես եպիսկոպոսներից մեկին հարցրեցի, թե արդյոք վանականներն իրենց նվիրել են մտորումներին, թե՞ հոգևոր գրին, և արդյոք կա՞ն մարդիկ, ովքեր պատրաստություն են անցել հոգևոր ուղղություն տալու կարիքավորներին: Նրա պատասխանից իմացա, որ ժամանակի սղության պատճառով վանականներն ավելի շատ «գործնական» խնդիրներով են զբաղված, քան հոգևորով: Նրանք ստիպված են զբաղվել վանքի տնտեսությամբ, հյուրերով, դպրոցներում դասավանդելով: Կրթության նկատմամբ նրանց կիրքը վախ է ներշնչում. կարող են անտեսվել հոգու խոր կարիքները: Ասում են, որ Գերմանիայի և օտարերկրյա այլ համալսարանների հայ ուսանող-

ները բնավորության կայունություն չեն ցուցաբերում և կառչած չեն առաջնային սկզբունքներից: Հավանաբար սա նշանակում է, որ նրանց վաղ կրոնական և բարոյական վարժանքի մեջ քիչ տեղ է տրվել իրականության ընկալմանը: Չհամաձայնելով նման քննադատական մոտեցմանը՝ հիշենք, որ հային այս բացասական գծերը հատկանշական չեն և մի՞թե պարտադիր է, որ տնտեսական ու քաղաքական առումով ենթարկվելը ազդի ազգի կրոնական հավատալիքների վրա: «Ստրկությունը», ցանկացած դրսևորման մեջ, միշտ նշանակում է հոգևոր կյանքի «աղքատացում»: Հայերի շրջանում ազգային ճշմարտությունները ծայրահեղ խստությամբ են ընկալվում յուրաքանչյուր անհատի կողմից: Ազգային հավատարմությունը հայի ամենամեծ առաքինությունն է: Համընդհանուր շահին ծառայելը, իրար հետ լինելու և իրար սատարելու պահանջը ընդհանուր նպատակի համար ամենահրատապն է միշտ և ամենուրեք: Անձնական կրոնը տուժում է, որովհետև անհատները չունեն ազատություն կամ ազատ ժամանակ իրենց ուզածով զբաղվելու համար: Մենք պետք է դա հաշվի առնենք և համբերատարությամբ ընկալենք այն թերություններն ու ձախողումները, որ տեսնում ենք նրանց մեջ:

Հայ եկեղեցու մեկ այլ շատ կարևոր և ինձ համար ամենահետաքրքիր հատկանիշը դեմոկրատական սկզբունքի կիրառումն է, որի վրա էլ հիմնված է եկեղեցին: Նախորդ դարի ընթացքում շատ գաղափարներ, որոնք ժամանակակից են Արևմուտքում, սկսեցին տարածվել դեպի արևելք, և հայերի շրջանում նոր գործունեության խթան դարձան: Նոր ձգտումներ ծնվեցին մասսայական կրթության բնագավառում, գյուղացիների սոցիալական վիճակի արմատական բարելավման հետ կապված և այլն: Բայց ազատության և դեմոկրատիայի այս գաղափարները հայ ժողովրդի համար բոլորովին էլ նոր չէին: Դրանք բոլորն էլ մշտապես եղել են հայ եկեղեցու սկզբունքների շարքում և դեռևս պրիմիտիվ ժամանակներից սկսած իրենց արտահայտությունն են գտել եկեղեցուն առնչվող կազմակերպչական հարցերում, որը կրոնահամայնքայինի ու թեմականի միջև փոխզիջում է. եկեղեցու կառավարման և վարչական բոլոր կարևոր հար-

ցերը, ներառյալ կաթողիկոսի ընտրությունը, որոշվում են կղերականության և հավատացյալների միացյալ ձայներով:

Հայ եկեղեցին, մի բան, որ շատ անսովոր է, սուրբը միավորում է դեմոկրատական սկզբունքի հետ: Այն լիովին «կաթոլիկ» է՝ քահանայության և սրբությունների բացարձակ պնդման իմաստով, նաև ծիսական պաշտամունքների առումով: Այնուամենայնիվ, իշխանության վերջնական աղբյուրը միշտ էլ ժողովրդի կամքն է: Սա ամբողջովին արտացոլված է 1863 թ. Ազգային սահմանադրության մեջ: Կոնստանդնուպոլսի պատրիարքը Թուրքիայում ազգի գլխավորն է և պաշտոնական խոսնակը, բայց թուրքական կառավարությունը գտնում է, որ պատրիարքն ինքը պետք է հպատակվի Ազգային ժողովին: Հայերի ազգային ժողովի նստավայրը Կոնստանդնուպոլիսն է, այն ներառում է երկու վարչական մարմիններ՝ քաղաքացիական գործերի հանձնաժողովը և հոգևոր գործերի հանձնաժողովը: Այս երկու հանձնաժողովներն էլ, իրենց հերթին, պատասխանատու են ազգային ժողովի առջև, որը կազմվում է Թուրքիայի բոլոր մասերից ընտրված պատգամավորներից: Բուն հոգևոր հարցերով պատրիարքը գործունեություն է ծավալում միայն հոգևոր գործերի հանձնաժողովի խորհրդով, բայց եկեղեցուն առնչվող վարչական հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս՝ ընտրություններ, պաշտոնների նշանակումներ, եկեղեցական կարգ ու կանոն, և այլն, երկու հանձնաժողովները միացյալ նիստ են հրավիրում, որն էլ կայացնում է վերջնական որոշում:

Բայց ռուսական Հայաստանում կաթողիկոսն է նշանակում եպիսկոպոսներին ըստ «Պոլոժենիայի», որի նախագիծը ձևավորված է ռուսական ազդեցությամբ և ներդաշնակորեն համապատասխանում է եկեղեցական կառավարման ռուսական գաղափարին:
Չնայած վերանայման փորձեր արվել են՝ «Պոլոժենիան» ավելի դեմոկրատական դարձնելու առումով, բոլոր նման փորձերը ձախողվել են՝ հանդիպելով ռուսական կառավարության անսասան դիմադրությանը:

Ժողովրդական վերահսկողությունը տարածվում է եկեղեցու գործունեության համարյա բոլոր բնագավառների վրա: Բերեմ օրինակներ.

- Թուրքիայում աշխարհիկ կոմիտեներն են տնօրինում հայկական կրթությունը: Ռուսաստանում դպրոցի կապը եկեղեցու հետ ավելի սերտ է, բայց նույն սկզբունքը գործում է ողջ ժողովրդի համար: 1863 թ. կրթությունն ազատ է, և հիմնադրամների շնորհիվ, առ այսօր անվճար կրթության հնարավորություն ունեն բացարձակապես բոլորը:
- Նույն մոտեցմանը հանդիպում ենք նաև բարեգործական աշխատանքներում, հիվանդանոցներում և հետագա կյանքի համար միջոցներ ապահովող հաստատություններում: Հայերը, ի հավելումն պետությանը մուծվող հարկերի, կամավորաբար լրացուցիչ ծանրաբեռնում են իրենց, որպեսզի օժանդակեն նման մարդասիրական կազմակերպությունների:
- Ինչ վերաբերում է կղերականների դիրքին, ասենք, որ գոյություն չունի ոչ մի հոգևորական կաստա կամ դաս, որ անհասանելի լինի ժողովրդի համար: Այստեղ, ինչպես մնացած բոլոր հարցերում, առաջնայինը ժողովրդի կամքի սուվերենությունն է: Գյուղերում հոգևորականությունը ոչ միայն նշանակվում ու վարձատրվում է համայնքի կողմից, այլև հոգևորականները սովորական գյուղացու կյանք են վարում այնտեղ, որտեղ նրանց հոգսերն ու պարտականությունները թեթև են, իսկ ժողովուրդը՝ աղքատ: Մինչև հոգսաշատ առօրյան սկսելը, դեռ արևածագից շատ առաջ, մարդիկ նախ մտնում են գյուղի ցածր դռնով հողաշեն եկեղեցին: Այստեղ, երկու-երեք մոմի լույսի տակ, քահանան հինգ-վեց հոգանոց փոքրաթիվ համայնքով կատարում է իր առավոտյան ժամերգությունը: Պատարագը սովորաբար տրվում է շաբաթը երկու անգամ՝ շաբաթ և կիրակի օրերին: Առավոտյան արարողությունից հետո, որն ավարտ-

վում է առավոտյան հինգին, քահանան, հաճախ իր կնոջ ընկերակցությամբ, գնում է դաշտում աշխատելու:

- Թուրքիայում կղերականները հաճախ հետամնաց ու կրթություն չունեցող մարդիկ են, բայց քահանայությունը ներկայացուցչական է և իր իշխանությունը ստանում է քրիստոնյա համայնքից: Ես հարցրեցի, թե արդյոք հավանականություն կա՞, որ սկսվի հակակղերական շարժում՝ հարաբերությունները լարվեն ժողովրդի և եկեղեցու միջև, երբ կրթությունը դառնա համատարած: Էջմիածնի Սինոդի անդամ ընկերս ժպտալով պատասխանեց. «Մի՞թե դա հնարավոր է, չէ՞ որ այդ հոգևորականները նշանակված են *ժողովրդի կողմից ու ժողովրդի համար:* Նրանք ժողովրդին ծառայելուց բացի, այլ գործ ու նպատակ չունեն»: Թվում է՝ սա հրաշալի ու անխափան է գործում: Հոգևորականներին վերաբերվում են հարգանքով, այլ ոչ թե վախով: Յուրաքանչյուր ծուխ ունի իր խորհուրդը՝ բաղկացած աշխարհիկ անդամներից: Նրանք ընտրվում են հանրային քվեով: Եկեղեցու անդամ լինելը որոշվում է կնքվելով ու եկեղեցական ֆոնդերին որոշ նվիրատվություններ կատարելով:

Ես երբեք չեմ խոսել ծխական կղերականության մասին: Վանքերը ուղղակի հսկողության տակ չեն գտնվում, դրանք ժողովրդի սեփականությունն են, բայցևայնպես, վանական համակարգը ենթարկվում է Կոնստանդնուպոլսում գործող ազգային ժողովին առընթեր կոմիտեներից մեկին: Կանոնադրության տեքստում ձևակերպումները հենց իրենք են ցույց տալիս, թե որքան լիարժեք է այդ համակարգը կառավարվում՝ պայմանավորված հանրության համար դրա օգտակարության աստիճանով: «Բոլոր վանքերը պարտավոր են զբաղվել ազգի բարոյական կատարելագործման խնդիրներով: Այստեղից հետևում է, որ դրանցից յուրաքանչյուրը, իր կարողությունների ներածին չափ, պետք է ունենա հոգևոր սեմինարիա, գրադարան, տպագրություն, հիվանդանոց և այլ օգտակար

հիմնարկություններ»: Չնայած վանքերը կրկին ու կրկին կողոպտվում էին, հատկապես ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, նրանք դեռ էլի բավարար միջոցներ ունեին մարդասիրական ու սոցիալական մեծածավալ աշխատանք իրականացնելու համար:

Հայ եկեղեցին քրիստոնեական այլ հին եկեղեցիներից տարբերվում է ևս մեկ կարևոր հատկանիշով: Բոլոր հակասություններով լի ժամանակաշրջաններում այն պահպանել է դոկտրինների սկզբնական պարզությունը: Հայերը սիրում են մեջբերումներ կատարել իրենց մեծ առաքյալ և հովանավոր Սուրբ Գրիգոր Լուսավորչից: Երբ նրան Նիկիայի Հավատամքի հետ մեկտեղ ներկայացրին խորհրդի կրոնական երկպառակություններին առնչվող զեկույցները, նա ասաց. «Ինչ վերաբերում է մեզ, եկեք փառաբանենք Նրան, ով հավիտյանս հավիտենից պաշտում էր Սուրբ երրորդությունը և Մեկ Աստծո, Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և ընդմիշտ»: Սուրբ Գրիգոր Լուսավորչի այս բառերը կրկնվում են աղոթքի ժամանակ Նիկիայի Հավատամքից անմիջապես հետո: Այս բառերը բնութագրում են հայ եկեղեցին, քանի որ հայերը երբեք առանձնահատուկ սեր չեն ցուցաբերել կրոնական վեճերի նկատմամբ և նախընտրել են սահմանափակել իրենց դոգմատիկ հավատալիքները՝ դրանք հասցնելով նվազագույնի: Ամենևին էլ չենք զարմանում, երբ պարզում ենք, որ հայ եկեղեցին առաջնորդվում է միայն առաջին երեք՝ Նիկիայի, Կոնստանդնուպոլսի և Եփեսոսի Տիեզերական ժողովների որոշումներով: Հայ եկեղեցին պնդում է, որ հետագայում տեղի ունեցած ժողովները միացյալ եկեղեցին չէին ներկայացնում, այդ իսկ պատճառով չէին կարող միավորել ողջ քրիստոնեությունը: Հիմնարար ճշմարտություններն արդեն արտահայտվել էին համապատասխան ձևակերպումներով, իսկ հետագայում ժողովները, որոնք մասնակիորեն են ներկայացուցչական եղել, չէին կարող ավելացնել որևէ բան, որն անսխալական լիներ: Իհարկե, թե՛ եկեղեցու և թե՛ անհատների համար դոկտրինների բացատրությունների ու արտահայտման լիարժեք ազատություն կա՝ մտածողության տարբեր ձևերի ու մակարդակների առումով, և հայ եկեղեցին օգտվում է ազատության այս արտոնություններից ու իր սեփական տեղական նշանակության ժողովներում ու Սինոդներում ձևավորում է դոկտրինների ա-

վելի մանրամասն սահմանումներ: Ըստ հայ հոգևորականների՝ հենց այդ պատճառով էլ հսկայական տարբերություն կա *դոգմաների ու դոկտրինների* միջև, այսինքն՝ քրիստոնեական հավատքով նախատեսվող հիմնարար ու անհրաժեշտ ճշմարտությունների և համաձայն մտածողության փոփոխվող ձևերի և գիտելիքի տարբեր մակարդակների՝ ցանկացած կոնկրետ եկեղեցու կողմից ընդունված, ձևափոխված ու տարածված ուսմունքների միջև: Այսպիսով՝ հայ եկեղեցին պաշտոնապես ճանաչում է փոփոխության և զարգացման օրենքը: Կենսատու և ազատական ոգին չի լքել քրիստոնեական այս համայնքին: Նրանք անվերապահորեն հավատում են, որ դա առկա աղբյուրն է այն ուժի, որ առաջնորդելու և ոգևորելու է Աստծո մարդկանց ճշմարտության իրենց փնտրտուքում:

Հին եկեղեցիներից չկա ուրիշ ոչ մեկը, որ թույլ է տալիս մտքի այսպիսի ազատություն, և հայերը պնդում են, որ այս սկզբունքը արդարացվում է ձեռք բերված արդյունքով: Ապացուցված է, որ այսպիսի հիմքը բավականաչափ ամուր է, որպեսզի կայունություն ապահովի, բայցևայնպես ոչ այնքան ուժեղ, որ խանգարի անհատի մտավոր առաջընթացը կամ արգելի նրա կշռադատման ազատ զարգացումը:

Հայ եկեղեցում հայտնի չէ ու երբևէ չի էլ եղել այնպիսի երևույթ, որը կոչվում է հոգևոր բռնություն կամ հետապնդում: Հայ եկեղեցու դրույթների ոգին գործողության մեջ է մտնում Էջմիածնի ներկայիս հոգևոր խորհրդի հսկողությամբ: Լուսավորվելու և կատարելապես ավելի բարձր մշակույթի հասնելու ձգտումներն արժանանում են ներկայիս իշխանության դրվատանքին: Սինոդի անդամներից մեկը, որը հրաշալի տիրապետում էր ֆրանսերենին ու գերմաներենին, նաև ռուսերենին, մեր հյուրընկալն էր: Նա Հառնակի[68] աշակերտն էր եղել և Լայպցիգի համալսարանի դոկտոր էր կրոնի գծով: Ինչ վերաբերում է ավետարանական քննադատությանը, հայ եկեղեցին ոչ մի խոչընդոտ չի ստեղծում ուսման և գիտահետազոտա-

[68] Նկատի ունի կրոնի և եկեղեցու պատմության մասնագետ, ազգությամբ գերմանացի Կառլ Գուստավ Ադոլֆ ֆոն Հառնակին (1851-1930):

կան աշխատանքների համար: Վանականներից շատերը գիտնականներ են կամ բարձրակարգ քննադատներ, ինչպես նկատել է հանգուցյալ եպիսկոպոս Քոլինս Ջիբրալթարցին, երբ այցելել է Հայաստան:

Այստեղ հարկ կա մի քանի խոսք ասելու հայ ուղղափառության մասին, քանի որ դեռևս տարածված է այն կարծիքը, որ այս եկեղեցին որոշ առանձնահատուկ հերետիկոսական դոկտրիններ ունի, որոնք նրան հեռացնում են մյուս քրիստոնեական եկեղեցիներից: Այն միտքը, որ այս կարծիքն ահավոր անարդար է, վաղուց արդեն հանգիստ չի տալիս նրանց, ովքեր ուսումնասիրել են այս խնդիրը: Հայ եկեղեցին դաժանաբար և դիտավորյալ սխալ է ներկայացվել նրանց կողմից, ովքեր անընդհատ ցանկացել են վնասել նրան: Իսկ ի՞նչ փաստեր կան: Ուղղափառությունը պնդում է այն հավերժական հակասությունը, որ Տեր Հիսուս Քրիստոսը միաժամանակ եղել է թե՛ *կատարյալ Աստված* ու թե՛ *կատարյալ Մարդ:* «…Նա, ով չնայած Աստված է ու Մարդ, այնուամենայնիվ ոչ թե երկուսն է, այլ *մեկ Քրիստոս:*» Որոշ հերետիկոսներ IV և V դարերում ջանքեր գործադրեցին սպառիչ բացատրություն տալու Քրիստոսի երկու էությունների այս միությանը: Ոմանք փորձեցին բացատրել, որ Նրա Աստվածային էությունն անիրական է, իսկ ուրիշները ասում էին, որ նրա Մարդկային էությունն է իրականությունից հեռու: Վերջին կարծիքը, որը հայտնի է իբրև եվտիքականություն[69], դատապարտվեց Քաղքեդոնի՝ մ. թ. 451 թվականի Տիեզերական ժողովում: Հայ ժողովուրդը մաս-

---

[69] Եվտիքականությունը (եվտիքեսականություն) մեկնաբանվում է որպես 5-րդ դարի քրիստոնեական հերձվածողական վարդապետություն, որը ժխտում էր Քրիստոսի մարդեղությունը և մարդկային բնության համագոյությունը: Հայ եկեղեցին երբեք չի հետևել եվտիքականությանը և 5-րդ դարից սկսած մշտապես դատապարտել ու նզովել է այդ ուսմունքը՝ դրանում տեսնելով քրիստոնեական ըմբռնումների աղավաղում: Տե՛ս (https://hy.wikipedia.org/wiki/%D4%B5%D5%BE%D5%BF%D5%AB%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6), (համացանցից դուրս է բերվել 16.04. 2017):

նակցություն չի ցուցաբերել այս ժողովին, որովհետև հենց այդ ժամանակ զբաղված էր կենաց ու մահու կռիվ մղելով Պարսկաստանի Սասանյանների դեմ, ո՛չ էլ հայերը ձևականորեն ընդունել են այդ ժողովի ընդունած փաստաթղթերը: Հետևաբար, խնդրի առարկա այս սխալ, ոչ ուղղափառ կարծիքը շատ դեպքերում ներվում էր: Այլ հարց էր, թե ինչու հայերի ներկայացուցիչը չէր ժամանել: Ժողովը որոշում էր ընդունել, որ Կոնստանդնուպոլսի պատրիարքն այսուհետ բոլոր արևելյան եկեղեցիների գերագույնն էր և նրանց պատրիարքների՝ ըստ էության արևելյան եկեղեցիների Պապը: Եվ հենց հայ ազգային եկեղեցուն սպառնացող այս վտանգը խանգարել էր, որ հայերը ճանաչեին Ժողովը:

Երբեք հնարավոր չէ ամբողջապես կամ արդար գնահատել որևէ եկեղեցի, առանց անդրադառնալու նրա ժամերգությանը: Ինչ էլ դա անվանենք՝ պատարագ թե այլ բան, այն քրիստոնեական պաշտամունքի գլխավոր մասն է, և ինչ կերպ էլ այն դրսևորվի, ընդհանուր է բոլոր եկեղեցիների համար: Ի՞նչ ձև ունի հայ եկեղեցու ժամերգությունը: Պարունակու՞մ է այն հատուկ հետաքրքրություն ներկայացնող մասեր: Վաղ շրջանի արևելյան ու արևմտյան (Հռոմի, Ալեքսանդրիայի, Երուսաղեմի, Եփեսոսի, կամ Օդեսայի) բոլոր ժամերգությունների մեջ՝ անկախ նրանց տարբերություններից, կարելի է գտնել մի հիմնավոր ընդհանրություն՝ ըստ որի՝ նրանք բոլորը սկզբնավորվել են ընդհանուր աղբյուրից, որն է՝ վաղ քրիստոնեության հնառճ ու պարզ ծառայությունը: Վաղ շրջանի հայ եկեղեցին սերտ կապերի մեջ է եղել Կապադովկիայի Կեսարիայի հետ: Ժամերգությունների ընտանիքում հայկական տարբերակը ձևավորվել է ուղղակիորեն Կեսարիայի Սուրբ Բարսեղի, իսկ անուղղակիորեն՝ Երուսաղեմի Սուրբ Հակոբոսի ազդեցությամբ, և ունի այն էական տարրերը, որոնց մենք ծանոթ ենք անգլիական տարբերակից:

Թիֆլիսի հայկական տաճար պատարագի գնալը շատ հուզիչ էր: Արարողակարգը հարուստ էր ու հանդիսավոր, բայց չափի մեջ: Անգլերեն թարգմանությամբ հանգիստ կարելի էր հետևել ժամերգության տեքստին, որն արտաբերվում էր հստակ, կամ երգվում հայ-

կական պարզ ու հնադարյան մեղեդիով՝ առանց երաժշտական գործիքի նվագակցության: Արևելյան այլ ժամերգությունների նման այն երկու մասից էր կազմված:

Աղոթելիս հիշում են Սուրբ կույսին ու մյուս սրբերին, և հանուն հավատքի մարտիրոսվածներին: Հայ ազգի մասին մտածում ես, որ մի ժամանակ մեծ ժողովուրդ եղած ազգը այսօր պատերազմների ու հետապնդման պատճառով մնացել է ընդամենը չորս միլիոն:

Հայկական եկեղեցական ծիսակատարության ծառայությունն ունի երեք դաս՝ մարգարեական դաս Հին Կտակարանից, Ուղերձ և Ավետարան: Սա հատկանիշ է, որը վկայում է նրա վաղեմի ծագման մասին: Մյուս եկեղեցիներում օգտագործվում է ջրի ու գինու խառնուրդով գավաթը: Պատճառն այն է, որ վաղ շրջանի մարդիկ ջուրն ու գինին խառնում էին խմելիս: Հրեաներն էլ էին այդպես վարվում: Հետագայում այդ խառնուրդը դիտվում էր իբրև Քրիստոսի երկու՝ մարդկային ու երկնային էության խորհրդանիշ կամ իբրև մեր միությունը Նրա հետ: Բայց հայերը գավաթի մեջ ջուր չեն լցնում՝ այս առումով լուսավորչական կրոնը յուրահատուկ է:

Էլի մի առանձնահատկություն կա, որ արժե ուշադրության արժանացնել: Տասնչորսերորդ դարից սկսած, երբ դոմինիկյան առաքելությունները սկսեցին տարածել իրենց ազդեցությունը, որոշ լատինական տարրեր մուտք գործեցին հայկական ծեսերի մեջ: Երևի թե դրանցից ամենաակնհայտը Սուրբ Հովհաննեսի ավետարանի՝ հանրությանը ներկայացված ընթերցումն է անմիջապես ժամերգությունից հետո:

Այս գլխում նպատակ չունենք քննելու հայկական տարբեր աղանդներին (հայ-հունական ուղղափառ, կաթոլիկ Մխիթարյան կամ բողոքական) վերաբերող հարցեր: Ուզում եմ միայն արտահայտել իմ խորին հիացմունքը հայ առաքյալների նկատմամբ: Հավատացած եմ, որ ճիշտ եմ վարվում՝ ասելով, թե Արևելյան Թուրքիայում ամերիկյան առաքելությունը երբևէ մտադրություն չի ունեցել հավատափոխությամբ զբաղվելու: Հիմնադիրների ցանկությունն է

եղել հայ եկեղեցու անդամներին ապահովել լավագույն կրթությամբ՝ քրիստոնեական հիմքի վրա: Եվ այս ազնվագույն խնդիրն իրագործվել է: Թուրքիայի տառապյալ հայերը ավելի լավ բարեկամներ չեն ունեցել, քան ամերիկյան առաքելությունները և նրանք քաջատեղյակ են այդ փաստին: Ամերիկյան բնավորությունը թունդ գինու պես խթանել է հայերի երիտասարդ սերունդներին թե՛ բարոյական և թե՛ մտավոր առումով: Վերջին տարիներին ավելի արագ արդյունքի հասնելու և առաջընթաց ունենալու մեծ ցանկությունը գայթակղել է ամերիկացիներին՝ մեծաքանակ համակիրների գրավելու իրենց կրոնական եղբայրական եկեղեցու կողմը, բայցևայնպես ազգային եկեղեցուն օգնելու և ներսից բարեփոխումներ անելու սկզբնական նպատակի իրականացումը, որը շատ ավելի դժվար գործ է, շարունակում է մնալ իբրև բարձրագույն իդեալ: Ուրախությամբ նշեմ, որ այս սկզբունքի ջատագովը Դր. Մոթթն է, որի ծանրակշիռ ազդեցությունն, անկասկած, թույլ կտա վերադիտարկել ավելի նոր մեթոդներ: Շնորհիվ իր դոկտրինների ազատական պնդումների հայ եկեղեցին պատնեշ չի դնում այն ազդեցությունների առաջ, որոնք փորձում են իր անդամներին տանել իրենից: Բայց շատ անարդար է կրոնական ոլորտում օգտվել այս ազատական վերաբերմունքից և թուլացնել եկեղեցին, որը պատրաստակամ է գնալու բարեփոխումների և մեծ դժվարությունների պայմաններում անգամ ձգտում է հասնել դրան: Եկեղեցու հետ համերաշխությունը կենսական կարևորություն ունի հայ ժողովրդի ազատագրման հարցում:

Մենք՝ անգլիացի քրիստոնյաներս, առանձնապես մտահոգ ենք հայ եկեղեցու համար, մտահոգություն, որը ծագել է նրանց հետ շփման, բարոյական, կրոնական և քաղաքական հարցերի հետ կապված: Ժամանակ առ ժամանակ մենք մեր սեփական հողում հանդիպում ենք ծխական եկեղեցիների, որոնք նվիրված են ազգությամբ հայ, մարտիրոսված սուրբ Վլասին: Նա բրդագործների հովանավորն է և ժամանակին շատ մեծ մասսայականություն էր վայելում այս երկրում, և նրա անունը շարունակում է մնալ մեր օ-

բացույցում (փետրվարի 3)։ Հայ թագավորներից մեկն էլ այցելել է մեր ափերը ու իր ներդրումն ունեցել միջազգային խաղաղության գործին։ Ներկայումս բարոյական պարտականության զգացումը և անարդարության նկատմամբ կրքոտ անհանդուրժողականությունը ազդել են անգլիացիների խղճի վրա՝ կապված հայկական խնդրի հետ։

Գլադսթոնի անունը, որի նվիրվածությունն ու շնորհակալական վերաբերմունքը կոնկրետ ձևով արտահայտվում են Ուելսի Հովարդենի եկեղեցում, հայերը մեծ հարգանքով են արտասանում։

Այսօր մենք փորձում ենք գտնել քրիստոնեական եկեղեցիները միավորող հիմքը։ Հայ եկեղեցու սկզբունքներն են՝ միություն կարևոր հարցերում, ազատություն կասկածելի հարցերում, բարեգործություն բոլոր հարցերում (Unitas in necessariis, Libertas indubiis, Charitas in omnibus), որոնք բոլորը վերը նշված իրենց առանձնահատկություններով, պահանջում են, որ հայ եկեղեցին արժանանա լուրջ ուսումնասիրության և ուշադրության։

Մուսուլմանական երկրները

Դեպի արևելք ճանապարհորդողները ակնկալում են տեսնել չզարգացած պարզագույն հասարակարգի հմայքն ու գույները՝ այն ամբողջ գեղեցիկն իր բազմազանության մեջ, որ քաղաքակրթությունն աղավաղել է։ Անհնար է, որ գտնվի մեկը, որ չկարողանա դրանք գնահատել։ Գնացեք ու տեսեք, ասենք, հսկայական արևելյան շուկան Թավրիզում։ Հոգով պիտի մեռած լինես, որ չցանկանաս նման բաները պահպանել, բայց դրանք նկարագրելու համար էլ պիտի արվեստագետի հոգի ունենաս։ Ես կհամարձակվեմ խոսել միայն այն ամենի մասին, ինչ մնացել է հուշերումս։

Նեղ ոլորապտույտ փողոցի երկայնքով, որի համար իբրև տանիք ծառայում են հարակից կառուցված աղյուսե գմբեթները, ձգվում է խանութների շարանը։ Բաժանող կամարները, որոնք նաև

ծանրությունը պահելու համար են նախատեսված, կառուցված են պարսկական անկրկնելի ոճին բնորոշ կորությամբ, ինչպես Թյուդորների քառակենտրոն կամարն է, բայց ավելի պակաս փռված: Որքան մոտենում ես այս թունելանման անցումի վերջին, պայծառացող լույսի տակ կամարներն այնքան ավելի են աչքի զարնում իրենց արտասովոր ազդեցիկությամբ՝ պայմանավորված ներթափանցող ստվերների խաղով:

Պարսիկ շինարարները հիացնում են իրենց աղյուսե կամարներով, և նրանց միջև եղած գմբեթներից յուրաքանչյուրը մի իսկական գլուխգործոց է: Դրանք օդի և լույսի մուտքի համար անցք ունեն, որտեղից էլ ներթափանցում են արևի շողերը: Այս շողերի մեջ փոշեհատիկներն օդում ոսկեզօծ տեսք են ստանում՝ խաբկանքի մեջ գցելով նոր այցելուներին: Ստվերաշատ անցուղու կողմից, որտեղ փոշին անտեսանելի է, դրանք տանիքը պահող ամուր դեղին սյուների տպավորություն են թողնում: Իրոք որ շատ դիպուկ է Մերեդիթի[70] պատկերավոր համեմատությունը՝ «մանգաղի պես սուր է խավարի և լույսի սահմանագիծը»:

Ներքևում մարդկանց աշխարհը համապատասխանում է շրջապատի իրողություններին: Գունային բոլոր հնարավոր ու անհնարին երանգների հագուստներ կրող մարդկանց բազմությունը շարունակ շարժման մեջ է: Խանութների ներսը ամբողջովին երևվում է փողոցից, քանի որ ապակիները չեն խամրեցնում ներսի վառ պատկերները: Սակայն ոչ թե մարդկանց հագուստներն են շրջապատին գունագեղություն հաղորդում, այլև խանութի ողջ առաջամասը՝ շլացուցիչ մրգառատությամբ: Անվավոր մեքենաների երթևեկությունը չի խլացնում մարդկանց ձայները: Կարելի է լսել մարդկանց, ձիերի, ավանակների ոտնաձայները, անգամ լսելի են ուղտե-

---

70 Հեղինակը նկատի ունի վիկտորյան դարաշրջանի գրող և բանաստեղծ Ջորջ Մերեդիթի (1828–1909) «*Love in the Valley*» ստեղծագործությունը, որտեղ բանաստեղծը գովերգում է մարդու և բնության ներդաշնակության գաղափարը:

րի ոտքերի թեթև թփթփոցները: Արհեստավորներն այստեղ մի ամբողջ թաղամաս են զբաղեցնում: Իրերը պատրաստվում և վաճառվում են հենց նույն տեղում: Երկաթագործները լարված աշխատում են իրենց նեղլիկ դարբնոցներում, նրանցից երկուսը հերթով հմտորեն ծեծում են հրաշեկ տաք երկաթը: Ջուլհակները գորգեր են գործում և հենց տեղում վաճառում դրանք: Դա մի ցուցահանդես է, որին կնախանձի անգամ Տնային արվեստների միությունը. դա կիրառական արվեստի մի սքանչելի տեսարան է, արտադրողականության համար բարենպաստ, իրական կարիքների համար տնտեսող և գեղագիտական առումով ավելի պարզ ու կատարյալ, քան մերը:

Հայացքը դարձրեք դեպի սյունաշար կամարների ներքո ամփոփված շուկան, որի բաց ծայրից արևի առատ լույսն է թափանցում և հարցրեք ինքներդ ձեզ՝ արդյոք պե՞տք է, որ այս ամբողջը վերանա: Արդյոք պե՞տք է, որ այս ճանապարհը հիսուն ոտնաչափ լայնություն ունենա ու լցվի տրամվայի գծերով ու տաքսիներով:

Այս ամենի հմայքը հողին է հավասարեցնում բարեփոխումների ձգտումները: Բայց եկեք ավելի խորը մտածենք այս հարցի շուրջ: Արդյոք պե՞տք է քաղաքակրթությունն այստեղ առանց այն ամենի, ինչ ուշադրության է արժանի այս շուկայում: Ամենևին էլ ոչ: Քաղաքակրթությունը վերաիմաստավորվում է: Անզգացմունքայնությունը կվերանա մեր արվեստից՝ թե՛ ստեղծագործականից և թե՛ կիրառականից: Գործարանային արտադրության այլանդակությունն, իհարկե, փորձում են մեղմել՝ դիմելով ծխակլանիչ սարքավորումների, էլեկտրականության ու քաղաքային կանաչ զբոսայգիների օգնությանը: Գողտրիկ հին փողոցներն ու շինությունները ավելի բարձր կգնահատվեն, երբ քաղաքաշինության նախագծերն ավելի արդյունավետ լինեն: Ավելին՝ չբարեփոխված կառավարությունը չի կարող ապահովել դրանց պահպանումը: Թուրքիայում դա արդեն հազվագյուտ երևույթ է: Գյուղական կյանքի գեղատեսիլ պատկերները, անշուշտ, պահպանվում են, բայց այսպես վարվում են արժանավայել կառավարվող երկրներում, ինչպես արվում է

Հնդկաստանում և Ցեյլոնում: Կապիտալիզմը գյուղերին չի վնասում: Ամեն դեպքում այն անհրաժեշտ անցումային շրջան է առավել բարենպաստ հասարակական կարգ ապահովելու ընթացքում:

Իսկ հասարակական առումով, որն ավելի էական է և ավելի մեծ ազդեցություն ունի ժողովրդի վրա, ի՞նչ նշանակություն ունի այս միջնադարյան շուկան: Աղքատ ու ոչ սանիտարական վիճակ, որից հնարավոր չէ խուսափել. աղտոտություն, գարշահոտություն, սովից ուժասպառ ձիեր, վայրիացած գյուղեր, երաշտ, արևմուտքում անհայտ հիվանդություններ, մուրացող երեխաներ, որոնց կիսակույր աչքերն անկարելի է մոռանալ, իսկ ավելի պատկերավոր՝ ցնցոտիներ, խրճիթներ, չարչրկված ու քողը երեսին քաշած կանայք: Այս շուկայի գեղեցկությունը ծովացած արցունքների եզակի նմուշ է: Օրինական կառավարումը վերջ կդնի այս թշվառություններից շատերին:

Թուրքամետությունը, որի լավագույն ջատագովը երջանկահիշատակ Լորդ Փերսին[71] էր, բխում է Բրիտանիայի նյութական շահերից և հին դաշնակիցների հետ բարեկամական հարաբերություններից: Դրա հետևորդներն հիմնականում նրանք են, ովքեր խելամիտ փաստարկ փնտրելիս շարժվում են բնազդով, այն հիացմունքի արժանի բնազդով, որը մարմնավորվում է Լորդ Մելբուռնի[72] հարցում. «Ինչու՞ չեք կարողանում թողնել, որ ամեն բան ընթանա իր հունով»: Բայց Թուրքիայի պաշտպանությունը, եթե իհարկե նրան վիճակված է հաջողել, պետք է հիմնվի արժանավորության սկզբունքի վրա: Այս սկզբունքն առկա է ազգայնականության գաղափարում: Շատ կարևոր է, որ յուրաքանչյուր ազգ հնարավորութ-

---

[71] Բրիտանացի, քաղաքական գործիչ պահպանողական կուսակցությունից, գեներալ, որը Վիկտորյան խաչ է ստացել Ղրիմի պատերազմին մասնակցելու համար: 1854 թ., երբ Բրիտանիան պատերազմ է հայտարարել Ռուսաստանին, Լորդ Փերսին թուրքերին օգնել է Կարսի ճակատամարտում:

[72] Բրիտանացի, քաղաքական գործիչ պահպանողական կուսակցությունից, Մեծ Բրիտանիայի վարչապետը 1834 թ. և 1835-1841 թթ.:

յուն ունենա ինքնադրսևորվելու ինչպես քաղաքական, այնպես էլ մշակութային ասպարեզում: Եթե թուրքերը, ունենալով պետություն, ունեն նաև ազգային պատկանելության զգացում, ապա ազատամտության առումով այդքան արգելքներ չպետք է ստեղծեն: Անձամբ ծանոթ եմ երիտթուրքերի շարժման առաջնորդների հետ և բնականից մեծ համակրանք եմ տածում նրանց հանդեպ՝ նրանց կողմնակիցն եմ: Ներքին բարեփոխումները լավագույն լուծումն են: Անկախությունը ըստ էության, ցանկալի է թե՛ Թուրքիայում, թե՛ Իրանում և թե՛ յուրաքանչյուր երկրում՝ անկախ նրանից, քրիստոնյա են, մուսուլման, թե բուդդայական, քանի որ այն միավորում է ազգի ուժերը: Բայց դրա կարիքը հատկապես զգացվում է Թուրքիայում, որի պատճառը արդյունավետ փոխարինում իրականացնելու մեծ դժվարության հետ է կապված, նաև փոքրասիական ցեղերի, որոնք առանց վերահսկողության ի վիճակի չեն ինքնուրույն գործելու և որոշումներ կայացնելու:

Փորձենք մեծագույն անաչառությամբ դիտարկել այն չափորոշիչները, որոնք կանխորոշում են, արդյոք տվյալ կառավարությունը կպահպանի՞, թե կկորցնի անկախությունը: Անկախ մնալ-չմնալը կախված է այն բանից, թե արդյոք տվյալ կառավարությունը ի վիճակի՞ է բավարարել ժամանակակից աշխարհի կառավարություններին ներկայացվող չափանիշները այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առևտուրը, կապիտալիստական շահագործման միջոցների զարգացումը (վերջինս այլ հարց է), բնակչության միատարրությունը, տվյալ պետության ենթակայության տակ գտնվող ազգերի բարօրությունը, չմոռանանք նաև հենց իշխող ազգին, նաև վաղեմի նվաճումների արդյունքում ձեռք բերված իրավունքները:

1. **Առևտուրը**

Արտադրող երկրները, ի շահ իրենց արտադրանքի իրացման, պետք է նպաստեն այլ երկրներում իրենց արտադրանքի գնողունակությանը և թույլ չտան, որ այդ երկրները խարխափեն հետամնացության մեջ: Նրանք նաև սկսում են ավելի լավ գիտակցել հում-

քի անհրաժեշտությունը: Որպես վառ օրինակ վերցնենք բամբակը: Թուրքիան և Պարսկաստանն ունեն բամբակի մշակման համար բարենպաստ հողեր, որոնք մնացել են անմշակ, էլ չենք խոսում հացահատիկի չմշակված հողատարածքների մասին: Բրիտանիայի կառավարությունը մեծ գումարներ է ներդնում բամբակի մշակման գործում՝ Լանքաշիրի պահանջները բավարարելու համար: Բերրի հողերը խոպան թողնելը, պարզապես կխթանի դժգոհությունը արևմուտքում:

2. **Շահագործումը**

Թուրքիայում զիջումների հետ կապված արդեն որոշակի առաջընթաց կա, որը սատարում են գերտերություններից յուրաքանչյուրը, և այդ միջամտությունը կշարունակի զարգանալ երկրաչափական պրոգրեսիայով: Վերը նշված երկու չափանիշները լավ պատրվակ են Պարսկաստանի ներքին հարցերին միջամտելու և երկիր ներխուժելու համար:

3. Բնակչության միատարրության խնդրի հարցում աջակցելով Պարսկաստանին՝ մոռանում են, որ դրա կարիքն ակնհայտորեն զգացվում է հենց Թուրքիայում:

4. Գերիշխանության տակ գտնվող ազգերի բարեկեցությունը: Այս փաստը ուշադրության է արժանի հենց Թուրքիայի առումով, ոչ թե Պարսկաստանի:

5. Իշխող ազգի բարեկեցությունը: Սա շատ քիչ է ուսումնասիրված: Կարևոր է հիշել, որ վերջնակետը ոչ միայն տառապանքը նվազեցնելն է (որի ազդեցությունը հիմնականում կզգացվի ճնշվածների վրա), այլև բարոյականության, մշակույթի և բարեկեցության բարձրացումը, որոնք ճնշողների կյանքը կբարելավեն առնվազն նույն չափով:

6. Հին նվաճումների արդյունքում ձեռք բերված իրավունքը, սեփականության և չգրված օրենքի պահանջը կարող են դիտվել որպես անկախության հաստատման պահանջ: Սակայն կարելի է ասել, որ այս իրավունքը հնացել է, գործածությունից դուրս է մնա-

ցել, եթե հաշվի առնենք գերտերությունների գործողությունները վերջին շրջանում, օրինակ Տրիպոլիում, Բոսնիայում, Պարսկաստանում, Չինաստանում, էլ չնշենք, թե ինչպես էին հավանության արժանացնում Բալկանյան երկրներում նախահարձակ լինելու և բռնության դրսևորումները:

Թուրքիան և Պարսկաստանը անկախությունը պահպանած իսլամական եզակի պետություններ են, և նրանց պահպանումը մեծապես շահավետ է: Վերջին իրադարձությունները բոլորն էլ՝ առանձին-առանձին նոր եզրահանգումների առիթ են տալիս: Նրանք նաև դուրս են մղել հայտնի փորձագետների տեսակետները, քանի որ այդ դեպքերը հակասում էին մտքի տրամաբանական ընթացքին: Փորձագետները, բացառությամբ Էդվին Փիըրսի, մեզ համար հետաքրքրություն ներկայացնող հեղափոխություններից հետո չեն բարձրաձայնել իրենց կարծիքները:

Պարսկաստան

Առաջինը պետք է դիտարկվի Պարսկաստանի հարցը, որովհետև այն իսկապես ազգային պետություն է, և ոչ թե պարզապես կայսրություն: Ուստի, եթե միջամտությունն ընդունելի է Պարսկաստանի վերաբերյալ, ապա այն նախ և առաջ ընդունելի է Թուրքիայի առումով: Այսպիսով՝ պարսկական սահմանադրական շարժումը համահունչ է Ռուսաստանի գործողություններին: Դրանք առնչվում են նաև մեր հիմնական խնդրին, քանի որ իրենց ազդեցությունն են թողնում հայ ազգի վրա, իսկ Պարսկաստանում բնակվող հայերը բավական զոհ են, բացի այդ հենց Անգլիայի գործողություններն են Թուրքիայում նպաստում, որ Ռուսաստանն իր գործունեությունն իրականացնի պարսկական կողմում: Ի՞նչ կարող ենք ասել «ազգային շարժման» մասին Պարսկաստանում: Փաստ էր, որ այդպիսի թույլ խորհրդարանում խորհրդարանականների ուժը թե՛ հեղափոխական և թե՛ պատգամավորական առումով, տեղիք էր տալիս ամենացինիկ զարմանքի: Հայ Եփրեմն ու պարսիկ Թաքիզադեն ցուցաբերեցին ուժի ու հանրային ոգու տարրեր, որոնք այլ կերպ լույս աշխարհ չէին գալու: Պատգամա-

վորներն իրենք իրենց ուշադրությունը ստիպողաբար ուղղեցին բարոյական խնդիրների վրա, որոնք կառավարությանը չէին էլ հետաքրքրում: Օրինակ, բացահայտվեց անհայտ ու անօրինական գործերի և շանտաժի խրախուսումը Թեհրանի ոստիկանության կողմից: Մեկ ուրիշ դեպքում, դատական գործ էր հարուցվել կառավարիչներից մեկի նկատմամբ, որը հարստացել էր պարսիկ աղջիկներ առևանգելով, նրանց ռուսական սահմանն անցկացնելով ու թաթար առաջնորդներին վաճառելով: Սրանք օրինակներ են: Այստեղ դրանք մանրամասնելու տեղը չէ: Մեջլիսում քննարկված դեպքերի պատճառած ողջ ուրախության ավարտից հետո առաքելության ներկայացուցիչները փորձեցին հավաստիացնել, որ պարսկական խորհրդարանական վարչակարգի շնորհիվ էր, որ այդ ծայրահեղ ոգևորությանը վերջ էր տրվել: Հենց մոլլաները, որոնք խորհրդարանի հիմնական գործող անձինք էին, ժամանակի ընթացքում կորցրել էին իրենց ժողովրդականությունն ու անկախությունը: Նույնիսկ շատացել էր կրոնափոխ եղած ու քրիստոնեություն ընդունած մուսուլմանների թիվը:

Մյուս կողմից էլ վիճելի է, որ մարդիկ, որոնք լավ կազմակերպիչներ են, և անգամ ռազմիկներ, սկսում են մտածել միայն սեփական շահի մասին, երբ իշխանության են հասնում, տարածված հատկանիշ, որը բնորոշ է եղել մարդու բնույթին բոլոր հեղափոխությունների ժամանակ: Պարսիկների մեջ հանդիպող մյուս բացասական երևույթը, որն ինձ բացատրեց նախկին շահին առնչվող աջ պահպանողական ղեկավարներից մեկը, այն է, որ ազգային շարժումներն ու խռովությունները հնարավորություն են ընձեռել ռուսներին Պարսկաստան մտնելու: Սահմանադրությանը սատարող շատ եվրոպացիներ նույնպես այժմ հոռետես են դարձել: Նրանց կարծիքով՝ շահերի և նրանց ծախու կամակատարների ինքնակալությունը, թեև չեն հասնի Մուհամեդ Ալիի կամ Շուաես սուլթանի մակարդակին, դեռևս առկա է, և ակնկալվում է, որ առանձին անհատների եռանդի շնորհիվ է հասարակական կարգն ու կանոնը դեռ մի քիչ պահպանվում: Հասարակ մարդիկ անվտանգություն են հայցում միայն գողերից ու մարդասպաններից: Կրթված խավերը նույնպես հույս չունեն այն ստանալ ա-

ռանց արտաքին միջամտության: Անգամ անգլիացի վաճառականներն են սկսում ողջունելի համարել դա, եթե Ռուսաստանն իրականացնի վերահսկումը՝ առանց ներմուծման հարկի: Ամենահուսալի տվյալները երևում են Շվեդիայի ոստիկանության սպաների նկատելի հաջողությունների մեջ, որոնց աշխատանքը ևս կախված է Բելգիայի մաքսատան աշխատակիցներից, և այս ամենը իրենց իշխանության տակ պատշաճորեն պահելու կարևորությունից:

Կառավարության կազմի մասին կարելի է դատել՝ ելնելով նրա իսկ ընտրած կառավարչի կերպարից: Աչքի զարնող և, իհարկե, վատահամբավ մեկն է Շուջահ-Էդ-Դովլահը, որի ընկերակցությունը վայելել եմ Թավրիզի նրա տանը: Մենք նստեցինք մի գեղեցիկ սենյակում, որի արևմտյան կողմը նայում էր զառիվայր իջնող պարտեզին: Շուջահը բռնի ուժով խլել էր տունը մի հարուստ պարսիկից, և ինձ չզարմացրեց, որ պատշգամբի տակ փռված բաց մանուշակագույն ծխածաղիկներով լի պարտեզը իր լողավազանով, մի սքանչելիք էր: Այժմ նա ծեր է, շատ ծեր, և իրեն լավ է զգում, երբ մարտական կեցվածք է ընդունում: Նա փաստարկներ է բերում, սակայն նրա բերած փաստարկները երբեմն հակասում են նրա արարքներին:

Խորհրդարանական փորձը, որ անասելի դժվար պայմաններում էր ձեռք բերվում, ոչ մի դեպքում չէր կարող անարդյունք մնալ: Ռուսաստանի քաղաքականությունը այդ ժամանակ հատկապես թշնամական էր: Անգլիան այնքան էր տարված Գերմանիայի հետ իր հարաբերությունների վիճակը բարելավելով, որ որևէ ջանք չէր էլ գործադրում պարսկական հարցի հետ կապված: Միակ բանը, որ կարելի է հաստատ ասել, այն է, որ ազգային ժողովը արժանի էր դատարանի առաջ կանգնելու, սակայն չկանգնեց: Դիվանագիտությունը միահյուսված է ավանդույթներին, ինչն էլ բարդացնում է դատավարության գործը: Պարսկաստանի ու Թուրքիայի պես թույլ երկրներում այս կամ այն մտերիմ պետական գործչին գաղտնի օժանդակություն ցուցաբերելու համար դատավարությունը այնքան է երկարաձգվում, որ այն իրապես վնաս է հասցնում պետական ի-

ռավակարգին: Այն հակասում է ինքնահարգանքի գաղափարին, առանց որի ոչ մի ազգային կառավարություն չի կարող ուժեղ լինել: Բայց ավանդույթները կարող են ժամանակին զուգընթաց քայլել, և երբ այդ ժամանակը գա, մոռացված հույսերն ու թույլ պետությունները ավելի մեծ հնարավորություններ կունենան:

Թուրքիա

Թուրքիայի նոր իրավակարգը, որը նույնքան հակասական է, որքան և նրա անցած խայտաբղետ ուղին, գոյատևել է մասամբ այն պատճառով, որ թուրքերն ավելի տոկուն են, քան պարսիկները: Նրանք հիմնականում խնդիրներ են ունեցել 1878 թ. գերտերությունների հանձնարարությունը կատարելիս՝ եվրոպական ծայրամասերն իրենց ձեռքը վերցնելու անհիրագործելի նպատակի պատճառով: 1913 թ. դրանց կորուստը նոր Թուրքիային հաջողությունների հասնելու հնարավորություն ընձեռեց: Երիտթուրքերը թշնամիներ ձեռք բերելու հակում ունեն. սա առկա է ոչ միայն մարդասիրություն քարոզողների, այլև թուրքամետների մեջ, քանի որ վերջիններս ստատուս քվոյի կողմնակից են և, թուրք լինելով հանդերձ, տանել չեն կարողանում բարեփոխումների կողմնակիցներին: Երիտթուրքերի քննադատների անողոքությունը ստիպում է երիտթուրքերի համակիրներին բաց չթողնել նրանց վաստակի մասին գնահատանքով խոսելու հնարավորությունը:

Երիտթուրքերի քրիստոնյա ենթակաները հատուկ պատճառներ ունեն նրանց ավելի վտանգավոր համարելու, քան Աբդուլ Համիդին, բայց սեփական անվտանգությանն ու ազատությանը ձգտող Եվրոպան համոզված չէ, որ երիտթուրքերը լիովին ձախողվել են:

Փորձեմ լուսաբանել Հայաստանում շրջագայելիս կատարած հնարավոր հետազոտության արդյունքը: Ես 1907 թ.-ից (Սահմանադրությունից մի տարի առաջ) ի վեր թուրքական շրջաններին ժամանակ չեմ հատկացրել, և հակադրությունն ապշեցուցիչ է: Խնդրահարույց մարդիկ, որոնց մի ժամանակ անհնար էր հանդիպել, այժմ անմիջականորեն հաղորդակցվում են արտասահմանցիների հետ և ան-

գամ զրուցում բաց վայրերում առանց վախի: Արագ տեմպերով կառուցվում են դպրոցներ ու խմբակներ, նույնիսկ սարսափազդու դաշնակցականների խմբակներ: Հարկերը նախկին անմարդկային ձևով չեն գանձվում. նախկինում վերցնում էին վերջին վառելիքը և անգամ անկողնային հիվանդի անկողինը: Գյուղերում հայերի ոստիկանական պահակախմբեր են նշանակվել: Շատ փողոցներում կարելի է մեքենա վարել առանց պահակախմբի հանդիպելու: Նույնիսկ անհնազանդություն քարոզողներին ուղղված նամակները ժամանակին են տեղ հասնում: Մեծ առաջընթաց կա կրթական ոլորտում: Զորագնդերի մեծ մասը քրիստոնյաներ են, իսկ հրետանավորները հիմնականում հայեր: Թերթերում քննադատում են կառավարությանը: Ամենակարևորը՝ ճանապարհորդությունը թույլատրվում է առանց անձնագրի: Հայաստանում դպրոցական հարցերով զբաղվող տեսուչին դպրոցներ այցելելիս ոստիկանական պահակախումբ է ուղեկցում: Կարելի է նաև հանդիպել ռուսաստանաբնակ հայերի, որոնք զբոսնում են իրենց հաճույքի համար, լուսանկարում և նշումներ անում տեղի հնագիտական հուշարձանների մասին: Սակայն շատ քրիստոնյաներ պնդում են, որ այս հուսադրող նշանները ոչ միայն բացասական են ու տագնապահարույց, այլև իրավիճակի նման փոփոխությունը շատ ավելի վատ է, քան առաջ էր: Վատ է այն առումով (հեղափոխությունից հետո քրդերը վախենում են հնարավոր պատժից և դադարել են հանցանքներ գործել), որ ճաշակելով ազատության համը, հետո կորցրել են այն: Շատ ավելի վատ է այն իրողությունը, որ երիտթուրքերն ավելի խելացի են, քան իրենց նախորդներն էին և հենց այդ պատճառով էլ մշտապես նրանց ենթակայության տակ գտնվելը առավել վտանգավոր է, իսկ քրդերը, որոնք սարսափում են բարեփոխումներից, ավելի աչալուրջ են ու ակտիվ: Հայկական արտագաղթն այդ պատճառով ավելի մեծ ծավալների է հասել, և ազգային հարցն էլ վտանգված է:

Ականատեսը, որը փնտրում է «պե՞տք է արդյոք, որ Եվրոպան միջամտի» հարցի պատասխանը, կարող է հանգիստ հանգել թե՛ մեկ, թե՛ մյուս պատասխանին: Խնդրի վերաբերյալ երկու տեսակետներն էլ կարող են արդարացի համարվել, հատկապես Թուր-

քիայում ճանապարհորդողի համար, որտեղ ամենատարօրինակ երևույթներից մեկն էլ լավի ու վատի համատեղ գոյությունն ու հերթագայությունն է: Խաղաղության տեսարաններին, որոնք ամենուր ուղղված են կարգուկանոն հաստատելուն, անմիջապես հաջորդում են քաոսային անապահովության ապացույցներ: Գյուղացիներն այնպես են բողոքում ոստիկաններին, թե վերահսկիչները վերցրել են իրենց հացահատիկն ու հրաժարվել վճարել, որ կարծես արդարադատության համակարգի բոլոր լծակները նրանց ձեռքում են. հաջորդ պահին ոստիկանը նրանց գետնին է փռում ու մտրակի հարվածների տարափի տակ առնում, թվում է, թե դա ոստիկանների սովորական զվարճանքն է: Համակարգ չկա, կա միայն առավելություն ունեցող խավերի քմահաճ ազատություն: Այսպիսով, քանի դեռ ականատեսը մանրամասն տեղեկացված չէ և մարդկանց ճանաչելու հնարավորություն չունի, նա ստիպված է վտանգներով լի փորձությունների միջով անցնել, որպեսզի թուրքական իրավակարգՆ անկեղծորեն պաշտպանի կամ դատապարտի նրան, թեև որոշ փաստեր, այնուամենայնիվ, խելամիտ քննադատին արգելում են ձեռնպահ մնալ որոշում կայացնելու հարցում:

1. Հայերը, որոնք բարյացակամ դիրքորոշում ցուցաբերեցին երիտթուրքերի հանդեպ նրանց փայլուն պետական հեղաշրջման ժամանակ և աջակցեցին նրանց Անգլիայում ու Ֆրանսիայում, այժմ տեսնում են, որ իշխանության գլուխ անցնելով՝ նրանք հրաժարվել են առաջադեմ գաղափարներից և իրենց մեջ վերակենդանացրել նախորդ կառավարության մտածելակերպին ներհատուկ այլատյացությունը: Երիտասարդ Թուրքիան այն հույսն էր փայփայում, որ Ասիական Թուրքիայում իրենք ամենաակտիվ մրցակիցը լինեին:

Եթե բարեփոխողները կարողանային իրականացնել դա և չենթարկվեին այն մոլեռանդներին, որոնց զայրացնում է քրիստոնյայի դեմ գործած հանցանքի համար մուսուլմանի կրած պատիժը, մի կողմ դնեին հայերի հանդեպ իրենց ունեցած ազգային խտրական վերաբերմունքը, և դաշնակցեին նրանց հետ, ապա կպահպանեին իրենց իշխանությունը մյուս բոլոր ազգերի վրա, ներառյալ քրդերի,

և կխուսափեին Եվրոպայի միջամտությունից: Հայերի մի ստվար զանգված կա, որը, հուսադրված, դեռ փորձում է բարեփոխումների հարցում լուծում գտնել: Բայց դիրքորոշումների տարբերությունները՝ ժողովրդավարականն ընդդեմ ֆեոդալականի, մտավորն ընդդեմ մոլեռանդության զարգացման ճիշտ ընթացքի հեռանկարը գործնականում զրոյի է հավասարեցնում: Թուրքերը, մերժելով հայերի օգնությունը, շարունակում են քաղաքական առումով դատապարտված մնալ իրենց ընտրած ուղուն:

Թուրքական քաղաքականության մեջ այլ ապշեցուցիչ առանձնահատկություններ էլ կան:

2. Քրդամետ քաղաքականությունը շարունակվում է: Քրդերը, որոնք կառավարությանն են ծառայում, իրենք են բողոքում իրենց հայրենակիցներին ընձեռված արտոնությունների դեմ: Կառավարության համար աշխատող մի քուրդ, որ ոստիկանությունում էր ծառայում, հաճելիորեն զարմացրեց իր անկախ մտածելակերպով: Որպես ուղեկցորդ մեզ ընկերակցելիս՝ նա այսպես լուսաբանեց իր տեսակետը. «Նայեք այդ գյուղին: Ես կարող էի գնալ այնտեղ և ըսպանել տասնյակ մարդկանց: Ո՞վ կպատժեր ինձ: Ես քուրդ եմ»:

Չորս զաբթիեներ ուղեկցում էին հատուկ փոստատար վագոնը: Քրդերի երկրամասն անցնում էին գիշերով, միայն թե մնացել էին առանց հրացանների: Նրանք վերադարձան տուն, նորից զինվեցին և, այնուամենայնիվ, կրկին կողոպտվեցին: Նույնը տեղի ունեցավ նաև հաջորդ անգամ: Կատակասեր բնակիչներն ասում էին, թե դա սովորական բան է դարձել, իսկ կառավարությունը խնդրին հետաքրքիր լուծում տվեց՝ շարունակել պահակախմբեր ուղարկել, բայց չզինված:

Մեր այցից առաջ Վանում մի քուրդ բռնաբարել էր իննամյա աղջկա: Հյուպատոսներից մեկն օգնել էր, որ գյուղացու հայցը տեղ հասներ: Նման վարքի համար քուրդը կալանավորվեց մի քանի օրով, այնուհետև նրան ազատ արձակեցին:

Այս ամենը համեմատաբար ոչինչ է: Ամենակարևոր հարցը ջարդերի օրերին հողատարածքների բռնազավթումն էր քրդերի

կողմից: Այսպես կոչված «սահմանադրական» կառավարման անցնելուց արդեն հինգ տարի է անցել, բայց այդ մեծամասշտաբ բռնազավթումը չի փոխհատուցվել: Անհեռատես մի հայ, դիմելով դատարանին, ստացել էր դատական որոշումը, որն այնուհետև ներկայացրել էր այն քրդին, որը զավթել էր իր հայրական ագարակը: Վերջինս հային սպանելու առիթը, իհարկե, բաց չէր թողել, իսկ թուրք դատավորին, անկասկած, զվարճացրել էր քրդի այս «կատակը»:

Ամեն առավոտ Ռուսաստանի հյուպատոսարանը կարելի է շրջապատված տեսնել անձնագիր ստացողներով: Ինչպես նրանք են ասում, քրդերի կյանքը, այդքան էլ լավ չէ, և գյուղացիները մեկնում են Ռուսաստան կամ Ամերիկա: Իգդիրում, հենց Թուրքիայից դուրս գալիս, մենք շատ փախստականներ տեսանք: Մի կին, որի կրտսեր երեխան հինգ տարեկան կլիներ, ամուսնուն կորցրել էր 1908 թ. ջարդերի ժամանակ: Ավելի ուշ մի քուրդ կրակի էր տվել նրա հարևանի տունը, որից հետո նա և եղբայրը որոշել էին հեռանալ: Մենք նրանց հարցրինք, թե որքա՞ն ժամանակում են նրանք (չորս երեխաների հետ միասին) ոտքով քայլել իրենց գյուղից դուրս գալուց հետո, այն գյուղից, որտեղից մենք այդտեղ էինք հասել չորս օրում: Նրանք ասացին՝ տասնհինգ օրում:

Թուրքերը, որոնց համար լուրջ խոչընդոտ է իրենց իսկ անկիրթ մասսայի մոլեռանդությունը, չունեն այն զորությունը, որ թույլ չտան, կանխեն հանցագործությունները: Նրանց թերությունը, սակայն, միայն մասամբ է բացասական. կառավարության որոշ գործառույթներ նրանք չեն կարող, իսկ որոշներն էլ՝ չեն ցանկանա իրագործել: Բայց այդ թերությունը նաև դրական կողմ ունի՝ քրդերին նրանք ապահովում են ժամանակակից զենքերով, իսկ հայերը նույնիսկ պաշտպանություն էլ չեն խնդրում: Նրանք միայն բողոքում են, որ թույլ չի տրվում, որ իրենք իրենց պաշտպանեն: Գայլերն ու արջերը կարող են ապրել նույն բլուրներում, անգամ նույն վանդակում, առանց իրար վնաս հասցնելու: Բայց այս դեպքում արջը ետ է քաշել իր ճանկերը: Քանի դեռ արջը չի կարողանում ճանկերը գործի դնել, գայլի ժանիքները ավելի են սրվում: Թե ինչ է այս ամենը

նշանակում, օտարերկրացու համար դժվար է հասկանալ: Մի երկու անգամ իրականությունը բացել է աչքերս:

Բեռնատար ձիով ճամփորդելիս գալիս է մի պահ, որն առանձնահատուկ հմայք ունեցող խաղաղություն է բերում: Դա այն պահն է, երբ վաղ արշալույսին մարդիկ վերցնում են բեռդ ու մի անվերջանալի դանդաղկոտությամբ դնում թամբին: Նրանք կարող են բողոքել, որ դու ուշացել ես, իսկ դու կարող ես ասել նույնը նրանց մասին՝ կանխատեսելով այն թշվառ վիճակը, որում կհայտնվես, երբ մայրամուտից հետո մթին միայն կհասնես ինչ-որ մի կեղտոտ հյուղակի, սակայն ոչ մի կերպ չես կարողանա նրանց ստիպել, որ ավելի արագ շարժվեն, իսկ եթե ավելի խելամիտ գտնվես, ապա նորից կնստես սենյակումդ ու կծխես: Տարօրինակ պահը քեզ կպարգևի արտակարգ անդորր: Այդ պահը եկավ, երբ հասանք մի վայր, որի անունը չեմ տա: Փոքրիկ սենյակում նստած էի կրթված մի հոգևորականի հետ: Զրույցն ընդմիջվեց լռությամբ: Ես ծխում էի լուռ, իսկ նա մահճակալին նստած, որը ծառայում էր նաև իբրև աթոռ, հենվել էր սեղանին՝ կզակը ձեռքերին հենած: Կողքից նայելով՝ զննում էի նրան, սենյակի ծայրահեղ պարզության մեջ նա ավելի բանաստեղծական էր թվում: Երանավետ անդորրի պահը հիշեցնում էր Ուիսլերի[73] «Մայրը» նկարի տեսարանը: Մերկ հողածեփ պատի գույնը հիշեցնում էր նկարի դարչնագույն պաստառով ծածկված պատը: Քահանան նայում էր դեպի պատուհանը, որն իմ աջ կողմում էր: Պայծառ լույսի տակ նկատեցի, որ այս մարդն իր կարճ բեղ ու մորուքով Քրիստոսի որոշ պատկերներ էր հիշեցնում: Երբ լուռ նստած էինք քահանան ինքնամոռացության մեջ խորը հառաչեց: Հետո մի պահ ինձ թվաց, թե ես հասկացա հայի տեսակետը, նրա աշխարհը, որտեղ անցնում են նրա ծանր օրերը, մինչ մենք առաջ

---

73 Ջեյմս Աբբոթ Մըքնիլ Ուիսլերը (1834-1903), ծնունդով ամերիկացի, բայց գլխավորապես բրիտանաբնակ հայտնի նկարիչ էր, որն առաջնորդվում էր *արվեստն արվեստի համար* սկզբունքով: Հեղինակն այստեղ մտովի վերականգնում է նկարչի՝ 1871 թ. ստեղծած հայտնի յուղաներկ կտավը, որտեղ դարչնագույն ֆոնի վրա պատկերված է նկարչի սևազգեստ մայրը:

էինք շարժվում մեր՝ հավանության արժանի ճանապարհով՝ մեր հաճույքների, մեր կատարյալ անվտանգության և հնարավորինս շուտ քաղաքակրթություն վերադառնալու մեր հեռանկարի ակնկալիքով: Չորս տարի առաջ թուրքական զորքը գրավեց հենց այս գյուղի եկեղեցին: Քահանային ուղարկեցին իր ցաք ու ցիր եղած հոտը հավաքելու, որպեսզի կազմակերպի բլրի շուրջ եղած հայկական գյուղերի պաշտպանությունը: Երեկ նա թաղել էր մի գյուղացու, որին քրդերը սպանել էին, թողել խոշտանգված ընկած, մինչև որ պատահաբար գտան նրան: Քրդերը, որոնք կառավարության սիրելիներն էին, ամեն օր բռնի մտնում էին նրա համագյուղացիների տները: Դե, ո՞նց կարող է մարդ չուզենա այդ տները տեսնել: Բայց,իհարկե, վախենում էինք, որ մեր այցելությունը կարող էր անախորժությունների պատճառ դառնալ գյուղի հոգևորականների և անձամբ այս մարդու համար: Նա ասաց. «Ի՞նչ ունենք մտածելու, նրանք մեզ հետ ավելի վատ չեն կարող վարվել, քան արդեն վարվում են»:

3. Թուրքական չարիքի համեմատաբար դրական կողմը, որն աչքի է զարնում մուսուլմանական բնակավայրերին առնչվող քաղաքականության մեջ, մուսուլման *մոհաջիրների*[74] վերաբնակեցումն է քրիստոնյաների մեջ՝ կարգ ու կանոն հաստատելու ու պահելու նպատակով: Խնդրի ողջախոհ լինել-չլինելը թուրքական շրջանակներում շատ բանավեճերի առիթ էր տվել: Դրա մեծագույն ջատագովը պայծառամիտ դոկտոր Նազիմ Բեյն էր Սալոնիկից, որին հաջողվել էր համոզել, որ 1910, 1911 թթ. բոսնիական մուսուլմաններին վերաբնակեցնեն: Երկու սերունդ առաջ չերքեզներին ռուսական իշխանությունն էր տեղաշարժել Կովկասից դեպի Եվրոպա ու Ասիա՝ նույն կարգավիճակով:

---

74 Մուսուլման վերաբնակիչ, ունի արաբական ծագում, հիմնականում գործածվել է, երբ հնդկական վերաբնակիչները հաստատվել են նոր կազմավորված Պակիստանում:
Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/Muhajir_people), (համացանցից դուրս է բերվել 17. 04. 2017):

Սրանցից ոչ մեկն էլ հաջող ավարտ չունեցավ: Չերքեզները 1876 թ. ակտիվ մասնակցել էին Բատակի[75] ջարդերին, որի արդյունքը Թուրքիայի համար չորս ծայրամասերի կորուստը եղավ: Աղքատ բոսնիացիները երկար չապրեցին իրենց նոր տներում, որոնց մի մասը նրանց համար հենց նոր էր կառուցվել անջրդի տարածքներում: Ես տեսել եմ այդ լքված գյուղերը 1912 թ., երբ բոսնիացիները, բուլղարական բանակի մոտենալուն պես շտապ հեռացել էին Բոսնիայից էլ ավելի հեռու: Այդ վերաբնակեցման մեթոդի թարմ տարբերակին պատահաբար ծանոթացանք Հայաստանում: Քրդերի մի մեծ խումբ, որոնք դեմ էին Պարսկաստանում ռուսների հաստատած կարգ ու կանոնին, դեպի Ուրմիա լիճ կտրել անցել էին թուրքական սահմանը, որը հենց նոր էր հաստատվել, որպեսզի կասեցներ թուրքական զորքերի անօրինական տեղաշարժերը Սալմաստի մոտ: Մեզ հանդիպեցին բազմաթիվ քուրդ ընտանիքներ, որոնց բնակեցրել էին հայկական գյուղերում, իսկ հայերը, որոնց դուրս էին հանել իրենց տներից, ապաստան էին գտել գյուղի մյուս տներում: Մյուս հայ գյուղացիներից պահանջել էին կոնկրետ ժամկետում իրենց տներն ազատել քրդերի համար, որոնք դեռ իրենց ամառային վրաններում էին ապրում: Դրանք սովորական կողոպուտի միջադեպեր չէին: Դրանք համակարգված ձևով կազմակերպում և իրականացնում էին իշխանությունները՝ վալին, գայմազամը, մուդիրը և զաբթիեն, և այդ կողոպուտներն ավելի աղմկահարույց էին: Այս

---

75 1876 թ. բուլղար ժողովուրդը զինված ապստամբություն է սկսում Օսմանյան կայսրության դեմ: Ի պատասխան այս գործողություններին, որոնք հայտնի են Ապրիլյան ապստամբություն անվանումով, Օսմանյան ուժերը համատարած կոտորածներ են իրականացնում բոլոր այն վայրերում, որտեղ բուլղար հեղափոխականները կենտրոնացրել էին իրենց ուժերը: Ամենամեծ դաժանությունները իրականացվել են Բատակում, որտեղ թուրքերը փակել են եկեղեցում և կրակի են տվել մեծ թվով երեխաների և կանանց: Տե՛ս Օսմանեան կայսրութիւն - «ԱԼԻՔ» օրաթերթ, երկուշաբթի, 25 մայիսի 2015:
Տե՛ս (www.alikonline.ir/pdf/itemlist/tag/Օսմանեան%20կայսրութիւն), (համացանցից դուրս է բերվել 10.04.2017):

երևույթը կիրառվում էր նաև այլ գյուղերում: Նահանգի մայրաքաղաքում լուրը միայն երեք շաբաթ անց էր հասել հյուպատոսներին, որոնք որևէ արտառոց բան չէին տեսել դրա մեջ: Վալին դա չժխտեց, բայց և միանգամայն անկեղծ արտահայտվեց համակարգի վերաբերյալ: Բացատրությունն այն էր, որ քրդերի համար այլ կերպ տուն գտնել հնարավոր չէր: Տեղեկատվություն ձեռք բերելու աղբյուրները հյուպատոսների համար տեղացի թարգմանիչներն էին, որոնք թվում էր թե ուռճացնում են դեպքերին առնչվող փաստերը, որոնք ավելի շուտ քաղաքական ուղղվածություն ունեին, քան սոսկ քրդական կամայականություններ էին: Եվ, այնուամենայնիվ այս վիլայեթը համարվում էր ամենախաղաղը:

4. Ըստ հայերի՝ սա ամենալուրջ մեղադրանքը չէ: Նրանց մտածողության վրա բնականաբար, անջնջելի տպավորություն են թողել փաստացի ջարդերի հիշողությունները, և մենք պարտավոր ենք հաշվի նստել դրա հետ, որովհետև, դժբախտաբար, 1908 թ. Սահմանադրությունը վերջ չդրեց դրան: Այն փաստարկը, որ նոր վարչակարգի օրոք նման դեպքեր տեղի չեն ունենա, սին է ու անհավատալի: Հիմա այդ փաստը հասկանալու համար կարիք չունենք վիճակագրական տվյալներ կամ հյուպատոսների հաշվետվություններ կարդալու: Բավական է լսել նրանց, ովքեր դա իրենց մաշկի վրա են զգացել:

Անշուշտ շատ-շատ են նրանք, ովքեր մեծ ջարդերի ականատեսն են եղել, բայց առանց թարգմանիչների, որոնց հայերը մեծ հավատ են ընծայում, ոչ մի բանի մասին հնարավոր չէ իմանալ: Երբ մենք բարեկամաբար զրուցում էինք չորսամյա մի անուշիկ երեխայի հետ, նրա հայրը ցածրաձայն ինչ-որ բան ասաց մեր թարգմանչին: Ես հետաքրքրվեցի, թե ինչ ասաց նա: Թուրքերի կամ նրանց պատճառած անախորժությունների մասին ոչ մի բառ չէր ասվել, և ես ապշեցի, երբ իմացա, թե նրա մտքով ինչ էր անցել: Նա ասաց՝ ջարդերի ժամանակ այս տղայի նման հազարավորներն են սպանվել:

Երբ մի հայկական տուն մտանք, ապշեցինք՝ տեսնելով ծեր տանտիրուհու հմայիչ ու հուսադրող դեմքը, սակայն խոր հիասթափություն ապրեցինք, երբ հասկացանք, որ նա սառն էր ու տխուր և խուսափում էր զրույցից: Մեզ ոչ մի կերպ չէր հաջողվում նրան ստիպել ժպտալ: Մեր անկյանք սենյակում ճաշից հետո մի գավաթ շոկոլադ խմելու ցանկություն առաջացավ, և տանտիրուհին չմերժեց մի գավաթ խմել մեզ հետ միասին: Տանտիրուհին ամեն կերպ աշխատում էր տեղը տեղին սպասարկել մեզ՝ մատուցելով նաև տաք ջուր, դե ասենք, որ ուրիշ բան էլ չուներ հյուրասիրելու, և նրան դուր եկավ, որ հիմա էլ մենք էինք փորձում նրան սպասարկել մեր թեյի զամբյուղներից ինչ-որ բաներ դուրս բերելով: Մեր լեզուների գիտակը փորձեց նրան ներքաշել ընդհանուր զրույցի մեջ: Դա հաջողվեց, երբ ես նրան հարցրեցի իր երեխաների մասին և, թե ինչու է նա մենակ: Նրա դուստրը վերջերս ամուսնացել էր ու մեկնել: Հիմա նա մի հեռավոր քաղաքում էր և հիվանդ: Ընդամենը քսան տարեկան: Դա նրան հիշեցրեց 1895 թ. ճակատագրական օրերը, և, քաջալերվելով, մի ումպ արեց իր շոկոլադի գավաթից ու ինքնամոռացության մեջ ընկնելով՝ սկսեց պատմել ջարդերի մասին: Այն ինչ զբաղեցնում էր նրա միտքը և նրա լուռ թախծի պատճառն էր, այժմ նրան պերճախոս էր դարձրել: Տեսարանը կլանիչ էր. սև գլխաշորի մեջ շրջանակված կանոնավոր դիմագծերով ծեր կին ու խենթացնող ձայն՝ սենյակի դաժան պարզության մեջ: Ռեմբրանտը հրաշալի դիմանկար կստեղծեր…

Տեսնես տեսե՞լ էր, ինչպես են մարդկանց սպանել:

-Մենք ճիչեր լսեցինք ... և զգացինք, որ ամենուրեք տարածվել էր այրվող մարմինների հոտը:

Իսկ որտե՞ղ էին եղել կինն ու նրա երեխաները: -Ես այստեղ էի, բայց ոչ տան մեջ, տունը մինչև վերջ այրվեց: Անգլիական փողն օգնեց այն հետո վերակառուցել: Նրանք ջարդեցին դուռը… ինձ հաջողվեց երեխաների հետ փախչել ետևի դռնով:

-Գիշե՞ր էր:

-Օր ու գիշեր չկար, օրերով չէինք քնում:

-Տանը մարդ մնացե՞լ էր:

-Այնտեղ մարդկանց մի մեծ խումբ էր պատսպարվել: Շատ աղջիկների, նաև տղաների ջոկեցին, տարան: Նրանց այլևս չտեսանք:

Հիշեցի «Ծովը գնացող հեծյալները»[76], և թե ինչպես էր մայրը կուրծք ծեծում իր զավակի համար:

-Այդ ամենը տեսնելուց հետո մենք չենք կարող հավատալ Ձեր ասածին, որ թուրքերը բարեփոխվող են:

Հիշելով Ադանան ու այն տխուր փաստը, որ նույնը տեղի է ունեցել երիտթուրքերի օրոք՝ մենք լռեցինք:

Կա արդյոք հույս, չնայած այս փաստերին, որ համբերությունն ու ժամանակը կնպաստեն, որ սերմերը ծառ դառնան և ցույց տան, որ Թուրքիայի անկախության կոչերը արդար են: Վախենում եմ՝ ոչ: Նրանք ովքեր ապրում են այս հույսով գիտակցաբար ընկել են ինքնախաբեության գիրկը: Ազգությունների այս խառնաշփոթ վիճակից ելնելով՝ կարծում ենք օգտակար կլիներ, որ թուրքերն ու հայերը միասին գործելով, Փոքր Ասիան վերածեին մի վերակենդանացած պետության, բայց դա սին երազանք է: Թուրքերի հոգեկան անկատարությունը, կարևոր չէ դա կրոնով է պայմանավորված, թե խառնվածքով, խոր արմատներ ունի: Այն իր մեջ միշտ կրել է երեք ճակատագրական հատկություն.

1. Կրթության բացակայություն. նույնիսկ, կառավարական ու հասարակական քաջալերանքի պայմաններում Ռուսաստանի թաթարները անկիրթ են մնացել: Նրանցից մեկը մի անգամ ինձ ասաց՝ Bei uns ist kein Kultur[77]:

---

[76] Հեղինակները հայկական իրականությունը նմանեցնում է Իռլանդացի դրամատուրգ Ջորջ Միլինգթոն Սինջի (1871-1909) «*Riders to the Sea*» ստեղծագործության մեջ Կարիբյան կղզիներում գաղութացման ու բնակիչների ստրկացման իրավիճակին:
Տե՛ս (https://www.britannica.com/biography/J-M-Synge), (համացանցից դուրս է բերվել 04.04.2017):

[77] Bei uns ist kein Kultur - Մեզանում կուլտուրա չկա:

2. Կանանց նկատմամբ ճնշում գործադրելը և մարդկանց անընդհատ նվաստացնելը մնում են իբրև հարատև խոչընդոտ:
3. Իշխանատենչության ոգին անհաղթահարելի է երևում. իշխանության ձգտողների քանակը գերակշռում է առաջադեմ ուժերին:

Կառավարությունը կշարունակի գոյությունը, թե ոչ, մասամբ կախված է կառավարվողների որակից: Հայերը պատրա՞ստ են դառնալ քաղաքակիրթ: Բոլոր թերություններով հանդերձ, ամենայն հավանականությամբ, պատրաստ են: Մենք նշել ենք նրանց ոգևորությունը առևտրի և կրթության ասպարեզում, նրանց անպարտելի ճկունությունը, վերականգնվելու հզոր ներունակությունը, որ ամենայն հավանականությամբ ուրիշ ազգի համար բնութագրիչ չի կարող լինել: Նրանք ինքնավստահության պակաս ունեն, սակայն բրիտանական հյուպատոսներից ոմանք մեղադրում են հայերին ավելի շատ խենթ, անմտածված քաջություն ցուցաբերելու հարցում: Արտասահմանում նրանք գրավիչ տեսք չունեն, իսկ տանը նրանք ջլապինդ են ու ամրակուռ, գեղեցիկ կազմվածքով: Նրանց մեջ ապրողները նրանց համակրելի են անվանում: Այս ամենի հետ նրանց տառապանքը չափազանց մեծ է տանելի լինելու համար, իսկ նրանց առնչվող որոշումներ կայացնելը Եվրոպան անընդհատ ձգձգում է մինչև հարմար պահը գա: Դա վերաբերում է թե՛ մշակույթին և թե՛ տնտեսությանը, բայց ամենից առավել դա անձնական ու բարոյական անապահովության խնդիրն է: Այսպիսի ժողովուրդը, ոչ սովորական, սակայն բարձր օժտվածությամբ, արհեստականորեն ենթարկվում է մի իրավահամակարգի, որը հարմար չէ նույնիսկ վայրենիներին կառավարելու համար: Քիփլինգի տերմինով ասած՝ թուրքերը թերզարգացածների ցեղ են, այնպիսի մի տեսակ, որի վերացումը չի էլ զգացվի աշխարհում, քանի դեռ նրանք նույնիսկ իրենց սևագործ աշխատանքով էլ նպաստ չեն բերում աշխարհին: Քաղաքակիրթ ազգերի գոյությունը կարևոր է թե՛ իրենց և թե՛ ուրիշ ազգերի համար: Բայց կա նաև երրորդ դասը՝ քիչ են այն ազգերը, որոնք իրենց նպաստն են բերում արվեստներին ու մշակույ-

թին, այս ազգերին աշխարհը կորցնելու իրավունք չունի: Այն, որ հենց այս դասին է պատկանում հայ ազգը, աշխարհում շատերին հասու չէ: Պետք է իրավական առումով և ընդմիշտ դեն նետել այն գաղափարը, որ թուրքերը ներքին բարեփոխումների միջոցով կլուծեն հարցը: Համոզվել եմ վերջնականապես՝ տեսածիցս ելնելով: Եվ թող, բառիս բուն իմաստով, նզովյալ լինեն նրանք:

Գերտերությունների գործառույթները

Մեզ պետք չեն նրանք, ովքեր, քաջատեղյակ լինելով մեր քննարկած փաստերին, պնդում են, որ սա մեր գործը չէ: Ոչ էլ ճիշտ տեղն է հարցնելու, թե արդյոք այս տեսակետը հակասո՞ւմ է փիլիսոփայությանն ու կրոնին: Գործնական մարդկանց համար պատասխանը սոսկ մի պարզ փաստ է՝ հայ ժողովրդի կյանքի ձևավորման գործում Եվրոպան տարիներ շարունակ իր դերակատարությունն է ունեցել: Ճշմարիտ է, որ շարժառիթը հաճախ սեփական շահն է եղել, սակայն, ժամանակ առ ժամանակ առաջնորդվել են նաև ավելի վեհ մղումներով: Դա տեղի է ունեցել շնորհիվ այն բանի, որ այս հարցով հետաքրքրվածները առաջնորդվել են մարդասիրական զգացմունքներով, ազատության տենչով, կրոնական առաքելության մտահոգությամբ, և կամ Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում ապրող հայերի հետ անձնական մեծաթիվ ծանոթություններով:

Անգլիայում այս հետաքրքրվածությունը անսպասելի կարևորություն ունեցող արդյունքների է հանգեցրել: 1880 թ. թուրքական հարցը նոր կառավարություն բերեց իշխանության: 90-ականներին հայկական հարցը պառակտում մտցրեց լիբերալ-ազատական կուսակցության շարքերում և հանգեցրեց նրա ղեկավարի հրաժարականին: Պարոն Գլադսթոնն իր վերջին ելույթում կոչ էր անում գործողությունների անցնել ի նպաստ հայերի: Երբ իր տկարության

շրջանում նա Ռիվիերայում էր, անձամբ ուղերձ հղեց երիտասարդ անդամներին ու նորակոչիկներին հայկական հարցի առնչությամբ:

Հասարակական շարժման բռնկումները ոչ պատահականություն էին և ոչ էլ կուսակցության գաղափարախոսության գործիք, այլ հենց դրա արդյունքը: Այս ամբողջ ընթացքում այդ մարդասիրական մղումները շարունակական են եղել, և ահա այս հետաքրքրության ամենահավաստի ապացույցն այն է, որ ֆրանսիական առաքելություններն ու գերմանական կազմակերպությունները, շարունակելով իրենց կրթական ու որբանոցային գործունեությունը, մեծ աջակցության են արժանացել: Այս կարգի ամենանշանակալից ծառայությունը թերևս մատուցվել է Ամերիկայի կողմից, և հարկ է ընդունել, որ մասամբ ամերիկյան դպրոցների ու հիվանդանոցների շնորհիվ է կառուցվել է ներկայիս Հայաստանը: Անգլիայում այս հարցով զբաղվող մեծ թվով կազմակերպություններից առավել ուշագրավը Լեդի Ֆրեդերիկ Քեվընդիշի[78] ղեկավարած «Հայաստանի ընկերներ» կազմակերպությունն էր, որը յուրօրինակ համառությամբ էր աշխատում: Պարզ է, որ պատասխանատու քաղաքացիների մի ստվար զանգված գիտակցում էր ոչ միայն այն, որ այս սոսկալի դժբախտությունը մի տեսակ կոչ էր քրիստոնյա եղբայրներին օգնության հասնելու, այլև այն, որ բրիտանական կառավարության կողմից Թուրքիային հովանավորելու արդյունքում մի հսկայական պարտք էր գոյացել, որ դեռևս մարված չէր: Մի ամբողջ ազգ զոհասեղանին դնելն ու նրան բախտի քմահաճույքին թողնելը, մի հեռավոր վայրում առևտրով զբաղվող ու իրենց եվրոպական տներում ապրող բնակիչների են-

---

[78] Բրիտանացի արիստոկրատ, մինչև ամուսնությունը՝ Լուսի Լիթելթոն: 1864 թ. ամուսնանում է Լորդ Ֆրեդերիկ Քեվընդիշի հետ, որը Գլադսթոնի սիրելին էր և զբաղվում էր Իռլանդիայի հարցերով: Քաղաքական աղմկահարույց միջադեպի արդյունքում սիրելի ամուսնուն կորցնելուց հետո Լեդի Ֆրեդերիկ Քեվընդիշը, որն ամուսնության տասնութ տարիների ընթացքում երեխաներ չէր ունեցել, լիովին նվիրվում է կանանց ու աղջիկների կրթության խնդիրների լուծմանը:
Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/Lucy_Cavendish), (համացանցից դուրս է բերվել 01.04.2017):

թաղրյալ արտոնության համար, իսկական ողբերգություն էր, որը ստիպում էր բացառիկ ջանքեր գործադրել:

Բռնապետությունը գերված ժողովուրդների ճակատագիրն է եղել նախապատմական ժամանակներից ի վեր, սակայն այս դեպքում գործ ունենք անգամ վաղ դարերում իր նախադեպը չունեցած հարատև սխալ կառավարման հետ: Եվ այն էլ այն աշխարհում, որտեղ, տիրապետելով դրան վերջ դնելու միջոցներին, արհեստականորեն խանգարում են նրա բուժման բնականոն ընթացքը: Այլ կերպ ասած՝ ամենաքաղաքակիրթ երկրներից ոչ մեկը չի փորձում բարբարոս երկրին պարտության մատնել ու նրան իր մեջ տարրալուծել: Այն, որ այս խայտառակությունը շատերն են գիտակցում, վկայում է այն փաստը, որ հայերի օգտին գործողների քանակը բավականին մեծ է: Հենց նրանց միջոցով էլ քաղաքակիրթ աշխարհի խիղճը արդարացում է փնտրում: Նրանք չեն էլ նկատում, որ մի ամբողջ ժողովուրդ դատապարտված է անբացատրելի նահատակության, ոչ էլ խորհրդածում են, թե որն է այդ անմեղ տառապյալների դերը ծրագրված դեպքերի իրագործման մեջ: Օրենքով են շարժվել, թե օրենքից դուրս, նրանք ոչ սովորական մի գործ են առաջ տարել: Ես լավ եմ հիշում, թե ինչ տաղտկալի էր, երբ անասելի ջանքեր էին պետք լինում մեկին հասկացնելու կամ համոզելու, որ միավորվեն: Նրանց առանձնահատկությունը, ըստ էության, երևակայությամբ օժտված լինելն է: Եվ իրոք, նրանք ամեն հարցի մոտենում են իբրև անգլիացի՝ չկարողանալով անտեսել իրենց անգլիացի լինելը և հարցերը քննել զուտ մարդկային տեսանկյունից: Հենց սա էլ Անգլիայի քաղաքականությունը թուրքամետ է դարձրել: Որոշ անգլիացիներ այս քաղաքականության ահավոր դաժանությունը երբեք չէին էլ ըմբռնելու, եթե չկանգնեին հայկական եկեղեցում ու չհետևեին այդ եկեղեցու լուսավորչական պատարագի թարգմանությանը, չընկալեին նրա ծառայությունների վեհ ոգին: Միայն այդ ժամանակ նրանք սկսեցին հասկանալ այս՝ հանուն հավատի տառապողների հայացքները, ու միայն այդ ժամանակ փորձեցին մտնել նրանց վիճակի մեջ, նրանց, որ դիմակայում էին այդ անիմաստ ու հավերժական ցավին:

Խնդրի վերջնական լուծումը, այնուամենայնիվ, ոչ թե բարեգործության, այլ քաղաքական գործողության մեջ է: Այս ոլորտում նույնպես լայնորեն գործում են շահերը, սակայն կազմակերպվելու կոչը վերջին տարիներին հասել է նվազագույնի, քանի որ առաջ է քաշվել կաթվածահար անող մի գաղափար: 1895-ի ջարդերից ի վեր տարածում է գտել այն մտավախությունը, որ Եվրոպայում համախմբման կոչը կարող է պատճառ դառնալ, որ դեպքերը կրկնվեն: Բալկանյան պատերազմից հետո Թուրքիայի ֆինանսական կարիքների պատճառով էր, որ հայկական հարցը առաջ քաշվեց և Անգլիայում ձևավորվեց նոր հայկական կոմիտե, որի նախագահը նկատելի ընդունակությունների և առաքինությունների տեր քաղաքական գործիչ է, իսկ քարտուղարը Գլադսթոնի կազմակերպած հայկական շարժման մասնակցի բացառիկ որակավորում ունի: Գերմանիայում, Շվեյցարիայում, Ռուսաստանում և Ֆրանսիայում նույնպես գործում են նման կոմիտեներ, որոնք պատգամավորներ են ուղարկում Լոնդոն խորհրդակցելու, սակայն նույնիսկ այդ պարագայում հանրային արձագանքը նվազագույնի է հասցված՝ կոտորածների վախի պատճառով: Այս հարցը պետք է քննարկվի հենց սկզբից: Նախքան Թուրքիայում հայերի հետ ծանոթանալը մեզանից շատերը աշխատել են Հայկական հարցին մասնակցություն ցուցաբերելուց խուսափել, բայց այժմ արդեն ակնհայտ է, որ այս վախը լիովին անհիմն է: Նրանք տեղյակ են կոտորածների պատմությանը և այն կարծիքին են, որ ջարդերը տեղի են ունեցել Աբդուլ Համիդի պատվերով և ոչ թե Արևմուտքում համախմբվելու կոչերի պատճառով, ոչ էլ կարող էին այդ կոչերը քաջալերել հեղափոխականներին հարձակվելու թուրքերի վրա: Նրանք կարծում են, որ սա կանխամտածված միջոց էր հայերին հոգեպես և քանակապես թուլացնելու, և նույնիսկ այդ պարագայում էլ թուրքերը համարձակ քայլեր չէին իրականացնի, եթե հենց սկզբից գերտերություններն իրենց անզոր չներկայացնեին: Նրանք կարծում են, որ վտանգը հիմա նվազագույն է՝ բանակում ծառայող քրիստոնյաների քանակի և այն հայտնի փաստի շնորհիվ, որ Ռուսաստանը կներխուժի Թուրքիա, եթե վերջինս հայերի ջարդեր կազմակերպի: Հայերը շատ հուզված են այն մտքից, որ այս նկա-

տառումն այլևս չի խոչընդոտի իրենց համար կենսական նշանակություն ունեցող հարցին, այն է՝ հայերի օգտին կազմակերպչական կոչերին: Եվրոպացիները պետք է հաշվի առնեն հայերի ունեցած տեղեկատվությունը և խորաթափանցությունը: Մեր կարծիքով, եթե կրկին ջարդեր տեղի ունենան, ապա դա կլինի կառավարության որոշմամբ, ինչպես արդեն եղել է, և այդ ոչ հավանական որոշումը կկայացվի Եվրոպայի գիտությամբ:

Եթե հասարակական շարժումները վտանգավոր չեն, մենք, անշուշտ, հարկադրված կլինենք սատար կանգնել բրիտանական կառավարության հստակ քաղաքականությանը: Չնայած բոլորի համար էլ պարզ է, որ այս արդեն իրականացված քաղաքականությունը դատապարտելի է և ավելի դժվար է մատնանշել այս քաղաքականությունը փոխելու եղանակը: Սովորաբար վնաս հասցնելն ավելի հեշտ է, քան այդ վնասը վերացնելը: Քաղաքականության վերաբերյալ ցանկացած տեսակետ, որն անտեսում է թե՛ հեռավոր անցյալի, թե՛ վերջին շրջանի պատմությունը, չի կարող մեծ արժեք ունենալ: Եկե՛ք, ուրեմն, հիշենք կարևոր փաստերը: Դրանք արդեն սովորական են, և մի կարճ անդրադարձը բավարար կլինի:

1453-Թուրքերը գրավում են Կոնստանդնուպոլիսը:

1683-Պաշարում են Վիեննան, սակայն հետ են շպրտվում Լեհաստանի թագավոր Ջոն (Սոբեսկի) III կողմից:

1787-Ռուսաստանն առաջարկում է բաժանել Թուրքիան եվրոպական երկրների միջև. Անգլիան, Ֆրանսիան, Ավստրիան և Իսպանիան իրար մեջ բաժանելու էին ռազմավարը:

1790-1800-Անգլիացիներն առևտուր են անում Հնդկաստանի հետ, և Ռուսաստանից վախենալով՝ Փիթը Բրիտանիայի աջակցությունն է առաջարկում Թուրքիային: Բըրքը, Ֆոքսը և Գրեյը բողոքում են դրա դեմ, և անգլո-ռուսական թշնամանքը որոշիչ է դառնում այդ իրադրության մեջ:

1803-Ռուսաստանը գրավում է Թիֆլիսը և ձեռնամուխ լինում կիսահայկական Կովկասի նվաճմանը:

1827-Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը Նավարինոյում[79] ոչնչացնում են թուրքական նավատորմը:

1828-Կովկասի կիսանկախ հայ մելիքները անվտանգության և Հայկական թագավորության խոստումների դիմաց Ռուսաստանին օգնում են պարտության մատնել Պարսկաստանին: Նրանք միացյալ ուժերով գրավում են Էրիվանը: Գրավում են նաև Էրզրումը, որը, սակայն, 1829 թ. Ադրիանոպոլսի պայմանագրով ետ է վերադարձվում Թուրքիային:

1830-Հունաստանի անկախության հռչակումը:

1840-Կոնստանդնուպոլսում Ստրատֆորդ Քենինգի[80] ազդեցության շրջանի սկիզբը:

---

79 1827 թ. հուլիսի 6-ին ստորագրվում է Լոնդոնյան պայմանագիրը և Ֆրանսիան ու Ռուսաստանը նույնպես իրենց նավերն են ուղարկում՝ փորձելով թուրքերին համոզել, որպեսզի, հենց իրենց սեփական շահից ելնելով, հրաժարվեն ռազմական գործողություններից: Հունական կառավարությունը համաձայնում է հրադադարի պայմաններին, իսկ թուրքականը՝ մերժում: Սեպտեմբերի 12-ին տեղի է ունենում դաժան ճակատամարտ Նավարինոյում՝ մինչև երեկո 72 նավերից 60-ը խորտակվում են, զոհվում են 6000 թուրք և նրանց եգիպտացի դաշնակիցները, իսկ բրիտանացիները, ֆրանսիացիները և ռուսները միասին տալիս են 177 զոհ, 515 վիրավոր՝ կորցնելով ընդամենը մի քանի նավ: Տե՛ս (http://www.greecetravel.com/peloponessos/navarino/), (համացանցից դուրս է բերվել 04.04.2017):

80 Ստրատֆորդ Քենինգ Ռեդքլիֆ՝ բրիտանացի դիվանագետ, որը Դիզրաելիի գործի շարունակողն էր: 1820-1824 թթ. Մեծ Բրիտանիայի դեսպանն էր ԱՄՆ-ում, իսկ 1825-1828 թթ.՝ Օսմանյան կայսրությունում: Կենտրոնական ասիական միության անդամ Արչիբալդ Դանը հիշատակում է, որ Գերմանիան իր առևտրական շահերը բավարարելու դիմաց առաջարկում է հովանավորել Մերձավոր արևելքի քրիստոնյաներին: Գերմանիան անվիճելի կարևոր դիրք էր ձեռք բերելու, եթե կառուցվեր Բաղդադի երկաթուղին: 1872 թ. Համայնքների պալատը ստեղծում է Հնդկաստանի հարցերով կոմիտե, որը որոշում է ընդունում ոչ մի դեպքում թույլ չտալ, որ Հնդկաստան տանող մետաքսի ճանապարհի տնօրինումը՝ բացի Բրիտանիայից, որևէ այլ պետության մենաշնորհ դառնա: Բրիտանիան տեղյակ էր, որ Ռուսաստանն իր դիրքերը փորձում է ամրացնել Իրանի Բանդեր Աբաս քաղաք հասնող երկաթուղու միջոցով, իսկ ֆրանսիացիներն արդեն թագավորում էին Փոքր Ասիայում, Երուսաղեմում և Կիպրոսում: Տե՛ս (www.forgottenbooks.com TurkeyandIts Future_10298290.pdf, p. 6), (համացանցից դուրս է բերվել 04.04.2017):

1844 և 1853-Նիկոլայ ցարը Անգլիային առաջարկում է Թուրքիայի բաժանումը և երկու անգամ մերժվում:

1854-Ռուսաստանի կողմից արևելքի քրիստոնյաների խնամակալությունն ստանձնելու փորձերը անհանգստացնում են Անգլիային և Ֆրանսիային: Նրանք Եվրոպայի իրավունքները հռչակում են համընդհանուր: Լորդ Աբերդինը[81] Թուրքիային տեղեկացնում է, որ Անգլիան չի հանդուրժի քրիստոնյաների հանդեպ անարդարությունները: Կաբինետը տեղի է տալիս ճնշմանը և ներգրավվում Ղրիմի պատերազմում: Թուրքամետ քաղաքականությունը սկսում է ազդեցություն ունենալ Հայաստանի վրա: Ռուսական զորքերն ստիպված են լինում թողնել Կարսը:

1856-Փարիզի հաշտության պայմանագիրը: Թուրքական «Հաթթի Հումայի» հրովարտակը[82] հռչակում է կրոնների հավասարություն:

1863-Ընդունվում է հայկական «Ազգային սահմանադրությունը»:

1863-1875-Հայերը դեռևս կազմակերպված չեն, իսկ քրդերը շարունակում են թշնամություն դրսևորել թուրքերի հանդեպ, սակայն

---

81 Լորդ Աբերդինը, որը ներկայացնում էր պահպանողական կուսակցությունը, բրիտանացի քաղաքական գործիչ էր և դիվանագետ: 1852-1855 թթ. վարչապետ եղած շրջանում, չկարողանալով խիստ վերահսկողություն սահմանել իր նախարարության ակտիվ և տաղանդավոր քաղաքական այրերի գործունեության վրա, ստիպված էր ականատես դառնալ Բրիտանիայի մասնակցությանը Ղրիմի պատերազմին, որի անհաջող ավարտից հետո նա դուրս եկավ քաղաքականությունից:
Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/George_Hamilton-Gordon,_4th_Earl_of_Aberdeen#The_.22Eastern_Question.220), (համացանցից դուրս է բերվել 04.04.2017):

82 1856 թ. փետրվարի 18-ին Սուլթան Աբուլմեջիթ I-ը հավասարություն է խոստանում կրթության, արդարադատության, կառավարման բնագավառներում: Հռչակած հրովարտակը Ֆրանսիայի և Բրիտանիայի ազդեցության արդյունքն էր և որոշակի օգուտ բերեց Օսմանյան կայսրությանը Ղրիմի պատերազմում (1853–1856)՝ նպաստելով Փարիզի պայմանագրի ստորագրմանը 1856 թ.:
Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/Ottoman_Reform_Edict_of_1856), (համացանցից դուրս է բերվել 04.04.2017):

ազգային ինքնագիտակցությունը զարթոնք է ապրում Ռաֆֆու և այլոց ստեղծագործությունների շնորհիվ: Թուրքիայում գլուխ են բարձրացնում սուլթան Մեջիթի և Միդհաթ փաշայի[83] ազատական շարժումները:

1875-1878-Կոտորածներ Բոսնիայում և Բուլղարիայում: Ռուսաստանի բարեփոխությունների առաջարկը մերժվում է մնացած գերտերությունների կողմից: Լորդ Սելսբըրին[84] և գեներալ Իգնատևը[85] Կոնստանդնուպոլսում: Պարոն Բրայսն այցելում է Ռուսահայաստան և պարզում, որ ռուսները վրդովված են քրիստոնյաների պաշտպանության գործին իրենց մասնակցության մերժումը ստանալով Անգլիայից: Ռուսական բանակը ներխուժում է Թուրքիա: Կարսը գրավվում է ազգությամբ հայ գեներալի կողմից: Սան Ստեֆանոյում կնքվում է պայմանագիր, ըստ որի (հոդված 16)՝ Ռու-

---

83 Միդհաթ փաշան թուրքական մեջլիսի անդամ էր, հայտնի քաղաքական պետական գործիչ, 1876 թ. սահմանադրական շարժման առաջնորդ: Սուլթան Աբդուլ Համիդ II-ը՝ դժգոհ Միդհաթ փաշայի գործունեությունից՝ նրան աքսորում է նախ Եվրոպա, ապա Սաուդյան Արաբիա, որտեղ էլ Համիդի գործակալները նրան խեղդամահ են անում:
Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/Midhat_Pasha), (համացանցից դուրս է բերվել 04.04.2017):

84 Լորդ Սելսբըրին բրիտանացի քաղաքական գործիչ էր, պահպանողական կուսակցության անդամ, 13 տարի զբաղեցրել է Մեծ Բրիտանիայի վարչապետի պաշտոնը, ապա որպես Արտաքին գործերի պետքարտուղար 1878 թ. մասնակցել է Բեռլինի վեհաժողովին: Նա մեծ թերահավատությամբ է վերաբերվել Բրիտանիայի թուրքամետ քաղաքականության հաջողությանը:
Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/Robert_Gascoyne-Cecil,_3rd_Marquess-_of _Salisbury), (համացանցից դուրս է բերվել 04.04.2017):

85 Նիկոլայ Պավլովիչ Իգնատև՝ ռուս բարձրաստիճան զինվորական, դիվանագետ, քաղաքական գործիչ, Ռուսաստանի դեսպանը (1864 -1877) Օսմանյան կայսրությունում: Ռուս-թուրքական պատերազմի ընթացքում (1877-1878) գաղտնի սատարել է բալկանյան ազգերին և քրիստոնյա փոքրամասնություններին՝ փորձելով նրանց համակրանքը ուղղորդել դեպի Ռուսաստան:
Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/Nikolay_Pavlovich_Ignatyev), (համացանցից դուրս է բերվել 04.03.2017):

սաստանը պետք է մնա Էրզրումում մինչև բարեփոխումների ավարատը: Անգլո-թուրքական համաձայնագրով գաղտնի վերահսկվում է հայ-թուրքական սահմանը, իսկ Կիպրոսը՝ հանձնվում Անգլիային: Բեռլինի վեհաժողովը Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը շրջում է 61-րդ հոդվածի, որով բոլոր գերտերությունները պատասխանատվություն են ստանձնում բարեփոխումների իրականացման համար: Լորդ Բիքընսֆիլդը[86], վերադառնալով Բեռլին, հայտարարում է. «Խաղաղություն՝ պատվով»:

1879-Լորդ Բիքընսֆիլդը հայկական կենտրոններ է ուղարկում ռազմական հյուպատոսների: Աբդուլ Համիդը քրդերին հրահրում է հայերի դեմ և կազմավորում Համիդիե հեծելազորը:

1880-Գլադսթոնյան կառավարության վերադարձը: Գոշենը՝ որպես դեսպան ուղարկվում է Կոնստանդնուպոլիս: Դրանից քիչ անց Թուրքիան գնում է ստիպողական զիջումների:

1881-Բիսմարկի ընդդիմությունը Լորդ Գրենվիլին[87] ստիպում է փակել հայկական բարեփոխումների հարցը:

1894-1896-Կոնստանդնուպոլսում դեսպանատների աչքի առջև կազմակերպվում են հայերի կոտորածներ: Առաջարկվում են մի

---

86 Բիքընսֆիլդը քաղաք է Բուքինգեմշիրում, որի ընտրողների շահերը Բենջամին Դիզրայելին ներկայացրել է բրիտանական պառլամենտում: 1876 թ. Վիկտորիա թագուհին՝ հիացած վարչապետ Դիզրայելիի պահպանողական համոզմունքներով ու քաղաքականությամբ, ստեղծում է *Բիքընսֆիլդի լորդ* ազնվական տիտղոսը և շնորհում իր ֆավորիտին: Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/Earl_of_Beaconsfield), (համացանցից դուրս է բերվել 04.03.2017):

87 Լորդ Գրենվիլը՝ բրիտանացի քաղաքական գործիչ ազատական կուսակցությունից, երեք փուլ զբաղեցրել է Արտաքին գործերի պետքարտուղարի պաշտոնը, համագործակցել է իր բարեկամ Գլադսթոնի հետ: Նրա համար միշտ նախընտրելի էր քաղաքական խնդիրների լուծման խաղաղ ճանապարհը, որի շնորհիվ էլ կարողացել է Բրիտանիան հեռու պահել Եվրոպական պատերազմներից: Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/Granville_Leveson-Gower,_2nd_Earl_Granville), (համացանցից դուրս է բերվել 01.03.2017):

շարք բարեփոխումներ: Լորդ Ռոզբերին[88] բռնադատումն անհավանական է համարում: Ռուսաստանը թշնամաբար է տրամադրված գերտերությունների ծրագրերի նկատմամբ: Գերմանիայի կայսրը այցելում է սուլթանին և իր բարեկամությունը հայտնում: Սուլթանը, որը հայերին փոքրամասնության էր վերածել, քրիստոնյա օգնական կառավարիչներ է նշանակում:

1896-Նրանք հայտնի են դառնում «Էֆենտի» անունով՝ մարդիկ, որոնք «այո» էին ասում իրենց թուրք գործընկերներին:

1896-1908-Գերմանիան որդեգրում է զիջումների քաղաքականություն, որը սկզբում արժանանում է Բրիտանիայի հավանությանը: Այդ քաղաքականությունն իր գագաթնակետին է հասնում Բաղդադի երկաթգծի կառուցումը նախաձեռնելիս, որը կարևոր էր ոչ միայն Գերմանիայի համար: Անգլիան առաջինն է համաձայնություն տալիս այդ ծրագրին, նրա հակագերմանական ընդդիմությունը դրան վերջ է դնում: Գերմանիան, միայնակ հետամուտ լինելով այդ նախագծին, ավելի լավ արդյունքների է հասնում 1907-ին: Գերմանիայի դեսպանը դառնում է Կոնստանդնուպոլսի գերագույն դեմքը:

1903-1907-Խռովություն, կոտորած և բարեփոխման ծրագիր Մակեդոնիայում: Արտասահմանցի սպաների ու պետական պաշտոնյաների վերահսկողության տակ են ժանդարմերիան ու ֆինանսները:

1908-Մարտին կոտորածներ են տեղի ունենում Վանում:

1908-Երիտթուրքական հեղափոխություն: Սահմանադրության ընդունում: Թուրքերը եղբայրական հարաբերություններ են հայտարարում քրիստոնյաների՝ հատկապես հայերի հետ:

---

88 Լորդ Ռոզբերին՝ բրիտանացի քաղաքական գործիչ ազատական կուսակցությունից, Գլադսթոնի զինակիցը, աշխատել է իբրև Արտաքին գործերի նախարար: Նրա հոգածության շրջանակներում են եղել Ֆրանսիան և Գերմանիան:
Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/Archibald_Primrose,_5th_Earl_of_Rosebery), (համացանցից դուրս է բերվել 01.04.2017):

1909-Աբդուլ Համիդը հեռացվում է ասպարեզից: Կոտորածներ Ադանայում:

1910-Երիտթուրքերի շովինիզմը հանգեցնում է ալբանացիներին, արաբներին և բուլղարներին, բայց ոչ քրդերին, ահաբեկելու և զինաթափելու փորձերի: Սա բուլղարների, հույների ու սերբերի միջև նոր համագործակցություն է ձևավորում, որի արդյունքում:

1912-Բռնկվում է Բալկանյան պատերազմը և կորստի են մատնվում եվրոպական գավառները:

1913-Գերտերությունները խորհրդակցում են Հայաստանի բարեփոխումների շուրջ, որի դիմաց Թուրքիային առաջարկվում է ֆինանսական օգնություն: Լուրեր Ռուսաստանի՝ Հայաստան ներխուժելու միտումների մասին: Գերմանիան Էրզրումում բացում է նոր հյուպատոսարան:

1914-Համընդհանուր հավանության արժանացած բարեփոխումների վերահսկվող ծրագիր:

Իրադարձությունների այս շարքը, որը տարբերվում է ցանկացած այլ արձանագրված միջազգային գործողություններից, արտահայտման բազմաթիվ այլ տարբերակներ է ենթադրում՝ թե՛ տեսական, թե՛ գործնական առումներով:

1. Ելնելով մեր առանձնահատուկ նպատակից՝ կարելի է ըսկսել բնական հարցադրումով, թե ինչ տեղի կունենար, եթե Անգլիան և մյուս գերտերությունները նրանց հանգիստ թողած լինեին, նրանց գործերին չխառնվեին: Եվ սա անորոշ ենթադրություն չէ, այլ փաստ: Ռուսաստանն առաջարկում էր կիսել Թուրքական կայսրությունն այլ գերտերությունների հետ: Գերտերությունները հարցի վերաբերյալ այլ կարծիքներ ունեին, և 1854-ին նրանք առաջարկեցին այլընտրանքային ծրագիր, որը «կպաշտպաներ», այսինքն՝ կպնդեր, որ ցուցաբերվեր պատշաճ վերաբերմունք) քրիստոնյաներին, և, 1878 թ. առաջարկվեց գրավել Թուրքիայի համար ռազմավարական նշանակություն ունեցող Էրզրումը և ետ չվերադարձնել այնքան ժամանակ, քանի դեռ չարաշահումները չեն վերացվել: Եթե

Ռուսաստանի առաջխաղացումը չկանգնեցվեր, մեծ ջարդերը տեղի չէին ունենա:

Սակայն հարցը հնարավոր է ավելի ընդհանրացնել՝ ի՞նչը կարող է նորմալ կամ «սահմանադրական» բարեփոխումներ կոչվել այսպիսի դեպքում: Հնարավոր պատասխանը հետևյալը կլիներ՝ խնդիրները լուծում կստանան այնպես, ինչպես նմանատիպ այլ դեպքերում է եղել: Այն ժամանակ, երբ մեր կողմից քննարկված իրադարձությունները սկսվեցին, Եվրոպան, իր սահմաններից դուրս, հսկողություն ուներ միայն փոքր տարածքի վրա: Եվրոպայի սահմաններին մոտ գտնվող կիսաքաղաքակիրթ երկրների կառավարություններին, կոպիտ ասած, տիրանալու գործին ձեռնամուխ եղան տվյալ երկրին ամենամոտ գտնվող եվրոպական երկրները: Մարոկկոյից Թուրքիստան նրանք ընդունեցին «սպիտակ մարդու բեռը»: Քաղաքակիրթ երկրի կողքին տեղի ունեցող անիշխանությունը տհաճ երևույթ է, որն ի վերջո հանգեցնում է անեքսիայի՝ տվյալ երկիրը ուժեղ երկրի տարածքին միացնելուն: Ինչպես Ավստրիան էր առաջ գնացել և միացրել Հունգարիան, Խորվաթիան և Բոսնիան, այնպես էլ Ռուսաստանը բնականաբար տարածվում էր Կովկասում և Արևելյան Անատոլիայում: Այս տարածքներում ապրող ազգերը, որոնք վաղուց էին կորցրել իրենց անկախությունը, չէին դժգոհի, եթե նրանց միակ հույսն էր բարբարոս կայսրության կազմից դուրս գալը ու մի ավելի լավ երկրի կազմի մեջ մտնելը: Թուրքիայում ապրող հայերն ու մյուս քրիստոնյաները կարող էին միայն երազել այսպիսի նորմալ ճակատագիր: Արդարացի դժգոհություն կարող էր առաջացնել միայն այն, որ այս ճակատագրից նրանց զրկել էին արհեստականորեն:

2. Այժմ անհնար է հերքել, որ Ռուսաստանին հակառակվելու քաղաքականությունը մոլորություն դուրս եկավ: Լորդ Սելսբըրիի բացահայտ խոստովանությունը՝ «Մենք սխալ խաղացողի վրա ենք խաղադրույք կատարել», կարող է միայն նշանակել, որ Բուլղարիան Ռուսաստանի համար ամենամեծ խոչընդոտը դարձավ: Սակայն, ռուսամետության դարաշրջանի ավարտին նկատում ենք, որ արտգործնախարարությունը խթանում է անգլո-ռուսական միութ-

յունը՝ խորհրդարանական արշավներ կազմակերպելով դեպի Սանկտ Պետերբուրգ և համագործակցում է Ռուսաստանի հետ նախկին հակամարտության գլխավոր խնդրի՝ Պարսկաստանի առնչությամբ: Սա միայն մեր կողմից Եգիպտոսը զավթելու արդյունքը չէ: Իրականում վերևներում գտնում են, որ այս փաստի համաձայն Դարդանելի վերաբերյալ մեր անհանգստությունը՝ կապված Ռուսաստանի հետ, անհիմն է: Սակայն տեսնել, որ Ռուսաստանը իր նոր հսկայական առաջընթացով, չնայած ճապոնական պատերազմին, մնում է ապագայի ամենահզոր գերտերությունը, և փոխել ճակատը նշանակում է նաև, որ, Ռուսաստանին հակադրվելով, մենք տրամաբանությամբ ու դատողությամբ չենք առաջնորդվել: Պարոն Գլադսթոնի բողոքը թուրքամետ քաղաքականության դեմ փորձով ձեռք բերված իմաստության ձայնն էր: Թվում է, թե մենք միշտ պետք է մի թշնամի ունենանք, որին ատենք և որից վախենանք: Երբ թշնամու դերում հայտնվեց Գերմանիան, ռուսամետությունը վերացավ, քանի որ անիմաստ էր: Արտգործնախարարությունը, որին դեռևս հատուկ է առեղծվածային ու աննորմալ իմաստությունը, որևէ դժվարություն չունեցավ հասարակական կարծիքը փոխելու գործում:

3. Հակառուսական քաղաքականությունը սխալմունք էր, թե ոչ, այն չափազանց թանկ նստեց առաջին հերթին հենց մեզ վրա: Հատուցումը եղավ Գերմանիայի հետ ախոյան դառնալը: Մենք պահպանեցինք Թուրքիան: Գերմանիան, տարածքների ընդարձակում փնտրելով, պետք է, որ Ռուսաստանի հետ բախվեր, եթե չլիներ մեր դիրքորոշումը: Միևնույն ժամանակ, նրա առևտրային ձեռքբերումները օգտակար եղան ոչ թե մեզ, այլ հենց իրեն: Կարելի է նաև ասել, որ Թուրքիային պաշտպանելով՝ մենք Գերմանիային զրկեցինք իր գաղութատիրական նկրտումներն իրականացնելու հնարավորությունից, ինչն էլ նրան դարձրեց համառ ու անբարյացկամ: Ավելին՝ ակնհայտ է, որ հարուստ հողատարածքների զարգացմանը չնպաստելը առևտրական նպատակներ հետապնդող երկրներին զգալի տնտեսական վնասներ է պատճառում:

Երբևէ նման պնդում չի եղել, թե դիվանագիտության մեջ բարոյականությունը հաջողություն է բերում, սակայն ընդունված է, որ մրցակցությունն իր մեջ պետք է ճշմարտության հատիկ ունենա:

Անկախ այն բանից, արդարացի էր մեր վարած քաղաքականությունը, թե ոչ՝ պետք նշել, որ մեր մտահոգության առարկա ժողովուրդները շատ թանկ վճարեցին: Բուլղարները, սերբերը, հույներն ու հայերը (եթե գնահատական տալու լինենք) թալանված, լլկված, աղքատության մատնված և զարգացման իրավունքից զրկված են եղել: Այսպիսով, ոչ միայն կասեցվել է նրանց թվաքանակի աճը, այլև կոտորածների պատճառով է այն խիստ նվազել. 1894-96-ի 100-200 հազարի փոխարեն 1909-ին՝ ընդամենը 15 հազար: Ավելին՝ Մակեդոնիայի ազատագրումը, որ դեռևս 1878թ. հունվարին էր ճանաչվել Ռուսաստանի կողմից, Անգլիայի ու Գերմանիայի պահանջով չեղյալ հայտարարվեց: Դա մեծ ազդեցություն գործեց փոքր և հակառակորդ երկրների վրա (1912 թ.)՝ խլելով ավելի քան 400 հազար զինվորների ու խաղաղ բնակիչների կյանք (չհաշված նյութական կորուստներն ու վերքերի պատճառով ձեռք բերված հաշմանդամությունների քանակը):

4. Թուրքական կայսրությունը կարող էր խուսափել տեղի ունեցած աղետներից, եթե մի փոքր ավելի պատրաստակամ գտնվեր բարեփոխումների հարցում: Գերտերությունները բնականաբար կառչում էին նույնիսկ ամենաչնչին պատրվակից՝ համատեղ դիվանագիտական ճնշում գործադրելու անհարմարություններից ու դժվարություններից խուսափելու համար: Դիվանագիտությունը, չհուսալքվելով անհամար փորձերից, նույնիսկ այժմ փայփայում է այն հույսը, թե թուրքերը դասեր քաղած կլինեն անհաջողությունից: Ինչու նրանք երբեք չեն արել դա: Մասամբ որովհետև,այսպես կոչված, «թուրքամոլները» շարունակ փորձել են նրանց համոզել, որ բարեփոխումներին դիմադրելու դեպքում նրանք աջակցություն կստանան: Թուրքամոլները թուրքատյացներին ընկալում են որպես առավել հիմարների խումբ՝ պահանջելով նրանցից գերագույն գիտելիքներ, իմաստություն և ձերբազատում վատ հակումներից: Բայց նրանց վերաբերմունքի մեջ ինչ-որ բան հաստատ պակասում

է, ինչը ոչ միայն խանգարեց պաշտպանել բրիտանական շահերը, այլև թուրքերին տարավ կործանման: Ո՞րն է նրանց թերությունը: Իհարկե, սկզբունքի բացակայությունը: Եթե նրանց տեսակետը հիմնված լիներ իսլամական մշակույթի նկատմամբ անկեղծ վերաբերմունքի վրա, ինչպես պրոֆեսոր Բրաունինը, կամ եթե նրանք աջակցեին թուրքերի բարեփոխումներին, նրանք այդ խնդրով իսկապես հետաքրքրվածների ծանրակշիռ խումբ ստեղծած կլինեին:
Նրանց ունայնությունը դրսևորվեց 1912-ի նոյեմբերին: Լյուլե Բուրգասում[89] թուրքերին պարտության մատնելուց հետո նրանցից շատերը լքեցին թուրքերին՝ կարծելով, թե այժմ բրիտանական շահը պահանջում է մյուսի (Բալկանյան գերտերության, որը, ինչպես ակնկալվում էր, պիտի ձևավորվեր) կողմն անցնել: Այս գաղափարի կողմնակիցները հիացած չեն բրիտանական խելքով: Բրիտանացիք գուցե իրենց առավել են համարում, սակայն սխալ են գնահատում աշխարհի ընթացքը վերահսկող ուժերը:

5. Պատմությունը կրկին ցույց է տալիս, որ Եվրոպական դաշինքը, որ երբեք շոգեգլանից ավելի արագ չի ընթանում, երբեմն համարյա անկարող է շարժվել, իսկ շարժվելիս էլ որևէ արդյունքի չի հասնում՝ բացառությամբ սահմանային հարցերի: Նրա որոշմամբ են հաստատվել 1881-ին՝ Թեսալիայի և Մոնտենեգրոյի, 1898-ին՝ Կրետեի և 1913-ին՝ Ալբանիայի սահմանները: Բոլոր հանձնաժողովները ծանրաշարժ են, իսկ այս հանձնաժողովի ընդհանուր նպատակները նվազագույն: Ոչ մեկն արդյունավետ չէ առանց ճանաչված առաջնորդի, իսկ առաջնորդի դերը որևէ գերտերության վերագրելը վիրավորում է մնացած գերտերությունների արժանապատվությունը: Ճանաչված նախագահության հասնելուն ամենա-

---

[89] Լյուլե Բուրգասում 1912 թ. հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 2-ը տեղի է ունեցել ճակատամարտ Բուլղարական թագավորության և Օսմանյան Թուրքիայի միջև: Բուլղարական մեծաթիվ զորքի ճնշման տակ թուրքերը ստիպված են եղել նահանջել՝ մինչև Կոստանդնուպոլսից երեսուն կիլոմետր հեռավորության վրա: Սա ամենամեծ ճակատամարտն էր Եվրոպայում առաջին աշխարհամարտի նախաշեմին:
Տե՛ս (https://en. wikipedia.org/wiki/Battle_of_Lule_Burgas), (համացանցից դուրս է բերվել 01.04.2017):

մոտը Անգլիան էր Բալկանյան պատերազմի ընթացքում, սակայն ոմն սըր Էդվարդ Գրեյի առանձնահատուկ հեղինակությունն այն գործոնը չէր, որի վրա կարելի լիներ հույս դնել, հավատալ, որ ցանկացած պահի կհայտնվի, երբ նրա կարիքը զգացվի: Բայց նույնիսկ այդ գործոնի օգնությամբ Դաշինքին չհաջողվեց իր վրա վերցրած պարտականությունները կատարել, երբ թուրքերը խախտեցին Լոնդոնի պայմանագիրը՝ վերագրավելով Ադրիանապոլիսը: Ինչ վերաբերում է առևտրային շրջանակներին, Դաշինքը որոշ կազմակերպությունների վճարում է, որպեսզի մի կողմ քաշվեն: Յուրաքանչյուր գերտերություն կարող է շահույթ ապահովել՝ ստացած ապրանքների դիմաց կրիտիկական պահին Թուրքիայի հետ բարեկամանալով: Վաշխառուները, կառավարությունից արտոնություններ կորզել ցանկացողները կամ սպառազինությունների բիզնեսով զբաղվող ձեռնարկությունները սովորաբար խաթարում են անշահախնդիր քաղաքականությունը:

6. Այսպիսի հեղինակավոր առաջնորդ գերտերությունը, որքանով թույլ է տալիս Դաշինքը, կարող է միայն թեթևակի միջամտություն ցուցաբերել: Լորդ Լանսդոնը 1903-ից մինչև 1905թ. հիացմունքի արժանի տոկունությամբ աշխատեց հանուն Մակեդոնիայի բարեփոխումների: Նա աշխատում էր վերահսկողություն սահմանելու ուղղությամբ, բայց կարողացավ միայն ղեկավարություն ապահովել: Իսկ պատմության ամենակարևոր եզրակացություններից մեկն այն է, որ ղեկավարությունը շատ ավելի վատ բան է, քան պարզապես անպետք լինելը: Վիեննայի և Մյուրցտեգի[90] նախագծե-

---

[90] Մյուրցտեգում 1903 թ. հոկտեմբերի 2-ին Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի միջև ստորագրվել է միացյալ դիվանագիտական փաստաթուղթ, համաձայն որի՝ Օսմանյան կայսրությունը հնարավորություն էր ստանում քաղաքական բարեփոխումների ճանապարհով ամրապնդելու իր իշխանությունը կայսրությունում ապրող քրիստոնյաների նկատմամբ և ապահովելու իր անվտանգությունը Մակեդոնյան հեղափոխական կազմակերպության սպառնալիքից:
Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/M%C3%BCrzsteg_Agreement), (համացանցից դուրս է բերվել 11.04.2017):

ը «քաղաքացիական խորհրդատուներ», արտաքին ոստիկանական պաշտոնյաներ և ֆինանսական խորհրդականներ տվեցին, բայց իրական շոշափելի արդյունքը եղավ լարվածության, ախոյանների և քաղաքական օրինախախտումների աճը: Պաշտոնյաներն ու դեսպանատները հիմնականում զբաղված էին մեծացնելով այն հանցագործությունների վիճակագրությունը, որոնք չէին կարողացել կանխել. «մսագործի օրինագծով»[91] տարեկան մոտ 2400 զոհ էր լինում: Հազիվ թե կարիք կա կրկնելու բարոյական խրատներն այն մասին, որ առանց Եվրոպայի վարչական վերահսկողության, միջամտությունը կարող էր չափազանց մեծ վնաս պատճառել:

7. 1903-ից ի վեր մենք կարող ենք քննարկել ներքին բարեփոխումների այլընտրանքային տարբերակը: Ընթերցողը կարող է հիշել դրա հիմնական հատկանիշները: Գերտերությունների հետ կապված պետք է նշել, որ նրանք այս տեսակի բարեփոխումը հեշտությամբ չեն իրականացնում: Հաջողության հասնելու համար աշխատանք պետք է տարվի պատասխանատվության զգացում ունեցող նախարարների կողմից, որոնք պիտի հենվեն ազգային ինքնահարգանքի վրա: Բայց արտասահմանյան դեսպանատները, իրենց առևտրականներով ու, «կապիտուլյացիայի» անվան տակ, արտոնյալ կյանքով ապրող բնակիչներով, այդ ինքնահարգանքի պատճառով վնասներ են կրելու, և դիվանագիտությունը, որը աշխատել է իր սեփական երկրի առավելության համար, թուրքական այս կամ այն պետական գործչի կողմն անցնելով, չի կարող ձերբազատվել հին ավանդույթներից, մինչև անհաղթահարելի ուժը չտանի ազգային զարթոնքի, ինչպես Ճապոնիայում: Մեր աջակից ութսուն-իննսունամյա Քյամիլ Փաշան հատուկ ուշադրության արժանի թագավորական ուղերձ հղեց աշխարհին՝ ցույց տալով, որ երիտթուրքերի նախարարները չեն արժանացել մեր հավանությանը: Դա վկայում է այն մասին, որ սահմանադրական բարեփոխումները խոչընդոտ-

[91] Հեղինակները նկատի ունեն բռնության ու վայրագության հետևանքով մահվան դեպքերը:

վում են թե՛ ներսից, թե՛ դրսից: Մենք համոզվել ենք, որ ներքին խոչընդոտներն ամեն դեպքում չափազանց ճնշող են:

Որպեսզի այս արտացոլումների տրամաբանությունը կիրառվի Հայաստանի նկատմամբ, անհրաժեշտ է գտնել դեպի եվրոպական վերահսկողություն տանող փաստացի ուղին՝ անկախ այն բանից, այդ վերահսկողությունը կիրականացվի մեկ, թե բոլոր գերտերությունների կողմից: Վերահսկողություն իրականացնելու ուղիների խնդիրը հետաքրքրություն է ներկայացնում, և այդ հարցի արծարծումը նման աշխատություններում սովորական բան է: Հարցին հանգամանալից անդրադառնում են Բրիտանական Հայկական Կոմիտեի արձանագրությունները, «Բալկանյան հարցը», սըր Էդվին Փիըրսի և Արգիլի Դքսի աշխատությունները: Ինչևէ, մեր տեսանկյունից վերահսկողության ձևը էական չէ: Այն կարող է իրականացվել թուրքական գործիչների՝ կառավարչի, խորհրդի կամ կցորդ-գործակալների միջոցով, ինչպիսիք են, օրինակ, բրիտանական պաշտոնյաները Եգիպտոսում: Կարևորն այն է, որ իշխանավորը լինի եվրոպական հպատակ՝ պատասխանատու լինի միայն որևէ եվրոպական կառավարության կամ կառավարությունների առջև, և նրան աշխատանքի նշանակելը, հեռացնելը, թոշակի ուղարկելը չսահմանվի թուրքական Բարձրագույն Դռան կողմից: Մը-նացածը՝ պահանջվող արտաքին ուժը, խորհուրդներն ու դատական կազմակերպությունները, գերտերությունների համապատասխան ոլորտների ստորաբաժանումները, բաժանմունքները կամ տեղամասերը, վարչարարության մեթոդները, որոնք ուղղված են կարգ ու կանոն, արդարադատություն, հասարակական աշխատանքներ իրականացնելուն, ելնում են էական պայմաններից: Դրրանց քննարկումն այստեղ միայն կշեղի ուշադրությունը հիմնական խնդրից: Եթե ընտրված գերտերությունները աշխատանքի բաժանում կատարեն, ապա դրա մշակումը չի ենթարկվելու հասարակության քննադատությանը: Դա կանեն համապատասխան ունակություն ու հնարավորություն ունեցողները (ասենք, բրիտանական դեսպանատան առաջին թարգմանիչը), որոնց այդ գործը վստահվել

էր 1913 թ. գարնանը: Հասարակությունն ընդամենը մտահոգված է այն հիմնարար իրողություններով, որոնց բարեփոխումներն էական են:

***

Մի հրաշալի սեպտեմբերյան երեկո ուղևորվեցի Էրիվանից դեպի Արարատի մոտ գտնվող ռուսական մի բնակավայր[92]՝ տեսնելու Արաքսի հովտի հայկական գյուղերը: Հարթավայրը, որը պետք է, որ անջրդի ու ամայի մի վայր լիներ ու ոռոգման հնարավորություն չունենար, նմանվում էր հարուստ հողատարածքների, որտեղ աճեցնում էին խաղող, բրինձ ու բամբակ: Փոքրիկ տնտեսություններն իրարից բաժանված էին կիպարիսի տեսք ունեցող բարդիներով, ինչպիսիք կարելի է տեսնել Բելգիայում Բեռլինի ճեպընթացից: Դեղձենիների կամ թթենիների պտղատու այգիները պաշտպանված էին կավի շաղախից պատրաստված ճանապարհի երկարությամբ ձգվող բարձր պատնեշով: Պատնեշապատը շարունակվում էր ողջ ճանապարհի երկայնքով, և հասած ծիրաններն ու սերկևիլները հենվել էին պատին: Առվակները հոսում էին մեր ճանապարհի երկու կողմերով՝ սնուցելով բարդիների արմատները: Պարբերաբար պատերն ընդհատվում էին հողագործների տների պատուհաններով, հարթ տանիքներով և տարվա այս եղանակին բնորոշ ցորենի շեղջերով: Այսուայնտեղ ցեխաշաղախ հնաոճ տներն իրենց տեղը զիջում էին քարե նոր շքամուտքերին: Մեծ շքամուտքերից երևում էին բակեր ու պատշգամբներ, ջրհորների ծածկեր, կավե հսկայական սափորներ, իսկ ավելի հեռվում՝ մրգատու այգիներ, քնելու համար հարմարեցված փայտե բարձր տախտակամածներ, որոնք օգտագործվում են Արաքսի հովտի շոգ շրջաններում: Մենք շարունակում էինք ճանապարհը, իսկ շինությունները գնալով ավելի խիտ դասավորված էին թվում, գյուղի վերջը չէր երևում ու այդ անընդհատությունը ստեղծում էր անվերջանալի շու-

---

92 Հեղինակները նկատի ունեն Արևելյան Հայաստանը:

կա-պարտեզների տպավորություն, որտեղ ամեն ոք երջանիկ էր իր որթատնկերի ու թզենիների շվաքում:

Երբ մենք դեպի հարավ էինք շարժվում, իսկ արևը մայր էր մտնում, Արարատը՝ շրջապատված մայրամուտի գույներով, իշխում էր երկրի վրա: Արարատը, որը Մոն Բլանից ավելի բարձր է, իր մենության մեջ առանձնահատուկ վեհությամբ էր վեր խոյանում: Ինչ-որ հատկանշական հանդարտություն կար նրա լայն լանջին փռված հավերժական ձյունների մեջ: Ֆուջիի նման վեր էր խոյանում՝ միախառնելով խոյանքի զգացողությունը շրջապատի անդորրին:

Չքնաղից էլ չքնաղ,

Երկինք է խոյանում,

Ուր մուսաներն են ապրում…

Մեծ լեռան ստվերում, օգտվելով խոտածածկ հողին փարվող իրիկնարևի վերջին շողերից, մարդիկ ցորենը զատում էին հարդից, մեկը՝ մինչև ուսերը առվակի ջրի մեջ, կիզիչ օրվա ավարտին իր ձիուն էր լողացնում: Սև թավշի պես փայլուն գոմեշները լողանալուց հետո ծուլորեն քայլում էին դեպի տուն: Աշխատանքային օրը ավարտին էր մոտենում, իսկ մենք այդ ժամանակ անցնում էինք տների մուտքերի առաջ խումբ-խումբ նստած ընտանիքների կողքով: Այստեղ մի տղա խաղում էր ընտանի բազեի հետ: Այնտեղ, անգլիացու համար խիստ անսովոր, հայրը գրկել էր իր փոքրիկին: Տները անընդհատ շարունակվում էին, հետո տեսադաշտում հայտնվեցին խանութներ, գինու հնձաններ, դարբնոցներ, գյուղատնտեսական մեքենաներ, իջևանատան դիմաց հավաքված բամբասկոտ ոստիկաններ, փոխադրամիջոց նորոգող ու պղնձագործ վարպետներ:

Թեքվող արևն ի ցույց էր դնում արտադրության խճանկարը, որը ոչ պարզունակ էր, ոչ էլ կապիտալիստական. դա մարդու ձեռքի աշխատանքը ներկայացնող տնտեսությունն էր իր զարգացման ամենապատկերազարդ փուլում:

Մենք կանգ առանք տեսնելու գյուղի քահանային, որի որդին Պետերբուրգի համալսարանի ուսանող էր: Երբ նստեցինք նրա

պատշգամբում, բնության համատարած անդորրը միանգամից փոխարինվեց գյուղի անցուդարձի աղմուկով: Մեկնաբանություններ էինք անում քահանայի ծխականների բարեկեցության վերաբերյալ: Նա համամիտ էր մեզ հետ, սակայն մի ահավոր բան կար՝ Թուրքիայի ցնցոտիավոր փախստականների անընդհատ հոսքը, որ գալիս էր՝ ունեցվածքը կորցրած: Նրանք բռնի ուժով վտարվել էին իրենց բնակավայրերից, հաճախ դաժան բռնության զոհ էին դարձել նաև շատ փոքրահասակներ: Ռուսաստանը նրանց համար Աստծո ուղարկած փրկությունն էր, չնայած մուրացկանությունն էր դարձել վատագույն չարիքից խույս տալու գինը:

Արարատի աջակողմյան մասում ձգվում է լեռների շարքը, որը ռուս-թուրքական ներկայիս սահմանագիծն է: Հենց այս հատվածում էլ արևը մայր է մտնում: Հիշարժան համադրություն է՝ հավերժական ձյան և հյուսիսի միաձուլումը շրջանակված հարավային արևի առկայծող փայլով: Բայրոնը գնահատանքի է արժանացել, երբ գրել է այս արևի մասին:

Ոչ այնպես, ինչպես պայծառ խավարը հյուսիսային երկրի,

Այլ այնպես, ինչպես անսքող փայլը կենսատու լույսի:

Այս ամենից բացի՝ էլի ինչ-որ բան կա: Նրանք, ովքեր տեսել են լավայի խառնարանին նստած ձյան շլացնող ճերմակությունը, կամ մութ գիշերին մագլցելով հասել են սահմանագծին, կարող են նկարագրել լեռների սևացող ուրվագծի միջից նշմարվող այդ փայլը. պսպղացող ձյան շերտեր, որ իրավամբ կոչում են հալված լավա: Մեր տեսադաշտից թաքնված՝ այն դեռ ողողում է այդ բարձունքները, որոնցով հայերը մազապուրծ փախել էին՝ թշվառության ու կորստյան մատնելով այդ ազնվական լեռնաշխարհը:

***

Ինչո՞ւ է քաղաքակրթության ալիքը կանգ առել հենց այս բարձունքների վրա: Թուրքիայի եվրոպական սահմանագծերը հեշտությամբ օգտագործվում էին բալկանյան փոքրիկ պետությունների դեմ, որոնք հարակից էին նրան, մինչև հզորացան միավորման

շնորհիվ: Սակայն այստեղ պաշտպանությունը ակնհայտորեն անզոր է: Էրզրումի ամրությունները արդեն երկու անգամ Թուրքիայի հզոր հարևանի ձեռքում են եղել: Այնուամենայնիվ երեսունհինգ տարի է, ինչ ռուսական զորքերը կարծես կաթվածահար վիճակում լինեն: Նրանցից շատ ավելի հզոր ուժեր ասում են. «Ձեռքերդ հեռու այս սահմաններից, որքան էլ, որ անպաշտպան լինեն»:

Մեր առջև են Կիպրոսի համաձայնագիրն ու Բեռլինի պայմանագիրը, որոնք մանրամասնում են, որ Թուրքիայի այս սահմանագծի ապահովությունը երաշխավորված է գերտերությունների և, մասնավորապես, Անգլիայի կողմից:

Քանի դեռ չեք այցելել այս վայրը, այդ փաստաթղթերը արդարության վերացական և անշոշափելի մարմնացում են թվում: Այստեղ դրանք բավականին առարկայական են այս բարձունքներով մազապուրծ ու առանց գրոշի փախած գյուղացիների ու Ռուսաստանում հանապազօրյա հացը փնտրող հայ քահանաների համար, նաև կարգուկանոնին հետևող ռուս կառավարչի համար, որն առնչվում է անօրինական զինված խմբավորումների հետ: Վերջիններս միշտ էլ կարող են սողոսկել օրինազուրկ երկրներ: Դիվանագիտական այս փաստաթղթերը, որոնք անցյալ պատմության մեջ սովորաբար վկայակոչվում են որպես անորոշ ուղենիշ, այստեղ որոշիչ ողբերգական դեր են խաղում:

Նորից ու նորից դեսպանատները Պերայում[93] նախագծեր են քննարկում՝ այս անմտությանը վերջ տալու համար: Կանցլերները ընդունում են, որ Բալկանների հարցի կարգավորումը հնարավորություն է տալիս ճնշում գործադրել Բարձրագույն դռան վրա: Նրանք գիտեն, որ հայերին հուսահատության մեջ թողնելը կհանգեցնի ապստամբությունների, «վայրագությունների», միջամտությունների, որոնք կարող են վտանգել Եվրոպայի խաղաղությունը:

---

93 Պերա (Բերա)՝ թաղամաս Կոստանդնուպոլսում:

***

Պետք է հույս հայտնել, որ պայմանագրի միջոցով վերահսկողությունը հաջողությամբ կիրականացվի, բայց վերջնական հաջողությունը կմնա անորոշ դեռ երկար տարիներ: Ինչ էլ որ լինի, հնարավոր է, որ համաձայնագիր կնքվի Բարձրագույն դռան և գերտերությունների միջև: Թուրքերի, և կամ գերտերություններից մեկի կողմից զարգացման ընթացքում ստեղծված արգելքները ավելի շատ կլինեն, եթե յուրաքանչյուրն իմանա, որ ոչ մի պատիժ չի կրելու: Դրանք ավելի քիչ կլինեն, եթե համաձայնագրի ձախողման դեպքում գոնե մեկ գերտերություն այլընտրանքային գործողությունների հնարավորություն ունենա: Ահա թե ինչու ենք մենք ստիպված մտածել, թե ինչը պետք է լինի այդ այլընտրանքը:

Եթե ժամանակի ընթացքում պարզվի, որ համակարգված վերահսկողությունը անիրագործելի է, հասկանալի կդառնա նաև Եվրոպայի պարտականությունը. բարեփոխումը վստահել այն գերտերությանը, որն առավել պատրաստ է դա իրագործել: Արդեն ակընհայտ է, որ հարցը, որին առնչվելու ենք, կարող է վիճելի թվալ, բայց իրականում այն վաղուց է ձևավորվել. «Արդյոք պե՞տք է, որ Եվրոպան Ռուսաստանին շնորհի Հայաստանում բարեփոխումները կառավարողի մանդատը»: Այն փաստը, որ մինչև այժմ Դաշինքն է միշտ իր գործունեությամբ խանգարել, որ դեպքերն այդ ուղղությամբ զարգանան, կարիք ունի հավելյալ ուսումնասիրության:

Ռուսաստանի դեմ գործածված փաստարկները բացասաբար են անդրադառնում Մեծ Բրիտանիայի, թուրքական իշխանությունների և հայ ժողովրդի շահերի վրա:

1. ա) Մեծ Բրիտանիայի շահերը գլխավոր գործոնն են, իսկ դրանցից ամենաազդեցիկը Ռուսաստանի ռազմավարական սպառնալիքի աճն է: Այն կապված է աշխարհագրական չորս կետերի՝ Դարդանելի նեղուցի, Կիլիկյան ծովափի, Պարսից ծոցի և Հնդկաստանի սահմանագծի հետ, որոնք բոլորն էլ գտնվում են Հնդկաստան տանող ճանապարհի վրա: Մենք նկատել ենք, որ սրանցից առաջին երկուսի վերաբերյալ գիտակների կարծիքը փոփոխության է են-

թարկվել: Բավական է մեջբերել պարոն Վալենտին Շիռոլին[94]: Բրիտանիայում թուրքամետ քաղաքականության փոփոխությունը նկարագրելիս նա ասել է, որ Բրիտանիայի կողմից Եգիպտոսի զավթումից հետո Կոնստանդնուպոլսի հարցն այլևս այնքան էլ լուրջ չէ: Էպիգրամների սիրահար մի գրող էլ ասում է, - «Դիարբեքիրն է վերահսկում ծովածոցը»: Բայց ինչու՞ հենց Դիարբեքիրը: Այդ քաղաքից դեպի հարավ ընկած սահմանը, որը Ռուսաստանին հնարավորություն կտա դուրս գալ Միջագետքի հարթավայրեր, անկասկած կարևոր ռազմավարական իմաստ ունի, պաշտպանական կարևոր նշանակություն: Սակայն Հայաստանի իրական սահմանը այդ հարթավայրն է, և սահմանը պետք է անցնի Դիարբեքիրից դեպի հյուսիս ընկած վեհաշուք բարձունքներով, տրամաբանական է, որ այդտեղով կանցնի նաև հարավային պաշտպանական նշանակության սահմանագիծը: Ռուսաստանը զուր կհայցի Գերմանիայի համաձայնությունը սահմանագծի վերաբերյալ, որը վտանգի տակ կդնի Բաղդադի երկաթուղին:

Մնում է Սեիստանի[95] և Քվետտայի[96] հարցը: Նույն հեղինակն ասում է,- «Պարսկաստանը կպարտվի»: Փաստարկը լավն է, բայց

---

94 Բրիտանացի, լրագրող, հեղինակ, պատմաբան, դիվանագետ, որը երկար ժամանակ ապրել և ուսանել է Ֆրանսիայում, ապա Գերմանիայում: Նա համոզված էր, որ իմպերիալիստական Գերմանիան և մուսուլմանականների անհանգիստ վիճակը մեծ վտանգ են ներկայացնում Բրիտանիայի համար:
Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/Ignatius_Valentine_Chirol), (համացանցից դուրս է բերվել 11.04.2017):

95 Սեիստան – սահմանային քաղաք Աֆղանստանում, որը Բրիտանիան օգտագործում էր Իրանի հետ վիճելի հարցեր ունենալիս: Բրիտանիայի հնդկական բանակի ստորաբաժանումն այս քաղաքում հսկում էր, որ Առաջին աշխարհամարտի տարիներին գերմանական ու թուրքական գործակալներ չներթափանցեն Իրանից Աֆղանստան:
Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/Seistan_Force), (http://www.theodora.com/encyclopedia/s/seistan.html), (համացանցից դուրս է բերվել 11.04.2017):

96 Քվետտա - պակիստանյան ռազմական կարևորության գավառական քաղաք Աֆղանստանի սահմանին:
Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/Quetta), (համացանցից դուրս է բերվել 11.04.2017):

ժամանակը հանել է այդ հարցը: Պարսկաստանի ռազմավարական խնդիրը շատ է հեռացել թուրք-պարսկական սահմանագծից: Հյուսիսային Պարսկաստանն արդեն չկա:

Ռուսաստանի՝ Թուրքիայի կողմից Ուրմիայի մոտակայքում Պարսկաստանի դուռը թակելու պատկերը փոխվել է՝ ճիշտ հակառակ պատկերն է առկա: Ռուսական զորքերը Թավրիզում են և կենտրոնացվում են Թուրքիային սահմանակից Խոյի գավառի շրջանում:

բ) Պարսկական փաստարկն առաջադեմ էր առևտրի առումով: Անգլիացիներն առևտրական ուղի են բացել Տրապիզոնից Թավրիզ՝ շրջանցելով ռուսական մաքսատունը: Եթե Ռուսաստանը վերցնի Էրզրումը և Հայաստանին պահի իր պաշտպանական համակարգում, անշուշտ մեր առևտուրը կտուժի: Սակայն բռնազավթումը ոչ բոլոր դեպքերում է պաշտպանական նպատակներ հետապնդում: Ռուսաստանն արդեն զավթել է Ադրբեջանը[97], բայց դեռ ռուսական մաքսատուրք չի մտցվել, և բրիտանական առևտուրն աճում է շնորհիվ ճանապարհներին անվտանգություն ապահովող միջոցառումների: Հնարավոր է, որ նույնը լինի նաև թուրքական առևտրում: Ամեն դեպքում պարսկական առևտուրը պաշտպանված չի լինի Ռուսաստանին Թուրքիայից հեռու պահելով: Բայց եկեք շարունակենք քննարկել առևտրի փաստարկը: Այս երթուղով ներկրվող բրիտանական ապրանքները հասել են 600.000 ֆունտի: Ենթադրենք, որ ցանցի եկամուտը 200.000 ֆունտ է: Արդյոք կարելի՞ է լրջորեն պնդել, որ գրեթե 1 միլիոնի չափ արտաքին առևտուր իրականացնող երկիրը չի կարող, ռիսկի դիմելով, թույլ տալ եղածի մասնակի կորուստ, բայց դրա հաշվին խոչընդոտի 3 միլիոն բնակիչ ունեցող նահանգների ազատագրումը: Առևտրի հարցում շահագրգռությունը նույնիսկ ամբողջապես չի վերաբերում Անգլիային (դրան կարելի կլինի հասնել, եթե Թուրքիան որպես երկիր զարգանա), այլ առևտրականների այն խմբին, որոնք որոշակի կախվածություն ունեն սահմանափակ, չնայած համեմատաբար ազատ, առևտրի շուկայի առանձնահատուկ հանգամանքներից:

---

[97] Հեղինակները նկատի ունեն Պարսկական Ատրպատականը:

Նրանց վերաբերմունքը միանգամայն բնական կհամարվեր, եթե չլիներ այդ կատարյալ թվացող կարճատեսությունը քաջալերող կառավարությունը: Այն կարող է համատեղվել զարգացման առաջընթացի հետ, եթե դուռը բաց պահելու մեծ ցանկություն կա, և բոլոր անգլիացիները պետք է քաջալերեն այն: Սակայն ներկայիս քաղաքականությունը չի տանում դեպի բաց դուռ: Ճանապարհ դեպի բաց դուռը, իհարկե կա, սակայն, անկասկած, ոչ նախկին հակառուսականը, և ոչ էլ ներկայիս ռուսամետ քաղաքականությունը չեն տանում դեպի այդ ճանապարհը, մինչդեռ նույն նպատակն ունեցող գերտերությունների հետ համագործակցությունը ուղի կհարթեր դեպի բաց դուռ, օրինակ Գերմանիայի հետ, որը ցանկանում է պահպանել բաց շուկան ինչպես Պարսկաստանում, այնպես էլ Չինաստանում:

գ) Անցյալում մեր շարժառիթը, որը նաև ընդհանուր կարծիք էր, այն էր որ հյուսիսի հսկան կապացուցի, որ ինքը չափազանց մեծ է և ահավոր ընչաքաղց: Ես հիշում եմ, թե ինչպես, հարվածի տակ դնելով Ռուսաստանի հետ մեր բարիդրացիական համագործակցությունը, այդ մասին 1897 թ. հարց ուղղվեց սըր Ռիչարդ Թեմփլին[98], որն այդ ժամանակ Հնդկաստանում մեծ հեղինակություն էր վայելում: Նրա հանդուգն պատասխանը բնորոշ էր այն ժամանակ գերիշխող զգացմունքներին: Այժմ Ռուսաստանն ավելի արագ է զարգանում, քան երբևէ, բայց արտգործնախարարությունը նպաստում է Անգլիայից կապիտալի հոսքին, որն էլ ավելի է արագացնում Ռուսաստանի զարգացումը: Ինչ վերաբերում է ընչաքաղցությանը, թուրքական գաղութացված տարածքների վրա Անգլիան, Ֆրանսիան, Ավստրիան և Իտալիան հսկողություն են սահմանել, երբ այդ տարածքներից ինչոր բան փոխանցվել է Ռուսաստանի տրամադրության տակ:

2. Հաստատված է, որ գերտերությունները, մենք նույնպես, պահանջում են հակադրվել Ռուսաստանին: Անգլիացի գրողները

---

98 Սըր Ռիչարդ Թեմփլը (1826 –1902) բրիտանացի քաղաքագետ էր և բրիտանական Հնդկաստանի կառավարիչը:
Տե՛ս (https://en.wikipedia.org/wiki/Sir_Richard_Temple,_1st_Baronet), (համացանցից դուրս է բերվել 04.03.2017):

ոգեկոչում են Գերմանիայի մտավախությունը, և, Սիրիայի տարածքները գրավելու Ֆրանսիայի բաղձանքներին հավանություն տալու ընթացքում քննարկում են, թե ինչ վտանգներ կարող են սպառնալ գերտերություններին թուրքական տարածքները ձեռք գցելու լարված պայքարում:

Նրանք կատարել են հանդիսավոր եզրահանգում՝ Եվրոպան պահանջում է Թուրքիայի տարածքների անբաժանելիություն: Ի դեպ, պետք է նշել, որ այս ձևաչափը Թուրքիայի համար հավասարապես կիրառվել է Եվրոպայում, սակայն պատրաստակամորեն մի կողմ է դրվել, երբ բալկանյան պետությունները մեր օգնության կարիքն են ունեցել:

Գերմանիայի՝ թուրքական բեմահարթակում հայտնվելը, անկասկած, ժամանակակից քաղաքականության մեջ կարևոր գործոն է: Նրա ազդեցությունը հայկական հարցի վրա մեր քննարկած փաստերի առնչությամբ բարենպաստ է: Դա նշանակում է, որ ռուսական Հայաստանը վտանգ չի ներկայացնելու, ինչպես տեսանք, Պարսից ծոցի երկրների համար, որովհետև Ռուսաստանը ստիպված կլինի հաշվի նստել Գերմանիայի հետ, և բավարարվել ավելի քչով, քան հայկական բոլոր վեց վիլայեթները՝ չանցնելով բարձունքների վրա գտնվող սահմանագիծը, հրաժարվելով Դիարբեքիրի և Վանի վիլայեթների որոշ մասից: Դա նշանակում է, որ Կիլիկիայի հայերը (հին թագավորություն Փոքր Հայքում) սկսում են ենթարկվել կարգ ու կանոնի որոշակի ռեժիմի, որը հաստատվել էր Գերմանիայի շահագործողական քաղաքականության առաջընթացի հետևանքով: Իրատեսական հարց է, թե որ շրջանները կկիսեն Ռուսաստանը և Գերմանիան: Կասկած չկա, որ Գերմանիան իր դիրքերը ամրապնդելու նպատակով է ակտիվացրել իր հյուպատոսության գործունեությունը Վանում և նոր հյուպատոսություն է բացել Էրզրումում:

Ընդունում ենք, որ Գերմանիան այժմ ստատուս քվոյի ջատագովն է: Ամեն տարի նա ավելի է առաջ մղում իր պահանջներն ու դիրքը, և դա նա անում է առանց շտապելու: Սակայն Ռուսաստանը

իրավասություն ունի ստիպելու, որ քայլերն արագացնեն: Եվրոպական սահմաններում անմիջական գործողությունների սուտ սպառնալիքով Գերմանիան ծանր պարտականություն է ստանձնում: Ռուսաստանի վրա Անգլիան նմանատիպ մի լծակ օգտագործել է Ղրիմում, երբ հարձակվել է: Սակայն Ռուսաստանը շարունակական հնարավորություններ ունի խնդրի առարկա սահմանագծի հետ կապված: Ո՛չ մենք և ո՛չ էլ Գերմանիան այդ հնարավորությունը չունենք, բացառությամբ, իհարկե, եթե քայլն արվի անուղղակիորեն: Հետևաբար ո՛չ մենք կարող ենք կասեցնել նրա առաջխաղացումը Պարսկաստանում, ո՛չ էլ Գերմանիան կարող է դա անել Թուրքիայում: Նա ուղղակի հաղորդակցման հնարավորություն ունի, քանի որ գտնվում է դեպքի վայրում և մեզ հակադրվում է արդեն գոյություն ունեցող փաստերով: Գերմանիան դրության տերն է և բաց չի թողնի գործելու պահը, երբ իր համար խոչընդոտ ծագի: Իրականում, եթե Ռուսաստանին այլևս չզրկեն իր իրավունքներից, դիվանագիտական հարմարությունը կհանգեցնի ազդեցության ոլորտների վերաբերյալ ռուս-գերմանական համաձայնագրի, ինչպես դա տեղի էր ունեցել ռուս-բրիտանական համաձայնագրի ստորագրմամբ՝ Պարսկաստանում: Այս փոքրիկ հողակտորի միջոցով Թուրքիայի վրա ճնշում գործադրելը արդյունավետ կդարձնի դեպի բարեփոխումներ տանող ուղին: Հասարակական կարգի առկայությունը կբխի թե՛ վերահսկող և թե՛ վերահսկվող կառավարությունների շահերից, ինչպես տեղի ունեցավ հյուսիս-արևմտյան Պարսկաստանում:

3. Փոփոխությունների դեմ օգտագործվում է նաև այն անորոշ փաստարկը, թե՝«Դա կլինի Թուրքիայի վերջը»: Սակայն դա ճիշտ չէ: Բարբարոս պետությունը ավելի պակաս խոցելի է ու պակաս զգայուն, քան քաղաքակիրթը: Թուրքիան չոչնչացավ, երբ Ռուսաստանը վերցրեց ու պահեց Կարսը: Նրա վերջը նույնիսկ չեկավ, երբ Թուրքիան ամբողջությամբ կորցրեց իր բոլոր եվրոպական տարածքները: Նա, ընդհակառակը, ուժեղացել է ոչ թուրքական և անկարգ մարզերի ձեռքբերման հաշվին: Ինչպես ասում է պարոն Դիզ-

բաելին, հայկական վիլայեթների կորուստը ո՛չ նրան և ո՛չ էլ գերտերություններին չի հանգեցնի ռազմավարական փոփոխությունների: Հայտնի է, որ Մակեդոնիան և Ալբանիան նրա վրա շատ ավելի թանկ են նստել, քան նրանց վճարն է եղել գանձարանին: Նրանք բերել են նորակոչիկների, սակայն ներգրավված են եղել հավելյալ զորաբանակներում: Հայաստանը համապատասխանում է Ալբանիային:

4. Այս պահին ազգաբնակչության մեզ մտահոգող ցանկությունները ստիպում են, որ ռուսատյացները ընկրկեն: Նրանք գտնում են, որ մահմեդականների նկատմամբ դա անարդար կլիներ: Սա անկասկած խորը մտածելու տեղիք է տալիս: Նրանց առարկությունը մասամբ նույնը կլիներ, ինչ այլընտրանքային, այսինքն՝ Դաշինքի կազմած կառավարությանը առարկելը, որը կոչնչացներ նրանց իշխանությունը: Սակայն ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նրանք փաստացի փորձ ունեն, որը ձեռք է բերվել Կովկասում նրանց դավանակիցների միջոցով:

Փոքր ազգերի այդ թանգարանը կազմված է մուսուլմաններից՝ թաթարներից, պարսիկներից, լեզգիներից, չերքեզներից և շատ այլ ազգերից: Ռուսաստանը, անկասկած մեծ մահմեդական պետություն է, որտեղ մահմեդականները Պետերբուրգից մինչև Արաքս ապրում են ոչ թե որպես կախյալ անձինք (ինչպես Բրիտանիայի մուսուլմանական տարածքներում), այլ քաղաքական կարգավիճակով որպես ռուսներին հավասարներ: Որևէ այլ տեղ նրանք այսքան բարձր հասարակական-տնտեսական դիրք չունեն:

Մեզ հետաքրքրող հարցն հիմնականում վերաբերում է քրդերին: Թուրքիայում խոսակցության հիմնական թեման միավորման միտում ունեցող վերջին շրջանի քրդական շարժումն է, և հատկապես ռուսների քաղաքականությունը, որը ենթադրաբար ուղղորդում է այդ շարժումը: Անշուշտ, պետք է տարբերել Թուրքիայում մոսկվացու ենթադրելի գործունեությունը նրա ձեռնարկած հստակ, բաց քայլերից Պարսկաստանում: Վերջին դեպքում դա նմանվում է սահմանային շրջանում ապրող ցեղերի նկատմամբ բրիտանացի-

ների կիրառած մեթոդներին: Մշտական խնդիր է կռվողներին հաջողությամբ համոզելը, որպեսզի գոհ լինեն խաղաղ կյանքից: Դա կարելի է անել՝ շոյելով նրանց սնափառությունն ու պատերազմական հակումները:

Ուստի բարձրաստիճան պաշտոնյաները հյուրընկալում են ցեղապետերին: Նրանց հրավիրում են ռազմական ոստիկանություն՝ որոշակի հանձնառություններ ստանձնելու և նպաստ են տալիս այնքան ժամանակ, քանի դեռ իրենց լավ են դրսևորում: Եթե ընդօրինակումը կարելի է շողոքորթություն կոչել, ուրեմն ցարական կառավարությունը մեզ քծնել է՝ այս համակարգը կիրառելով վատահամբավ Իսմաիլ Աղայի (ավելի հայտնի որպես Սիմկո), Ջեզիրեի Աբդուլ Ռեզակի (հայտնի Բեդիր Խանի ցեղից) և այլ ցեղապետերի նկատմամբ, որոնք վերջերս այցելեցին Թիֆլիսում գտնվող Կովկասի փոխնահանգապետին:

Սիմկոն մեզ ներկայացրեց Կովկասի փոխնահանգապետին որպես իր ընկեր: Քրդերի շրջանում Ռուսաստանի քաղաքականության ներկայիս նպատակն է մասամբ խանգարել նրանց՝ թուրքերի կամ մյուս կողմից նաև քրիստոնյաների հետ բարեկամական հարաբերություններ հաստատելուն, որը թույլ կտա զինված միջամտության դեպքում օգտվել նրանց աջակցությունից: 1912 թ. առաջ Ավստրիան համանման ջանքեր էր գործադրում ալբանացիների շրջանում: Ավելի կարևոր է հաշվի առնել, թե ինչպես քրդերի վրա կազդի բռնազավթումը: Միայն ռուսական սահմանագծի շրջակայքում տեղակայված գյուղերն են, որ նկատելիորեն ավելի հարուստ են և ավելի պակաս ցնցոտիավոր: Նստակյաց կյանքի անցնելով՝ նրանք դադարել են ապրել գողությամբ և զբաղվում են հող մշակելով:

5. Ռուսական լուծումը մինչև հիմա էլ անտեսվում է հայամետ հանձնաժողովների կողմից, քանի որ անվստահություն կա այն հարցում, թե արդյոք հայերը ցանկություն ունեն ռուսական իշխանության տակ գտնվելու: Ռուսաստանի վերաբերյալ կասկածներ ունեն նրանք, ովքեր ռուսական մեթոդներն ուսումնասիրում են հենց բուն Ռուսաստանում և, բնականաբար, հրեաները:

Նախորդ գլխում ընթերցողն արդեն ինչ-որ տպավորություն ստացել է Ռուսաստանում հայերի վիճակի վերաբերյալ: Թուրքիայում մենք այն դարձրեցինք քննարկման գլխավոր թեմա, որպեսզի իմանանք տարբեր դասերի և կուսակցությունների կարծիքները: Մենք բացահայտեցինք, որ մասամբ, անկասկած, Դաշինքի նկատմամբ ծնված հիասթափությունից է, որ տեղի է ունեցել տեսակետի փոփոխություն: Հայտնի է, որ հայերի դիմումը Անգլիային ոչ միայն անօգուտ եղավ, այլև այնքան աղետալի, որ օտարեց Ռուսաստանին: Սակայն ռուսական վերաբերմունքն էլ է լիովին փոխվել: Վերադարձ դեպի հին Ռուսաստան այլևս անհնարին է:

«Ռուսականացումը» փորձել են որպես քաղաքականություն կիրառել Հայաստանի և Կովկասի նկատմամբ, իսկ հետո անդառնալիորեն վերջնականապես դեն են նետել: Գալիցինի մեթոդը, որը հակադրվել է Վորոնցով-Դաշկովի հաջողակ ռեժիմին, ցույց է տվել իր անարդյունավետությունը վերջինիս համեմատությամբ: Գալիցինի գլխավորությամբ բարձր դասի հայերին այնպիսի «նվիրվածությամբ» են վերաբերվել, որ նրանք գրեթե մոռացել են իրենց լեզուն և ազգային պատկանելությունը: Նոր փոխնահանգապետի զեկույցները հաղթականորեն մատնանշում են այդ նվիրվածության վերականգնումը, որին ձգտում է Ռուսաստանը:

Հայերին անհանգստացնում է հետևյալը.

ա) Ռուսաստանի տիրապետության ներքո Թուրքահայաստանի համար ազգային ինքնավարությունը անհնարին կլինի:

(Պատասխան) – Թուրքահայաստանում դա ամենևին հնարավոր չէ: Գերտերությունները դա թույլ չեն տա, և բնակչությունը չափազանց մասնատված է, որպեսզի գործընթացը հաջող գնա:

բ) Ռուսաստանի հեղինակությունը և մշակույթը թուլացնում են հայ բուրժուազիայի ազգային զգացումները: Սնոբիզմը բարոյազրկում է հարուստներին և աղքատներին ստիպում անընդհատ ապրելու տեղ փնտրել, մինչդեռ ռուսական արվեստը, դրաման և գրականությունը գրավում են կրթվածներին: Հայ միլիոնատերերը հարստանում են նավթի և ածխի հանքերի շնորհիվ, մոռանում

իրենց լեզուն և արհամարհում իրենց եկեղեցին և գեղջուկներին: Նըրանք այնքան հաջող կերպով են ռուսներ ձևանում, որ անգլիացի դաստիարակչուհիները Անգլիայում ծառայում են նրանց՝ համոզված լինելով, որ նրանք ռուս են, չնայած արդեն հրաշալի ծանոթ են Կովկասի հայ ընտանիքների:

(Պատասխան) – Սա լուրջ հարց է, բայց հնարավոր է կասկածի տակ դնել այն, թե արդյոք այս հարստության շնորհիվ իշխանություն ձեռք բերածների ազդեցությունը հայերին կամ այլ ազգերի օգուտ բերում է: Փաստ է նաև, որ որոշ ռուսամոլ հայեր, օրինակ սպաները, հայտնի են ազգային եկեղեցիների հետ մտերմության և առատաձեռնության շնորհիվ:

գ) Ռուսական ղեկավարումը ոչ միայն ազգային չէ, այլև անարդար է: Պետական պաշտոնները տալիս են ռուսներին:

(Պատասխան) – Անարդար է, սակայն հակասում է վերջին փաստարկին, քանի որ արդյունքում ստեղծվում է ազգային կարծիք, վերաբերմունք: Օրինակ, հանրային հիմնարկներում աշխատող հային (ինձ այդպես բացատրեց հայը), առաջ էին քաշում, որպեսզի նա իրեն ռուս պատկերացնի, սակայն, երբ գալիցինյան ռեժիմի արդյունքում իր ազգականներից մեկին ազատում էին աշխատանքից, նա դառնում էր իսկական հայ:

Այս բոլորի արդյունքում ձևավորվում է հետևյալ հարցը. «Ո՞րն է ազգայնականության իրական արժեքը»: Խնդիրը չափազանց կարևոր է այստեղ քննելու համար: Բայց հնարավոր չէ՞ արդյոք ընդունել այն որպես էներգիայի աղբյուր, գլխավոր արժեք, մի բան, որ խիստ էական է վերջնական նպատակին հասնելու համար: Տեսակի բազմազանությունը ամենաառաջնակարգն է աշխարհում: Փոքր ազգերը ավելի ակնհայտ են ի ցույց դնում այդ բազմազանությունը, քան, եթե նրանք լինեին միօրինակ ագրեգատներ՝ 100.000.000 քանակ ունեցող ռուսների նման: Եթե չլինեին այս նպատակները ազգային զգացումը կարող էր գոյություն ունենալ առանց քաղաքական անկախության, և այն առկա է ռուսական տիրապետության տակ ապրող հայերի շրջանում: Քաղաքական կախումը

հանդուրժելի է, քանի դեռ իշխանությունն այնքան սխալ չի իրականացվում, որ ներուժը մշակույթի վրա կենտրոնացվելուց շեղվի և ուղղորդվի դեպի խռովություն: Այս փորձի կիրառումը Լեհաստանի նկատմամբ, խիստ բացասական արդյունքի է բերել:

***

Այս ամենը չի գրվել այն միտմամբ, որպեսզի փութանք ցույց տալու ռուսական տիրապետության իրագործած ողջ չարիքը, այլ նպատակ ենք հետամուտ լինել և ընթերցողին ներկայացնել վերջին շրջանի մեր սեփական դիտարկումները: Հայաստան կատարած այցին հաջորդեց մեր այցը Լեհաստան, որի նպատակն էր շտկել այդ ուղղությամբ սխալ պատկերացումները, որոնք ծագել էին Հայաստանի համար ազատագրող գտնելու չափազանց մեծ ցանկությունից: Ռուսական ազատականների քինոտ ճնշումները և հրեաների հալածանքները բնորոշ են ռուսական շատ քաղաքների: Վարշավայում դրանք լրացվում են ազգային զգացումի և տեղական իրավունքների միտումնավոր ու կատաղի ճնշումներով: Ազնիվ տեղական խորհուրդներ գոյություն չունեն: 750.000 բնակչություն ունեցող (ներառյալ հսկայական կայազորը) քաղաքային խորհուրդը, որը ձևացնում է, թե ամեն բան հրաշալի է, անխոս ենթարկվում է ռուսական աշխատավարձ ստացող քաղաքագլխին: Ժամանակակից բիզնեսով հետաքրքրված լեհ գործարարներին չի թույլատրվում գիշերը մնալ մեծ մանուֆակտուրային կենտրոններում, օրինակ Լոձում, առանց անձնագրի: Կառավարական պաշտոնյաները, նույնիսկ հասարակ պաշտոններ զբաղեցնողները, ինչպես, ասենք, հին լեհական պալատների դռնապանները, ռուսներ են: Հենց պետությունն իր ձեռքը վերցրեց լեհական երկաթգծերը, աշխատողները միանգամից փոխարինվեցին ռուսներով: Վերջերս կասկածելի մարդկանց սկսեցին առանց դատ ու դատաստանի անվերադարձ քշել Սիբիր: Ճնշումներն իրականացվում են բոլոր հնարավոր միջոցներով՝ ոչ միայն տնտեսական ու քաղաքական, այլ նաև հոգեբանական: Վարշավայի մեծ հրապարակում, որը լեհ ազգի գլխա-

վոր հավաքատեղին է, մի հսկայական, հոյակերտ, բայց և անհեթեթ ռուսական տաճար խցկեցին: Հիմա, երբ ես գրում եմ, դրա փառահունչ զանգերը խլացնում են ժամանակակից մեծ քաղաքի աղմուկը, նաև հիշեցնում յուրաքանչյուր լեհի, որ հպատակվել են օտար ու իրենցից շատ ավելի պակաս զարգացած պետության: Անզեն աչքով էլ նկատելի է ռուսական բյուրոկրատիայի դաժանությունը, սակայն, չնայած դրան, մեր հաստատուն կարծիքն այն է, որ Ռուսաստանի կողմից Հայաստանի բռնազավթումն անտարակույս բարենպաստ կլինի: Լեհաստանում ստեղծված պայմանները չարիք են ծնում, որոնք ի հայտ չեն գա Հայաստանում: Եթե նույնիսկ դրանք լինեին էլ, ապա այդ վիճակն ավելի գերադասելի կլիներ, քան Թուրքահայաստանում տիրող ներկայիս վիճակը: Անկասկած կարող ենք գտնել հայ մտավորականների, որոնց կարծիքով, չնայած Ռուսաստանը կպահպանի մարդկանց կյանքը, սակայն կխեղի ազգային հոգին: Բայց այդպես մտածողները շատ քիչ են:

Եթե նույնիսկ այդ կարծիքը համընդհանուր լիներ, մենք պետք է ուշադիր լինենք և հիշենք երկու բան: Առաջին, որ ցածր դասի՝ գյուղացիների ու աշխատավորների ցանկությունները միշտ չէ, որ համընկնում են այն դասի կարծիքի հետ, որի ձայնը լսելի է Եվրոպայում: Երկրորդ, որ մեր չափանիշները տարբերվում են նրանց չափանիշներից: Նրանց կարծիքով ազգի կամ եկեղեցու շահերի համար մարդկային կյանքի կորուստները արդարացվում են: Մենք մտահոգված ենք մարդկային կյանքի անվտանգությամբ, ունեցվածքի պահպանությամբ և հայրենիքի փառքով:

Հարցրու ինքդ քեզ այստեղ Վարշավայում՝ արդյոք ռուսական տիրապետության տակ գտնվելու վտանգը կստիպի՞ տատանվել, ռիսկի դիմել Հայաստանում: Մի հայացք գցեք նախ Թուրքահայաստանին, ապա Ռուսաստանի հայերի մշակույթին, հարստությանը և այն կարգ ու կանոնին, որոնց շնորհիվ ռուսահայի կյանքը չի տարբերվում Արևմտյան Եվրոպայի միջին բնակչության մեծ մասի կյանքից: Կտեսնեք, որ համեմատելն արդեն անհեթեթություն է:

***

Մեծ ազգերը, հարկավ, տարված են քաղաքականության և սոցիալական առաջընթացի վերաբերյալ իրենց իսկ սեփական առաջարկությունների մասին մտքերով: Բայց, ելնելով մարդկային կյանքի ապահովությանն առնչվող փորձությունների և մարդու հիմնարար իրավունքների ապահովման տեսակետից, չկա գերտերությունների կառավարությունների անդամներին մտահոգող ավելի ծանրակշիռ հարց, քան Հայաստանի հարցն է:

***

Գերտերությունների քաղաքացիների համար հնարավոր է գտնել գործադրելի քաղաքականություն, նույնիսկ եթե Դաշինքի կողմից վերահսկողությունը խափանվի: Նույնիսկ թուրքամետներն են համամիտ, որ զինված միջամտությունն ու Եվրոպական վերահսկողությունն անհրաժեշտ են: Սա ծանրակշիռ համոզմունք է, որովհետև արձագանքներն անպայման նպաստավոր կլինեն թուրքերի համար: Սկսել զինված միջամտություն եվրոպական սահմանադրական գործողությունների միջոցով: Եթե ոչ այս, ապա մեկ այլ մեթոդի կիրառմամբ, սա դիվանագիտության անհետաձգելի խնդիրներից է, քաղաքակրթության՝ առաջնահերթ պարտականություններից մեկը:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱԻՐԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՕՏԱՐՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Տպագրված է Time to Print օպերատիվ տպագրությունների սրահում:
ք. Երևան, Խանջյան 15/55

Ստորագրված է տպագրության՝ 25.10.2017:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 12,25:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

Նաիրա Հմայակի Գասպարյանն աշխատում է ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնում, բանասիրական գիտությունների թեկնածու է, դոցենտ: Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակը լայն է՝ լեզվաոճագիտություն, գործառական ոճի հարցեր, գիտական, գիտատեխնիկական, պաշտոնական անգլերեն, լեզվամշակութաբանություն, տեքստաբանություն, ճանաչողական լեզվաբանություն, թարգմանաբանության հարցեր: Զբաղվում է նաև ոչ գե-ղարվեստական տեքստերի թարգմանությամբ:

Վերջին տարիներին Ն. Գասպարյանը հետաքրքրվում է նաև հայագիտական խնդիրներով, զբաղվում Հայոց ցեղասպանությանն առնչվող փաստաթղթերի տեքստաբանական քննությամբ, զե-կուցումներով հանդես գալիս միջազգային գիտաժողովներում, կազմակերպում սեմինարներ ու քննարկումներ:

Հեղինակ է 3 մենագրության և բազմաթիվ գիտական ու գիտահանրամատչելի հոդվածների: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է երկու թեկնածուական ատենախոսություն:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2017
publishing.ysu.am